ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

№ 1209

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ
ՅԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ
ՊԱՆԾԱԼԻ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ

Հեղինակ

Б
22751

ԳՐԻԳՈՐ ԱՎԵՏՅԱՆ

ՔԱՌԱՍՈՒՆ ՅԵՎ ՀԻՆԳ ՏԱՐԻ ՀԱՅ ԲԵՄԻ ՎՐԱ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ★ 1933

ՀՍԽՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՎԵՏՅԱՆ

Լեզվական խմբագիր յեվ Սրբագրիչ Գաբ․ Հակոբյան
Հանձնված ե արտադրության 5 սեպտեմբերի 1932 թ․
Ստորագրված ե տպելու 21 մայիսի 1933 թ․
Ֆորմատ 6×10
Պետհրատի տպարան,

պատվեր № 2861, գլավլիտ № 7308 (բ) հրատ. № 2362, տիրաժ 3000

1635-2003



ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հայ թատրոնի անցյալի հետ ծանոթանալու համար շատ քիչ աղբյուրներ ունենք։ Իր մեմուարները կամ հիշողությունները վոչ մի հին դերասան գրի չի առել, յեթե չհաշվենք Ամիրան Մանդինյանի իր ժամանակվա ներկայացումների և փորձերի նկարագրությունները, Եմին Տեր-Գրիգորյանի Յերևանի թատրոնի սկզբնավորության մասին շատ քիչ գրվածքը և Գևորգ Զմշկյանի մի քանի կտոր հիշողությունները, վորոնք մասամբ տպված են «Տարազում», «Թատրոն և յերաժշտություն» հանդեսում և «Հուշարարում»։

Մի քանի անգամ գրիչ եմ վերցրել գրելու իմ քառասուն-քառասունհինգ տարվա գործունեյության մասին, բայց ամեն անգամ էլ կիսատ եմ թողել, վորովհետև գրածս ինձ դուր չի յեկել։ Գտել եմ, վոր գրիչս շատ թույլ է նկարագրելու այն ամենը, ինչ քաշել եմ, ինչ տարել եմ և ինչ տեսել եմ։

Նախանցյալ տարի Յերևանի Պետթատրոնի դիրեկտոր Գևորգ Աբովը և Գեղաշխի Միության նախագահ Սարգիս Մելիքսեթյանն ինձ ուղղակի ամաչեցրին և բարոյական պարտք դրին վրաս, թեկուզ անպաճույճ կերպով, բայց անպայման գրել իմ հիշողությունները, վորով գույցե դրդապատճառ դառնամ ու վարակեմ ինձնից ավելի կարող ընկերներին, գրելու իրենց թատերական հիշողությունները։

Ըստ կարելույն պարտքս կատարեցի։

Թող ուրիշները, ինձնից ավելի շնորհալիները, նույնն անեն ավելի գեղեցիկ, ավելի լրիվ, և յես կլինեմ առաջին ուրախացողը։

ԳՐ. ԱՎԵՏՅԱՆ

Յերևան, 1931 թ.

1

Ծնվել եմ Պարսկաստանի Ռաշտ քաղաքում՝ 1870 թվի հունվարի 8/21–ին։ Հայրս վաճառականների ավագ (Թաջիր–բաշի) եր այնտեղ։ Մայրս մեռնելուց հետո (յես յոթ տարեկան եյի) տեղափոխվեցինք Բաքու և ապա՝ Շուշի, ուր ինձ սովորելու տվին մեր Թաղի յեկեղեցու տիրացուի մոտ։ Բաքու յեղածս ժամանակ քեռիս, վոր կրկեսի անտրեպրենյոր վոմն Կամարովսկու համար շինել եր տվել մի կրկես (ցիրկ) և, ըստ պայմանի, իր ձրի սեփական ոթյակն ուներ, միշտ իր հետ ինձ տանում եր ներկայացումներին։ Այդ կրկեսում Կրիստոֆ անունով մի ֆրանսացի ծաղրածու (կլոուն) կար, վորի կատակները, թռիչքները և ծամածռությունները ինձ այնքան եյին գրավել, վոր իմ մանկական գլխում միտք եր հղացել՝ փախչել տնից և կրկես մտնել։

Շուշի տեղափոխվելով, ուր հայրս յերկրորդ անգամ ամուսնացավ, յես, ինչպես վերն ասացի, սովորում եյի մի տիրացուի մոտ։ Իսկական տեր–Թոդիկի դպրոց եր այդ դպրոցը, ուր պատժի ամեն տեսակները, կային—թե՛ ֆալախկա, թե՛ մանրած աղյուսի կտորների վրա չոքեցնել, թե՛ ահագին ծանրությամբ ու կազմած աստվածաշունչ գիրքը վեր բարձրացրած՝ ժամերով ձեռքերի վրա պահել և այլն...և այլն... Բնականաբար, յես այդ դպրոցում տպագիր այբուբենից զատ ուրիշ բան չսովորեցի։

Հայրս, վոր յերկրորդ անգամ ամուսնանալուց հետո նորից վերադարձել եր Պարսկաստան, այժմ ծանր հիվանդության պատճառով Բաքու յեր տեղափոխվել իր յեղբայրների մոտ, մեզ ել տեղափոխեց Բաքու, ուր

և ինձ տվին Հայրապետ Քալանթարյանի մասնավոր դպրոցն ուսանելու: Այս դպրոցը բավականին կարգին մի բան էր, ուր յես թե հայերեն և թե ռուսերեն քիչումիչ կարդալ-գրել սովորեցի:

Այդ դպրոցում մի լավ սովորություն կար. ամեն տարի մայիսի մեկին, յերբ դաշտերը կանաչում, ծածկվում եյին ծաղիկներով, աշակերտներին տանում եյին քաղաքից դուրս զբոսանքի: Ամեն մի աշակերտ իր հետ բերում էր իր օրվա բաժին ուտելեղենը և զույգ-զույգ կանգնած, գնում եյինք քաղաքից դուրս մի դաշտ և ամբողջ օրը խաղում, վազվզում, զվարճանում... Թեյով ամենքին հյուրասիրում եյին իրենք, Քալանթարյաններն իրենց յերեք ծորակ ունեցող ահագին ինքնաեռից: Նրանց դպրոցում յեղածս կարճ ժամանակամիջոցում մի անգամ ընկա այդ մայիսմեկյան զբոսանքի մեջ, վոր իմ աշակերտական կյանքում այլևս վոչ մի անգամ չկրկնվեց: Յես բնազդմամբ սիրեցի այդ տոնը, վորն ապա դարձավ միջազգային բանվորության համերաշխության մեծ տոնը, և մինչև այսօր էլ սիրում եմ այդ տոնը բոլոր տոներից ավելի:

Քալանթարյանի դպրոցը մասնավոր լինելու պատճառով, հայրս չկամեցավ ինձ այնտեղ յերկար պահել և մի քանի ամսից դուրս բերեց ու տվեց Մարդասիրական ընկերության ծխական դպրոցը: Այդտեղ տեսուչը, նախ՝ Խորեն Ստեփանենն էր, ապա՝ նրա հեռանալուց հետո, բժիշկ Միսակ Արամյանը: Այդ դպրոցում յեղածս ժամանակ, մեզ ստիպում եյին շաբաթ յերեկոները և կիրակի օրերը պատարագին յեկեղեցում յերգել: Վայ էր, յեթե մեզանից մեկնումեկը յեկեղեցի չգնար և շապիկ չհագներ,—յերկուշաբթի առավոտը յեկեղեցու ավագ քահանա Թադեոս Բուդաղյանը դպրոց գալով ու չեկողների անուններն իմանալով, իր ձեռքի հաստ գավազանով նրանց լավ ծեծում էր: Իմ մարմնի մասերը շատ հաճախ են զգացել այդ հարվածները:

Այդ ժամանակ յես արդեն ինը տարեկան եյի և հայրս էլ, վոր արդեն առողջացել էր, մի օր ինձ տարավ թատրոն, ուր սիրողները «Խաթաբալա» եյին խաղում: Յես հրճված եյի, գրավված թատրոնով, արդեն մոռա-

ցել եյի թե կրկեսը և թե իմ սիրած ծաղրածու Կրխատոֆին:

Շատ չանցած, հորս հիվանդությունը կրկնվեց, ու նա նորից անկողին մտավ: Նրա զվարճություններից մեկն էր—ստիպել ինձ ընդօրինակել, կրկնել թատրոնում իմ տեսած ներկայացումները, պատկերացնել դերասանների խաղը, և յես ամեն անգամ «ամբիոն» բարձրանալով, կատարում եյի և ներկայացնում տեսածներս ու դպրոցում սովորած վոտանավորներն անգիր ասում: Յես և փոքրիկ յեղբայրս—Սեդրակը, ներկայացնում եյինք Կռիլովի «Գայլն ու գառնուկը», «Ագռավն ու աղվեսը» և ուրիշները:

Հայրս յերկար չապրեց: Յես տասը տարեկան եյի: Նորից տեղափոխվեցինք Շուշի, ուր ինձ տվին նոր բացված Ռեալական դպրոցը, վորտեղ յերկար չմնացի. տարին չլրացած, յերկու հորեղբայրներիս ընտանիքների հետ միասին նորից տեղափոխվեցինք Բաքու և այնտեղ արդեն մնացինք մշտապես:

Ինձ տվին Ռեալական դպրոցը: Այստեղ էր, վոր յես ընդմիշտ կապվեցի թատրոնի հետ: Դպրոցական ընկերներիս թվումն էր նաև Արշակ Շիրյանը, վոր բավականին մեծ սեր ուներ դեպի թատրոնը. նա կազմել էր տասը հոգուց բաղկացած մի խումբ, վոր յերկու-յերեք ամիսը մի-մի ներկայացում էր տալիս՝ աղաչանքով, պաղատանքով սրանից-նրանից ձեռք բերած ընտանեկան դահլիճներում: Յես էլ միացա այդ աշակերտական խմբին: Ղեկավարը և ռեժիսյորն ինքը, Արշակն էր: Բնակարանի տերերը բեմեր չեյին թողնում շինել, վոր պատերը չփչացնենք, և մենք էլ խաղում եյինք հենց հատակի վրա, սակայն վարագույր կախում եյինք և ունեյինք մի դեկոր, յերեք պատից մի սենյակ՝ փայտյա շրջանակների վրա կպցրած պաստառներով, և այդ դեկորը, իբրև սրբություն-սրբոց, շատ խնամքով եյինք պահում ու հետներս քաշ տալիս այնտեղ, ուր ներկայացում եյինք տալիս: Ամեն մի տեղափոխման ժամանակ պաստառները պատռվում եյին, և ստիպված եյինք լինում կարկատել պահեստի համար պահված համագույն պաստառով:

Ահա այդ խմբում յես ձեռք բերի բեմական առաջին փորձառությունս: Կին դերակատարներ չունեյինք: Մեր ընկերներից Ավետիս Ծղնավորյանը և ինքը՝ Արշակը, հերթով կամ հենց միասին, միշտ կանացի դերեր եյին խաղում: Ինձ ել ե մի քանի անգամ բաժին ընկել կանացի դերեր խաղալը:

Յերբ արդեն հինգերորդ դասարանի աշակերտ եյի, պատկերը փոխվեց, և յես դարձա աշակերտական թատերախմբի ղեկավարը: Ռուս աշակերտները, տեսչի հովանավորության տակ, դպրոցի մեծ դահլիճում, ծննդյան և մեծ զատկի տոներին տարեկան միքանի ներկայացումներ եյին տալիս, ուր հրավիրում եյին իրենց ծնողներին և խնամակալներին: Հայ աշակերտները, վոր թվով ճնշող մեծամասնություն եյին կազմում այդ նույն դպրոցում, զրկված եյին այդպիսի ներկայացումներ կազմակերպելուց. նրանց այդ չեր թույլատրվում:

Հրեյաները, հայերն ու թուրքերը համարյա թե բոլոր ուսուցիչների համար խորթ զավակներ եյին և նրանց ծաղրի եյին յենթարկում ամեն մի սխալ արտասանած բառի համար. «ջհուդ», «արմյաշկա» և «գալալոբի» բառերը նրանք հոլովում եյին ամեն տեսակ և ամեն անգամ: Պատիժն ել տարբեր եր—ռուսների համար՝ թեթև, իսկ մյուսների համար՝ խիստ: Բայց և այնպես կային հատ ու կենտ ուսուցիչներ, վորոնք հավասար աչքով եյին նայում ամենքիս, և այդպիսիներին մենք սիրում և հարգում եյինք, այնինչ մեզ ատող ուսուցիչների գլխին անասելի խաղեր եյինք խաղում, վորոնցից մեծ մասը, իհարկե, չեր բացվում, և մենք մեզ բավարարված եյինք զգում:

Այդ որերին Բաքվի ռուսաց խմբի անտրեպրենյոր Գանչարովը Թիֆլիսից մի քանի ներկայացման համար գաստրոլների յեր հրավիրել Թիֆլիսում գտնվող հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանին, վոր իր դերերը հայերեն և ֆրանսերեն լեզուներով եր խաղում, իսկ մնացածները՝ ռուսերեն: Այդ խմբումն եր աշխատում նաև ժողովրդական արտիստ Հովհաննես Աբելյանը, վոր դեռ շատ յերիտասարդ եր և փոքրիկ դերեր եր կատարում: Յես Ադամյանին յերեք անգամ տեսա՝ «Համլետ», «Ոթելլո» և «Վոճրագործի ընտանիքը» պիեսներում:

Ինձ վրա գործած տպավորությունը շատ ուժեղ եր և մեծ: Մեր Ռեալական դպրոցի բարձր դասարանի աշակերտները նրա կառքի ձիերը բացում եյին և իրենք կառքը քարշ տալով՝ հռչակավոր դերասանին տանում հասցնում եյին «Յեվրոպա» հյուրանոցը, ուր նա իջել եր: Գները սարսափելի թանգ եյին, այսքանը լավ հիշում եմ, վոր խորթ մորս և հորեղբորս կնոջ հետ նստած եյինք վեցերորդ կարգում և տոմսերին վճարել եյինք չորսական ռուբլի: Յես այնքան եյի տարվել Ադամյանի խաղով, վոր «Ոթելլո»-ի ներկայացման յերկրորդ արարվածից հետո, յերբ նրան դուրս կանչեցին և ծափահարում եյին, յես, փոխանակ ուրիշների նման ծափահարելու, կանգնել եյի տեղս և գլուխ եյի տալիս աջ ու ձախ: Մայրս ինձ կանգնեցրեց:

Ադամյանի մասին, վորի հետ յես ծանոթ չեմ յեղել, դերասանները, վորոնք նրա հետ խաղացել եյին և լավ ճանաչում եյին, մեկմեկու հակասող կարծիքներ եյին հայտնում: Վոմանք ասում եյին, թե նա շատ խորամանկ մարդ եր, վոմանք ել՝ թե շատ միամիտ եր, բարեսիրտ, ընկերասեր, հյուրասեր... Պատմում եյին, վոր նա ահագին ռոճիկ եր ստանում և սիրում եր սրանից-նրանից ել փող կորզել, և այդ բոլոր գումարները շռայլորեն ծախսում եր: Այդ ամենը, իհարկե, մի որ ճշտորեն կիմանանք, յերբ վորևե մեկը հանճարեղ դերասանի կյանքը կուսումնասիրի և գրի կառնի:

Հանգուցյալ Գևորգ Ջմշկյանի որագրում, վոր տպված ե ժամանակին՝ Անտոն Մայիլյանի ձեռքով Բաքվում հրատարակվող «Թատրոն և յերաժշտություն» հանդեսում, շատ աննպաստ կարծիք ե հայտնված հանճարեղ դերասանի մասին:

Ադամյանը միջին հասակի մարդ եր, բեմի վրա իրենից բարձրահասակ դերասանի կողքին չեր կանգնում, աշխատում եր միշտ նրանից հեռու մնալ, սիրում եր բեմի կենտրոնը և բոլոր իր խաղացած պիեսների միզանսցեններն այդ կերպ եր կազմում:

Յերկար տարիներ ուսումնասիրելուց հետո յե

միայն խաղացել նա էր կլասիկ դերերը և ամեն մի դեր նա տանգէր գլուխ, ինչպես ասում են՝ «ջրի պես»: Այն ներկայացումներին, որոնց նա մասնակցում էր, հայ



ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ

հասարակությունից զատ, թատրոն էին գալիս նաև ուհազգին թվով օտարազգիներ:

Հանճարեղ դերասանը կոկորդախտից վախճանվեց Պոլսում՝ 1891 թվի հունիսի 4-ին, քառասունմեկ տարեկան հասակում:

Այդ ժամանակվա բոլոր դեկորները կտավից էին շինված և կախովի էին: Օրինակ՝ «Համլետ»-ի պալատ

ներկայացնող դեկորը շինված էր յերկու-յերեք արկաներից և վերջին պատից, որ կախվում էին մեկ մեկուց յերկու մետր հեռավորության վրա: Նույն ձևի էին նաև անտառ ներկայացնող դեկորները, յերկու-յերեք արկա, վրաները նկարված ծառերով և ապա՝ վերջին վարագույրը, որի վրա նույնպես ծառեր էին նկարված. իսկ պետք յեղած դեպքում շինովի ծառեր էլ էին տնկում բեմի զանազան մասերում: Սենյակ ներկայացնող դեկորը կողքի պատեր չուներ, հետևի պլանում կախվում էր կտավից շինված՝ բեմի լայնությամբ վարագույր, վրան սենյակի պատ նկարված: Այդ վարագույրը դռների համար ուներ մեկ կամ յերկու բացվածք, որի հետևից ամրացնում էին շինովի դռները կամ պատուհանները: Իսկ յեթե կողքից էլ էին պետք գալիս դռներ կամ լուսամուտներ, ապա սրանց էլ ամրացնում էին կողքի կուլիսներին, որոնց թիվը չորս կամ հինգ հատ էր լինում բեմի աջ և ձախ կողմում, նայած բեմի խորության: Այդ կուլիսների վրա միշտ նկարված էին լինում վերևից ցած իջնող վարագույրներ՝ կապույտ կամ մուգ կարմիր գույնի: Այդ կուլիսներից ամեն մեկի հետևում հաստ ու բարձր, մինչև առաստաղը հասնող գերաններ էին ամրացված, որ միևնույն ժամանակ ծառայում էին թե կուլիսներն ամուր պահելու և թե լուսավորության պետքերի համար: Ամեն մի սյունի վրա՝ աջ ու ձախ պտտվող, բարձր, դարակներով՝ յեռանկյունի պահարանանման բաներ էին շինված և այդ դարակների վրա դարսվում էին նավթով վառվող լամպարներ: Յեթե պետք էր լինում բեմը լուսավորել, դարակները դեպի բեմն էին դարձվում, և լույսը բեմն էր ընկնում, իսկ յեթե ըստ պիեսի բեմի վրա մթություն պետք է լիներ, հակառակ կողմն էին դարձվում: Վերևի սոֆիտներն էլ նույն ձևով էին շինված. մի յերկար ծակոտած տախտակի վրա շարվում էին լամպարները և նրանց վրայից էլ սպիտակ թիթեղյա ամպհովանի, որ լույսը բեմն ընկներ, և այդ ամենը թոկերով վեր էր բարձրացվում և իջեցվում: Պատահում էր, որ ներկայացման ժամանակ լամպարները մխում էին, կամ նավթն էր ծակ լամպարներից կաթկթում

դերակատարների զգեստների վրա. վայն յեկել–տարել եր այդ ժամանակ լամպարավառին—ել հայհոյանք չեր մնում, վոր չթափեյին նրա գլխին:

Հուշարարն իր հուշելու պաշտոնից զատ,ստիպված եր, ըստ պիեսի ընթացքի, տեղը յեկած ժամանակ, թոկով, կարմիր կամ կանաչ շղարշով պատած աջ և ձախ կողմի յերկար շրջանակները բարձրացնել և իջեցնել՝ բեմը լուսավորող ավանսցենայում շարված լամպարների լույսը փոխելու համար: Այդ շրջանակները իջեցվում եյին բեմի հատակից ցած և վեր բարձրացվում: Այդ յերկու շրջանակները յերկու գույնի շղարշով եյին պատած, կանաչ և կարմիր, գործ եր ածվում կամ մեկը կամ մյուսը, նայելով թե բեմի վրա ի՛նչ գույնի լույս եր պետք—կարմի՞ր, թե՞ կանաչ:

Բայց և այնպես հմուտ ռեժիսյորները վորոշ եֆեկտներ ստեղծում եյին:

Վոգևորված Ադամյանի ներկայացումներից, յես ընկերներիցս միքանիսին շուրջս հավաքեցի (1886 թվին եր) և խորհրդակցելով՝ վճռեցինք, ռուսաց ներկայացումների նման, դպրոցի դահլիճում հայերեն ներկայացումներ ել տալ: Հեշտ եր վճռելը, բայց չափազանց դժվար՝ իրագործելը:

Մեկ ամիս շարունակ դպրոցի հայատյաց դիրեկտոր Կամենսկու դռները մաշելուց և նրա գլուխը տանելուց հետո, հազիվհազ կարողացա թույլտվություն ստանալ: Ինչ ասել կուզի, վոր մեծ եր մեր ուրախությունը: Կին չունենալու և ժամանակը կարճ լինելու պատճառով, ընտրեցինք յերեք վոդեվիլ՝ «Երկու քաղցածներ», «Երեք քաջեր» և «Խեչոյի թուղը»: Երեք պիեսում ել գլխավոր դերերը յես եյի կատարում: Ներկայացումը կայացավ: Հիմքը դրված եր, և քանի վոր յես ռեալական դպրոցումն եյի, տարեկան մի–մի ներկայացում եյինք տալիս:

Շատ հետաքրքրական եր մեր կյանքը ռեալական դպրոցում: Ունեյինք գաղտնի ընկերություն՝ «Խնամատար» անունով: Վիպասան Շիրվանզադեն իր հրատարակած «Խնամատար» վեպից միքանի հարյուր հատ նվիրել եր մեր ընկերության, և այդ անունով ել կնքե-

ցինք մեր ընկերությունը: Այդ ընկերությունն ոգնում եր աղքատ ուսանողներին՝ նրանց ուսման վարձը վճարելով, չունեվորների համար զգեստ գնելով, դասագրքեր հայթայթելով և այլն... Մեր յեկամուտները կազմում եյին տարեկան մի անգամ, ծննդյան տոներին, հունվարի 5–ին, հարուստների տները շրջելով և «ավետիս» յերգելով ձեռք բերած գումարները:

Քաղաքը բաժանում եյինք չորս մասի և ամեն մի մասի համար չորսհոգանոց խումբ կազմում: Այդ չորս հոգին յերկու յերգ եյին սովորում, և ինչ տուն վոր մտնում եյինք «ավետիս»–ից հետո ստիպում եյին մի բան յերգել, և մենք ել յերգում եյինք մեր սովորած յերգերը: Ամեն մի խումբ միջին թվով հավաքում եր մոտ հինգ հարյուր ռուբլի: Եվ ահա այդ յերկու հազարը մեզ շատ եր ոգնում՝ մեր ոգնությունը չքավոր աշակերտներին մեծացնելու: Անդամավճարներ եյինք հավաքում, զանազան ներկայացումներ դնելով, տոմսերը ցրելով և այլն... Հրատարակվում եր մի խումբ ուսանողների ձեռքով «Հույս» անունով ընդհատակյա շաբաթաթերթ: Մի անգամ ընդհարվեցի խմբագրության անդամների հետ և հեռանալով նրանցից, սկսեցի լույս ընծայել «Լեզու» անունով մի այլ շաբաթաթերթ, սակայն, չկարողանալով տանել «Հույս»–ի հարվածները, դադարեցրի և նորից միացա «Հույս»–ին: Մեր թերթի մեջ իր առաջին շրջանին գրած բանաստեղծությունններն եր զետեղում մեր առաջին բանաստեղծ Հակոբ Հակոբյանը: Ունեյինք ծածուկ գրադարան, վորտեղ գտնվում եյին Հերցենի, Չերնիշեվսկու և ուրիշների գրվածքները: Մեզ հավաքում եր իր մոտ, ժամանակին հայտնի, Սարգիս Կուկունյանը և նացիոնալիստական մոքեր քարոզում: Եվ այդ քարոզների հետևանքն այն յեղավ, վոր իմ լավ ընկերներից շատերն անցան Տաճկաց սահմանը և զոհ գնացին Աբդուլ–Համիդին, ինչպես և ինքը, Կուկունյանը, վոր ռուս կառավարության վճռով ուղարկվեց տաժանակիր աշխատանքների և վերջը՝ Սախալին կղզին:

«Հնչակ» եյինք կարդում շարունակ:

Երկրորդ տարին ներկայացրինք Փեշիքթաշլյանի

«Սամել»-ը, վոր գրված էր տաճկահայ բարբառով. նստեցի և վերածեցի ռուսա-հայերենի: Դերերը բաժանեցինք և, գիշերը ցերեկ շինելով, պատրաստեցինք: Դեկորները, վոր ըստ պիեսի, անտառ եյին ներկայացնում, նկարեցի յես՝ մեր նկարչության ուսուցիչ, վերին աստիճանի մի համակրելի անձնավորության՝ Խաչարովսկու ցուցմունքներով և ղեկավարությամբ:

Այդ դեկորը նկարելու համար յես գնացել եյի թատրոն և այնտեղ գոյություն ունեցող անտառի դեկորն եյի օրինակ վերցրել և մի քանի յերես առաջ նկարագրածս արկային սիստեմով շինել: Վորովհետև մեր դպրոցի բեմը շատ փոքր էր, այդ պատճառով էլ յերկու արկա և հետևի վարագույրն եյի շինել: Ուսուցիչս ինձ ցուցմունքներ էր տալիս պերսպեկտիվի մասին և բացատրում, վոր առջևի արկայի ծառերի բներն ավելի հաստ նկարեմ քան հետևներինը:

Ուսանողական նստարանից սկսել եյի աշխատակցել Թիֆլիսում հրատարակվող «Նոր-Դար» ամենօրյա լրագրին. նախ՝ սկսել եյի լուրեր տալ Բաքվից, ապա անցա թարգմանական բանասիրականների ու մի անգամ էլ ինքնուրույն «Յերեք մահ» անունով մի պատմվածք ուղարկեցի, վոր տպվեց:

Մարդասիրական ընկերության դպրոցը մի փոքրիկ թատրոնական դահլիճ և բեմ ուներ, ուր յերբեմն սիրողները, կամ յեկվոր դերասանները ներկայացումներ եյին տալիս: Մի անգամ գնացի սիրողների կողմից տրվող «Անջելլո» պիեսի գլխավոր փորձին, վոր ճաշից հետո յեր և ներկայացման նախընթաց որը: Յեկա տուն և յերեկոյան գովասանական փոքրիկ տեղեկություն գրեցի«Նոր-Դար»-ին: Հետևյալ առավոտ տարա նամակս փոստ-արկղ ձգելու և ապա դպրոց գնալու: Մարդասիրական ընկերության շինության առջևից անցնելիս տեսա, վոր դպրոցն այրվում է, այրվում է և թատրոնական դահլիճն իր բեմով: Իսկույն դպրոց մտնելով, պատռեցի ծրարը և նամակիս տակն ավելացրի հրդեհի լուրը: Նամակս ուղարկեցի: Հրդեհի պատճառով ներկայացումն, իհարկե, գլուխ չեկավ:

Անցավ մի քանի որ, ստացա «Նոր-Դար»-ի համարը՝

իմ գովասանական հոդվածով և հրդեհի լուրով միասին: Ստորագրություն չեյին դրել, գրված եյին յերկու տառ—Գ.Ա.:

Չանցած մի քանի որ, ստացա «Մշակ» լրագիրը, վոր այդ չկայացած ներկայացման մասին հոդվածը մեջ բերելով, ծիծաղում էր «Նոր-Դար»-ի վրա: «Նոր-Դար»-ն իրեն չկորցրեց և ինձ պաշտպանեց, գրելով, վոր յերիտասարդ թղթակիցը տեսնելով գլխավոր փորձը, վոր ներկայացման կրկնությունն է, իրավունք ուներ հոդվածը վաղորոք գրելու:

«Նոր-Դար»-ի Բագվի ջերմ բարեկամ և թղթակից Ա.Ն.-ը չափազանց վիրավորված «Մշակ»-ի հոդվածից, մի սուտ լուր է հաղորդում «Մշակ»-ին, նրա աշխատակցի անունից ոգտվելով: «Մշակ»-ը տպում է: Լուրը հաղորդում էր հայտնի հարուստ վաճառական Ներսես Կրասիլնիկյանի մահվան և նրա թողած ահագին կտակի մասին, վոր արել է ազգին: Այս հարուստին Բագվում շատ լավ եյին ճանաչում և գիտեյին նրա արտասովոր ժլատությունը: Իսկ ամենագլխավորն այն էր, վոր հարուստն ամենևին մտադրություն էլ չուներ մեռնելու և դեռ առոք-փառոք ապրում էր իր պալատներում: Բնականաբար՝ Գրիգոր Արծրունին առաջնորդող առաջնորդողի հետևից գրելով, արտահայտում էր այն միտքը, թե հայերը այլասերված բարքերի տեր են:

Հերթը հասնում է «Նոր-Դար»-ին: Այժմս էլ «Մշակի» աշխատակիցներից մեկն է նրան շփոթեցնում, գրելով կենդանի մարդու մասին.—«Մեռավ ամենքից սիրված և հարգված ավագ քահանա Խորեն Միրզաբեկյանը...»

Յեվ այդ յերկու լրագրերն էլ մի ամբողջ տարի զբաղված եյին այդ հարցի շուրջը ջուր ծեծելով և առաջնորդող առաջնորդողի հետևից թխելով:

Այո, իսկապես վոր, բարքեր եյին...

Աշխատել եմ նաև «Արձագանք»-ում, «Մշակ»-ում և «Հուշարար»-ում:

Հոդվածներիս նյութը թատրոնն էր:

Արդեն վարակված եյի. թատրոնի համն զգացել եյի. էլ վոչինչ չէր կարող կանգնեցնել ինձ, մանա-

վանդ, յերբ մեր առաջին ներկայացման մասին մեր աշակերտական ընդհատակյա «Հույս» շաբաթաթերթի մեջ լույս տեսավ մեր սիրելի բանաստեղծ Հակոբ Հակոբյանի քննադատականը մեր խաղի մասին, ուր առանձնապես իմ մասին շատ մեծ գովասանքով եր խոսում և լավ ապագա գուշակում ու խորհուրդ տալիս ինձ՝ նվիրվել բեմին:

Նախաճաշիկի համար տնից ինձ տված կոպեկները յես հավաքում եյի և խորթ մորիցս մեծ դժվարությամբ թույլտվություն ստանալով՝ հաճախում եյի ռուսաց խմբի և մեկ մեկ ել հայերեն տրվող ներկայացումներին:

Այդ ժամանակներում Բաքու եյին յեկել դերասաններ Սաֆրազյան ամուսինները և սիրողների մասնակ-

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱՖՐԱԶՅԱՆ

ցությամբ ներկայացումներ եյին տալիս: Պետի խաղային «Վարդանանց պատերազմ»-ը, վորի մեջ Փարամոն իշխանի դերն ինձ նշանակեցին, և յես, 1888 թվի մարտի 5-ին, առաջին անգամ բեմ դուրս յեկա Թաղիևի նորակառույց մեծ թատրոնում: Այդ որվանից Բաքվում հայերեն ներկայացում չեր անցնում, վորին չմասնակցեյի:

Ստեփաննոս Սաֆրազյանը դերասան լինելով հանդերձ, Բաքվից 1892, 93 և 94 թվերին, ինձ՝ Թիֆլիս գրած իր նամակներում շարունակ խորհուրդ եր տալիս թողնել բեմը, քանի դեռ ուշ չե և առևտրով զբաղվել: Նա այդ ամենը բացատրում եր նրանով, վոր հայ թատրոնն ապագա չունի, դերասանները մշտական սովի յեն մատնված և այլն...

Ինքը վերջն այդպես ել արավ և, Պարսկաստանի իր մեծ ճանապարհորդությունից հետո, Բաքու վերադառնալով, բեմը բոլորովին թողեց ու դարձավ առևտրական միջնորդ, վորի շնորհիվ բավականին մեծ հարստություն ձեռք բերեց:

Սաֆրազյանը հայ թատրոնի «վոսկեդարի» շրջանի դերասան եր: Պատկանում եր հին շկոլային և բոլոր դերերը կատարում եր և խոսում կեղծ-կլասիկ ձևով և տոնով: Լավ տիրապետում եր թուրքաց լեզվին, իր ռեպերտուարի մեջ ուներ միքանի թուրքերեն պիեսներ և խաղում եր աննման:

Ծանր, բայց անաջող ոպերացիայից հետո, մեռավ Թիֆլիսում՝ 1913 թվին:

Հայ բեմի վրա խաղացվող պիեսները շատ ել բազմակողմանի չեյին. «Արշակ Բ.», «Վարդանանց պատերազմ», «Շուշանիկ», «Սանդուխտ կույս», «Սմբատ Ա.», «Յերվանդ Բ.» և այլն—պատմական պիեսներ և հայկական թատրոնի «վսկեդարից» մնացած ֆրանսիական մելոդրամներ.—«Լյուսի Դիդիե», «Կողոպտված պոստ», «Թուղթ խաղացողի կյանքը», «Փարիզու աղքատներ», «Կույրը», վորոնք բոլորն ել վերջանում եյին «բարու» հաղթանակով և «չարի» պարտությամբ:

Այդ ժամանակներում Բաքվում կային բավականին հմուտ և մշտական սիրողներ, վոր բոլոր ներկայացումներին մասնակցում եյին, դրանցից ամենահայտնիներն եյին՝ Սմբատ Լալայանը, շատ հարուստ ընտանիքի զավակ, Հակոբ Աղախանյանը (Ջահել—Հակոբ մականունով մի փականագործ) և Աղալո Նիազյանը, նահանգական դատարանի պաշտոնյա: Սրանք յերկար տարիներ աշխատեցին բեմի վրա և սրանցից ամեն մեկն իրավունք

ջներ կոչվելու իսկական դերասան, այնքան նրանք հմուտ և փորձված էին:

Ցերեկն էլ վաղուց արդեն մեռած են:

Դրանցից զատ, ավելի հմուտ և հին սիրողներ կային—Ալեքսանդր Աբելյանը, Զալաբյանը և տիկին Արզումանյանը:

1879 թվի սեպտեմբերի 3-ին «Մեր տանց համարման» պիեսով սկսվեց հայ թատրոնի «վոսկեդարը», յերբ դերասան Գևորգ Չմշկյանը Թիֆլիսի Կոմիտեյի պատվերով գնաց Պոլիս և այնտեղից բերեց Պետրոս Ադամյանին, Աստղիկին և Սիրանույշին: Կոմիտեն կազմում էին՝ Գաբրիել Սունդուկյանցը, Ալեքսանդր Մանթաշյանը, Իշխան Ամատունին և Աբգար Հովհաննիսյանը: Այդ հրավիրված դերասաններն իրենց հետ բերել էին և իրենց խաղացած պիեսները, ֆրանսիական կեղծ մելոդրամներ և, իրենց իսկ պահանջով, այդ պիեսներն էին շարունակ բեմադրվում: Այդ պիեսները լի էին՝ սիրո, սպանության, թունավորման, դավաճանության և ահ ու սարսափի տեսարաններով: Հասարակությունը, վոր դեռ շատ խակ էր, լցնում էր թատրոնը: Նրանց գնալուց հետո այդ պիեսները ժառանգություն մնացին մի առժամանակ տեղական դերասաններին:

Իմ ուշադրությունը գրավել էր մի բան, վորի մասին յես շատ մտածեցի և միայն յերկար տարիներ հետո հասկացա. համարյա թե բոլոր հայ դերասաններն էլ այդ ժամանակ բեմի վրա խոսելիս յերգում էին, ձեռքերն անվերջ շարժում, թափահարում և մի առարկայի կամ իրի մասին պատմելիս, անպատճառ ձեռքերով այդ իրն էին պատկերացնում: Այդ բանը յես ռուսաց ներկայացումներին, նրանց դերասանների մոտ չեյի նկատում: Հետո միայն յես հասկացա, վոր այդ ամենն Արշակների և զանազան Վարդանների ազդեցությունն է: Կեղծ խոսքեր, կեղծ դրություն բեմի վրա, կեղծ շկոլա... Ամենքն էլ խոսում էին պաֆոսով, կեղծ կլասիկ տոնով, և այդ ամենը Ֆրանսիայից պոլսեցիների միջոցով յեկել ու վարակիչ ազդեցություն էր գործել նաև Կովկասահայ դերասանների վրա: Հետո, իհարկե, կամաց-կամաց կյանքի պիեսներ խաղալով, մի կողմ

նետվեց այդ կեղծ տոնը, խոսելու ձևը և բնականը բռնեց իր տեղը:

Բեմադրությունները մեծ մասամբ շատ աղքատ էին, լուսավորությունը, վոր նավթի յեր՝ ավելի քան վողորմելի: Կանոնավոր խմբեր համարյա չկային, թափառում էին դերասաններից յերկու-յերեք հոգի և սիրողներ հավաքելով, ներկայացումներ տալիս:

Կայսերական տոներին ներկայացումներից առաջ խմբի բոլոր անդամները պարտավոր էին դուրս գալ բեմ և խմբով յերգել կայսերական « Боже царя храни» հիմնը. այդ որենքը յերկար ժամանակ գործադրվում էր, և յես էլ քիչ անգամ չեմ մասնակցել այդ խմբերգերին:

Շատ կուրյոզներ էին պատահում այդ ներկայացումներին: Հիշում եմ մի ներկայացում, յերբ խաղում էին «Շուշանիկ»-ը, յերկրորդ արարվածին, վրաց Վազգեն արքայի մուտքից առաջ, շտապ պիտի մտներ սենեկապետը և հաղորդեր.—«Վազգեն արքան գալիս է և շատ բարկացած է...», յերբ հասարակությունը լարված սպասում էր, թե ի՛նչ պիտի կատարվի, սկսեց քահ, քահ, ծիծաղել, վորովհետև ներս մտնելիս սենեկապետի յերկար նիզակը դեմ առավ դռան ճակատին, ու դուռը կրնկահան լինելով՝ ընկավ սենեկապետի և բեմի վրա գտնվողների գլխին:

Իսկ մի ուրիշ անգամ, յերբ խաղում էին Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ից փոխադրած «Աղասի» պիեսը, յերկրորդ արարվածին, Հասան-Խանի դերակատար մի դերասան, վոր ողի շատ էր սիրում, իր, ա՛րդեն կեսը խմած ողու շիշը գրպանն է դնում և բեմ դուրս գալիս: Այդ ժամանակ վրա յե հասնում Աղասին և բռնելով նրան, գցնում է գետին ու սկսում մտրակով ծեծել: Ահա այդ գետին գցելիս կոտրվում է ողու շիշը, և յերբ Հասան-Խանը գետնից բարձրանում է, հասարակությունը նկատում է բեմի վրա գոյացած լիճը և սկսում սրախոսություններ անել բարձր ձայնով:

Չմոռանամ ասել, վոր մեծ պասի ընթացքում ռուս հոգևորականությունը մեղք էր համարում, բացի աստծուն աղոթելուց, վորևէ բանով զբաղվել, և այդ պատճառով էլ ճիշտ յոթը շաբաթ խստիվ արգելված

էին բոլոր լեզուներով ներկայացումները, իբրև սատանայի գործ: Թույլատրվում էին միմիայն դասախոսություններ և համերգներ: Մեծ պասն ընդհանրապես սկսվում էր փետրվարի վերջին օրերը և տևում էր յոթ շաբաթ. Նրան հաջորդում էր զատիկը:

Առածն ասում է. «անճարը կերել է բանջարը»: Յեվ ահա այդպիսի մի անճար ռուս դերասան փորձել էր, չգիտեմ որ քաղաքում, աֆիշի վրա հայտարարել, թե այս ինչ պիեսից տեսարաններ կկարդացվեն...Բոլոր դերակատարները բեմ էին դուրս գալիս ձեռքերին տետրակներ, որ ասել է թե՝ չեն խաղում, այլ դերերն են կարդում: Ներկայացումը գնում էր ինչպես հարկն էր, միայն աչքի էին ընկնում դերասանների ձեռքի տետրակները, որ կամաց-կամաց անհետանում էին և ներկայացման կեսից դենն արդեն տետրակ չէր յերևում բեմի վրա՝ դերասանների ձեռքերին:

Այդպիսի ներկայացումներ մենք էլ ենք տվել մեծ պասի ընթացքում:

Հորս մահվանից հետո մեզ՝ որբերիս վրա խնամակալ էին նշանակել մեծ հորեղբորս, որ մի նահապետական մարդ էր և իր կյանքում թատրոն յերբեք չէր տեսել, սակայն թատրոնի ջերմ թշնամի յեր, թե ինչո՛ւ, մինչև օրս էլ չգիտեմ:Նրան դուր չէր գալիս իմ թատրոնով զբաղվելը, և նա ամեն կերպ աշխատում էր ինձ հեռացնել թատրոնից: Նրան այդ բանում օգնում էր նաև խորթ մայրս, որ նույնպես կատաղի թշնամի յեր թատրոնի, մանավանդ նա չէր կարողանում մոռանալ այն բանը, որ մի օր մեր ուսանողական խմբի ներկայացման ժամանակ պատռել եյի իմ նոր վարտիքը: Մի քանի անգամ յերեկոները թատրոնից վերադառնալիս, մեր դռնապանը, ըստ իրեն տված հրամանի, դուռը չէր բացում, որպեսզի գիշերը դուրսը մնալով, խելքի գամ: Այդպիսի պարագաներին վազել եմ նորից թատրոն և աղաչանքով, պաղատանքով, կամ կաշառքով, թույլտվություն ստացել ու կուչ յեկել թատրոնի մի անկյունում մինչև առավոտ, կամ թե յերբեմն ըն-

կերներիս մոտ եյի գնում, բայց շատ քիչ, որովհետև ամաչում եյի նրանց հայտնել ինձ տուն չթողնելու պատճառը:

Ռեալական դպրոցից հետո վճռեցի մի տարով գնալ Մոսկվա, սակայն ի՞նչպես անեյի. չէ՞ որ հորեղբայրս չէր համաձայնի, յեթե իմանար, որ թատրոնն է ինձ քաշում: Պետք էր խորամանկության դիմել, և յես էլ հնարեցի, թե գնում եմ հաշվապահություն սովորելու: Հորեղբայրս, որ շարունակ ինձ խրատում էր, թե ինձ չի սազի, որ վաճառականի որդի լինելով, դերասանություն անեմ, որ ավելի վայել է գնամ իրենց վաճառանոցում առևտուր անել սովորեմ և «մարդ» դառնամ, շատ ուրախացավ, մտքումը կարծելով, թե վերջապես խելքի յեմ յեկել և (այդ ժամանակ խորթ մայրս մեռել էր) տվեց իր համաձայնությունը: Գնացի Մոսկվա, մտա առևտրական կուրսերը, ուր յերեկոյան դասախոսություններին չեյի հաճախում և փոխարենը հաճախում եյի մասնավոր դրամատիկ կուրսերը, որ մի քանի ամսից հետո թողեցի, զուտ ժամավաճառ հաշվելով, որովհետև գործնական աշխատանքներ չեյին տարվում և ամեն գիշեր սկսեցի թատրոններ հաճախել, իսկ այդ ժամանակ Մոսկվայում, բացի կայսերական թատրոններից, կային նաև չորս-հինգ ուրիշ դրամատիկ թատրոններ:

Ամենից շատ սիրեցի և ջերմորեն հաճախում եյի կայսերական Փոքր և Կորշի թատրոնները, ուր կոմեդիաներ շատ էին խաղացվում: Փոքր թատրոնում մի քանի անգամ տեսել եմ «Վերաքննիչ», «Խելքից պատուհաս» և Մոլիերի պիեսները: Ինձ չափազանց դուր չեյին գալիս «Յերկրորդ յերիտասարդություն», «Որվա չարիք» և այլ թխված պիեսները: Կորշի մոտ էլ գնում էին «Վերաքննիչ» և նման պիեսներ, և այդտեղ էլ գնում եյի Փոքր թատրոնի հետ համեմատություն անելու համար: Կային Կորշի մոտ դերասաններ, որ որոշ դերերում ավելի լավ էին, քան Փոքր թատրոնում և ընդհակառակը: Չեյի սիրում Կորշի մոտ չափազանց հաճախ բեմադրվող ֆրանսիական թեթև, բայց նախվ բովանդակության պիեսները: Խմբի մեջ կային Գրա-

դով-Սակալով, Սվետլով, Շմիտով, Վյազեմսկի և ուրիշ կոմիկներ էլ, վոր խաղում եյին շատ աշխույժ և կենդանի: Ահա այդ եր պատճառը, վոր յես կապվեցի Կորշի թատրոնի հետ և մշտական հաճախորդը դարձա: Յես այդ թատրոնում շատ բան սովորեցի:

Բեմի սարք ու կարգի, դեկորների վրա մեծ ուշադրություն եր դարձվում, և ներկայացումները գնում եյին շատ հարթ ու սահուն:

Ներկայացումներից հետո, գնում եյի Պետրովկա փողոցի անկյունում գտնվող այն ճաշարանը, ուր ներկայացումներից հետո հավաքվում եյին բոլոր թատրոնների դերասանները և խմբերով նստած ընթրում եյին: Յես միայնակ նստած, նայում եյի իմ սիրած դերասաններին և հիանում, հիշելով բեմի վրա ամեն մեկի կատարած այս կամ այն դերը:

Հետո ծանոթացա մի քանիսի հետ:

Այդ տարի Փարիզից Մոսկվա գաստրոլների յեր յեկել «Կոմեդի Ֆրանսեզ» հայտնի խումբն ամբողջ կազմով: Խմբի մեջն եյին նաև Կոկլեն յեղբայրները: Այդ խմբի հինգ ներկայացման ներկա յեղա: Ինձ վրա տարորինակ տպավորություն թողեց դերասանների խոսելու յեղանակը. Նրանք խոսում եյին կիսաերգելով, բայց խաղում եյին հրաշալի, աշխույժ, կենդանի. Հուշարարը գոյություն չուներ կարծես:

Մի տարի հետո վերադարձա Բաքու, մտա հաշվապահի ոգնականի պաշտոնով մի նավթարդյունաբերողի գրասենյակ: Արդեն ռոճիկ եյի ստանում, պետք չունեյի հորեղբորս ձեռքին նայելու: Ինձ համար մի սենյակ վարձեցի և բոլորովին նվիրվեցի թատրոնին: Այդ ժամանակները հայկական ներկայացումների փորձերը միշտ ճաշերից հետո եյին տեղի ունենում, վորովհետև թատրոնի բեմն առավոտները զբաղված եր լինում ռուս խմբի փորձերով:

Բաղդիցս հատ ու կենտ դերասաններ չուտ չուտ եյին գալիս Բաքու, և բավականին մեծ թվով ներկայացումներ եյին տրվում: Ծովյանյան ազգանունով մի դերասան կար, վորին հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանը Ծովակ անունով եր կնքել. Նա էլ մեկ-մեկ

ներկայացումներ եր տալիս, և ինձ միշտ լավ դերեր եյին բաժին ընկնում: Նա իմ ամենամոտ ընկերներից մեկն եր, ապրում եր Բաքվում, ուներ շատ ուժեղ բարիտոն ձայն, և այդ ձայնը կատարելագործելու համար, նրան, հանգուցյալ Խրիստափոր Կարա-Մուրզայի խորհրդով և խնդրանոք, վոմն Արսեն Կրասիլնիկյան, Բաքվի հարուստներից, ուղարկեց Իտալիա, խոստանալով իր վրա վերցնել նրա ուսման ծախքը, սակայն յերկու-յերեք ամիս փող ուղարկելով, այլևս չուղարկեց, և Ծովակն անոթի, ծարավ մնաց ոտար յերկրում:

2

Յերկար ժամանակ եր անցել թատրոնի «վոսկեդարից», այն է՝ 1881 թվից, յերբ Թիֆլիսի Կոմիտեն այլևս փող չուներ խմբեր պահելու համար, ու հայ թատրոնն այնտեղ և ամենուրեք մեռած եր, բառիս բուն նշանակությամբ: Դերասանների մեծամասնությունը մտել եր ծառայության այստեղ և այնտեղ, իսկ մի քանիսն էլ թափառականի նման քաղաքից-քաղաք եյին շրջում և պատահական ներկայացումներ տալիս, գլուխները պահելու համար: Զմշկյանը, Տեր-Դավթյանը, Սուքիասյանը, Միրաղյան մեծը և ուրիշները պաշտոններ ունեյին, ու թեև փոքրիկ խմբեր գոյություն ունեյին ու ներկայացումներ եյին տալիս, սակայն այդ ամենը մշտական, պլանային բնույթ չեր կրում: Միայն Հովհաննես Աբելյանն եր, վոր 1899-90 թվին Բաքվում փորձեց իր ուժերով մի խումբ պահել՝ Թիֆլիսից դերասաններ հրավիրելով: Վորքան հիշում եմ, մուտքերը միջակ եյին, ներկայացումների վորակը՝ այն ժամանակվա համար միջակից բարձր: Այդ խումբը կազմվել եր իմ Մոսկվա գտնված ժամանակ, և յես չկարողացա մասնակցել նրան:

Ահա այդ ժամանակները ռուս բեմի դերասան, հայազգի Գևորգ Պետրոսյանը լքեց ռուսաց բեմը, յեկավ Թիֆլիս և տեսնելով հայ թատրոնի դրությունը, դես ու դեն ընկավ, հավաքեց թատրոնի «բարեկամներին», ունեվորներին, արծարծեց թատրոնի նշանակությունը,

կոմիտե կազմեց և նրանց համաձայնությամբ Պոլիս գնաց և բերեց առաջին թատերաշրջանի համար՝ Սիրանուշին, Դավիթ Թուրյանին և յերիտասարդ Արմեն Արմենյանին, յերկրորդ թատերաշրջանի համար հրավիրեց Հրաչյային և Պիննեմեճյան ամուսիններին, և յերկու տարի խումբը գործեց մեծ հաջողությամբ: Գործի մտած, պաշտոնի տեր դերասանները թողել եյին իրենց փափուկ պաշտոնները և դիմել Թիֆլիս՝ խմբում աշխատելու: Այդքան մեծ եր դերասանների սերը դեպի թատրոնը, վոր նրանք զոհելով իրենց ապահով ռոճիկները, նվիրվեցին թատրոնին:

Այդ թատերաշրջաններին (1890—91 թ.թ.) մի առանձին, աչքի ընկնող բան չկատարվեց, սակայն հասարակությունը քնից արթնացավ և թատրոնի պահանջը կամաց-կամաց զգացվեց: Առաջին թատերաշրջանին Սիրանուշն ու Թուրյանը շատ մեծ ընդունելություն գտան, ինչպես նաև Հրաչյան՝ յերկրորդ թատերաշրջանին, սակայն Պիննեմեճյան ամուսինները, մանավանդ ինքը՝ Ռուբեն Պիննեմեճյանը, չկարողանալով մրցել Հ. Աբելյանի դեմ՝ դուր չեկան հասարակությանը և, ստիպված, թատերաշրջանը կիսատ թողին ու վերադարձան Պոլիս: Այդ թատերաշրջաններին Աբելյանը մի անգամ «Կամելիազարդ տիկին»-ի մեջ մասնակցեց բոլորովին հիվանդ, շարժվել չեր կարողանում, իսկ նրան փոխարինող վոչ վոք չկար և ներկայացումն ել հետաձգել չեյին ցանկանում: Գր. Արծրունին «Մշակ»-ի մեջ իր քննադատականում գրել եր, թե Աբելյանը նման եր սիրահարված գիմնազիստի և վոչ թե Արման Դյուվալին: Յերբ մյուս որն Աբելյանը գնում ե խմբագրատուն՝ բացատրելու Արծրունուն, վոր ինքը հիվանդ լինելու պատճառով ե վատ խաղացել, Արծրունին տանում ե ու բերում,—«բեմը հիվանդանոց չե»:

Գ. Պետրոսյանը խումբը վերցնելով 1892 թվին յեկավ Բաքու և մեծ հաջողությամբ տվեց մի քանի ներկայացում: Նրա հետ եյին Սիրանուշը և Աբելյանը: Հիշում եմ՝ այդ ներկայացումներին ամեն որ կասայի առաջի տախտակյա ցանկապատը կոտրված եր

լինում, խուռն բազմության պատճառով, վոր վաղորոք հավաքվում եր այդտեղ տոմսակ ձեռք բերելու:

Թիֆլիսում, խումբը Բաքու գալուց առաջ, դերասանուհիներից մի քանի հոգի՝ Վարդուհին, Զաբելը, Փառանձեմը, Մելիքյանը և ուրիշները պահանջել եյին ապահով ռոճիկներ, խումբը համաձայնել եր նրանց տալ մինիմում ռոճիկ և խոստացել եր ավելացնել, յեթե գործերը հաջող գնան: Յերբ յեկան Բաքու, գործերն անսպասելիորեն լավ գնացին, բայց խմբի ղեկավարներն իրենց խոստումը գցել եյին այսորվան, վաղվան: Դերասանուհիները տեսնելով նրանց ապերախտությունը, մի գիշեր, ներկայացումից առաջ, թատրոն չգնացին և պահանջեցին բերել իրենց հասանելիքները, սպառնալով, վոր վոչ մի կերպ թատրոն չեն գնա, ներկայացումն ել գլուխ չի գա: Յերկար գնալ-գալուց հետո, դերասանուհիների արդար պահանջը կատարվեց, և ներկայացումը կայացավ, սակայն նշանակված ժամից շատ ուշ:

Ինձ ևս վերցրին իրենց մեջ և, յես մասնակցեցի նրանց բոլոր ներկայացումներին:

Նրանց գնալուց հետո սկսվեց խոլերային մեծ համաճարակը, և Բաքվից փախչողների թիվը շատ մեծ եր: Գնացի յես ել հայրենիքս՝ Շուշի, ուր յեկան նաև ուսուցիչներս—Սաֆրազյան ամուսինները: Այստեղ, սիրողների մասնակցությամբ միքանի ներկայացում տվինք, ու յես ոգոստոսին Թիֆլիսի Կոմիտեյից (իմ ավագ ընկեր Հովհաննես Աբելյանի թախանձանոք ինձ ընդունել եյին խմբի մեջ) հրավեր ստացա և սեպտեմբերին գնացի Թիֆլիս ու մտա խումբը: Հրավիրել եյին հրապարակի վրա գտնվող բոլոր դերասաններին: Ինձ քսանհինգ ռուբլի ռոճիկ եյին նշանակել: Կոմիտեյի անդամների մեջ կային այնպիսի մարդիկ, վոր թատրոնի հետ վոչ մի կապ չունեյին, և այդ հիման վրա ծագած անբավականությունների պատճառով այն լուծվեց, ու խումբը վերցրեց վոմն գնդապետ Ցենիկոլայան, պայմանով, վոր դերասանները վորոշ տոկոս զիջեն իրենց ռոճիկներից:

Հետաքրքիր անձավորություն եր այդ Ցենիկոլա-

փյանը․ նա դահլիճ չէր մտնի, մինչև վոր վարագույրը չբացվեր, միայն այն ժամանակ էր մտնում և կոշիկների խթանները չրխչրխկացնելով գնում և նստում առաջին կարգում, վոր բոլորն էլ ուշադրությունն իր վրա դարձնեն: «Հավուց Թիատրի փողրաթն իմ վիկալի»,— ասում էր Թիֆլիսի բարբառով իր ամեն մի ծանոթին և անծանոթին, և դրանով հպարտանում:

Ռոճիկներն ինքն իր ձեռքով էր բաժանում և ամեն մի ռուբլու վրա մի քանի անգամ, բառացի կերպով, թքում էր, մինչև վոր ձեռքներս էր տալիս:

Իմ ռոճիկը դարձավ քսաներեք ռուբլի և քսանհինգ կոպեկ:

Ներկայացումները տեղի եյին ունենում Պետական Թատրոնում, ուր խաղում եյինք յերկուշաբթի և հինգշաբթի որերը:

Խմբի ռեժիսորը վոմն Վահան Մամիկոնյանն էր, Թիֆլիսի նախկին սիրողներից: Այն ժամանակվա համար լավ ռեժիսոր էր համարվում:

Իհարկե, այդ ռեժիսորությունը չպետք է հասկանալ այն մտքով, ինչպես այսոր: Նրա բեմադրած պիեսները, յեթե թարգմանական եյին, ճիշտ ընդօրինակումն եյին ռուս բեմի վրա դրվածների, այսինքն՝ մի շաբլոնով, վոր անցնում եյին սեզոնից սեզոն և վոչ վոք գլուխ չէր կոտրում՝ նորություն կամ թարմություն մտցնելու: Ինչ վերաբերում էր նոր բեմադրվող, կամ ինքնուրույն պիեսներին, այդտեղ նրան ոգնում եյին խմբի գլխավոր դերասանները, իհարկե, աչքի առաջ ունենալով իրենց համար բեմի վրա, վորքան կարելի յե, հարմար և գեղեցիկ դիրք ստեղծելը:

Նրան շատ էր ոգնում նաև հանգուցյալ բեմահարդար Ադամ Սարգարյանը, վոր բավականին փորձված էր և լավ ճաշակի տեր: Վերջինս ոգտվում էր ոպերայի հարուստ գարդերոբից, ռեկվիզիտից, դեկորներից, և շատ ճոխ ու գեղեցիկ բեմ հարդարում:

Այս թատրոնական կոմիտեները կազմվում եյին, իհարկե, միշտ հարուստներից, վորոնք ընտրվում եյին իրենց տված կոպեկների սիրուն միայն, իսկ թատրոնական գործ վարելու մեջ նրանք բառացի կերպով

պրոֆաններ եյին: Շատ հպարտ ու գոռոզ եյին նրանք, դերասանների վրա նայում եյին ինչպես իրենց ստորադրյալների վրա, բացի մեծերից, իհարկե: Ձեռք տալ, բարևել—այդ նրանց մոտ սովորություն չէր: Մի անգամ նրանցից մեկը, վոմն վաճառական Թումյան, դառնալով դերասաններին, ահա թե ի՛նչ ասաց․—«մի՛ վախենաք, վոր գործերը վատ գնան, դուք անհանգստանալու տեղիք չունիք, ձեր ռոճիկները լիովին կստանաք, յես ձեզ կուղարկեմ Ագուլիսի իմ այգիները խաղող քաղելու»:

Այդ թատերաշրջանին Գ. Պետրոսյանն իր բենեֆիսին Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ն էր դրել, վորի մեջ կատարում էր Ջացկու դերը: Իբրև ռեժիսոր, այդ ներկայացման համար հրավիրված էր Իշխան Ամատունին: Ինձ տվել եյին մի անխոս, խուլ իշխան Տուգաուխովի դերը: Մինչև ներկայացումը ինձ վրա այնքան չեյին «ուշադրություն» դարձրել, վոր մինչև անգամ ռեժիսորն ինձ չէր ճանաչում, բայց ներկայացման գիշերը, յերբ դերս վերջացավ, Իշխան Ամատունին դես ու դեն էր ընկել, թե ո՞ւր է Տուգաուխովի դերակատարը: Ինձ բերին նրա մոտ, նայեց աչքերիս, վոտքերիցս մինչև գլուխ, կարծես թե նոր էր ինձ տեսնում և բարեհաճեց գովել, թե լավ ապագա կունենամ, յեթե միայն չծուլանամ և աշխատեմ: Յես, իհարկե, յոթերորդ յերկինքը բարձրացա:

Գրիմս արել էր հայտնի Գրեգուարի վարսավիրանոցի աշխատակից վրացի Նիկոն, վոր և շարունակ ինձ սովորեցնում էր գրիմ անելը:

Այս թատերաշրջանին, 1893 թ. հունվարի 28-ին տոնվեց հայ թատրոնի 35-ամյակը․ մասնակցում եյին՝ ֆրանսիացի հայտնի յերգչուհի Մոնբազոնը, ֆրանսիացի յերգիչ Լասսալը, ռուս դերասան-անտրեպրենյոր Ֆորկատին և վրաց բեմի աստղ՝ Վասո Աբաշիձեն: Այդ որվա մեծ մուտքը մտավ անտրեպրենյոր՝ գնդապետ Ցենիկոլովյանի գրպանը:

Ցավ ի սիրտ պիտի արձանագրեմ, վոր այդ քիչ թե շատ լուրջ թատերաշրջանին տրվող պիեսները մեծ մասամբ նույն տափակություններն եյին, ինչ մինչև

այդ օրերը—«Սմբատ Ա.», Արշակ Բ.», «Երվանդ Բ.», «Փարիզու աղքատներ», «Դարբնոցապետ» և այլն...

Իսկ ի՞նչ էին ներկայացնում իրենցից այդ Արշակները և Վարդանները. հայ թագավորներ, հայ իշխաններ, վորոնք միշտ և ամեն տեղ միայն պատերազմում էին պարսիկ թագավորների դեմ, հաղթում, հաղթվում և ճառամաբանում իրենց և հայ «կորիչ» գործերի ու նախարարների «քաջության» մասին: Զափանք տափակ և վոչ սրամիտ, թխված պիեսներ՝ լի նացիոնալիստական կրքեր բորբոքող տեսարաններով:

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Խմբի անդամներն էին՝ Աբելյանը, Պետրոսյանը, Տեր-Դավթյանը, Հարությունյանը, Պարոն-Սարգսյանը, Արաքսյանը, Ավետյանը, Աբրահամյանը (հրաշալի Ֆրանց էր Շիլլերի «Ավազակներում», սակայն էր [illegible]—

ղանդը լիովին չցուցադրած, հանկարծամահ յեղավ նույն թատերաշրջանի կեսին), Մամիկոնյանը, Ստեփանյանը, Վրույրը, Սիրանույշը, Վարդուհին, Զաբելը, Ախաչյանը, Փառանձեմը, Մելիքյանը և ուրիշները: Սիրանույշը, Պետրոսյանն ու Աբելյանը խմբի աչքն էին, զարդը, փորձված և կարող դերասանները: Տեր-Դավթյանը խմբի առաջին կոմիկն էր, հասարակությունից սիրված: Մյուսները բավականին բարեխիղճ և պիտանի ուժեր էին:

Վարդուհի և Տեր-Դավթյան, յերկու դերասան,

ՎԱՐԴՈՒՀԻ

վորոնց մեկը մյուսից զատել չի կարող և վոչ մեկը: Ով չի տեսել այդ յերկուսին «Պեպո»-յի մեջ՝ Շուշանի և Գիքոյի դերերում, նա չափազանց շատ մեծ գեղարվեստական հաճույք է կորցրել: Յերկուսն էլ Թիֆլիսի Հավ-

յաբարի թաղի ծնունդ, ժողովրդի ծոցից ծնված, յերկուսն էլ մեծ արտիստներ․․

Նրանք յերկուսն էլ դեռ կենդանի յեն, վողջ և առողջ: Իմ թույլ գրիչը չէ, վոր նրանց գնահատականը պիտի տա: Կգա ժամանակ և այդ յերկուսի մասին կգըրվի իրենց տաղանդին արժանավայել գնահատականը:

Այսքանը միայն կասեմ, վոր նրանց ներկայությունը հին խմբերում, ամենաթույլ անդամ խմբերում, բավական եր այդ թույլ խմբի վորակը բարձրացնելու:

Մեր փորձերը տեղի եյին ունենում բեմի վրա, ճաշերից հետո, շատ աղոտ լույսի տակ (գազի լուսավորություն եր) ժամը յերեքից, յերբ վերջանում եյին ռուս խմբի փորձերը: Ժամն ուղիղ վեցին հավաքվում եյին բեմի բանվորները, բեմ դնելու՝ յերեկոյան ռուսաց դրամայի կամ ոպերայի ներկայացման համար, և մենք, տխրված, փորձը կիսատ եյինք թողնում ու ցրվում, կամ անցնում դուրս, ցուրտ այգին և այնտեղ՝ ծառուղիների մեջ վերջացնում: Յերբեմն էլ աթոռները դուրս եյինք բերում և թատրոնի նեղ միջանցքներում փորձում: Փորձերը կատարում եյինք միշտ շտապելով, վորովհետև ժամանակը շատ քիչ եր, թույլ տեսարանները չեյին կրկնվում: Բնականաբար, այդպիսի փորձերի հետևանքը լինում եր և թույլ ներկայացում: Յես, նայելով ռուսական խմբի կանոնավոր փորձերին և ներկայացումներին, մտածում եյի՝ յե՞րբ ենք մենք էլ ունենալու մե՛ր թատրոնը, մե՛ր բեմը․․․Յեվ այդ ցանկությունս մնաց մշտական ցանկություն: Միայն ծերության օրերին իրագործվեցին յերազներս. միայն Խորհրդային իշխանության օրոք է, վոր յես տեսնում եմ թե ի՛նչպես է թատրոնը, մանավանդ փոքր ազգությունների թատրոնը ուշադրության առարկ դարձնել թե վո՛րքան մեծ խնամք է տարվում նրանց զարգացման վրա և ի՛նչպիսի հարմարություններ է ստեղծվել դերասանի համար, նրա ստեղծագործական աշխատանքի համար:

Թատերաշրջանի վերջին ամուսնացա: Կնոջս հետ վերադարձանք Բաքու, հորեղբայրս նորից կպավ ինձ.— «այժմ ամուսնացել ես, թատրոնը թող, գործի՛ կպիր,

տուն ու տեղ շինիր քեզ համար ու ապրիր»: Մեկ ականջիցս մտնում, մյուսից դուրս եր գալիս:

Շատ չանցած՝ յեկավ Հ. Աբելյանը՝ փոքրիկ խմբով (անհամբեր նրա գալուն եյի սպասում). միացա նրան՝ կնոջս հետ միասին, և կյանքիս մեջ առաջին անգամ թափառական դերասանի ցուպը ձեռքս առա ու Աստրախանի վրայով անցա դեպի Հյուսիսային Կովկաս:

Աստրախանից անցանք Ղզլար, ուր մի շարք ներկայացումներ տվինք: Մեր ղեկավար Աբելյանը, վորի խմբում ռոճիկով եյինք աշխատում, ուզեց մեզ տանել Մոզդոկ և ուրիշ քաղաքներ: Սակայն խմբի անդամները անբավական լինելով նրա մեզ տված չափազանց փոքրիկ ռոճիկներից՝ միացանք, թողինք նրան և ինքներս խմբով անցանք Մոզդոկ, Արմավիր և, ապա՝ Յեկատերինոդար, ուր և վերջացրինք մեր գործունեությունը:

Մայիսին անցել եյինք Մոզդոկ և խաղում եյինք «Պեպո»: Այդ տեղի վոստիկանապետը, վոր մի վրացի յեր, նստած եր առաջին կարգում՝ իր ռուս պրիստավներից մեկի կնոջ, իր սիրուհու հետ: Առաջին արարվածից հետո, իր պրիստավին հրամանով ուղարկեց բեմի հետևը, վոր ներկայացման վերջում ամբողջ խմբով, Պեպոյի զգեստները հագած, դուրս գանք սրահ և լեզգինկա ու կինտաուրի պարենք: Մեր առաջնորդը, այժմ հանգուցյալ դերասան Գևորգ Պարոն-Սարգսյանը, մերժողական պատասխան տվեց և խնդրեց պրիստավից հայտնել վոստիկանապետին, վոր մենք ղարադյողներ չենք, այլ դրամատիկ դերասաններ․․․ Մյուս առավոտ նույն պրիստավը յեկավ մեզ մոտ, հյուրանոց, հրամանը ձեռքին և հայտնեց, վոր մինչև քսանչորս ժամ լրանալը պիտի հեռանանք քաղաքից: Իսկույն շտապ հեռագիր տվինք Թիֆլիս՝ փոխարքային, բացատրելով յեղածը: Հրամանից յերկու որ անցավ, մեզ անհանգստացնող չեղավ, բայց յերրորդ որը կառքով մեզ մոտ յեկավ նույն պրիստավը և վոստիկանապետի կողմից մեզ, իբրև նվեր, մի լիքը տկճոր Կախեթի հրաշալի կարմիր գինի բերեց ու խնդրեց հայտնել իրեն, թե յե՛րբ պետք է նորից ներկայացում տանք:

Փոխարքային տված մեր հեռագիրն իր նպատակին հասել էր:

Ընդհանրապես վոստիկանապետների և նման իրավունքների տեր մարդկանց կամայականությունները անթիվ ու անհամար եյին: Բերեմ մի օրինակ ես. Իգդիր են գնում փոքրիկ խմբով հայ դերասաններ՝ ներկայացումներ տալու: Խմբի ղեկավար դերասան Անդրանիկը գնում է ժամանակին հայտնի հայակեր գավառապետ Բագուսլավսկու մոտ՝ ներկայացումների համար թույլտվություն ստանալու և հետը տանում է աֆիշը: Գավառապետն իսկույն կանչում է իր պրիստավներից մեկին և հրամայում, վոր մինչև քսանչորս ժամ լրանալը վոչ մի հայ դերասան չմնա Իգդիրում, և իր նման հռչակավոր, իր ահռելի շանը բաց է թողնում դերասանի վրա: Վերջինս, շնորհիվ բազում խնդիրքներով հավաքված հայ և թուրք գյուղացիների, մի կերպ ազատվում է գամփռի սուր ժանիքներից:

Վերև հիշված Գևորգ Պարոն-Սարգսյանը շատ շնորհքով դերասան էր, բայց իր կյանքում վոչ մի ժամանակ դերն իմացած բեմ չէր բարձրացել և ընդհանրապես հակառակ էր դեր սովորելուն: Յերբ Յեկատերինոդար եյինք, պիտի խաղայինք «Վոճրագործի ընտանիքը» և, իր ասելով, Կորրադոյի դերը պիտի կատարեր մի սիրող, վորն իբր շատ աննման է կատարում այդ դերը, և աֆիշի վրա էլ, առանց մեզ նախազգուշացնելու, մեծ մեծ տառերով գրել էր այդ սիրողի ազգանունը: Առաջին փորձին այդ սիրողը չեկավ, յերկրորդին՝ նույնպես, յերրորդին՝ դարձյալ: Դիմում ենք Պարոն-Սարգսյանին, թե ո՛ւր է սիրողը, և նա հանգիստ պատասխանում է, թե կգա և կխաղա, թե իր դերն անգիր գիտե, շատ անգամ է խաղացել և այլն, և մենք իզուր տեղը չանհանգստանանք: Վերջին փորձն է, սիրողը դարձյալ չկա, փորձեցինք առանց նրան: Ցերեկոյան գրիմ ենք անում և ընդամենը տասնհինգ րոպե յե մնացել ներկայացումն սկսելուն, բայց վոչ սիրողը կա, վոչ էլ՝ պարոն Սարգսյանը: Անհանգիստ ենք, վրդովված... Վերջապես, ներս է մտնում Պարոն-Սարգսյանը և հայտնում, թե սիրողն շտապ գնացել է քաղաքից, ինքը պետք է

կատարի Կորրադոյի դերը, և սկսում է հագնվել: Մենք դեմ ենք, պահանջում ենք ներկայացումը հետաձգել, բայց նա վոչինչ լսել չի ուզում և պնդում է ներկայացումը տալու վրա: Համոզված եյինք, վոր դերից չիլափլավ պիտի չիներ, բայց ինքը համոզում էր, վոր անգիր գիտե: Ինչ վոր է, համաձայնեցրեց: Ներկայացումն սկսվեց, առաջին արարվածը վոչինչ, անցավ, վորովհետև Կորրադոն դեր չուներ: Յեկավ յերկրորդ արարը: Յես Մոնսինյորի դերն եյի կատարում: Ներս է մտնում

ԳԵՎՈՐԳ ՊԱՐՈՆ-ՍԱՐԳՍՅԱՆ

յինձ—Մոնսինյորի մոտ տաժանակիր աշխատանքներից փախած Կորրադոն և իր գլխի փորձանքները պատմում: Հենց առաջին վողջույնը նա իր բառերով արտասանեց, իսկ յերբ հասավ պատմության տեղը, ինչեր էր ասում, միայն սատանան գիտեր: Հակառակի պես էլ բեմի կող—

...քին կախված էր Ադամյանի մեծադիր պատերը, վոր կարծես աչքերով մեզ ուտում էր: Ինքս ինձ կորցրած՝ կամացուկ ասացի նրան,—տնա՛քանդ, մի Ադամյանին նայիր, է՛»... «Ո՞ւր է, ո՞ւր է»... Վեր թռչելով տեղից կանչեց նա բարձր ձայնով և հանկարծ խելքի գալով՝ նստեց տեղը և սկսեց իր պատմությունը, սակայն թելը կորցրել էր և ծայրից սկսեց...

Խայտառակությունը կատարյալ էր:

Լավ է, վոր վերջին ներկայացումն էր, մյուս որը կամաչեյինք փողոց դուրս գալ:

3

1893–94 թատերաշրջանին Բագվում ընկերական խումբ կազմեցինք. խմբի անդամներն եյին՝ Վարդիթեր և Մարի-Հրանուշ Ֆելեկյանները, Ալիքսանյանը, (Պոլսից), Սաֆրազյան ամուսինները, Վրույրը, Ավետյանը, Փառանձեմը և մի քանի հոգի էլ ուրիշներ: Մեր խումբը մտավ Միքայել Մանվելյանը, բոլորովին յերիտասարդ մի տղա, այժմյան մեր վաստակավոր դերասանը: Մեր ռեպերտուարն էլ մի բան չէր—է՛լի «Մյուղանիմբեր», «Փարիզու աղքատներ», «Մայրական սեր», «Կողոպտված պոստ», «Ջավակ» մելոդրամները և մի քանի էլ ուրիշ պիեսներ: Տվինք նաև Շիլլերի «Ավազակները», վորի մեջ Ալիքսանյանը Ֆրանցի դերում տապալվեց և խումբը թողնելով, վերադարձավ Պոլիս: Ալիքսանյանից պակաս չէր նաև հանդուգյալ Վրույրը, վոր միշտ կոմիկների դերեր էր խաղում և չգիտեմ, ինչից դրդված, այս ներկայացման կպավ ու պոկ չեկավ, ա՛նպայման Կարլոսի դերը ցանկացավ կատարել: Տվինք, և խաղաց... այնպիսի մի դուետ էր Ալիքսանյանի Ֆրանցը և Վրույրի Կարլոսը, վոր հասարակությունը յերբեք այդքան չէր խնդացել և իրեն ուրախ զգացել մի վորևե ծիծաղաշարժ վոդեվիլի ժամանակ, ինչպես այդ յերեկո, Շիլլերի «Ավազակներ»-ին:

Հասարակությունը մեզնից յերեսը չուռ տվեց, և վոչ մի կերպ այլևս նրան թատրոն քաշել չկարողացանք:

Այս թատերաշրջանին մշտական ռեժիսյոր չունեյինք: Խմբի առաջնակարգ դերասանները հերթով ցուցմունքներ եյին անում իրենց ծանոթ պիեսների փորձերին, և այդ ցուցմունքներն էլ՝ ըստ շաբլոնի, այնպես, ինչպես բեմադրվել էր վորևէ պիես, վորևէ տեղ, վորևէ ժամանակ և վորևէ լեզվով:

Սկսեցինք բենեֆիսների շարքը և, ուժով տոմսեր ծախելով, ներկայացումները հասցրինք մինչև մեծ պաս: Այս թատերաշրջանին առաջին անգամ յես բենեֆիս ստացա և ընտրեցի «Դոն-Գրիգորիո» կոմեդիան, վորի մեջ խաղացի Փիփեթթոյի դերը: Վորքա՜ն լավ էր Վրույրը Դոն-Գրիգորիոյի կոմիքական դերի մեջ:

Ինչ եյին ներկայացնում իրենցից այն ժամանակ, և հետո էլ, այդ բենեֆիսները. իմ կարծիքով, բառացի կերպով մի չարիք էր այդ և ուրիշ վոչինչ:

Ամեն մի դերասան իր բենեֆիսի համար, իրեն տըրված իրավունքով, ինքն էր ընտրում պիեսը և անպատճառ մի այնպիսի պիես, վորտեղ ինքն ունենար լավ դեր և անպայման այնպիսի դեր, վոր հասարակության համակրանքը գրավեր դեպի իրեն:

Պիեսի գրական արժեքն աչքաթող էր արվում, բենեֆիցիանտի պետքը չէր—կունե՞նա նա արդյոք հաջողություն, կմնա՞ ռեպերտուարում թե չէ, այդ նրա գործը չէր, միայն թե դերը մեծ և շահեկան լիներ: Հետո՝ խմբի աչքի ընկնող դերասաններին էլ լավ դերեր ընկնեյին, վոր աֆիշի վրա նրանց անունն էլ լիներ, վորպեսզի տոմս շատ ծախվեր, թատրոնը լեփ-լեցուն լիներ ու դրամ շատ հավաքվեր:

Վոչ մի դերասան չէր համաձայնի իր բենեֆիսին դուրս գալ մի վոճրագործի, սրիկայի և դրանց նման դերի մեջ, ինչքան էլ վոր դերը նրա տվյալներին համապատասխան լիներ: Յեթե անգամ նա համաձայներ մի այդպիսի դերում դուրս գալ, ապա այդ այն դեպքում միայն պիտի լիներ, յեթե կարելի լիներ, հակառակ հեղինակի պահանջների, դերը դարձնել այնպես, վոր թվար, թե նա զոհ է պարագաների, տեմպերամենտի, շրջապատի և այն էլ անպատճառ զոհ, վորպեսզի հա-

տարակուսության յեթե վոչ համակրանքը, գոնե խղճահարությունը գրավեր դեպի իրեն:

Շնորհիվ այդ բենեֆիսների, ռեպերտուարի վորակն ընկնում եր, վորովհետև գեղարվեստական մասի հսկողները դեմ գնալ բենեֆիցիանտի ընտրության չեյին կարող, տիրող տրադիցիաների պատճառով:

Բենեֆիսների վնասակարության մասին այն ժամանակվա ռուս մամուլում թեր և դեմ շատ է գրվել, սակայն նա մնաց ելի իր ուժի մեջ:

1894 թվին Թիֆլիսում դերասանները պատահական ներկայացումներ եյին տալիս և բավականին հաջող՝ նյութական կողմից:

1894–95 թվին Բագու յեկավ Հ. Աբելյանն իր շրջիկ խմբով, և յես ել միացա նրան: Հունվար և փետրվար ամիսներին տվինք կանոնավոր ներկայացումներ: Խումբն անցավ Անդրկասպյան յերկիրը, իսկ յես մնացի Բագու: Այդ ժամանակ Խր. Կարա–Մուրզան «Արշակ Բ.»–ը վեր եր ածել ոպերանման մի բանի, վորի վրա մենք աշխատեցինք մոտ յերկու ամիս և, ապա, շատ մեծ հաջողությամբ բեմադրեցինք մեկ–մեկու վրա յերկու անգամ:

Ամառը՝ Գևորգ Պետրոսյանի ղեկավարությամբ գործող խմբի հետ անցա Շուշի և ապա, սեպտեմբերին՝ Թիֆլիս, ուր և անցրինք 1895–96 թատերաշրջանը:

Նախկին Արծրունու, իսկ այդ որերին արդեն վրաց ազնվականների թատրոնումն եյինք խաղում: Այդ թատրոնումն եր պատսպարված նաև վրաց խումբը: Մեր խմբի անդամներն եյին՝ Մելիքյանը, Փառանձեմը, Աբելյանը, Տեր–Դավթյանը, Վրույրը, Հարությունյանը, Ստեփանյանը, Հասան–Ջալալյանը, Մանվելյանը, Ադամ Սարդարյանը, Ավետյանը և ուրիշները: Խումբը գործում եր ընկերական պայմաններով:

Վրաց խումբը վրաց դրամատիկ ընկերությունն եր պահում և ապահով ռոճիկներ տալիս: Խմբի մեջ կային շատ տաղանդավոր դերասան–դերասանուհիներ՝ Ավալովան, Գաբունիա–Ցագարելին, Սափարովա–Աբաշիձեն, Վասո Աբաշիձեն, Ալեքսեյեվ–Մեսխիեվը, Կոտե

Մեսխին, Կոտե Կիպիանին, Գունիան, Միրաղյան–Գեդեվանովը, Սվիմոնիձեն, Ադամիձեն և ուրիշներ:

Յերկու խմբերն ել շատ սիրով եյին ապրում. մեկ խմբի պակասը մյուսն եր լրացնում, մեկն զգեստ չունեցած ժամանակ մյուս խմբի անդամներին եր դիմում, մեկը բենեֆիսից մնացած փողերը մյուս խմբի հետ եր ծախսում:

Յեկան Գալիցինյան դաժան որերը, յերբ ինչ հայկական եր, արգելվում եր, պատժվում. ամեն ինչ տակն ու վրա յեղավ...

Մեզ մեծ ցավ եր պատճառում, վոր «Կավկազ» կիսապաշտոնական, փոխարքա Գալիցինի, այդ հայակեր սատրապի, թերթի խմբագիր տխրահռչակ Վելիչկոյի հետ հայերի և վրացիների մեջ թշնամություն ցցելուն ձեռք ձեռքի տված եր գնում նաև մի վրացի դերասան, վոր խմբագիր եր դարձել հատկապես այդ նպատակով հրատարակվող վրացերեն «Ցնոբիս փուրցելի» թերթի:

Համառորեն ասում եյին, վոր այդ թերթին դրամով ոժանդակում եր ինքը՝ փոխարքան:

Այդ թատերաշրջանին մեր բեմադրած պիեսներից աչքի ընկնողն եյին՝ Եմին Տեր–Գրիգորյանի «Բարեգործության դիմակի տակ»–ը և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից Ադամ Սարդարյանի ձեռքով փոխադրած «Ասլան–Բալասին»: Առաջներում նույն վեպից կար փոխադրված մի ուրիշ պիես՝ «Աղասի»անունով, վոր շարունակ խաղացվում եր և հետո ցենզուրայի կողմից արգելվեց և նորից բեմ հանվեց արդեն «Ասլան–Բալասի» անունով: Խաղացինք նաև Ռաֆֆու վեպից Ա. Վրույրի և Ա. Սարդարյանի ձեռքով փոխադրված և պիեսի վերածված՝ «Ղարաբաղի աստղագետը», վորտեղ աննման եր Ա. Վրույրը՝ աստղագետի դերում:

Ամառն անգործ եյի, միայն մի անգամ մասնակցեցի Թիֆլիսում ռուս ոպերետային խմբին «Ночь в духане» մեջ՝ Կարապետի գլխավոր դերում:

1896 թվին Թիֆլիսում աշխատեցինք անցյալ թատերաշրջանի նման մի խումբ կազմել: Կազմեցինք և սեպտեմբերի 23–ին, վրաց ազնվականների թատրոնում,

տվինք առաջին ներկայացումը՝ դնելով «Ասլան-Բալասին»: Մուտքն այնքան քիչ էր, որ գիշերվա ծախսերը հազիվհազ ծածկեցինք: Դերասանները, որ համարյա բոլորն էլ Թիֆլիսում գտնվողներն էին, չուզեցին շարունակել և գրվեցին: Ես տան կահկարասիքս ծախեցի, դեսից-դենից պարտք վերցրի և մի կլորիկ գումար շինելով ու ապահով ռոճիկներ տալով՝ մի խումբ կազմեցի և Բաթումից սկսելով, թափառեցինք մի քանի քաղաքներ՝ Եկատերինոդար, Նոր-Նախիջևան, Ռոստով, Արմավիր և ապա 1897 թ. հունվարի 4-ին Բաքվում առաջին ներկայացումը տալով՝ մնացինք մինչև մեծ պաս: Խմբիս անդամներն էին դերասանուհիներ՝ Ախաչյանը, Ավետյանը, Փառանձեմը, Ազնիվը, դերասաններ՝ Աբելյանը, Վրույրը, Ստեփանյանը, Անդրանիկը, Կարինյանը, Հասան-Ջալալյանը, Ավետյանը և մի սկսնակ դերասան, որին վերցրել էի փոքրիկ դերեր կատարելու համար, Իսահակ Ալիխանյանն էր այդ՝ այժմյան մեր տաղանդավոր արտիստը:

Երբ յեկանք Արմավիր, մեզ հայտնեցին, որ առանց ձեռքի վրա տոմս գրելու, մենք գիշերվան ծախքերն էլ չենք կարող ծածկել: Խորհուրդ տվին դիմել ավագ քահանային, ասելով, որ միայն նա կարող է տոմսերը տարածել: Իմ ավագ ընկեր Հ. Աբելյանի հետ գնացինք նրա մոտ: Երբ քահանայի մոտ նստած էինք, ներս մտավ մի փոքրիկ տղա ու մոտենալով քահանային, կանգնեց նրա կողքին և սկսեց նայել մեզ—անծանոթներիս: Աբելյանը կանչեց նրան իր մոտ, նա չմոտեցավ: Երկրորդ կանչին միայն հայրը բացատրեց, որ յերեխան հայերեն չգիտե, չերքեզերեն է միայն խոսում: Դուրս յեկավ, որ ամբողջ քաղաքի ճնշող մեծամասնությունը չերքեզախոս է:

Նոր-Նախիջևանում մեր ներկայացումները տեղի էին ունենում վաճառականների կլուբում (այն ժամանակ այժմյան գեղեցիկ թատրոնը դեռ շինված չեր): Առավոտը կանուխ գնում էինք կլուբ, բակի նկուղներից հանում բեմի բոլոր մասերը և մեր ուսերի վրա բարձրացնում յերկրորդ հարկը, բեմը դնում, ժամը տասնմեկին փորձ անում և, ապա՝ յերեկոյան ներկա-

յացումը տալիս: Առավոտյան կանուխ գալիս էինք, բեմը նորից քանդում, իջեցնում բակը: Ամեն մի ներկայացման նույն բանը կրկնում էինք: Ներկայացումների դահլիճում կլուբի անդամներն ամեն գիշեր թուղթ էին խաղում: Նրանք սարսափելի տրտնջում էին, յերբ ներկայացումներ էին լինում: Այս րոպեյիս աչքիս առաջն է, թե ի՛նչպես խմբի անդամները՝ Աբելյանը, Վրույրը, Ստեփանյանը, Ալիխանյանը տնքալով, քըրքըջալով ու կատակներ անելով հաստ գերանները վեր

ԻՍԱՀԱԿ ԱԼԻԽԱՆՅԱՆ

էին բարձրացնում: Այս ամենը նրանց պարտականությունը չեր—նրանք ռոճիկ էին ստանում իբրև դերասան բայց թե նրանք բոլորն էլ գործն էին սիրում և մտածում իմ գրպանի համար, որ ավելորդ ծախքեր չանեմ:

Իրենից ի՞նչ էր ներկայացնում այդ շարժական բեմը: Բեմի տախտակամածը շինված էր մեծ ու քառակուսի արկղներից, որ իրար կողքի դնելով ու կեռերով

ամրացնելով՝ դառնում էր բեմ. ապա բեմի չորս անկյուններին չորս մեծ սյուն էր ամրացվում և այդ սյուներից կախվում եյին՝ վարագույրը, պաղդուգաներն ու մյուս մասերը: Շատ պրիմիտիվ և վողորմելի մի բան:

Չեմ կարող չպատմել մի տրագիկոմիկական դեպք: Մեր նորընծա դերասան Իսահակ Ալիխանյանը—վոր ծնվել էր Դուշեթում, Թիֆլիսից վոչ հեռու—իր ծննդավայրից յեզան սայլով էր յեկել Թիֆլիս ուսանելու, իր կյանքում յերկաթուղի չէր տեսել ու չէր էլ նստել: Յես նրան, արդեն վորպես ներսխյանավարտի, վերցրի իմ խմբի մեջ, մյուս որը ևեթ խմբիս հետ ճանապարհեցի Բաթում, իսկ յես, խմբիս գլխավոր դերասանուհի Ախաչյանի հետ, մնացի մյուս որը գնալու: Յերբ յես յեկա Բաթում և գնացի թատրոն փորձի, տեսա նորընծա դերասանս չկա: Հարցնում եմ Աբելյանին նրա ուշ լինելու մասին, և Աբելյանը ծիծաղելով պատմում է հետևյալը,—«Ճանապարհին, յերբ բոլորը քնում են մի-մի նստարան զբաղեցնելով, Ալիխանյանը մնում է շվարած կանգնած, և յերբ քունը նրան հաղթում է, նա բարձրանում է վերև, իրեր դարսելու տեղն ու պառկում և քնած ժամանակ վեր է ընկնում ու վոտքը կոտրում»: Բերում են Բաթում, տանում հիվանդանոց, ուր մնում է պառկած մինչև առողջանալը, տասը-տասնյերկու որ:

Մի գիշեր Բագվում, այդ թատերաշրջանին, իմ խմբով Իբսենի «Դոկտոր Շտոկման» պիեսն եյինք խաղում, վոր բարեգործական նպատակով էր ծախված, և լիքը մուտք ունեյինք: Թատրոնի տեր՝ հարուստ թուրք վաճառական Թաղիեվի օթյակում նստած եյին մի խումբ հայ հարուստներ, վորոնք տեսնելով ներկայացման լավ վորակը և դերասանների խաղը՝ միտք հղացան փող հավաքել, մի լավ խումբ կազմել՝ տալով դերասաններին ապահով ռոճիկ: Դրանցից հայտնի դերասանուհի Հրաչյայի դստեր ամուսին Ստեփան Թումանյանը յերկու հարուստների էլ է ստիպում իր հետ միասին փող դնել ու խումբն ապահովել: Մի քանի որ անց՝ նրանք պայման կապեցին իմ խմբի բոլոր անդամների հետ և հետո Թիֆլիսից մյուսներին հրավիրեցին:

1897 թվի հոկտեմբերի 15-ին սկսվեցին այդ նոր խմբի ներկայացումները: Հրավիրված եյին հայ բեմի բոլոր դերասան-դերասանուհիները: Պոլսեցիներից կային՝ Սիրանույշը, Ֆելեկյան քույրերը և աննման, հայտնի կոմիկ Թուրյանը, ռուսահայերից՝ Վարդուհին, Փառանձեմը, Մելիքյանը, Ավետյանը, Զարելը, Ազնիվը, Պետրոսյանը, Աբելյանը, Վրույրը, Արաքսյանը, Ստեփանյանը, Ղազարյանը, Օհանյանը, Ալիխանյանը, Հարությունյանը, Ազայանը, Անդրանիկը, Ավետյանը, և ուրիշները: Այդ խմբի մեջ էր և Հովհաննես Զարիֆյանը, վորի մասին միքանի անգամ գրվել էր, թե հայ բեմը յերբեք չէր տեսել ծառայի այդպիսի դերակատարի: Շատ աշխատասեր էր և, շնորհիվ իր աշխատասիրության, դերի ուսումնասիրության, վերջը դարձավ տաղանդավոր, իր դերերի մեջ անմրցելի մի դերասան: Կար և մի ուրիշ սկսնակ դերասան՝ Վալոդյա Մելիք-Հովսեփյան, վոր հայ բեմի վրա բավականին փորձառություն ձեռք բերելով և ռուսաց լեզվին լավ տիրապետելով՝ անցավ ռուսաց բեմը, ուր մի քանի տարի աշխատելուց հետո՝ Սըզրան քաղաքում, 1908 թ. հուլիսի 22-ին, «Զրասույզ զանգի» մեջ Անտառայինի դերում, վրայի զգեստը կրակից բռնկվելու պատճառով, այրվեց ու մեռավ հենց հասարակության աչքի առաջ:

Խմբի ռեժիսորը պոլսեցի հայտնի դերասանուհի Հրաչյան էր, վոր թատերաշրջանի կիսում հեռացավ: Հեռանալու պատճառը տիկին Սիրանույշի հետ—վոր Հրաչյայից յեթե վոչ ավելի, համենայն դեպս նրան հավասար դերասանուհի յեր—չարունակ կրկնվող ընդհարումներն եյին: Ընդհարման առիթը շարունակ լինում եյին դրվող միզանսցենները, վոր պատճառ եյին դառնում փորձն ընդհատելուն և խանգարում աշխատանքների նորմալ ընթացքը:

Նրա գնալուց հետո այդ պաշտոնը հերթով կատարում եյին Աբելյանն ու Պետրոսյանը:

Դերասանուհի Հրաչյան, յերբ իր աղջկան ամուսնացրեց Բագվի հարուստ Ստեփան Թումանյանի հետ և

յեկավ Բագու մշտապես ապրելու—մանավանդ, վոր ամուսինը՝ Անտոն Գարան ել ֆրանսիական Մեսաժըրի Մարիտիմ նավային ընկերության Բագվի բաժանմունքի գլխավոր վարիչ եր նշանակվել—կոկորդի հիվանդության պատճառով բեմը բոլորովին թողեց: Նրա աղջկա պսակադրության գիշերը բագվեցիները նրանից ուժով խոսք եյին վերցրել, գոնե վերջին անգամ մասնակցել մի վորևե ներկայացման: Հրաչյան խոսք եր տվել, և

ՀՐԱՉՅԱ

այդ ներկայացումը կայացավ: Բեմադրվեց «Կամելիազարդ տիկինը», վորի մեջ Մարգարիտ Գոտիեի դերում նա աննման եր և մրցակից չուներ: Ներկայացմանը մասնակցելու հրավիրված եյին՝ Սաֆրազյան ամուսին-

ները, դերասան Գրիգոր Աբրահամյանը, դերասանուհի Ավետյանը, յես և ուրիշները:

Այնքան բնական, այնքան սրտառուչ եր խաղում, մանավանդ իր մահվան ճանկերում տառապելու րոպեներին, վոր հասարակության կեսը թաշկինակներով աչքերն եր սրբում: Մի քանի կին ուշաթափ յեղան: Ճիշտ ե՝ նրա ձայնը մի քիչ խռպոտ եր, բայց այնքան քաղցր եր այդ խռպոտությունը, վոր առաջին արարվածից հետո այլևս չեյիր զգում, և կարծում եյիր թե այդպես ել պետք ե խոսի Մարգարիտ Գոտիեն: Այդ դերի համար նա հրաշալի զգեստներ ուներ, վոր հետն եր բերել ու նրանցից չեր բաժանվում:

Յերբ Արուս Վոսկանյանը—դեռ յերիտասարդ—բեմ բարձրացավ, Հրաչյան յեղավ նրա ուղեցույցը, նրա ուսուցիչը: Այո՛, նա իրավունք ունի հպարտանալու այդպիսի ուսուցիչ ունենալու համար:

Հրաչյան մեռավ 1920 թվին Դիլիջանում, ծանր հիվանդությունից հետո:

Պետրոսյանը, վոր յերկար ժամանակ ռուսաց բեմերին եր ծառայել, բնականաբար՝ ռուսաց բեմից իր հետ բերել եր նաև ռուսական ճշտապահություն, դեպի գործը լուրջ վերաբերմունք և, իբրև ռեժիսյոր ել, շատ բարեխիղճ եր ու հմուտ: Նրա միզանսցենները միշտ պատճառաբանված եյին լինում. ուշադրություն եր դարձնում ընդհանուր տեմպի, տոնի վրա:

Աբելյանը, իբրև ռեժիսյոր, աչքի ընկավ Շիրվանզադեյի բոլոր պիեսների բեմադրության ժամանակ և քիչ ոգնություն չի ցույց տվել Շիրվանզադեյին՝ իր պիեսները բեմի համար հղկելու, շտկելու և բեմական դարձնելու գործում:

Խմբի ռեպերտուարը կազմված եր լինում հատկապես յերկու-յերեք առաջնակարգ դերասանների համար:

Այս թատերաշրջանին առաջին անգամ բեմադրվեց Գ. Սունդուկյանցի «Ամուսիններ»-ը, վորի մեջ Մաստակյանի դերը շատերը ցանկացան խաղալ և այդ պատճառով դարձել եր կռվախնձոր, իսկ մյուս դերերը չեյին բաժանվում: Վերջիվերջո՝ այդ դերն ինձ տվին, և կրո-

վախնձորը մեջտեղից վերացավ: Լրագրերն ինձ գովեցին այդ դերի համար:

Թատերաշրջանը նոր եյինք սկսել, վոր Ոլգա Մայսուրյանը, Սաթենիկ Ադամյանն ու Նիկողայոս Հովհաննիսյանը յեկան և դեբյուտներ տվին: Մայսուրյանը, վոր արդեն Թիֆլիսի Արտիստական կլուբի ռուս

ՈԼԳԱ ՄԱՅՍՈՒՐՅԱՆ

սիրողների խմբեցն եր ու բավականին փորձված դերասանուհի, դուրս յեկավ «Որվան չարիքի» մեջ և ընդունվեց խումբ:

Նա հայ բեմը մտնելուց հայերենին լավ չեր տիրապետում, բայց շնորհիվ իր ջանասիրության և համառ աշխատանքի, հայերենը սովորեց, թեև ռուսական ակցենտը մինչև վերջն էլ նրան խանգարում եր:

Նա ուներ բեմական լավ արտաքին, գեղեցիկ ձևեր,

պարզ արտասանություն, հնչեղ ձայն, իսկ գլխավորը՝ ուժեղ զգացմունքի տեր եր, գեղարվեստական հոտառություն ուներ, տեմպերամենտ: Մեր բեմի լավագույն ուժերից մեկն եր:

Այս բոլորի հետ՝ նա էլ եր մեր դերասանուհիներից շատերի մեջ տարածված ցավով տառապում—ծերացած ժամանակ անգամ չփոխել իր ամպլուան, այլ միշտ յերիտասարդ դերեր խաղալուն ձգտել, այն դերերին, վոր նա խաղացել եր քսան—քսանհինգ տարի առաջ: Յեվ, իմ կարծիքով, այդ եր պատճառը, վոր նոր թատրոնում վերջին տարիները նա մնացել եր խմբերից դուրս, ու վորևե թատրոնում չեր աշխատակցում:

Կարճատև հիվանդությունից հետո նա մեռավ 1931 թ. օգոստոսի 3-ին Թիֆլիսում:

Նրանից հետո՝ «Քին»-ի մեջ Ն. Հովհաննիսյանը դեբյուտ տվեց: Այդ ներկայացմանը յես Գիսառլի, փոքրիկ տղայի, հրաշալի դերն եյի կատարում: Յերբ յերկրորդ արարին մտնում եմ Քինի սենյակը, հետս ունենալով Կիտտի—Սաթենիկ Ադամյանին, վերջինս վախից այնպես եր կպել ինձ ու դողալով ինձ էլ դողացնում, վոր ստիպված, բեմի վրա նրան ձեռքով հետ քաշեցի և կամացուկ սիրտ տալով, ասացի՝ —«մի՛ վախենա, ամո՛ւր կանգնիր»:

Նիկողայոս Հովհաննիսյանը, վոր ժամանակին դեռ շատ յերիտասարդ և ապագա խոստացող մի սիրող եր, շատերի խորհրդով՝ հայտնի հարուստ Թուրք վաճառական Թաղիևի օժանդակությամբ գնաց Մոսկվա, մտավ թատրոնական դպրոց, ավարտեց և յեկավ: Նա բարձրից սկսեց. «Ավազակներ»-ի մեջ Ֆրանց եր խաղում, «Քին»-ի մեջ՝ Քինի դերը, «Վոճրագործի ընտանիքի»մեջ՝ Կորրադոյի դերը և այլն... Դեբյուտներ տվեց թե՛ Թիֆլիսում և թե՛ Բաքվում: Նրա մասին գրված քննադատականներում, լրագրերը յերկու ծայրահեղ կարծիքների բաժանվեցին,—վոմանք նրան հռչակավոր կոչեցին, վոմանք՝ անպետքություն: Այսպես թե այնպես, Բաքվում իր տված դեբյուտից հետո մնաց խմբում և միմիայն «Քինը» խաղաց: Ուրիշ դերեր չհամաձայնեց խաղալու: Յերկու տարի հետո նորից ընդունվեց

խումբ: Բեմադրվում էր «Կառապան Հենշել»-ը, վորի մեջ, ըստ իր դերի, պիտի նրան վոտի տակ տար Պետրոսյան—Հենշելը, սակայն Հովհաննիսյանն առաջին փորձից հետո, յերբ Հենշելը նրան վայր ձգեց ու վոտքը դրեց վրան, հրաժարվեց թե՛ դերից և թե՛ խմբից, առարկելով, վոր իր համար ստորացուցիչ է ընկնել ուրիշի վոտքի տակ: Այլևս նա յերբեք խումբ չմտավ և թափառում էր մեն մենակ իր կնոջ հետ: Վերջը հոգեպես հիվանդացավ և մեռավ 1917 թվին՝ Բաքվում:

Մեր դերասանական աշխարհում մի ժամանակ Ն. Հովհաննիսյանի նման մի դերասան էլ յերևաց, վոր իր շուրջը մեծ աղմուկ բարձրացրեց և անփառունակ էլ վերջացրեց իր գոյությունը: Կարապետ Գալֆայանն էր այդ: Յեկավ՝ գլխին ցիլինդր դրած, ֆրանսերեն կոտրատելով և սկսեց «Համլետ»-ից՝ սիրողների հետ խաղալով: Մարդիկ գոհվեցին, վոր նրան Ադամյան անվանեցին, իսկ մյուսները՝ վողորմելիություն: Այսպես թե այնպես, յեղավ՝ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Յերևանում, Շուշում և մի քանի ուրիշ քաղաքներում ու ամեն տեղ էլ սիրողների հետ խաղաց «Համլետ» և «Ոթելլո»:

Փարիզ էլ գնաց և այնտեղ ներկայացում կազմակերպեց՝ կազմված «Համլետ»-ի և «Ոթելլո»-ի տեսարաններից: Այդ ներկայացման նա հրավիրել էր ֆրանսիացի հռչակավոր թատերական քննադատ Սարսեյին: Վերջինս առաջին պատկերից հետո թողնում է սրահը և սեն հանկարծամահ է լինում, և Ա. Զոպանյանն իր «Անահիտ» թերթում մի հոդված էր տպել, «Ինչե՞ն մեռավ Սարսեն», ուր գրում էր, թե Գալֆայանի ներկայացման արած ազդեցությունն էր, վոր մարդուն գերեզման իջեցրեց:

Ի հարկե՝ կատակ էր, բայց լուրջ կատակ:

Պոլսում էլ է յեղել և արժանացել շատ վատ քննադատականների:

Մի անգամ, հանգուցյալ Պետրոսյանի հետ Թիֆլիսում փողոցով անցնելիս, հանդիպեցինք «Նոր-Դարի» խմբագիր Սպանդարյանին ու Գալֆայանին: Սպանդա-

րյանը մեզ կանգնեցրեց և հարցրեց Գալֆայանին խումբ չընդունելու պատճառը: Պետրոսյանը, իսկույն հասկանալով, վոր Գալֆայանն անպայման գանգատվել է, թե իրեն խումբ չեն ընդունում, պատասխանեց, վոր ուրախությամբ կընդունվի խումբ, յեթե միայն բոլորի նման յենթարկվի ներքին որենքներին, այն է՝ յեթե համաձայնի խաղալ ամեն դեր, վոր նրան կնշանակի ռեժիսսուրան: Գալֆայանը, Սպանդարյանի հարցին, թե ի՛նչ կասի նա, պատասխանեց, վոր ինքն իր մեջ այնքան ուժ և ավյուն է զգում, վոր չի կարող փոքրիկ դերեր խաղալ, վոր ինքը միմիայն «Համլետ»-ի նման դերեր կատարելու համար է ստեղծված:

Մենք բավարարված զգացինք մեզ, իսկ Սպանդարյանը մեր ներկայությամբ խնդրեց նրան այլևս իրեն չհանգստացնել իր գանգատներով:

Վերջին անգամ նրան հանդիպեցի 1921 թվին՝ Պոլսում, վորտեղից նա պատրաստվում էր Լոնդոն գնալու, ուր իբր թե մեռած մի ազգական նրան մեծ ժառանգություն է թողել:

Նոր խմբի անդամները աշխատում էին շատ բարեխիղճ, վորովհետև մինչ այդ չտեսնված ռոճիկներ էին ստանում և քիչ թե շատ ապահովված էին:

Ահա այս խմբի ներկայացումներին նկատվում էր, ...որ մեր դերասանների խոսակցության ձևը բավական ...ին փոխվել էր. շատ քիչ էր պատահում, վոր մեկնումե...ը հին ձևով յերգեր: Սովորել էին և զգեստ հագնելը, ...եմի վրա իրենց պահելը, խաղում էին ըստ կարելույն ...նական: Մինչև Մոսկվա գնալս, լավ չեմ հիշում, թե ...եմի վրա յես ի՛նչպես էի խոսում և ինձ պահում, բայց ...ոսկվայից վերադառնալուց հետո ինքս զգում էի, ...ր թե՛ խոսելու, թե՛ բեմի վրա մնալու և քայլելու ժա...մանակ բնականին ավելի մոտ եմ: Իմ ականջն էր ծա...ում, յերբ բեմի վրա խոսալու փոխարեն յերգում էին: ...ս այդ սխալ էի գտնում, վորովհետև Փոքր Թատրո...ում, ուր յես անթիվ ներկայացումներ էի տեսել, այդ...սակ չէյին խոսում, և այդ ինձ դուր էր գալիս: Դե...րն էլ արտադրում էին բեկլիկներով, այնինչ առաջ...ին այդ սովորությունը չկար, և միայն Աբելյանն էր,

վոր ինձ, դեռ նոր բեմ մտած ժամանակ, բացատրեց թե ի՛նչ օգուտ ունի ռեպլիկան դերասանի համար: Այդ բանը նա սովորել եր ռուսաց խմբում ծառայելիս:

Հայ դերասանների դեպի լավը փոխվելու պատճառը յես գտնում եմ ռուսաց ներկայացումների ազդեցության մեջ: Մերոնք մեծ սիրով եյին հաճախում նրանց ներկայացումները, և Թիֆլիսն ու Բագուն ռուսական բավականին լավ խմբեր եյին պահում: Ռուս դերասաններին յես խոր համոզմունքով մեր ուսուցիչներն եմ համարել և այժմս ել համարում եմ:

Տրվող պիեսները խմբի անդամների ներկայությամբ կարդալու և տիպերը վերլուծելու սովորություն չկար, բավական եր, վոր գլխավոր դերակատարները ծանոթ եյին, մյուսները միայն փորձերին եյին ծանոթանում պիեսի բովանդակությանը, կամ ներկայացման գիշերը: Ամեն մեկն իր դերն այնպես եր խաղում, ինչպես նրան ցույց եր տալիս ռեժիսյորը, կամ մի բարեսիրտ դերասան, ի հարկե՝ մեծերից:

Առաջին փորձը դերերով եյին անցնում, վոր և կըրվում: Յերկրորդ, յերրորդ անգամ հուշարարով եյինք փորձում և ապա, չորրորդ կամ հինգերորդ փորձից հետո, ներկայացումն եր գնում: Ի հարկե՝ լավ հիշողություն ունեցողը դերն անգիր եր անում, իսկ թույլը գնում եր հուշարարով:

Առհասարակ դերերը պատրաստելու համար մեջ ընդհանուր ձև ու մեթոդ չկար, ամեն մեկն իր ձևով եր ուսումնասիրում իր դերը: Յես դերն ստանալուց անմիջապես նորից արտագրում եյի և այդ արտագրության ժամանակ իմ ուղեղում տպավորվում եր ամեն մի բառը և ապա, որական միքանի անգամ, նախքան փորձի գնալը, կրկնում եյի, և չորս-հինգ փորձից հետո արդեն լավ սերտած ու ըմբռնած եյի լինում: Նույնը շարունակում եմ և այժմ: Կային և այնպիսիները, վոր առանց արտագրելու, նախադասություն— նախադասություն եյին անգիր անում: Կային և ավելի լավ հիշողություն ունեցողներ, վորոնք հուշարարի հետևից գնալով, մի

քանի որից արդեն անգիր գիտեյին իրենց ամենամեծ դերն անգամ:

Հուշարարներից ամենահայտնիները մենք ունեցել ենք շատ տարիներ առաջ, դեռ հայ թատրոնի «վոսկեդարից» մնացած—Կարապետ Մատինյանը, վորի հուշարարությամբ յես խաղացել եմ իմ գործունեյության սկզբնական շրջանում՝ շուրջ վեց-յոթ տարի: Վորովհետև հին դերասաններից շատերը սովորություն չունեյին դերերն անգիր անելու, այլ միայն հուշարարով եյին գնում, հուշարարներն ել ստիպված՝ վարպետ եյին դառնում այնպես հուշելու, վոր վոչ մի բառ չեր կորչում: Յեվ Կարապետ Մատինյանն այդպիսի մի հուշարար եր: Կարելի յեր բեմ դուրս գալ և դերը բառացի կերպով չիմանալ. Նա ամեն մի բառը հուշում եր, հուշարանից հիշեցնում եր դերասանին իր անելիքը.— «Նստի՛ր, կանգնի՛ր, փոշտա՛, մոտեցի՛ր, դո՛ւրս գնա» և այլն...

Նրա մահվանից հետո ունեցանք մի քանիսը, վոր վոչնչով նրանից պակաս չեյին—Միքայել Զարշարյան, Հովհաննես Սարգսյան (Հուշիկ-ժան), Վահան Տիրացյան և Խոսրով Թորոսյան, անգնահատելի հուշարարներ, վորոնք բոլորն ել արդեն մահացած են: Սրանցից Վահան Տիրացյանը, վոր Կարինցի յեր, մեծ գաղթին Տաճկաստանից ամբողջ ընտանիքով գաղթել-յեկել եր Կովկաս, Սուլթան-Աբդուլ-Համիդի տված սահմանադրությունից հետո նորից վերադարձավ ծննդավայրը, ուր համաշխարհային մեծ պատերազմի յերկրորդ տարին բնաջինջ յեղավ: Նա բավականին զարգացած, կրթված անձնավորություն եր և տիրապետում եր յեվրոպական լեզուներին:

Խոսրով Թորոսյանը, վոր իր հոր խանութում կոշկակարի աշակերտ եր, առաջին անգամ մտավ խումբ և անխոս դերեր եր կատարում, սակայն մի որ, իր խնդրանոք, մի պիես տվին հուշելու, վոր բավականին շնորհքով հուշեց, թեպետ «լաբիրինթոսը», «լոբիները թասի մեջ» դարձրեց: Հետո կամաց կամաց վարժվեց և դարձավ խմբի ամենացանկալի անդամը, վորովհետև շաբաթը յերկու նոր պիես խաղալու համար հուշարարի

մեծ կարիք ունեյինք, իսկ ամբողջ հույսներս Թորոսն էր: Համաշխարհային պատերազմի յերկրորդ տարին Գանձակում մուսավաթականները նրան բանտ դրին և այնտեղ էլ ծեծելով սպանեցին:

Այժմյան բեմադրություններին այդպիսի հուշարարների կարիք չի զգացվում:

Իմ կարծիքով՝ այդ լավ է:

Հուշարարների մասին գրելուց հետո անկարող եմ մոռանալ բեմի այն բանվորներին, վորոնց հետ միշտ գործ եմ ունեցել. բոլորն էլ արտաքո կարգի մարդիկ էյին, զանազան ազգությունների պատկանող, բայց բնավորությամբ մեկմեկու անասելի նման: Հիշում եմ, իմ առաջին տարվա թատերաշրջանին, Թիֆլիսի հին արքունական թատրոնում ծառայող Սելանտիին, յոթանասունի մոտ մի անձնավորություն էր նա, բայց իր պաշտոնի մեջ այնքան կայտառ, վոր բոլորիս էլ հիացնում և ամենքիս ուշադրությունը դեպի իրեն էր գրավում: Թե ռուս և թե մենք՝ հայ դերասաններս, վոր այդ թատրոնումն էյինք խաղում, մի առանձնահատուկ հարգանք էյինք տածում դեպի նա: Վերին աստիճանի քաղաքավարի, դեպի մեզնից ամեն մեկն ուշադիր, բայց իր պաշտոնին չափազանց սիրահարված, և դեպի կարգը խանգարողները, կամ թատրոնի վորևէ առարկայի ու գույքի հետ վատ վարվողն անասելի խստասիրտ մարդ էր: Նա չափազանց մեծ հարգանք ուներ դեպի մեռելները, և յերբ թատրոնի յերաժշտախումբն ուղեկցում էր վորևէ ննջեցյալի, Սելանտին անպայման այնտեղ էր՝ տաճկական մեծ թմբուկը վզից կախ, վորը թմբկահարում էր վոչ թե ինքը, այլ յերաժիշտը, իսկ ինքը ծանր, հանդիսավոր քայլերով հասնում էր մինչև գերեզմանատուն և թմբուկը վզից կախ հետ գալիս թատրոն:

Հիշում եմ՝ Բաքվում, իմ առաջին հասարակական յելույթին, «Վարդանանց պատերազմ»-ի ներկայացման, Փարամոն իշխանի դերում, վարսավիրան ծնոտիցս այնքան մի մեծ մորուք էր կպցրել, վոր մինչև գոտիս էր հասնում: Յեվ յերբ, նախքան ներկայացումն սկսվելը, մտա բեմ, ինքս ինձնով հիանալով, բեմի ռուս մաշինիստ Նիկոլայն ինձ տեսնելով, փութկաց և

մորուքիս ծայրից բռնելով, պոկեց տվեց ձեռքս ու հայհոյանք թափելով վարսավիրայի հասցեյին՝ ասաց, վոր գնամ և հայտնեմ նրան, թե մորուքս շատ մեծ է, թող փոխի և ավելի կարճը փակցնի: Չգիտեյի ի՞նչ անեմ, բարկությունից լա՞ց լինեմ, թե՞ նրա խորհուրդը լսեմ ու կատարեմ. մնացել եյի շվարած: Ոգնության հասավ ինքը՝ Սաֆրազյանը, վոր միրուքս ձեռքիս տեսնելով, հարցրեց պատրաստ չլինելուս պատճառը: Յես յեղելությունը պատմեցի նրան, և նա էլ խորհուրդ տվեց գնալ և փոքրիկ միրուք պահանջել: Կատարեցի:

Պիեսի յերրորդ արարվածում իմ դերը վերջանում էր, վորից հետո, յես կուլիսներից հետևում եյի ներկայացմանը: Այդ նույն Նիկոլայը մոտեցավ ինձ և ձեռքը դնելով ուսիս, գովեց ու ասաց, վոր շնորհք ունիմ, լավ դերասան կդառնամ: Բնականաբար՝ յես այդ խրախուսանքի համար սիրեցի նրան ու յերկար ժամանակ լավ բարեկամներ մնացինք:

Շատ է ոգնել նա մեզ մեր ներկայացումներին: Յերկար տարիներ բաժանված եյինք, յերբ 1919 թվին Բաքու գնալով՝ գտա նրան արդեն ծերացած, բայց և այնպես իր սիրած գործի գլուխ կանգնած. նա կայարանի մոտ գտնվող բանվորական թատրոնում արդեն մաշինիստ էր: Սրտառուչ էր մեր հանդիպումը: Այժմ նա այլևս չկա—վախճանվել է:

Թիֆլիսի վրաց—նախկին Արծրունու—թատրոնում մի մաշինիստ կար՝ վրացի Նիկոն, իր գործի մեջ մի կրակ, հուր և մեծ էլ վարպետ, վոր զանազան կտոր դեկորներից ճաշակով բեմ էր հարդարում: Կենդանիների սիրահար էր, իր չնչին ռոճիկով յերկու-յերեք դյուժին ընտանի ու վայրենի կենդանիներ էր պահում իր տանը: Իր ձեռքով կերակրում էր, փայփայում ու լողացնում: Մի անգամ իմ բենեֆիսին մի շնիկ նվիրեց ինձ:

Յերբ Բաքվում 1905 թվին հայ-թուրքական կոտորածն սկսվեց, յես թատրոն եյի գնացել փորձի և թատրոնումն էլ մնացի, ուր ապրողները՝ բեմի հյուսներն ինձ չորս որ կերակրում ու պահպանում եյին: Գլխավորը

գերմանացի մաշինիստ Արն էր, մի սքանչելի վարպետ՝ իր գործի մեջ:

Հապա Թիֆլիսի Արտիստական, այժմյան Ռուսթավելիի թատրոնի մաշինիստ Արկադի Միխայլովիչ Կանդրաշո՞վը, նրա ոգնական, այժմ գլխավոր մաշինիստ Վանո Մայսուրաձե՞ն: Սրանք բոլորն էլ հայ թատրոնի բարեկամներն էյին, և յես ուրախությամբ եմ արձանագրում այդ:

Հին ժամանակները բեմի բանվորներին ժամանակավոր եյին վարձում: Ամառը, յերբ թատրոնները փակվում եյին, նրանց կրճատում եյին առանց վորևե ոժանդակության: Ցեվ ի՞նչ, կարծում եք՝ նրանք վորև է պաշտոնի եյին մտնում, վո՛չ, թատրոնի պատերի տակ եյին քնում, հենց փողոցում, ոբերը համբելով, մինչև վոր թատրոնի դռները բացվեն և իրենք էլ իրենց սիրած գործին անցնեն:

Շատ սիրով, մի ընտանիքի անդամների նման եյինք գործում: Այնքան շատ եյին նրանք, այնքան շատերի հետ եմ գործ ունեցել իմ կյանքի ընթացքում, վոր բոլորին միասմի հիշելը, միասմի գովելը դժվար է ու միայն սուր գրչի նկարագրության արժանի: Իմ գրիչս շատ թույլ է նրանց արժանի գովասանքն անելու համար:

4

Հետևյալ, 1898/99 թվի թատերաշրջանը նախկինի շարունակությունն էր: Խումբն ամբողջովին նույնն էր. չկար միայն Թուրյանը, վորի հետ Բագվի Թատրոնական Վարչությունը մի զարհուրելի պայման էր կապել—չմասնակցել վոչ մի խմբի ներկայացումների, այլ սպասել ձմեռային թատերաշրջանին: Նրան, ի հարկե, փոքրիկ ռոճիկ տրվում էր. մյուսներից և վոչ մեկին: Խումբը թատերաշրջանն ավարտելուց հետո անցել էր գավառների՝ զանազան քաղաքներ, իսկ խեղճ Թուրյանը մնալով Թիֆլիսում, տխրելով և անգործության մատնված լինելով՝ իրեն տվել էր կեր ու խումի, վորից հիվանդացավ և մինչ թատերաշրջանը մեռավ: Դավիթ Թուրյանը տաճկահայ դերասան էր, խաղում էր

կոմիկ—ռեզոնյոր և քարակտեր դերեր: Լուրջ, կրթված և չկոլա անցած դերասան էր, բայց այդ չկոլան ֆրանսիական էր, վոր այն ժամանակ մեզ մոտ չէր ընդունվում: Նա իր շարժ ու ձևերի մեջ շատ զուսպ ու ժլատ էր, չէր սիրում շարժի դիմել, ուներ չափազանց հարուստ միմիկա: Մոսկվայում յերբ յես տեսա Կոկլեն յեղբայրներին, Կոմեդի Ֆրանսեզի այդ յերկու սյուներին—մեծ յեղբայրը, վոր հայտնի յեր իր արտասովոր միմիկայով և դրանով էր համարյա իր հաղթությունները տանում—Թուրյանին իր միմիկայով վոչնչով պակաս չհամարեցի նրանից: Ամբողջ րոպեներ նա լուռ ու մունջ խաղում էր, և հասարակությունը ծիծաղից խեղդվում էր:

Նրա գլուխ-գործոցը «Դոն-Գրեգորիոն» էր, վորտեղ չփոթությունը, անմեղությունն ու վախն իրար են խառնվում: Նա այդ ամենն այնպիսի վարպետությամբ էր տանում, վոր, վարագույրն իջնելուց հետո, հասարակությունը խենթի նման աթոռներն էր կոտրատում և նրան անթիվ, անհամար անգամ բեմ կանչում:

Մեծ արտիստ էր...

Ամեքիս հայրիկն էր...

ԴԱՎԻԹ ԹՈՒՐՅԱՆ

Ցեթե փորձը նշանակված էր լինում ժամը տասնմեկին, մենք թատրոն եյինք գալիս տասին, վորովհետև Թուրյանը մեզ իր կյանքից շատ խրատական բաներ էր պատմում, և այդ ամենը շատ սրամիտ անեկդոտներով համեմված: Չեյինք սիրում ռեժիսորի ոգնականի զանգի ձայնը, վոր մեզ փորձի յեր կանչում, կիսատ թողնելով հայրիկ Թուրյանի պատմությունը:

Լավ մարդ էր, անուշ մարդ...

Այս թատերաշրջանին էլ նույն սկզբունքն էր տիրում, ինչ անցյալ տարի, և ռեպերտուարը կրում էր շատ խայտաբղետ բնույթ: Այստեղ կար և՛ «Թագի համար»-ը, և՛ «Անսանձի սանձահարումը», և՛ Պեպո»-ն, և՛ «Գնչուհի Զանդա»-ն, և՛ «Քույր Թերեզա»-ն, և՛ «Բաղդասար Աղբար»-ը, և՛ «Դոն-Քիշոտ»-ը, և՛ «Ավազակներ»-ը, և՛ «Պարոն կառավարիչ»-ը (ֆրանսիական մի ցինիկ ֆարս), և՛ «Յերկու վորբ» մելոդրաման, և՛ «Մադամ Սան-Ժեն»-ը... Վոչ մի լուրջ վերաբերմունք դեպի ռեպերտուարի ընտրությունը:

Այդ թատերաշրջանին ռեժիսյորություն էր անում մեր հրապարակագիրներից և թարգմանիչներից մեկը՝ Սիմյոն Հախումյանը, վոր ավելի շուտ խմբի վերակացու յեր, քան թե ռեժիսյոր:

Որինակ՝ մի անգամ դիրեկտորներից մեկը վեճի բռնվելով հանդուցյալ Ոննիկ Ստեփանյանի հետ, պահանջում էր ռեժիսյորից վոստիկան կանչել և Ստեփանյանին դուրս տանել: Ռեժիսյորը կատարեց, և միայն խմբի գործի մեջ խառնվելն էր, վոր Ոննիկին ձեռք տվող չեղավ:

1899/1900 և 1900/1901 թատերաշրջաններին նույն վարչությունը խմբեր պահեց և վերջացրեց իր գործունեյությունը: 1899/1900 թատերաշրջանին խումբ մտան Աննա Խիթարյանը և Համո Խարազյանը, դեբյուտ տալով «Զարդուշակ քայլ» պիեսով:

Պետք է խոստովանել, վոր Բագվի թատրոնական վարչությունն այդ բոլոր թատերաշրջաններին էլ վոչ մի ջանք չխնայեց և, ծախսի առաջ կանգ չառնելով՝ ներկայացումները կանոնավոր տարավ: Ներկայացումները գնում էին բավականին հարթ, և մեծ ուշադրություն էր դարձվում անսամբլի վրա: Բնականաբար՝ դերերը բաժանվում էին ըստ կարելույն լավ դերակատարների մեջ: Յերիտասարդների առաջքաշման մասին խոսք լինել չէր կարող: Ամեն մի յերիտասարդ դերասան առաջ էր քաշվում միմիայն շնորհիվ գավառական քաղաքների, ուր միշտ գնում էինք սահմանափակ խմբով և, քիչ դերակատարներ ունենալու պատճառով, ստիպված փոքրերին դերեր էին ընկնում. և յեթե հա-

ջող էին խաղում, ապա ձմեռային թատերաշրջանին այդ աչքի առաջ էր առնվում, և ռիսկ էին անում նրանց դեր տալու: Վայ էր, թե մեկը նրանցից դերը փչացներ, վատ դերասանի անունը կպչում էր նրանից և յերկար ժամանակ պոկ չէր գալիս:

Սակայն գլխավոր ցավը, վոր այն ժամանակ էլ, նրանից հետո էլ, մեզ՝ դերասաններիս տանջել է, հմուտ ռեժիսյորի բացակայությունն էր այդ: Թատրոն առանց ռեժիսյորի, այդ միմիայն այն ժամանակվա հայկական իրականության մեջ կարող էր պատահել: Թիֆլիսի Դրամատիկ ընկերության և Բագվի վարչությունների գլուխ կանգնածներն այդ շատ կարևոր հարցի մասին յերբեք չէյին մտածում, նրանց հոգը չէր, նրանց միայն հետաքրքրում էր այն, վոր իրենք գործի գլուխ մնան և «ազգային գործիչ»-ի տիտղոսը ձեռքերից չխլեն: Իսկ Բագվի հարուստ «խնամակալներն» իրենց ահագին հարստությունից, մի չնչին մասը թատրոնին նվիրելով, իրենց հասկացողությամբ, արդեն բավականին մեծ գործ էին կատարում: Իսկ թե խմբին ռեժիսյոր է պետք, այդ մասին նրանք գլուխ ցավեցնելու վոչ ցանկություն ունեյին, վոչ էլ՝ ժամանակ:

Գոնե մի ոտարազգի ռեժիսյոր բերեյին:

Այս վերջին յերկու թատերաշրջաններին էլ ռեպերտուարը պատահական էր: Աչքի ընկնող մի նոր, ինքնուրույն պիես չխաղացինք: Ամբողջովին թարգմանական պիեսներ էին, չհաշված մի յերկու-յերեք անգամ կրկնված՝ «Պեպո»-ն, «Խաթաբալա»-ն և «Քանդած ոջախ»-ը, վոր խաղացվում էին հեղինակի կողմից ժամանակին ցույց տրված միզանսցեններով: Դեկորները յեղածներից էին հարմարեցվում, նորերը չէյին շինվում:

Այստեղ պետք է նշել և այն, վոր արդեն անցել էինք պավիլյոնների, վարագույրներից և կուլիսներից այլևս սենյակ չէր կազմվում, այլ լինում էր յերեք պատից, իսկ զանազան թատրոններում յերբեմն առաստաղներն էլ էին դրվում:

Լուսավորությունն էլ էր փոխվել, և նավթի լամ-

պարենրի փոխարեն ելեկտրական պայծառ լույսն եր տիրապետում, վորի շնորհիվ բեմն ել գեղեցկացել եր:

Ահա մի բնորոշ, կոմիքական դեպք. շնորհիվ այդ պատահական ռեպերտուարի, խաղում եյինք «Որորոց» անունով մի պիես, վոր չգիտեմ ինչի՛ց դրդված, ֆրանսերենից թարգմանել եր, այժմ հանգուցյալ, հուշարար Վահան Տիրացյանը: Սրան-նրան դիմելով, խնդրելով, աղաչելով—չե՞ վոր թարգմանության համար հոնորար պետք ե ստանար—վճռվեց՝ ի հարգանս թարգմանչի, բեմադրել այն, մանավանդ վոր դերասանուհի Խիթարյանն այդտեղ լավ դեր ուներ: Մարսան անունով մի ինչ վոր սիրահարված յերիտասարդի մեծ դեր տվին ինձ: Պիեսը խաղացվում եր ընդամենը յերեք փորձով: Խոստովանում եմ, վոր վոչ այն ժամանակ և վոչ ել հիմա յեմ բովանդակությունը հիշում: Բնականաբար, դերն անգիր անելու մասին, խոսք լինել չեր կարող: Մի տեսարան ունեյի Խիթարյանի հետ, շատ յերկար մի տեսարան. վորքան խնդրեցի «քաղցրացնել», այսինքն՝ կրճատել այդ տեսարանի մի մասը, չհամաձայնեցին, մանավանդ դեմ կանգնեց Խիթարյանը, վոր դերը վաղուց եր սերտել. Թե ի՛նչ եր, չգիտեմ: Մնաց այնպես, ինչպես կար: Յեկավ ներկայացման գիշերը, յերկուսս ել բեմի վրա յենք և նստած ենք ըստ միզանսցենի՝ բեմի աջ կողմում, բազմոցի վրա, հուշարարից շատ հեռու: Վա՛յ իմ հալին. բառերս հազիվհազ եմ արտասանում և ահա՛, ահա՛ սպասում եմ, վոր մի տեղ պիտի կանգ առնեմ և խայտառակվեմ: Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ... Առանց յերկար մտածելու, բռնում եմ որիորդի ձեռքից, ուժով բարձրացնում և դեպի խորքի դուռը տանելով՝ ասում,—«Գնանք պատշգամբ և այնտեղ վերջացնենք մեր խոսակցությունը, ինչպես տեսնում եմ, մարդ ե գալիս, մեզ կարող են խանգարել»:

Այս թատերաշրջաններին, յերբ Բաքուն խմբեր եր պահում, Թիֆլիսում կանոնավոր ներկայացումներ չկային, միմիայն 1899–90 թվին թատերաշրջանին մի փոքրիկ խումբ եր գործում, վորի մեջ եյին մտնում Բաքվի խմբին այլևս չմասնակցող՝ Ցելեկյան քույրերը, Զա-

բելը, Տեր-Դավթյանը, Միրաղյանը, Հարությունյանը, Ոհանյանը, Մամիկոնյանը և ուրիշները:

Այս վերջին յերկու թատերաշրջաններին հերթով ռեժիսյորություն եյին անում Աբելյանն ու Պետրոսյանը, բայց նրանց համար շատ դժվար եր այդ, վորովհետև ամբողջ ռեպերտուարն իրենց ուսերի վրա եյին տանում՝ կատարելով ամեն մի ներկայացման կենտրոնական դերերը:

1901 թվին Բաքվի թատերաշրջանն ավարտելով՝ Հովհաննես Աբելյանի ղեկավարությամբ շրջիկ խումբ կազմվեց, և անցանք՝ Արմավիր, Յեկատերինոդար, Նոր-Նախիջևան, ապա՝ Բաթում: Չիմանալով, վոր Նոր-Նախիջևանցիք չափազանց կրոնամոլ են և ամբողջ մեծ պասի ընթացքում միմիայն յեկեղեցի յեն հաճախում, մենք ընկանք այդտեղ մեծ պասի վերջին յերեք շաբաթը: Ներկայացում հայտարարեցինք. շատ քիչ մուտք—հազիվ հազ գիշերվա ծախքերը ծածկեցինք, յերկրորդ ներկայացումը տվինք, դարձյալ նույնը, յերրո՛րդը տվինք, ելի՜... Յերբ դիմեցինք սրան-նրան, այդ ժամանակ միայն իմացանք, վոր Նոր-Նախիջևանցիք մեծ պասին թատրոն չեն գնում, այլ իրենց մեղքերն են քավում և յեկեղեցի հաճախում: Բոլորս ել, քսան հոգով, մի բնակարան եյինք իջել, մի տանտիրուհու մոտ, վորին տվինք մեր ունեցած հիսուն ռուբլին, պայմանով, վոր մի շաբաթ՝ մինչև զատիկ մեզ կերակրի. նա համաձայնեց և յերեք որ կերակրեց, իսկ չորրորդ որը փորձից վերադառնալով՝ ըստ սովորականի մտանք սեղանատուն և սեղանը պատրաստ չգտանք: Մեր հարցին, թե ինչո՛ւ չե այդպես, տանտիրուհին հանգիստ պատասխանեց, վոր հիսուն ռուբլին արդեն ծախսել ե, ել փող չունի, պիտի նորից տանք, վոր շարունակի մեզ կերակրել: Այդ որը մնացինք առանց ճաշի: Վերջապես զատիկը յեկավ, և լիքը-լիքը մուտքեր արինք, շնորհիվ այն բանի, վոր այդ որերին հասարակությունը կեր ու խումով եր զբաղված:

Հենց վոր խմբի գործերը վատ գնացին, դերասաններից շատերը տրտնջացին և խմբի ղեկավար Աբելյանից պահանջեցին ռեպերտուարը փոխել ու կոմպրոմիսի

մեջ մտնել, այն է՝ մուտքեր տվող պիեսներ դնել: Բայց Աբելյանն իր դիրքի վրա ամուր կանգնեց և միմիայն վորոշած պիեսները բեմադրեց:

Այսպիսով նա փրկեց տրվող պիեսների վորակը:

Նոր-Նախիջևանցիք շատ թատերասեր էյին, բայց՝ և կրոնամոլ:

Այլևս այդ դեպքից հետո մեծ պասին Նոր-Նախիջևան չգնացինք:

Խրատվել էյինք:

Ամառը Գ. Պետրոսյանի ղեկավարությամբ անցանք Շուշի, իսկ հոկտեմբերից Թիֆլիսում փոխեփոխ խաղացինք վրաց թատրոնում, հայկական ժողովարանում ապա՝ Արտիստական նորակառույց մեծ և շքեղ թատրոնում: Միքանի ներկայացումներ տալով՝ տեղափոխվեցինք Բագու: Խմբի մեջ էյին՝ Սիրանուշը, Պետրոսյանը, Աբելյանը, Մայսուրյանը, ... Նախ քան Բագու գնալը, Թիֆլիսում, Արտիստական թատրոնում, հոկտեմբերի 29-ին առաջին անգամ բեմադրեցինք Շիրվանզադեյի «Յեվգինե» պիեսը:

Բագվում, դեկտեմբերի յոթից, Թաղիևի թատրոնում սկսեցինք մեր ներկայացումները: Խմբի մեջ առանք մի սկսնակ, նորեկ դերասանուհի, վորին կնքեցինք Քնարիկ անունով: Առաջին բեմ ելլի համար նրան տվինք «Սեվիլյո սափրիչի» Ռոզինան: Հրաշալի խաղաց և դրանից հետո դարձավ հայ բեմի համար մի պիտանի ույժ: Կրթված աղջիկ եր՝ լավ արտաքինով, տեմպերամենտով և դուրեկան ձայնով: Նավթագործարաններում աշխատողի դրամախմբակ, ի պատիվ նրա, «Քնարիկ» անունն եր վերցրել, և հանդուցյալն այդ թատերախմբում յերկար տարիներ ռեժիսյորություն եր անում, բայց 1907 թվի դեկտեմբերի 27-ին նա վերջ տվեց իր կյանքին՝ կարբոլյան թթվուտ խմելով:

Մեր ռեպերտուարը շատ բազմակողմանի յեր. կլասիկներից դրվեցին՝ «Համլետ»-ը, «Օթելլո»-ն, «Արքա Լիր»-ը, «Օրլեյանի կույս»-ը, «Սեվիլյո սափրիչ»-ը, «Խելքից պատուհաս»-ը, «Վերաքննիչ»-ը, «Ակամա բժիշկ»-ը. ռուսական արդի ռեպերտուարից՝

«Հողոտ աղքատներ»-ը, «Մեդեյա»-ն, «Տրիլբի»-ն և հայկական պիեսներից «Մեծապատիվ մուրացկաններ»-ը և իմ բենեֆիսին՝ «Բարեգործության դիմակի տակ»-ը:

1902—03 թատերաշրջանին հիմնվեց «Թիֆլիսի Դրամատիկ ընկերությունը»: Նրան իրավունք եր տըրված միմիայն Թիֆլիսում ներկայացումներ կազ-

ՔՆԱՐԻԿ

մակերպել և խմբեր պահել: Մի քանի տարի հետո ա-
նձին թույլտվությամբ նա վերափոխվեց և կոչվեց
այոց Դրամատիկական Ընկերություն» և այս

Թույլատվությամբ իրավունք ուներ խմբեր պահել Կովկասի և մյուս քաղաքներում:

Յերբ Թիֆլիսում հիմնվեց Դրամատիկական ընկերությունը, որ ապահով ռոճիկներ տալով սկսեց ամեն թատերաշրջանի խումբ պահել, դերասաններից շատերը վերադասեցին Թիֆլիսում ծառայել, որովհետև Թիֆլիսումն եյին բնակվում, և Բագվի գործն ինքնըստինքյան մարեց, ու առաջվա նման այլևս խմբեր չեյին կազմվում: Բացի այդ, դերասանները չեյին բավում յերկու լավ խմբերի համար: Մանավանդ դերասանուհիների քչությունն այնքան եր դժվարացնում թատրոնական

ՎԱՌՎԱՌԵ ՄԵԼԻՔՅԱՆ

գործը, որ ամեն մի նոր դերասանուհու բեմին նվիրվելը մեր կողմից մեծ խանդավառությամբ եր ընդունվում: Հիշում եմ, դեռ շատ յերիտասարդ եյի, յերբ վրաց բեմից հայ բեմն անցավ հայազգի Վարվարե Մելիքյանը, որ հայերենին համարյա չեր տիրապե-

տում, հիշում եմ թե այս բանն ինչպիսի՛ ուրախություն պատճառեց թատրոնին մոտ կանգնածներիս: Տիկին Մելիքյանը հայ բեմին յերկար ծառայեց, գեղեցկացրեց այն իր բնական գեղեցկությամբ՝ մինչև իր մազերի ճերմակելը, և ծեր տարիքում, ընտանեկան հանգամանքներով, անցավ Ամերիկա, ուր դարձյալ մասնակցում եր այնտեղ տրվող ներկայացումներին, բայց 1928 թվին Ֆրեզնո քաղաքում ավտոմոբիլի տակ ընկնելով՝ կնքեց իր մահկանացուն:

Նրա քսանհնգամյա հոբելյանը կատարվել եր Բագվում՝ 1910 թվի ապրիլի 4-ին:

Յերբ Օլգա Մայսուրյանը և Սաթենիկ Ադամյանը ցանկություն հայտնեցին հայ բեմ մտնել, չնայած որ նրանցից առաջինն այն ժամանակ հայերենին լավ չեր տիրապետում, այնուամենայնիվ մեծ եր մեր ուրախությունը: Իսկ նրանցից հետո, յերբ մեկ-մեկու հետևից յեկան՝ Օլգա Գուլազյանը, Համիկը, Ժասմինը, Արուս Ոսկանյանը, Մարի Բերոյանը, Դուրյանը, Արաքսը և մյուսները, մեր ուրախությունն արդեն կատարյալ եր:

Թե Թիֆլիսում և թե Բագվում, իհարկե, տիկին Սիրանուշն եր թագավորում, հասարակությունը նրա մասնակցության ժամանակ լցնում եր թատրոնը և ըստ արժանույն գնահատում տաղանդավոր դերասանուհուն: Նրա ամեն մի բենեֆիսը տոնի յեր փոխվում, շաբաթներ առաջ հասարակությունը պատրաստվում եր ներկա գտնվելու նրա բենեֆիսին: Ընծաներին և կանչերին վերջ չեր լինում, ծաղիկների և թռուցիկների տարափը լցնում եր բեմը: Իսկ հարուստ կանայք, ի պատիվ նրա, նոր զգեստներ եյին կարում և Սիրանուշի անունով կնքում: Չեր կարելի չզմայլել նրա խաղից, և մենք՝ բեմի վրայի նրա խաղակիցներս անգամ տարվում եյինք նրա խաղով, մոռանալով, որ բեմի վրա յենք գտնվում: Մի՞թե կարելի յե մոռանալ նրա «Կյանքի արժեքը», «Մեդեյա»-ն, «Օրլեյանի կույս»-ը, «Համլետ»-ը, «Արծվիկ»-ը, «Սաֆո»-ն, «Դավաճանություն»-ը, «Հին աստվածներ»-ը, «Միրրա Եֆրոս»-ը.

«Իզեէլ»-ը, «Մարգարիտ Գոտիե»-ն, «Որվան չաբիք»-ը, «Հայրենիք»-ը, «Հայրենական տուն»-ը, վո՞ր մեկն ասեմ, վո՞ր մեկը թվեմ։

Վորովհետև Պոլսի դերասանները ֆրանսիական շկոլային էյին պատկանում, Սիրանուշն էլ Ռուսաստան յեկած առաջին տարիները նույն շկոլայի ձևով, պաթոսով, կեղծ կլասիկ տոնով եր խաղում, սակայն յերկար

ՍԻՐԱՆՈՒՇ

ժամանակ ապրած լինելով Ռուսաստանում և ռուս դերասանների խաղը տեսնելով՝ իր խաղալու ձևը փոխել և խաղում եր բնական, հանգիստ, առանց վորևէ մելոդրամների կեղծ տոնի, և այդ բնականն եր նրա խաղի մեջ, վոր գրավում եր ամենքի ուշադրությունը։ Ձայնն

ու առոգանությունը քաղցր էյին և հնչեղ։ Յերբ Մոսկվա էյինք գնացել գաստրոլների, ռուս դերասանները հարց էյին տալիս իրենց ծանոթ հայերին, թե ի՛նչ լեզվով է խոսում Սիրանուշը բեմի վրա, յեթե հայերեն է, ապա ինչո՞ւ նման չէ խմբի մյուս անդամների խոսվածքին։ Այնքան գեղեցիկ եր նրա արտասանությունը։

Բավական չէ, վոր նա հանճարեղ դերասանուհի յեր և ուներ շարժուն դեմք, նա հարուստ եր բեմի վրա ընդունած իր պոզաներով և կարողանում եր ստեղծագործել իր դերը՝ վարպետորեն ոգտվելով եֆֆեկտներից և բարեխղճորեն վերաբերվելով դեպի ամենափոքր շտրիխները։

Բայց տարվեցի հիշողություններով, շարունակենք։

1902 թվին՝ Բաքվում թատերաշրջանն ավարտելուց հետո, մեծ խմբով՝ Սիրանուշի, Աբելյանի և Պետրոսյանի ղեկավարությամբ անցանք Նոր-Նախիջևան, Մոզդոկ, ապա՝ Հաշտարախան։ Ռեպերտուարն, իհարկե, Սիրանուշի պիեսներից եր կազմված։ Այստեղ ես չեմ կարող չհիշել Սիրանուշին—չորս, հինգ, վեց գիշեր իրար հետևից կենտրոնական ուժեղ դերեր եր խաղում և հոգնածությունից յերբեք չեր գանգատվում, այնինչ կային, հենց այժմս էլ կան, դերասանուհիներ, և նրանից շատ յերիտասարդ, վոր յերկու գիշեր խաղալուց հետո այնքան էյին գանգատվում իրենց հոգնածությունից, վոր կարծես թե սարեր են տեղահան արել։ Միմիայն «Մեդեյա» պիեսն եր, վոր նրան չափազանց հոգնեցնում եր, և մյուս որը վոչ մի պայմանով չեր խաղում։

Ամառը Սիրանուշի հետ խմբով Շուշի գնացինք, իսկ հոկտեմբերին գնացի Բաքու, ուր հրավիրված էյի ինտելիգենտ-վաճառական Ներսես Դավթյանի ղեկավարությամբ գործող խմբին աշխատակցելու։ Ինչ վոր մի կոմիտե յեր հսկում և խնամում այդ խումբը։ Խմբի մեծ մասը յերիտասարդներ էյին— դերասանուհիներ՝ Ավետյանը, Սաթենիկը, Աչամյանը, Դուրյանը, Ալաքսը, Բնարիկը, Փառանձեմը, դերասաններ՝ Արմեն-

նյանը, Ալիխանյանը, Բերոյանը, Զարիֆյանը, Խաժակը, Վրույրը, Ստեփանյանը, Բշտունին, Տիրացյանը և Ավետյանը: Ռեժիսորն Արմեն Արմենյանն եր: Սեզոնի կեսին խումբն արձակեցին՝ պիեսների անպետքության և, մանավանդ, թույլ բեմադրությունների պատճառով: Գործին չօգնեցին նաև հրավիրված գաստրոլյորներ Սիրանուշը, Աբելյանն ու Պետրոսյանը:

Ուզում եյին բեմադրել Մոլիերի «Ակամա բժիշկը», և Սգանարելի գլխավոր դերն ինձ եյին նշանակել: Ներկայացումը պիտի գնար ընդամենը յերեք-չորս փորձով: Ցես մերժեցի այդքան կարճ ժամանակամիջոցում պատասխանատու դեր կատարել, և քսանհինգ ռուբլի

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐԻՖՅԱՆ

տուգանքի յենթարկեցին ինձ: Պիեսը մի ամբողջ ամսով հետաձգվեց, վորից հետո բեմադրեցին, և յես արդեն դերս անգիր գիտեյի ու խաղացի, բայց քսանհինգ ռուբլի տուգանքն արդեն վերցրել եյին ու էլ հետ չտվին:

Արձակված դերասաններս ընկերական պայմաններով շարունակեցինք ներկայացումները, իհարկե՝ առաջին հերթին ռեպերտուարը փոխելով ու զանազան

կոմպրոմիսների մեջ մտնելով: Մեր գործերն այնքան յավ գնացին, վոր Ն. Դավթյանի՝ տպարանին ու մինչև անգամ վարսավիրային չվճարած՝ պարտքերը մենք վճարեցինք:

Այս թատերաշրջանին Արմենյանն ամուսնացավ Դուրյանի հետ, իսկ բարեկենդանին Զարիֆյանին ամուսնացրինք Արաքսու հետ: Հանգուցյալ Աշուղ Ջիվանին, վոր իր խմբով պատվել—յեկել եր իր հայրենակից Զարիֆյանի հարսանիքին շուք տալու, սեղան նստած ժամանակը եկսպրոմտ յերգեց.

«Գյումրվա բլբուլն իր տաղանդով
Պոլսվա վարդին գրավեց,
Նա էլ նրանից պակաս չմնաց
Իր գեղեցկությամբ նրան հմայեց».

Շարունակությունը չեմ հիշում:

Սեզոնը փակեցինք և մարտին (1903 թվին), տիկին Սիրանուշի հետ, խմբով ճանապարհվեցինք Ցերևան, Ալեքսանդրոպոլ, Ղարս և ապա՝ Բաթում: Ամեն տեղ էլ թե նյութական և թե բարոյական շատ մեծ հաջողություն ունեցանք:

Այդ ժամանակ Ցերևանում մի կազակ վոստիկանապետ կար, վոր շատ բթամիտ և վերին աստիճանի տասակեր մի անձնավորություն եր: Մեր՝ խաղացվելիք «Համլետ»-ի աֆիշը տարա նրան՝ թույլտվություն ստանալու: Նա կանչեց իր քարտուղարին, վորը վերցրեց ռուսաց լեզվով թույլ տրված պիեսների ցանկը. յես նրան նկատեցի, վոր հայերեն պիեսների ցանկն ուրիշ ե, այդ չե: Վոստիկանապետն աչքերը չռեց վրաս ու ասաց, վոր Պետերբուրգից ե ստացված և ղեկավարվում ե միմիայն այդ ցանկով, ուրիշ վոչ մի ցանկի հետ գործ չունի: Ձայն չհանեցի, վորովհետև հաստատ գիտեյի, վոր իրենց ցանկի մեջ «Համլետ»-ն անպայման կլինի: Նայեցին և գտան: Բայց վորովհետև Շեքսպիրի անունն այնտեղ չկար, իմ տարած աֆիշից այն ջնջեցին և «Թարգմանություն Հ. Խ. Մասեհյանի» տեղ դրին «Թարգմանություն Պալեվոյի»: Մյուս անգամ էլ Մոլիերի—«Ժլատ»-ի աֆիշը տարա և նույնպես հեղինակի անունը ջնջեց ու «Թարգմանություն Ա. Վրույրի»

տեղ մի ռուս ազգանուն գրեց, վոր Թույլատրված պիեսների ցանկումն եր։ Գ. Պետրոսյանն այդ աֆիշներն իր մի նամակով ուղարկել եր «Театр и искусство» շաբաթաթերթին, և վերջինս, իբրև կուրյոզ, տպագրել եր։

Ասենք, մենք էլ քիչ խաղեր չենք խաղացել այդ վոստիկանապետների գլխին. որինակ՝ Հայոց լեզվով Թույլատրված պիեսների ցանկում «Փառք աստծո» վերնագրով ինչ վոր մի վոտանավոր եր Թույլատրված բեմից արտասանելու։ Այդ վոտանավորի բովանդակությանը ծանոթ էլ չեյինք, բայց մենք միշտ այդ անվան տակ բեմից ինչ ասես արտասանում եյինք։ Կար և մի վոդեվիլ «Անանուն կատակ» անունով, այդ անվան տակ էլ ինչ ասես, վոր չեյինք խաղում, և այդպիսի շատ դեպքեր։

Ամառը (1903 թ. մի քանի դերասան վերցնելով հետս՝ գնացի Շուշի։ Հանգուցյալ դերասան Ուշտունու հետ միասին ապրում եյինք իմ լավ ծանոթ և ընկերոջ՝ Բագրատ Հասան-Ջալալյանի մոտ։ Մի շարք ներկայացումներ տվինք։ Ամառը, յերբ ցարական կառավարությունը բոլոր յեկեղեցապատկան շենքերը պիտի խլեր, հենց սկզբից պատժիչ զորամասեր եր բերել և, քաղաքի զանազան տներից ապրողներին դուրս անելով՝ տները զորանոցներ շինել՝ ժողովրդի ըմբոստությունը կանխելու համար։ Քաղաքի կենտրոնում գտնվող Հուշակավոր «Թոփխանա» հրապարակի վրա ամեն որ առավոտից մինչև ճաշ նախկին Խանքյանից, այժմյան Ստեփանակերտից, բերել տված կոզակների յերաժշտախումբն եր նվագում, վոր քաղաքացիներին ավելի յեր գրգռում։ Զինվորներն ու կոզակները գինետներում հարբելով ընկնում եյին փողոցները և իրենց անվայել ու լկտի վարմունքով բոլորին ջղայնացնում։ Քաղաքը լիքն եր ամարանոց յեկած ընտանիքներով, համալսարանում սովորող ուսանողներով, վորոնց հասցեյին զինվորներն ու նրանց սպաները, վորոնց մեջ հայեր էլ կային, լպիրշ ակնարկներ եյին շպրտում, վորով պատճառ եյին փրնտռում արդարացնելու իրենց ներկայությունը և պատժիչ զորամասերին «գործի դնելու»։

Ցեկեղեցապատկան շենքերը չափող և ընդունող

հանձնաժողովի մեջ, վոր Գանձակից եր ուղարկված, կար և մի պատասխանատու հայ պաշտոնյա՝ Մելիքյան ազգանունով։ Մի քանի ուսանող նամակով դիմել եյին վերջինիս և խնդրել հեռանալ քաղաքից կամ, հիվանդ ձևանալով, չկատարել այդ պաշտոնը։ Պաշտոնյան ուշադրություն չեր դարձրել անոնիմ նամակի վրա և շարունակում եր իր պաշտոնը։ Մի գիշեր ժողովարանից տուն վերադառնալիս, մի խումբ գոգված յերիտասարդներ նրան մի մութ փողոցում բռնում և լավ ծեծում են։

Առիթը գտնված եր։

Լուսաբացին սկսվեց այն, ինչ սպասում եյինք։ Ձերբակալություններ, ծեծ, բռնություն... ամեն ինչ առաջվանից ծրագրված ձևով։

Առավոտյան պատրաստվում եյի տնից դուրս գալու, վոր դատախազի ոգնական վոմն Վասիլյևի ղեկավարությամբ կոզակները ներս թափվեցին և իմ ու Ուշտունու (կանուխ դուրս եր գնացել զբոսնելու) իրերը տակն ու վրա անելով և վոչինչ հակաօրինական բան չգտնելով, այնուամենայնիվ ինձ և իմ տանտիրոջը՝ Բագրատին ձերբակալելով՝ ուղղակի բանտ տարան։

Ուսուցիչներ, ուսանողներ, դերասաններ...Շուշվա բոլոր ինտելիգենցիան բանտ եր դրված և ամենքին ել մեղադրում եյին «իշխանությանը զենքով դիմադրելու և տիրող իրավակարգը փոխելու ցանկության մեջ», իսկ դրա հետևանքը կամ կախաղան եր, կամ տաժանակիր աշխատանք։

Ամբողջ շաբաթ մեզ մեր ընտանիքների հետ վոչ մի տեսակցություն, ինչպես և դրսից կերակուր կամ անկողին ստանալ չեր թույլատրվում։ Քնում եյինք մերկ գետնի վրա։

Մի շաբաթ հետո Գանձակից գլխավոր դատախազը յեկավ և, բանտի նրբանցքում բոլորիս շարքով կանգնեցնելով, սկսեց ամեն մեկիս առանձին-առանձին ծաղրի յենթարկել, վախեցնելով թե բաններս բուրդ ե։ Այս բանում նրան շատ եր ոգնում դատախազի ոգնական Վասիլյևը։ Յերբ հերթն ինձ հասավ, նա մի առանձին չեշտով հայտնեց, գլխավոր դատախազին, վոր յես

«ռեժիսյորություն» եմ արել քաղաքացիների զայրույթի բռնկման ժամանակ, և ազգանունս էլ դիտմամբ Ավետյանցով եր արտասանում:

Բանտարկվածներից շատերին տարի ու կես, մի տարի, մի քանի ամիս պահեցին, առանց վորևե հարց ու փորձի, առանց վորևե փաստի: Ինձ շատ չպահեցին, մի քանի ամիս միայն: Բայց յերբ դուրս թողին, արդեն վարդապետական փառավոր միրուք ունեյի, և ամբողջ մարմինս վոջիլներով եր ծածկված:

Թատերաշրջանին ուշացա:

Անցավ մի քանի տարի, յեկավ 1917 թիվը: Մարտ ամիսն եր, Սիրանուշի խմբի հետ Յերևանում եյի գտնվում: Խաղում եյինք կլուբում՝ այժմյան Պետական թատրոնում: Ճաշում եյինք հենց նույն կլուբի բուֆետում: Ցարին նոր եյին գահընկեց արել: Թագնվելու համար պաշտոնյաները մկան ծակ եյին փնտրում: Մի որ փորձն ավարտելով՝ ներս մտա բուֆետ ճաշելու, վորտեղ նստած եր յերաժիշտ Յեղիշե Բաղդասարյանը՝ մի ինչ վոր անձնավորության հետ: Նա ինձ եր սպասում, վոր, ըստ սովորականի, միասին ճաշենք: Մոտեցա նրան, բարևեցի և, են ե, ուզում եյի նստել, նա դարձավ ինձ և խնդրեց ճանաչել և իր ծանոթին՝ Շուշվա նախկին դատախազի ոգնական Վասիլյեվին:

Ոձից խայթվածի պես վեր թռա, դարձա ինձ հետ միաժամանակ բանտ նստած Յեղիշե Բաղդասարյանին և ռուսերեն.—«ամեն մի սրիկայի հետ յես գործ ունենալ չեմ ցանկանում»,—ասելով՝ հեռացա: Վասիլյեվը մնաց կանգնած՝ ձեռքը մեկնած բարևի համար:

Այդ դեպքից հետո յես Յեղիշե Բաղդասարյանի հետ յերբեք չնստեցի ճաշելու:

Վասիլյեվից վրեժս մասամբ լուծեցի:

5

1903—04 թվի թատերաշրջանին հրավիրվեցի Թիֆլիսի Դրամատիկ ընկերության խմբին աշխատակցելու: Նույն պիեսներն եյին, ինչ առաջ խաղում եյինք, իսկ ինքնուրույն պիեսներից միայն յերեքն եյին

տեղ գտել մի ամբողջ թատերաշրջանի ռեպերտուարի մեջ, այն ե՝ Շիրվանզադեյի «Ցեվգինե»-ն, Ս. Թառայանի «Թագնված կայծեր»-ը, Ա. Արեւյանի «Մարվող հրագներ»-ը, իսկ վարդանանքին՝ անպայման «Յերվանդ Բ.»: Այստեղ ի դեպ ե ասել, ի պատիվ մեր այն ժամանակվա բոլոր դերասանների, վոր այդ «պատմական» Սամվելների և Արշակների մեջ խաղում եյինք ի պաշտոնե, ծիծաղներս հազիվ զսպելով, իսկ բեմից դուրս գալով, հռհռում եյինք և բեմի վրայի մեկ մեկու կոմիկական դրությունը հիշելով, սրախոսում եյինք և շատ ուրախ տրամադրության տակ ցրվում տները:

Ընդհանրապես հայ թատրոնը մշտական հաճախորդ չուներ, աբոնեմենտային սիստեմ գոյություն չուներ և չեր էլ կարող ունենալ հենց այն պատճառով, վոր մասսան կապված չեր թատրոնի հետ: Այս պատճառով էլ թատրոն եյին հաճախում գլխավորապես՝ ուսուցիչներ, ինտելիգենցիան, խանութպանները, բանվորությունը և ուսանողությունը: Հարուստ դասակարգը—բուրժուազիան յերես եր դարձնում հայկական ներկայացումներից և լինում եր միայն այն ժամանակ, յերբ վորևե թամաշա պետք ե լիներ—հոբելյան, բենեֆիս, կամ Սիրանուշի ու սրա նման դերասանների մասնակցությունը: Յերբ Թիֆլիսում ներկայացումը վերջանում եր, թատրոնի առաջ՝ փողոցում կանգնած դիտողը շատ լավ կարող եր նկատել, վոր բազմության ճնշող մասը դեպի Հավլաբար, այդ բանվորական և մանրածախով զբաղվողների թաղն եր ճանապարհվում, իսկ դեպի Սոլոլակ, դեպի հարուստների այդ թաղամասը հատ ու կենտ մարդիկ եյին դիմում: Այդ վողորմելի «պատմական» ներկայացումների ժամանակ թատրոնը միմիայն Հավլաբարի խանութպաններով և քաղաքի վաճառականներով եր լցվում. ուսանողությունը, ուսուցչությունը և ինտելիգենցիան այդ ներկայացումները միշտ բոյկոտի յեր յենթարկում մասամբ կամովին, մասամբ էլ՝ ակամա: Բանվորությունից միայն այն մասն եր սիրում այդ ներկայացումները, վոր ազգային թույնով եր վարակված:

Այն որերին, յերբ թատրոնի ճնշող մեծամասնությունը բանվորությունից և ուսանողությունից եր լինում, թատրոնում ուրախ տրամադրություն եր տիրում, և մենք՝ դերասաններս նրանց շատ եյինք սիրում, վորովհետև նրանք իրենց ծափահարություններով մեզ վոգևորում եյին ու տրամադրում:

Խմբի ռեժիսյորը շատ կարճ ժամանակով Միքայել Ջաբարն եր, վոր իր բեմադրած «Ծծմայրեր»-ով ամենքիս հիացրեց, իսկ նրա մյուս բեմադրությունները մեզ բոլորովին հիասթափեցրին: «Ծծմայրեր»-ը նա տեսել եր Փարիզում և իր տեսածի ընդորինակումն եր: Վատ ռեժիսյոր լինելով հանդերձ՝ նա շատ լավ ադմինիստրատոր եր:

Բոլորովին շեղվելով իմ նյութից, պարտք եմ համարում չեշտել այն թյուր կարծիքը, վոր տիրում եր մեզ մոտ՝ գեղարվեստի մարդկանց մոտ: Գեղարվեստի մարդը քաղաքական հարցերով յերբեք չպետք է զբաղվի, թատրոնից զատ նա վոչ մի կուսակցություն չպետք է ճանաչի: Այս եյին ասում ամենքը և այս եյին մտցրել մեր գլուխը: Յեվ, իսկապես, մեր հայ դերասաններից վորևէ կուսակցության պատկանող և վոչ մի դերասան չեյինք գտնի: Տարորինակ է... Կարծես, մենք դերասան լինելով հանդերձ, նույն քաղաքացիները չեյինք, ինչ ուսուցիչները, գրականագետները, ուսանողները և այլն... Ո՞վ եր այդ հնարել և ինչո՞ւ... այն ապոլիտիկ վերաբերմունքը դեպի ամեն ինչ, վոր ցարական կառավարությունը ծուռումուռ ճանապարհներով սրսկում եր ամենքին, մանավանդ մեզ՝ գեղարվեստի մարդկանց:

Հիշում եմ, յերբ Պետական Դումայի պատվիրակների ընտրություններն եյին, մեր ամբողջ դերասանական կազմը կենդանության վոչ մի նշույլ չցուցադրեց: Պասսիվ եյինք: Ռուսաց խմբի դերասանները բոլորը միաբերան ձայն տվին համար յերկուսին, այն է՝ կադետական կուսակցության, և զարմանում եյին, վոր հայ դերասանները նույնը չեն անում:

Հասարակական-աշխատանքներ մեզ մոտ չկային, իհարկե, չհաշված այն, վոր մեզ շարունակ հրավիրում

եյին ձրի մասնակցելու այս կամ այն բարեգործական նպատակով տրվող յերեկույթներին կամ ներկայացումներին: Այդ ներկայացումները զանազան կուսակցությունների տեղական մարմինների ոգտին եյին տրվում և մեզ միշտ ել շահագործում եյին: Յեթե մերժեյինք կամ մեր մասնակցության համար վարձատրություն պահանջեյինք, ուրեմն մենք քաղաքացիներ չեյինք, «հայասեր», «ազգասեր» չեյինք և այլն: Ածականներ եր, վոր անպայման մեզ կկպցնեյին: Իսկ լեգալ բարեգործական յերեկույթներին մասնակցելու համար վոչ մի շնորհակալություն ել չեյինք ստանում, այդ մեր «պարտքն» եր, «քաղաքացիներ» եյինք: Մի վորևէ մեծահարուստ յեթե յերկու ռուբլիանոց տոմսի վրա մի ռուբլի ավել եր տալիս, լրագրով նրան շնորհակալություն եյին հայտնում և անունն ել տպում:

Թատերաշրջանը փակվելուց հետո, Սիրանուշի ղեկավարությամբ գնացինք Գանձակ, վորտեղ լեփ-լեցուն դահլիճում տասը ներկայացում տվինք: Սիրանուշի պատվին մեր հյուրանոցի առաջ մինչև առավոտ նվագում եյին ու պարում, իսկ թատրոնի մոտից գիմնազիայի աշակերտները նրա կառքի ձիերն արձակում և իրենք եյին քաշելով ու նվագակցությամբ բերում—հասցնում հյուրանոց: Փետրվարին եր այս. իսկ մարտին մեծ խմբով Պետրոսյան, Աբելյան, Սիրանուշ, Մայսուրյան և ուրիշներ անցանք Բաքու և մինչև ապրիլի վերջը քսան ներկայացում տվինք: Ռեպերտուարը, պետք է ասել, լավ մուտքեր տվող պիեսներից եր կազմված, և ներկայացումներն ել բավականին սահուն եյին գնում, վորովհետև բոլոր պիեսներն ել նույն անսամբլի կողմից համարյա արդեն խաղացվել եյին Թիֆլիսում: Այդ պիեսներն եյին՝ Դաստոյեվսկու «Ապուշ»-ը, Բրիոյի «Ծծմայրեր»-ը, Հաուպտմանի «Ջրասույզ զանգ»-ը, Միրբոյի «Փողի հերոսը», Շիլլերի «Խարդավանք և սեր»-ը (առաջին անգամ Բաքվում), Ս. Թառայանի «Թագնված կայծեր»-ը, «Զազա» և «Համլետ» Սիրանուշի մասնակցությամբ՝ Համլետի դերում: Բացի սրանից, բեմադրեցինք առաջին անգամ «Ճահիճ»

անունով պիեսը, վոր գրել եր Կոստանդին Խատիսյանը և իր գրպանից մեծ ծախքեր եր արել դեկորների վրա: Բնականաբար, ներկայացումը մեծ հետաքրքրություն եր շարժել Բաքվում, և թատրոնում ասեղ գցելու տեղ չկար: Նորից կրկնեցինք: Այդ պիեսը մի պասկվիլ եր, գրված իր ընկեր ինժեներների վրա:

Ամառն Աբելյանի հետ խումբ կազմելով՝ անցանք Շուշի:

Պետք ե ասել, վոր ճանապարհորդում եյինք մեծ մասամբ ընկերական պայմաններով, խմբի շահերն ամեն մի դերասանի համար թանդ եր, և ամեն մեկն, իր ձեռքից յեկածի չափ, գործի հաջողության համար եր աշխատում: Որինակ՝ այդ ամառային շրջանին մենք նոր դեկորներով բեմադրեցինք «Ջրասույզ զանգը» և, ավելի բարդ դեկորներով՝ «Գրանտ նավապետի զավակները» ֆեերիան:

Իբրև ֆեերիա, «Գրանտ նավապետի զավակների» մեջ պետք ե ունենայինք և՛ սառցի կուլիսներ, և՛ ալեկոծվող ծով, և՛ շոգենավի խորտակում, և՛ յերկրաշարժ, վորին հետևում ե հրաբուխ: Այդ ամենը, իհարկե, մեծ տանջանքներով շինեցինք, և ներկայացումը Շուշում չտեսնված մեծ հաջողություն գտավ:

Դերասան Անդրանիկը, վոր լավ հյուսն եր, փայտե մասնիկներն եր շինում, իսկ յես նկարում եյի: Կանանցից ու տղամարդկանցից ամեն մեկը դեկորների մի մասնիկով եր զբաղված—մեկը կարում եր, մյուսը ներկ եր պատրաստում, յերրորդը բուտաֆորիան եր շինում և այլն... Մեղուների նման որ ու գիշեր աշխատում եյինք և, մեր ձեռքի աշխատանքը տեսնելով, մեծ հաճույք եյինք զգում:

Դիսցիպլինան ընկերական խմբերում միշտ օրինակելի յե յեղել: Ուշացումը հազվագյուտ յերևույթ եր:

Բացի յերեկոյան ներկայացումներից, չորեքշաբթի օրերին ցերեկը մանկական ցերեկույթներ ել եյինք տալիս, վոր բավականին հաջողություն եյին գտնում:

Նախ՝ խաղացվում եր մի ծիծաղաշարժ, մանուկների դյուրամատչելի պիես, մի կամ յերկու արարով, ա-

պա՝ խաղեր ու պարեր: Լավ խաղերի ու պարերի համար լինում եյին ընծաներ և պրիզներ:

Մանկական այդ ցերեկույթները կրթիչ նշանակություն չունեյին, այլ սոսկ զվարճանալու և ժամանակն ուրախ անցկացնելու համար եյին և, վոր գլխավորն ե, դեպի մեզ եյին գրավում ծնողների համակրանքը, իսկ այդ մեզ պետք եր՝ մեր մյուս ներկայացումների մուտքն ավելացնելու համար:

Թիֆլիսի Դրամատիկ ընկերությունը ձմեռվան թատերաշրջանն ինչ ինչ պատճառներով պիտի սկսեր 1905 թվի հունվարի մեկին և վերջացներ զատկին: Աբելյանի հետ մեծ խումբ կազմելով, նախ՝ գնացինք Մոզդոկ, ապա՝ Արմավիր, Պյատիգորսկ, Գրոզնա, Յեկատերինոդար, Ղզլար, Դերբենտ և Պետրովսկ: Խմբի ռեպերտուարը շատ մեծ եր.— «Բարեկամներ», «Խարդավանք և սեր», «Տրիլբի», «Մարվող ճրագներ», «Օթելլո», «Ավազակներ», «Թագի համար», «Վոճրագործի ընտանիքը», «Անմեղ մեղավորներ», «Մեծապատիվ մուրացկաններ», և «Ընտանեկան գաղտնիք»:

Վորովհետև խմբի մեծ մասը հրավիրված եր Թիֆլիս, ուստի դեկտեմբերին վերջացրինք մեր գաստրոլները, և հրավիրվածները մեկնեցին Թիֆլիս: Իսկ յես, թեև նույնպես հրավիրված եյի, չգնացի, վորովհետև Դրամատիկ ընկերության վարչությունը դեռ մայիսին ինձ հետ կապած պայմանագրի մի կետը խախտել եր: Յես յեկա Բաքու ու միացա արդեն 1904 թ. սեպտեմբերի 1-ից Սիրանուշի և Պետրոսյանի ղեկավարությամբ գործող խմբին, վորից Ոլգա Գուլազյանը և Հակոբ Ոհանյանը նույնպես մեկնեցին Թիֆլիս՝ առաջվանից այնտեղ հրավիրված լինելով: Խումբը ներկայացումներ եր տալիս քաղաքում՝ Թաղիևի թատրոնում և շաբաթը յերկու-յերեք անգամ ել՝ Բալախանիի ու Սև քաղաքի բանվորական ռայոններում:

Հունվարի 31-ի բենեֆիսիսհայ բեմի վրա առաջին անգամ բեմադրեցի՝ «Պտույտ աշխարհի շուրջը ութսուն որում» ֆեերիան, օգտվելով ռուս խմբի այդ պիեսի համար շինած դեկորներից: Փետրվարի 2-ին Սև

քաղաքում խաղացինք «Ցրից բարեկամը», ուր հանդուցյալ Ա. Վրույրն անման էր խաղում ծեր հրեա Տաբրու դերը, և 4-ին՝ քաղաքում, Սիրանուշի մասնակցությամբ՝ «Համլետ», որի մեջ կատարում էի առաջին գերեզմանափորի դերը: Վեցի առավոտյան գնացինք թատրոն՝ Իսահակ Ալիխանյանի բենեֆիսի համար տրվելիք «Ուժեղներ և թույլեր» պիեսը փորձելու, բայց սկսվեց չարաբաստիկ հայ-թուրքական կոտորածը և պատճառ յեղավ մեր ներկայացումների ընդհատվելուն:

Հայ-թուրքական կոտորած... շատ հեշտ է արտասանվում, բայց ի՜նչ դժոխային յերկար, յերկար մի պատմություն է այդ...

Միևնույն քաղաքի բնակիչները՝ յերկու հարևան ազգեր՝ հայ և թուրք կոտորում էին միմյանց, կողոպտում էին անխնա, այրում տները, թալանում... Չէին խնայում կանանց ու մանուկներին անգամ:

Մնացի թատրոնում չորս օր փակված: Կոտորածի յերկրորդ օրը, գիշերվա ժամը մեկին բարձրացա թատրոնի կտուրը և ինչ ահռելի տեսարան էր ներկայացնում այդ հարուստ, արդյունաբերական, բազմամարդ քաղաքը... ամեն կողմ այրվում էին հրդեհված տներ, հեռվից, մոտիկից լսվում էին հրացանաձգության ձայներ, գոռում-գոչյուն, օգնություն կանչողների աղերս... Ես չկարողացա յերկար դիտել այդ տեսարանը: Արտասվեցի...

Չորս օր տևեց...

Հայերից և թուրքերից կազմված մի մասնախումբ, հոգևորականներին առաջ գցած, թափոր կազմեցին և փողոցները շրջելով՝ «հաշտություն» կայացրին:

Յես էլ դուրս յեկա թատրոնից և պտտեցի փողոցները. ամեն կողմ ավերված, դեռ մխացող տներ, փողոցներում թափթփված ու նեխող դիակներ, կոտրատած խանութներ, թափթփված ապրանքներ...

Անկարելի յեր այդ ամենը յերկար դիտել. գնացի ապրածս հյուրանոցը, հավաքեցի իրերս և ուղղակի յերկաթուղու կայարան:

Մեծ դժվարությամբ կարողացանք ընկնել Թիֆլիս:

Դրամատիկ ընկերության վարչությունը մեր խմբից իր խումբը վերցրեց Սիրանուշին, Պետրոսյանին, Ստեփանյանին և ինձ: Դրամատիկ ընկերության խումբն իր ներկայացումները վերջացրեց ապրիլի 7-ին, արդեն թույլ էր տրվում խաղալ մեծ պասի յերկրորդ, յերրորդ, հինգերորդ և վեցերորդ շաբաթներին: Նոր պիեսներից Բագվում բեմադրել էինք՝ Սեդրակ Թառայանի «Արշալույսը» և Սումբատով-Յուժինի «Դավաճանություն»-ը: Այս վերջին պիեսը Թիֆլիսի խումբն էլ էր մեծ հաջողությամբ բեմադրել:

Դրամատիկ ընկերության թատերաշրջանը վերջացնելուց հետո կազմվեց մի մեծ խումբ, որի մեջ մտան՝ Սիրանուշը, Մայսուրյանը, Սաթենիկ Ադամյանը, Գուլազյանը, Զաբելը, Փառանձեմը, Արաքսը, Պետրոսյանը, Աբելյանը, Վրույրը, Հարությունյանը, Զարիֆյանը, Ալիխանյանը, Ստեփանյանը, Ավետյանը և ուրիշները. ճանապարհվեցինք Յերևան, ուր մնացինք յերկու ամիս: Խաղացանկի մեջ կային՝ արդեն Թիֆլիսում խաղացված՝ Շիրվանզադեի «Պատվի համար»-ը, «Յեվգինե»-ն, Ս. Թառայանի «Արշալույսը», Սումբատովի «Դավաճանություն»-ը և մի քանի թարգմանական պիեսներ: Խմբի գործունեությունն ընդհատվեց նույնպես Յերևանում սկսված հայ-թուրքական կոտորածի պատճառով:

Վերադարձանք Թիֆլիս, անցա Մանգլիս, մտա ռուսաց խումբը, որ ամբողջ ամառ գործեց անտրեպրենյոր Կազանսկու ղեկավարությամբ:

1905-06 թվի թատերաշրջանի համար Դրամատիկ ընկերությունը խումբը կազմել-պատրաստել էր, և հոկտեմբերի 3-ին սկսեցինք մեր ներկայացումները՝ Վրթանես Փափազյանի «Ժայռ» նոր պիեսով ու նույն ամսի 15-ին ընդհատեցինք՝ հայտնի գործադուլի և կոտորածների պատճառով:

Հոկտեմբերի 15-ից հետո յերկու օր էր, ինչ սկսվել էր մեծ գործադուլը, նոր էր խոսքի ու գրչի «ազատությունը» տրվել, փողոցներում միտինգներ էին... ամենուրեք կարմիր դրոշակներ էին ծածանվում...

Ամսի 18-ին, թե 19-ին էր, լավ չեմ հիշում, առա-

վոտից Նախալովկայում մեծ միտինգ եր հայտարար-
ված, բոլոր կուսակցականները պետք է հավաքվեյին
այնտեղ. բոլորս այնտեղ եյինք շտապում: Ճանապար-
հին հանդիպեցի մի ընկերոջ, վոր հայտնեց, թե միտին-
գը չի կայանալու, ցրվել են և բոլորը տներն են քաշ-
վում, վորովհետև վատ լուրեր են պտտվում: Վերա-
դարձա, տեսա, վոր պահեստի զինվորները շրջապատել
են փոխարքայի պալատը: Հանկարծ ականջիս հասավ
կայսերական հիմնի ձայնը, վոր յերևի շատ մեծ խմբով
եյին յերգում. ձայնը հեռվից եր գալիս, բայց կամաց-
կամաց մոտենում: Դուրս յեկավ, վոր միապետական-
ներն են Թափոր կազմել և կայսրի պատկերն առած՝ փո-
ղոցներն են շրջում և այժմ էլ դեպի պալատն են գնում:
Լավ բան չեյի գուշակում. գնացի սենյակս: Ապրում եյի
Գոլովինյան պողոտայի վրա, ճիշտ Ալեքսանդրյան
այգու դիմաց, նախկին Մանթաշյանի տանը՝ «Դվոր-
ցովայա» կահավորված համարներում: Սենյակս յեր-
րորդ հարկումն եր և միակ պատուհանս էլ դուրս եր
գալիս դեպի բակ: Հենց նոր եյի մտել սենյակս, վոր
յեկավ մի ծանոթ որիորդ, վոր փողոցում նույնպես
լսելով Թափորի ձայնը՝ չեր ցանկացել յերևալ նրանց
աչքին ու, հիշելով, յեկել եր ինձ մոտ: Կայսերական
հիմնի ձայնը քանի գնում, այնքան մոտիկանում եր:
Զանցավ մի տասը րոպե, և հիմնը մեր հյուրանոցի առ-
ջև են յերգում: Հանկարծ կրակոցներ, ձայներ, աղա-
ղակներ, գոռում-գոչյուն... Պատուհանից նայեցի բա-
կը և ի՞նչ տեսա. ահագին բազմություն փողոցի մեծ
դռնից ներս վազելով՝ Թաքնվելու տեղ է փնտրում, իսկ
նրանց հետևում են յունկերները, վոստիկաններն ու խու-
լիգանները՝ ատրճանակ կրակելով ու փայտերով սրան-
նրան ծեծելով...Հասկացա թե ի՞նչ է կատարվում և
որիորդի հետ իսկույն դեպի կորիդոր. այստեղ էլ
հյուրանոցի բնակիչներն են սարսափահար դես
ու դեն վազվզում: Հյուրանոցի հարևան բա-
կում մի վաշտ կոզակ եր ապրում. նրանք էլ այն-
տեղից եյին կրակում դեպի մեր պատուհանները:
Այդ րոպեյին մեր հյուրանոցի միակ ռուս սպասա-
վորի, վոր սկզբունքով դեմ եր գործադուլին և
նրան չեր մասնակցում, վորդին ներս վազեց գոռալով,

Թե կոզակները մուտքի դուռը կոտրում և ուզում են
մտնել հյուրանոց: Յես ու հյուրս հետևեցինք հյուրանո-
ցի տիրոջը, վոր վազեց-մտավ վառելափայտով լեցուն
մի նկուղ ու փայտերի վրա բարձրանալով, մտավ կտու-
րի տակ: Մենք հետևեցինք նրան: Կորիդորում արդեն
ընկած եր ռուս սպասավորը, վորի գլխին կպել եր կո-
զակների գնդակներից մեկը: Մեզանից զատ, կտուր եյին
բարձրացել ևս վեց հոգի, վորոնցից յերեքը—մի կին և
յերկու տղամարդ—ոպերայի յերաժշտախմբեցն եյին
ու մեր հյուրանոցումն եյին ապրում: Թե դուրսն ի՞նչ
եր կատարվում, տեղեկություն չունեյինք, բայց գըն-
դակները կարկտի նման Թափվում եյին կտուրի վրա
ու Թիթեղի ձայնն ուղղակի խլացնում եր մեզ: Կրա-
կողը պահեստի զինվորներն ու կոզակներն եյին: Հետո
իմացանք, վոր Թնդանոթներ էլ եյին բերել և շարել մեր
տան ու մեր հյուրանոցի դիմաց գտնվող Արտիստական
ընկերության Թատրոնի առաջ և մտադրվել յերկու
շինությունն էլ ռմբակոծելու, պատճառաբանելով վոր
Թափորն անցնելու ժամանակ յերկու շենքից էլ գնդակ-
ներ են արձակվել Թափորի առջևից տարվող՝ կայսեր
պատկերի վրա:

Արտիստական Թատրոնի ամբողջ շենքը խուզար-
կեցին: Իհարկե՝ Թատրոնի՝ փողոցին նայող վերի հար-
կի կլոր պատուհաններն այն սենյակներինն եյին, վոր-
տեղ հին կահկարասիներ եյին դարսված յեղել և վոր-
տեղ յերկար ժամանակ մարդու վոտք չեր կոխել. այդ
վկայում եր գետնին նստած փոշու հաստ շերտը: Այդ-
տեղից վոչ վոք գնդակ չեր կարող արձակել, բայց հենց
այդ պատուհաններն եյին մատնանշել: Ապուշ եյին
կտրել ու հեռացել:

Սակայն մեր հյուրանոցն ու ցածի յերկու հարկը
քարուքանդ են անում, ամեն ինչ կոտրտում, Թալանում
և մոտ հարյուր-քսան մարդ կոտորում: Իրենցից սպան-
ված եյին մոտ յերեսուն հոգի, գլխավորապես կոզակ-
ներ: Սպանություններին վերջ է տրվում մի ակնԹար-
Թում, պալատից հրաման տրված րոպեյին: Ամեն ինչ
ծրագրված եր և կատարվում եր պալատում նստած
«ռեժիսյորի» ղեկավարությամբ ու ցուցմունքներով:

կենդանի մնացածներիս դուռն, ի մի հավաքեցին և տարան պալատի դիմաց գտնվող պարետային վարչությունը, ուր մի ամբողջ օր պահելուց հետո, անուններս գրեցին և բաց թողին:

Մի շաբաթ անց, յերբ առանձին թույլտվությամբ և մի վոստիկանի ուղեկցությամբ գնացի հյուրանոցի սենյակս՝ իրերս հավաքելու, բան չգտա, բացի պատռոտված, գետնին թափված գրքերից ու մի քանի, նրանց համար անպետք, բայց ինձ համար թանգարժեք բաներից: Հավաքեցի և դուրս տարա: Թատրոնական թանգարանի համար շատ պիտանի բաներ կորան— որագիրս, թանգարժեք ընծաներս, դերասանների նամակներ, լուսանկարներ, խմբանկարներ և շատ այդպիսի բաներ:

Դերասան Ա. Վրույրն Իվան Իվանիչ անունով ու լավ ծանոթ մի ֆելդշեր ուներ, վոր ծառայում եր այդ ժամանակ նախկին Միքայելյան հիվանդանոցում: Վերջինս կոտորածների նախընթաց օրը նախազգուշացրել եր Ա. Վրույրին, վոր մյուս օրը դուրս չգնա, նստի տանը, վորովհետև ինչ վոր բան է սպասվում, վոր Թիֆլիսի բոլոր հիվանդանոցներին պալատից գաղտնի հրաման է տրված, մահճակալների թիվն ըստ կարելույն ավելացնել: Այդ գաղտնիքն ինձ հայտնեց Վրույրը, սակայն յես մտքումս ծիծաղեցի վրան ու դուրս գնացի փողոց, վորից հետո պատահեց այն ամենը, ինչ վերը նկարագրեցի:

Ապրածս հյուրանոցը զորանոցի եյին վերածել:

Միաժամանակ անսենյակ մնացի: Քիթ սրբելու թաշկինակ անգամ չունեյի—այն էլ եյին տարել: Ջղերս քայքայվել եյին, գիշերները չեյի կարողանում քնել, չարունակ աչքիս առաջն եյին գալիս՝ կոտորած մարդիկ, արյուն, արցունք, հրացանի պայթյուններ... Մտադրվեցի հեռանալ Ռուսաստանից, սիրածս Կովկասից և գնալ Յեգիպտոս... Հանգուցյալ դերասան Գ. Միրազյանը, վոր լավ ծանոթ եր Թիֆլիսին շատ մոտ գտնվող Ծղնեթ վիրա-հայաբնակ գյուղին, խորհուրդ տվեց գնալ այնտեղ, ուր կկարողանամ ջղերս հանգստացնել: Նրա խորհուրդը լսեցի ու գնացի, բայց

մի քանի օրից հետո, տեսա, վոր Մանգլիսից Թիֆլիս և Թիֆլիսից Մանգլիս գնացող-յեկող պատժիչ զորամասերը չարունակ այդ գյուղովն են անցնում, իսկ նրանց յես տեսնել չեյի կարող: Նորից վերադարձա Թիֆլիս, ուր մնացի մի օր և, դերասան Իսահակ Ալիխանյանի հրավերով, գնացի նրա մոտ հույր՝ նրա ծննդավայր Դուշեթ քաղաքը: Բայց այստեղ էլ յերկար մնալ չկարողացա, վորովհետև հենց նրա ապրած տան կողքը կոզակների զորանոց եր, իսկ դրանք էլ ինձ սարսափեցնում եյին, ուստի չուզեցի այդտեղ մնալ և նորից վերադարձա Թիֆլիս, ու մի քանի հոգի միանալով՝ անցանք Ալեքսանդրապոլ, ուր և կազմվեց մի բավականին կուլիկ խումբ՝ մասնակցությամբ Սիրանուշի, Փառանձեմի, Արաքս-Զարիֆյանի, Ազնիվի, Բնարիկի (վոչ Բադվի), Վրույրի, Զարիֆյանի, Անդրանիկի, Զիլինգարյանի, Խաժակի, Ալեքսյանի և մի քանի հոգի էլ ուրիշների, ու մինչև 1906 թվի ապրիլի վերջը բավականին թվով և հաջող մուտք ունեցող ներկայացումներ ավինք:

Մի քանի տարի առաջ ցենզուրան արգելել եր Հակոբ Կարինյանի «Շուշանիկ» պիեսը, պատճառ բռնելով, վոր վրաց Վազգեն արքան այնտեղ քրիստոնեյական հավատն ուրացող է դուրս բերված: Բայց 1906 թ. այդ պիեսը նա նորից թույլատրել եր բեմադրելու, մտածելով, վոր Վազգեն արքայի հավատուրացությունը կարող է ավելորդ առիթ ծառայել՝ հայերի և վրացիների մեջ թշնամություն գցելու համար:

Ալեքսանդրապոլում այդ «Շուշանիկ»-ը մի քանի անգամ խաղացինք:

Ալեքսանդրապոլում այդ ժամանակ Սևումյանի ղեկավարությամբ գործում եր նաև մի ուրիշ խումբ. այդ խմբին աշխատակցում եյին նաև Միքայել Մանվելյանը, Ն. Հովհաննիսյանն ու մի քանի փորձված սիրողներ:

1906–07 թատերաշրջանի համար Դրամատիկ ընկերությունը, խումբ կազմել և հոկտեմբերի 2-ից Արտիստական թատրոնում սկսել եր իր ներկայացումները. շաբաթական մի-մի ներկայացում էլ հայկական ժողովարանում՝ անդամների, փոխանդամների և նրանց ըն-

տանիքների համար եր տրվում և մերթընդմեջ թեև Հավլաբարի թատրոնում, եժան գներով: Թատերաշրջանի ընթացքում, ի միջի այլոց, բեմադրեցինք հետևյալ ինքնուրույն ու նոր պիեսները. Հարություն Թումանյանի «Արտավազդ Բ.»-ը, Լ. Շանթի «Ճամբուն վրա»-ն, Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ»-ը և «Արեգնազան»-ը, որը Ղազարոս Աղայանի հեքյաթից դերասան Պողոս Արաքսյանը վեր եր ածել օպերետի ու Գր. Միրզոյանն էլ ձայնագրել եր: Հաջողություն չգտավ և շատ շուտով հանվեց ռեպերտուարից:

Այս չարաբաստիկ «Արեգնազան»-ը, որը առաջին անգամ Պողոս Արաքսյանի բենեֆիսին բեմադրվեց, չարաբաստիկ էլ վախճան ունեցավ: Ցումորիստական «Խաթաբալա» շաբաթաթերթում խմբագիր հանգուցյալ Աստվածատուր Ցերիցյանը մի կոմիկական քննադատական եր գրել,—«Հեքյաթ Աղայանի, լիբրետո—Արաքսյանի, յերաժշտություն՝ Միրզոյանի, բալետ՝ Ավետյանի»... (ըստ իմ դերի, յես պիտի ծաղրածուի դերում պարեյի և յերգեյի) վերջն էլ, թե՝ «Արաքսյանին բավականին խոտ նվիրեցին», որով ակնարկում եր նրա ստացած ծաղկեփնջերն ու պսակները: Արաքսյանը վիրավորվելով, մի քանի որ հետո, մեր մի ուրիշ ներկայացման ժամանակ, խաղամիջոցին մոտենում է Ցերիցյանին ու հասարակության ներկայությամբ ապտակում նրան: Այս ամենից վրդովված՝ բոլոր թերթերի խմբագրությունները հետ են ուղարկում իրենց մշտական տոմսերը, հայտնելով, որ մինչև Արաքսյանը չպատժվի, նրանք թատրոն չեն մտնի: Դրամատիկ ընկերության վարչությունն Արաքսյանին խմբից հեռացրեց և դրանով էլ կոնֆլիկտը վերջացավ:

Այստեղ ավելորդ չեր լինի պարզել տրվող ռոճիկների չափը. Սիրանուշն ամսական ստանում եր չորս հարյուր, հինգ հարյուր և մինչև անգամ վեց հարյուր ռուբլի, խմբի մեծերը՝ յերկու հարյուր հիսունից մինչև յերեք հարյուր հիսուն ռուբլի, իսկ ամենավերջին ռոճիկի չափը քառասուն և մինչև անգամ յերեսունհինգ ռուբլի յեր: Ճանապարհորդության ժամանակ էլ, յերբ ընկերական պայմաններով, եյինք գնում, փայերի մեջ

էլ այդպիսի մեծ տարբերություն եր լինում, հիսունից մինչև հինգ, այսինքն մուտքի կեսից ավելին ստանում եյին յերկու—յերեք հոգի, իսկ մնացածը բաժանում եյին իրենց մեջ քսանհինգ, յերեսուն հոգի: Այդ աննորմալ դրությունն ստեղծվել եր Թիֆլիսի հին կոմիտեյի ժամանակից և այդպես էլ շարունակվում եր: Ժամանակին դրսից հրավիրվածներին անասելի մեծ չափով ռոճիկներ եյին տալիս, իսկ տեղական դերասանները, բիչ ռոճիկ ստանալու պատճառով, իրենց գոյությունը հազիվ—հազ եյին քարշ տալիս, դրսեցիները խաղում եյին, յերբ իրենց քեֆն եր տալիս, իսկ տեղացիներին քշում եյին ամեն մի ներկայացման:

Պետք է ավելացնեմ և այն, որ հիսունից վեր ստացողները պարտավոր եյին իրենց զգեստներն ունենալ՝ ֆրակ, սյուրտուկ, վիզիտկա և մի յերկու ձեռք էլ ուրիշ զգեստ: Գրիմ, սրբիչ, վազելին—այս ամենը դերասաններն իրենց փողով եյին գնում ու գործածում: Թատրոնը միմիայն պատմական և քարակտեր զգեստներն եր տալիս:

Նույն 1906–07 թատերաշրջանի համար Նոր-Նախիջևանի Դրամատիկ ընկերությունը մի քանի դերասան հրավիրելով և հետները խառնելով իրենց սիրողներին, խումբ եր կազմել: Խմբին մասնակցելու համար հրավիրված եյին Պետրոսյանը, Ալիխանյանը, Անդրանիկը, Բերյանը, Ստեփանյանը, Աբրահամյանը, կանանցից՝ Սաթենիկ—Ադամյանը, Ստեփանյան—Յարալյանը, Խիթարյանը և Ագնիվը: Ռեժիսյորի պաշտոնը պիտի կատարեր Գևորգ Պետրոսյանը, բայց Նախիջևան հասնելով՝ հիվանդացավ և անկողին մտնելով՝ վախճանվեց 1906 թ. հոկտեմբերի 28-ին: Թաղվեց, ըստ իր ցանկության, Թիֆլիսում և շատ մեծ շուքով: Դագաղը տարվեց մինչև գերեզմանատուն, շրջապատված՝ օպերայի, ռուսաց, վրաց, թուրք և հայ դրամատիկ խմբերի դերասաններով: Ամենքից սիրված և ամենքից հարգված մի անձնավորություն եր հանգուցյալը:

Ջափազանց հյուրասեր եր նա. յերբ էլ մտնեյիր նրա տունը, օպերայից ու ռուս դրամայից անպայման դերասաններ եյին հրավիրված լինում ճաշի:

Իսկ հայ դերասանները հո նրա մշտական հյուրերն եյին և ախորժակով ուտում եյին նրա կնոջ յեփած համեղ դոլմաները, փլավն ու բոզբաշը:

Այն ժամանակվա մեր դերասանների մեջ Պետրոսյանը գրավում եր իր առանձին, իրեն միայն իրավամբ պատկանող տեղը: Նա աչքի յեր ընկնում իր հասարակ,

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

բնական խաղով և յերջանիկ եր կարողությամբ՝ վորտեղ պետք եր, իր ձայնին տալ քնքշություն, զգացմունք, վորպիսի ավյալները ուրիշ դերասանների մեջ հաճախակի յերևան չեյին գալիս:

Նա ռեալիզմով այնքան տարված մի դերասան եր, վոր նրա խաղն ականջ չեր ծակում ու զրգռում հանդիսականի աչքը: Հրաշալի դեկլամատոր եր: Կիրթ և դե-

ղեցիկ ձևեր ուներ: Բեմի վրա շատ գեղեցիկ եր հագնըվում: Դերերը միշտ անգիր գիտեր:

Պետրոսյանի հիվանդության պատճառով, ռեժիսյորությունն իր վրա յե վերցնում Իսահակ Ալիխանյանը և հետո կիսատ թողնում: Այդ առթիվ խումբը «Հուշարար»-ում մի բողոք-նամակ եր տպել:

Նույն այդ թատերաշրջանին Թիֆլիսի Դրամատիկ ընկերությունը խմբից դուրս եր թողել Ռշտունուն (Պողոս Մելիք-Փաշայան), մի վերին աստիճանի աշխատասեր, համեստ և տաղանդավոր դերասանի, վոր թոքախտով հիվանդ եր: Խումբ չվերցնելու գաղտնիքն

ՌՇՏՈՒՆԻ (ՊՈՂՈՍ ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ)

այնպես էլ չիմացանք: Խեղճն որ ու գիշեր ման եր գալիս անոթի, հիվանդությունից տառապելով, ձմեռն առանց վերարկուի ու մի որ էլ անկողին մտնելով՝ 1907 թվի մարտի 6-ին աչքերը փակեց: Հանգուցյալ Պետրոսյանի ղազաղին, չնայած չարունակ մաղվող անձրևին, նա առանց վերարկուի ու ջերմ լացով ուղեկցեց դերեզմանատուն, վորովհետև հանգուցյալին շատ եր սիրում, հանգուցյալն էլ՝ նրան, վորի հետ անվերջ կատակներ եր անում: Ընկերներից ցույց տված փոքրիկ

ողնությունը նրան փրկել չէր կարող: Թաղումը շատ անշուք էր, Թիֆլիսում այդ պահին դերասաններ չկային և միայն Զարիֆյանն ու յես էինք պատահմամբ Թիֆլիսում գտնվում:

Դրամատիկ ընկերությունն ընդհանուր ժողովին իրեն տրված հարցին, թե՝ ինչո՛ւ Ոչտունին հրավիրված չէր, արդարանում էր նրանով, վոր վճռված էր հին դերասանների փոխարեն վերցնել յերիտասարդներին: Վո՞րտեղի հին դերասանն էր նա, քանի վոր խմբի մեջ էր ընդունված 1901 թվին և յերբ խմբի մեջ քառասուն, յերեսուն և քսան տարի ծառայող դերասաններ կային:

Իսկապես՝ շատ տարօրինակ էր 1906/07 թատերաշրջանը. Դրամատիկական ընկերությունը խումբ էր հրավիրել նաև Երթյան ազգանունով մի դերասանուհու, վորին թե ռոճիկի մի մասն էր ուղարկել և թե հարյուր ութսուն ռուբլի ճանապարհածախս ու դեր նշանակել առաջին ներկայացմանը, դերը վաղօրոք ուղարկելով նրան՝ Մոսկվա: Խումբը հավաքվում է, փորձերն սկըսվում են և միայն այդ ժամանակ են իմանում, վոր նոր հրավիրված դերասանուհին հայերենին բառացի կերպով չի տիրապետում: Ստիպված, նորից ծախս անելով, նրան յետ են ուղարկում:

Յուր ժամանակին առաջին կնոջիցս բաժանվելով, վոր, Էջմիածնի ստեղծած օրենքների պատճառով, մի ահագին պատմություն դարձավ, ինքս ինձ խոսք էի տվել, այլևս յերբեք չամուսնանալ, բայց և այնպես չկարողացա խոստումս պահել: Այդ ամառ, յերբ յես Մանգլիս էի գնացել հանգստանալու, մասնակցեցի և ռեժիսյորություն արի ռուսաց սիրողների մասնակցությամբ տրվող մի քանի ներկայացումների, վոր բարեգործական նպատակով էին տրվում: Թատերասերների մեջ կար մի վարժուհի՝ հոր կողմից լեհացի և մոր կողմից՝ գերմանացի. գրավվեցի նրանով ու վերջը ամուսնացա: Այդ իմ այժմյան կինն է՝ Վիկտորիան, վոր ահա քսանհինգ տարի ընկերս է, վոր ինձ հետ միասին տարել է շատ նեղ ու լի օրեր: Այս վերջին քսան

հինգ տարվա իմ գլխով անցածները նրա շնորհիվ եմ հիշում:

1907 թվին տիկին Սիրանույշը հետը վերցնելով կանանցից՝ Ստեփանյան—Յարալյանին, Ագնիվին, տղամարդկանցից՝ Բերոյանին, Անդրանիկին և Աշաբեկյանին, մեկնեց Բուլղարիա և, ապա՝ Յեգիպտոս, մի շարք ներկայացումներ տալու:

Նույն 1907 թվին, հոկտեմբերի 16-ին Թոքախտից մեռավ շնորհալի դերասան Մկրտիչ Ադիլխանյանը՝ քսանյերկու տարեկան հասակում:

Հովհաննես Աբելյանի քսանհինգամյա բեմական գործունեյության հոբելյանը, Դրամատիկ ընկերության նախաձեռնությամբ, 1907 թվի դեկտեմբերի 17-ին շատ շքեղ տոնվեց Արտիստական ընկերության թատրոնում: Նույնը կրկնվեց 1908 թվի հունվարի 22-ին՝ Բաքվում:

Ո՞վ է Հովհաննես Աբելյանը և ի՞նչ է արել նա հայ թատրոնի առաջադիմության համար: Հ. Աբելյանի գլխավոր արժանիքն այն է, վոր, բացի յերկար տարիների ընթացքում իր ուսերին դրված ռեպերտուարի ծանրությունից, պիեսների կենտրոնական դերերից պատվով դուրս գալուց, յեղել է թատրոնի ժողովրդականացման ռահվիրաներից մեկը, ամենաժրաջանը, ամենայեռանդունը: Թիֆլիսից ու Բաքվից հետո, բոլոր հայաբնակ քաղաքներն ու գյուղերը, Տաճկաստանի Պոլիսն ու Զմյուռնիան և մանր-մունր քաղաքները, Պարսկաստանի յետ ընկած տեղերը, Աբելյանի ջանքերի շնորհիվ է, վոր չարունակ հայկական կանոնավոր ներկայացումներ են տեսել: Աբելյանն էր, վոր առանց հոգնելու, ամեն տարի խմբեր էր կազմում և, թափառականի ցուպը ձեռքն առած՝ ընկնում քաղաքից-քաղաք ներկայացումներ տալու: Թե ինչքա՛ն տանջալից և դըժվարին են յեղել այդ ճանապարհորդությունները, ինչքա՛ն անակնկալներով լեցուն, այդ կարող եմ հաստատել յես՝ նրա յերկարամյա այդ թափառումների ընկերն ու նրան ընկերացած մեր դերասաններից շատերը:

Յեվ այդ բոլոր տեղերում, ուր նա վոտք է դրել,

ճանաչում, հիշում, սիրում են նրան, սիրում և հայ թատրոնը:

1907/08 թատերաշրջանին հրավիրված էր Բաքու. կուլտուրական միության թատերական սեկցիայի խումբը: Հրավիրված էին նաև՝ Աբելյանը, Ալիխանյանը,

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆ

Սևումյանը, Վոսկանյանը, Թառլանյանը, Արովյանը, Արուսյակը, Մելիք-Շահնազարյանը, Տեր-Ոհանյանը, Քնարիկն ու Փառանձեմը: Խումբը խաղում էր՝ Թաղիև-

վի թատրոնում, Բալախանում, Սև քաղաքում, Բայլ-
լովում և Բաքվի մյուս բանվորական արվարձաններում:
Ռեպերտուարի մեջ գերակշռում էին ինքնուրույն պիես-
ները—Շանթի «Ճամբուն վրա»-ն, Ա. Աբելյանի «Նշան-
վածներ»-ը, Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտը»,
«Ղարաբաղի աստղագետը»-փոխադրություն Ա. Վրույ-
րի, Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն, Լ. Մանվելյանի «Ցեր-
վանդ Բոչոյան»-ը, Հ. Պարոնյանի «Բաղդասար աղ-
բար»-ն ու «Մեծապատիվ մուրացկաններ»-ը, Շիրվան-
զադեյի «Պատվի համար»-ը, Ալիխանյանի «Ցերվանդ
Բ.»-ն, Գալֆայանի «Արշակ Բ.»-ը, Կարինյանի «Վար-
դանանց պատերազմը» և Գ. Սունդուկյանի «Բաղնիսի
Բոչխա»-ն:

Կուլտուրական միության թատրոնական սեկցիան
այս թատերաշրջանին Բաքվում թատրոնական գործը
բոլորովին փչացրեց, որովհետև ներկայացումները
ծախում էր մյուս սեկցիաներին, այն է՝ հրատարակչա-
կան, բժշկական և այլն... իսկ սրանք էլ դրանցում ըն-
կած՝ տոմսեր էին ծախում, որ լավ մուտք ունենա ու
տակը մի բան մնա:

Կարծես թե թատրոնն ստեղծված էր բարեգործա-
կան հիմնարկություններ պահելու համար: Իսկ ավելի
խայտառակն այն էր, որ ցերեկվա ժամանակին, այս
պես կոչված՝ «ժողովրդական» ներկայացումներին
տրվում էին միմիայն «պատմական» պիեսներ և դրա-
նով ե՛լ ավելի զարգացնում մասսայի մեջ շովինիստա-
կան ու նացիոնալիստական զգացմունքները: Ցեվ այդ
ներկայացումների համար մեծ ռեկլամներ էին տըր-
վում:

Այդ ռեկլամներն իրենց նպատակին մասամբ հաս-
նում էին, որովհետև միամիտների թիվը շատ էր, և
թատրոնը լեփ-լեցուն հանդիսականներ էր ունենում,
սակայն ներկայացման ընթացքում պատահում էր, որ
վռնդվում էին մարդիկ, որ ի սրտե վրդովվում էին
պիեսի դատարկությունից ու ներկայացումը կիսատ
թողնում—դուրս էին գնում: Դրանք գլխավորապես
ինտելիգենցիայից էին լինում և, ընդհակառակը, այդ
նույն ինտելիգենցիայից գտնվում էին մարդիկ, որ

ջերմորեն կողմնակից էյին այդ «պատմական» պիեսներին, սակայն սրանք էլ վրդովվում էյին այն բանից, վոր պիեսը բեմադրվում է չափազանց անխնա, պատմականորեն վոչ ճշգրիտ և, վերջապես, դժգոհ էյին դերասաններից, նրանց անփույթ վերաբերմունքի համար՝ դեպի այս պիեսները:

Բագվում ծանոթ բանվորներ ու արհեստավորներ չատ ունեյի, վորոնք մեզ՝ դերասաններիս մեղադրում էյին, թե այդ անոդուտ ու վնասակար պիեսները ինչո՞ւ յենք բեմադրում: Այդ պիեսներին նրանք չէյին հաճախում. չէր հաճախում նաև Թիֆլիսի ու Բագվի ուսանողությունը:

Թիֆլիսի բոլոր տպարանների գրաշարները վոչ մի կերպ չէյին գալիս այդ «պատմական» պիեսների ներկայացումներին, այնինչ նրանք հայ թատրոնի ջերմ հաճախորդներն ու պաշտպաններն էյին և վոչ մի ներկայացում չէյին բաց թողնում:

Ահա մի օրինակ այդ ռեկլամներից, վոր չափազանց հատկանիշ է այդ թատերաշրջանին, թատրոնական գործը տանող, Կուլտուրական միության գլխավոր ղեկավար Կոստանդին Խատիսյանի համար: «Յերվանդ Բ.»-ը բեմադրելու համար նա ահագին ջանք էր թափել և, ի միջի այլոց, մի ռուս նկարչի պատվիրել էր նկարել Հայոց Սանատրուկ թագավորին չոգած և ինչ վոր մեկին՝ հռոմեյական զգեստ հագածի, նրա գլխին թագը դրած: Պետք է ասել, վոր ռուս նկարիչը ծանոթ չլինելով հայ պատմական դեմքերին, Սանատրուկին խոկան Նիկոլայ ուգոդնիկի նման էր նկարել: Այդ պատկերներից, վորոնց ամեն մեկը մի-մի մետր յերկարություն ուներ, միքանի հատ փակցնել էր տվել քաղաքի զանազան մասերում, ի միջի այլոց, մի հատն էլ Բալախանիի քաղաքային յերկաթուղու կայարանում: Կայարանում հսկող ժանդարմներից մեկը նկատում է այդ պատկերը և մի հայի կանչելով՝ խնդրում է կարդալ տակի գրվածը: Հայը կարդում է.—«Սանատրուկ թագավորի Ճագադրությունը»: Ժանդարմի հարցին, թե ո՞վ է այդ Սանատրուկ թագավորը, հայը տանում-բերում է՝ «Հայոց թագավորը»:

Ահագին աղմուկ, քաշքշուք և վերջը՝ մի ներկայա-
ցում, վորի ընթացքում թատրոնը լեփ-լեցուն էր Բագ-
վի վոստիկանության և ժանդարմների հոծ բազմու-
թյամբ:

Այս թատերաշրջանին խումբ մտավ տաղանդավոր տա-
բեկան Վահրամ Փափազյանը, վոր յեկել էր Իտալիա-
յից, և մինչև թատերաշրջանի վերջը՝ «Բարդի» կեղծա-
նունով իր խաղացած դերերի հիման վրա, նրա մասին
մի փորոշ կարծիք չկարողացանք կազմել:

Թիֆլիսում Դրամատիկ ընկերությունը 1908
թվի հունվարի 28-ին մեծ շքեղությամբ տոնեց հայ
թատրոնի հիսնամյակը: Հանդիսավոր ներկայացման
մասնակցում էյին հին դերասաններից՝ Ամիրան Մանդինյանը, Ստեփաննոս Սաֆրազյանը և վրաց բեմի
զարդ՝ Վասո Աբաշիձեն:

1908 թ. դեկտեմբերի 8-ին Բագվումն էլ տոնեցին
հայ թատրոնի հիսնամյակը: հատ-
— «Հանդեսից գոյացած մաքուր արդյունքը
կացվում է հայ չքավոր դերասաններին և նրանց ընտա-
նիքներին նպաստելու համար կազմելիք ֆոնդին»:—
Այսպես էր գրված հոբելյանական մանածողովի բաց
թողած հրավիրատոմսերում:

Գոնե այդ ֆոնդի մասին մինչև օրս վոչինչ չեմ լսել:

6

1908/09 թվի թատերաշրջանին Թիֆլիսի Դրամա-
տիկ ընկերության խմբումն եմ: Ռեժիսորն Ստե-
փան Քափանակյանն է: Խմբի անդամներն են՝ Սաթենիկ
Ադամյանը, Արաքս-Զարիֆյանը, Մայսուրյանը, Գու-
լազյանը, Մելիքյանը, Համիկը, Զարիֆյանը, Միրա-
զյանը, Սևումյանը, Հարությունյանը, Ավետյանը,
Մամիկոնյանը, Վանչիրը, Թաշճյանը, Թորոսյանը,
Սանթուրճյանը և ուրիշները... Ամբողջ թատերաշրջա-
նի ընթացքում բեմադրվեց միայն մի ինքնուրույն նոր
պիես—Շիրվանզադեյի «Ավերակների վրա»-ն:

Պետք է խոստովանել, վոր ուր գնում էյինք,
Շիրվանզադեյի պիեսները մեծ հաջողություն էյին

գտնում, և մեծ մուտքեր տալիս: Նրա պիեսները մեր
թատրոնական կյանքում մեզ քիչ չեն կերակրել:
Բագվումն էլ այդ ժամանակ Սիրանուշի ղեկավա-
րությամբ մի ուրիշ խումբ էր գործում, որի անդամ-
ներն էին՝ Աբրույանը, Փառանձեմը, Քնարիկ Բ.—ն,
Ալիխանյանը, Ազայանը, Ահարոնյանը, Մանվելյանը,

ՍԱԹԵՆԻԿ ՋՄՇԿՅԱՆ

Թառլանյանը, Թորոսյանը, Միրզոյանը, Զիլինգարյա-
նը, Վրույրը և ուրիշները:
Այս թատերաշրջանին Բագվում տոնվեց Ա. Վրույ-
րի քսանհինգամյակը, հետո էլ՝ Սիրանուշի յերեսուն-
հինգամյակը:
1908 թվի դեկտեմբերի 24-ին հիսունվեց տարեկան
հասակում իր մահկանացուն կնքեց Սաթենիկ Ջմշկյա-
նը, հայ բեմի վետերաններից մեկը:

Տիկին Սաթենիկ Ջմշկյանը հայ բեմի վետերան
Գևորգ Ջմշկյանի ամուսինն էր: Նա բեմ էր բարձրացել
այն ժամանակ, յերբ բեմի վրա կնոջ յերևալը մեծ խայ-
տառակություն էր համարվում: Սակայն նա անուշա-
դրություն դարձրեց այդ և յերկար տարիներ ծառայեց
հայ բեմին, կատարելով ամեն տեսակ դերեր: Մեծ տա-
ղանդ չէր, սակայն այն բոլոր դերերը, որ նրան էին
հանձնվում, նա կատարում էր բարեխղճորեն: Նա խըմ-
բերի անհրաժեշտ ուժերից մեկն էր: Մինչև մահ նա բե-
մը չլքեց և շարունակում էր իր դերերը կատարել նույն-
պիսի բարեխղճությամբ:
Զանցած մի տարի, Բագվում, բառիս բուն նշանա-
կությամբ ամենքից մոռացված, 1909 թվի մայիսի
18-ին բոլորովին անհայտության մեջ մեռավ հայ թատ-
րոնի «վոսկեդար» կոչված սեզոնների ամենալավ դերա-
սաններից մեկը՝ Մկրտիչ Ավալյանը: Վերին աստիճա-
նի մի համբերատար, համեստ և մաքուր մարդ էր նա:
Ամեն մի նեղն ընկած ժամանակ նրա սիրած խոսքն էր.—
«յոլա՛ տար» և նա յոլա տարավ, յոլա տարավ, բայց
վերջն ընկճվեց, քաղցած փորը յոլա չտարավ, նա հա-
սարակ գործակատարի պաշտոնով մտավ Բալախանիի
մի նավթային ֆիրմա: Նա հեռացել էր թատրոնից այն
ժամանակ, յերբ թե Թիֆլիսում և թե Բագվում ներ-
կայացումները վորոշ ժամանակով ընդհատվել էին:
Պատահական ներկայացումներով նա չէր կարողանում
իր ընտանիքը կերակրել և ստիպված մտել էր ծառայու-
թյան: Յերբ նրան հրավիրեցին նորից թատրոն մտնել,
նա մերժեց՝—«բթամտացել եմ, կոպտացել եմ, այլևս
ինձ նման դերանները պետք չեն թատրոնին»,—ասաց ու
մնաց իր վողորմելի պաշտոնում:
Մկրտիչ Ավալյանը հանճարեղ դերասան Պետրոս
Ադամյանի խաղընկերներից էր: Նա Ադամյանի «Օթել-
լո»-ի Յագոն էր, «Կողոպտված պոստի»՝ Շոպարը,
«Վաճառականի ընտանիքի»՝ Մոնսինյորը, «Համլետ»-ի
Արքան, և շատ այսպիսի դերեր ուներ նա: Անման ռե-
գանյոր էր. Նա այն ժամանակվա բոլոր դերասաններից
զատվում էր իր կրթությամբ, իր խաղի պարզությամբ
և նրա ամենագլխավոր հատկությունը նրա անչափ

համեստությունն ու բարությունն էյին, վոր մեծ առատությամբ տվել եր նրան բնությունը:
Նրա գրչին են պատկանում «վոսկեղարի» թատերաշրջաններին բեմադրված բոլոր թարգմանական պիեսները, և նա չատ անքուն գիշերներ ե անցկացրել

ՄԿՐՏԻՉ ԱՎԱԼՅԱՆ

կռացած այդ պիեսների թարգմանության վրա: Այ
բոլորը նա արել ե առանց վորևէ հոնորար ստանալու:
Արծաթասեր չեր նա:
Աբելյանն այս թատերաշրջանին Թիֆլիսում չեր,
խմբով անցել եր Պոլիս: Նրան ընկերակցում եյին՝ Ար-
մենյան ամուսինները, Սոֆիկը, Զաբելը, Ծուրինյանը,
Բերոյանը, Վոսկանյանը, Ալլահվերդյանը, Աղյանը,
Ղազարյանը, Ալիխանյան Բ.–ն, Անահիտը և ուրիշները:
Աբելյանը Պոլսից նամակով ինձ խորհուրդ եր տա-
լիս, մի լավ խումբ կազմել և անցնել Տաճկաստան, ուր

վոչ թե մի խումբ, այլ մի քանի խմբեր կարող են միաժամանակ գործել: Աբելյան—Արմենյան խումբը յերբ
Տրապիզոնով և մյուս քաղաքներով անցավ Պոլիս, ամե-
նուրեք անասելի բարոյական և նյութական աջողություն
գտավ: Ներկայացումները լեփ–լեցուն մուտքեր եյին
տալիս, և ամեն մի վարագույրն իջնելիս, դերասաննե-
րին մեծ ովացիաներով բեմ եյին կանչում: Մամուլը
մեծ գովասանքով եր արտահայտվում դերասանների մա
սին և յերիտասարդ դերասաններից ամեն մեկին համե-
մատում եր Ֆրանսիացի հայտնի դերասանների հետ:
Գնացած խմբի թե նյութական և թե բարոյական
հաջողությունները մեզ այնքան վոգևորեցին, վոր Սևու-
մյանի, Վրույրի և Սաթենիկ Ադամյանի հետ խորհըր-
դակցելով՝ վորոշեցինք խումբ կազմել և ճանապարհվել
Պոլիս: Միաժամանակ ճանապարհվեցինք յերկու խումբ,
մեկը՝ իմ, մյուսը՝ Զարիֆյանի ղեկավարությամբ:
Իմ խմբի անդամներն եյին՝ Սևումյանը, Վրույրը,
Ոհանյանը, Հասան–Ջալալյանը, Սանթուրճյանը, Առա-
քելյանը, Արովյանը, Սաթենիկ Ադամյանը, Ասլանյա-
նը, Զամուկյանը, Լյուսիկը, Քնարիկ Բ.–ն և այլք:
Զարիֆյանին ընկերակցել եյին՝ Մայսուրյանը, Գուլա-
կյանը, Մելիքյանը; Արաքս–Զարիֆյանը, Հարությու-
նյանը, Տիրացյանը, Շավարշը, Ովի–Ահարոնյանը,
Բուչտունին և ուրիշները...
Նախքան Տաճկաստան ճանապարհվելը Բաթումում
մի ներկայացում տվինք, վորի համար Սևումյանին
առաջ ուղարկեցինք՝ ներկայացումը վաղորոք կազմա-
կերպելու: Տաճկաստան ճանապարհվելուց յերկու որ
առաջ հասանք Բաթում, ներկայացումը տվինք ապա
գերմանական ընկերության «Սաքսեն» ովկյանյան մեծ
ու հզեղ շոգենավով ճանապարհ ընկանք դեպի Պոլիս:
Մյուս որ առավոտյան հասանք Տրապիզոն, ուր շոգենավը
պիտի մնար մինչև յերեկո, ապա ճանապարհվեր դեպի
Սամսոն: Բոլորս ել նավակներ նստելով, ափ իջանք և
գնացինք քաղաքը դիտելու: Ծուռումուռ և կեղտոտ
փողոցներով գնացինք ռուսական պոստը, Տրապիզոնի
տեսարաններ պարունակող բացիկներ գնեցինք և ու-
ղարկեցինք Թիֆլիս՝ մեր ազգականներին ու ծանոթնե-

րէն, հետո մտանք մի սրճարան, ուր մեզ մոտեցան մի քանի հոգի և, յերբ իմացան, վոր մենք հայ դերասաններ ենք և Պոլիս ենք գնում, իրենց ծառայությունները առաջարկեցին ու մեզ տարան քաղաքը ցույց տալու. տարան նաև սարի գլխին գտնվող հայկական գերեզմանատունը, վոր մի հրաշալիք էր՝ ամբողջովին ծածկված ծառերով և ծաղիկներով: Փողոցներով անցնելիս մեզ միացան և ուրիշները, այնպես, վոր զբոսնում եյինք շրջապատված հարյուրավոր յերիտասարդներով ու կանանցով:

Յերեկոյան, շոգենավը ճանապարհվելուց մի քանի ժամ առաջ, նավակներով շոգենավ յեկան առավոտյան մեզ հետ ծանոթացած յերիտասարդները՝ մրգ, գինի, օղի, քաղցրավենիք լցրած կողովներով, տավբակներով: Նրանք մեզ հյուրասիրեցին, յերգելով և պարելով, վորով մեզ շատ ուրախացրին ու ճանապարհ դրին արդեն նավակներ նստած և շոգենավի չորս կողմը պատած, ուռաներ գոռալով ու «յերթաք բարև»-ներ աղաղակելով:

Մյուս օր առավոտյան հասանք Սամսոն: Այստեղ էլ ափ իջանք և քաղաքի հենց սկզբին տեսանք մի գրախանութ, ուր ծախվում եյին համարյա թե բոլոր կովկասահայ դերասանների մեծադիր պատկերները: Շատ զարմացանք և յերբ մտանք գրախանութը, գրավաճառը մեզնից միքանիսին իսկույն ճանաչեց և ազգանուններս տվեց: Խնդրեց մի-մի գավաթ սուրճ խմել, վորից հետո մեզ տարավ քաղցրավենիքի մի խանութ, ուր հյուրասիրեց տաճկական՝ մեզ անծանոթ քաղցրավենիքներով: Քաղաքը պտտեցինք, է՛լի նույն ծուռումուռ, կեղտոտ փողոցները: Շա՛տ շատերը, ինչպես և Տրապիզոնում, մոտեցան և ծանոթացան մեզ հետ—միացան մեր խմբին: Նրանք մեզ ուղեկցեցին մինչև ծովափ, նավակներ վարձեցին և մեզ նստեցնելով, բարի ճանապարհ մաղթեցին, խնդրելով վերադարձին Սամսոն մանել և միքանի ներկայացում տալ: Մեր խմբին այդ չհաջողվեց, բայց մեզնից հետո, Զարիֆյանն իր խմբով Բաթումից Պոլիս գնալիս թե Տրապիզոնում և թե Սամսոնում մի քանի ներկայացում էր տվել: Հաջողությունը մեծ էր յեղել:

Սամսոնից հետո մտանք Ինեպոլո փոքրիկ քաղաքը, վոր առաջիններից ավելի կեղտոտ էր: Ինեպոլոյում յես ափ չիջա: Ծովի վրա փոքրիկ փոթորիկ կար, մերոնցից մի քանի հոգի—Սևումյանը, Սաթենիկ Ադամյանը, Վրույրը և ուրիշները նավակ նստեցին և ափ իջան: Կինս էլ միացավ նրանց: Քաղաք հասնելով՝ նրանց տանում են յարանը, սուրճով, քաղցրավենիքով հյուրասիրում և հանդիպման առթիվ ճառեր արտասանում: Նրանց գնալուց չանցած մի ժամ, փոթորիկը սաստկացավ, և նավապետը ափ իջածներին իր սուլիչով շոգենավ էր կանչում: Մերոնք իրենց համար հանգիստ նստած՝ խաբունում ժամանակ եյին անցկացնում, յերբ նավարարները ներս են թափվում և շտապեցնում վերադառնալ շոգենավ, վորովհետև Ինեպոլի առաջ գտնվող ջրապտույտի ու փոթորկի պատճառով նրանք կարող են ափին մնալ և շոգենավ չընկնել: Մերոնք վազեվազ ծովափ են գալիս և նստում նավակները: Մեծ դժվարություններով նրանց բոլորին շոգենավի վրա առանք:

Ծովից այդ բոլոր քաղաքներն էլ շատ սիրուն են յերևում, վորովհետև ծածկված են այգիներով:

Չորրորդ օրը, ցերեկվա ժամի 12-ին մտանք Բոսֆոր և մի յերկու ժամից հասանք Պոլիս:

Հրաշալի յե Բոսֆորը:

Հասանք Պոլիս: Վոչ մյուս և վոչ էլ մեր խմբի գործերը բանի նման չեյին, մուտք էլ չունեյինք:

Պոլսում իջել եյինք ծովափնյա մասում, մի հույնի «Եվթալոպոս» անունով հյուրանոցը. հյուրանոցի վարձ տալը մեզ համար շատ ծանր էր: Վճռեցինք տեղափոխվել քաղաքի յեվրոպական «Պերա» մասը, ուր թատրոններն եյին գտնվում, և մասնավոր սենյակներ վարձել: Մեր պարտքը հյուրանոցին օրեցօր ավելանում էր, իսկ ներկայացումներից մնացած չնչին գումարով մենք անկարող եյինք պարտքի տակից դուրս գալ: Ստիպված դիմեցինք խորամանկության. ով սենյակ էր գտնում, հյուրանոցի տերը նրան բաց էր թողնում, իսկ մնացողները գնացողի պարտքն իրենց վրա եյին վերցնում՝ ժամանակին վճարելու պայմանով: Այդպիսով մնացին Աբովյանն ու Քնարիկը, վորոնց արդեն հեշտ էր հյու-

րանոցից դուրս բերել, վորովհետև վճարելով, վճարելով գումարը պակասում էր և չէր կուտակվում, ինչպես բոլորիս այնտեղ ապրելու ժամանակ:

Յերբ հյուրանոցումն էյինք ապրում, փող չափազանց քիչ էյինք ծախսում, վոր ավելի նեղ դրության մեջ չընկնենք: Որինակ՝ տասնյոթ հոգու համար գնում էյինք յերեք վոչխարի խորոված գլուխ ու հաց և դրանով ճաշում: Իսկ որեր էյին պատահում, վոր գլուխ առնելու էլ հնարավորություն չունեյինք, յեփած ճերմակ լոբի էյինք առնում և դրանով կերակրվում: Յերբեմն էլ, յերբ գրպաններս մի քիչ ավելի փող էր ընկնում, ճաշելու էյինք գնում մեր հյուրանոցի դիմացը գտնվող հույնի փոքրիկ ճաշարանը, վորի տերերը չափազանց սիրալիր մարդիկ էյին և, ամեն ինչ ապառիկ տալով, մեզ մի ամիս պահեցին: Նրանց պարտքն էլ կտոր-կտոր տալով վերջացրինք ու այնուհետև բարեկամներ մնացինք: Հետո՝ Բուլղարիայում, մեր նեղ որերին շատ էյինք հիշում նրանց:

Վերջն սկսվեցին Սուլթան-Աբդուլ-Համիդի «սահմանադրական» խարդախությունները, վորոնց միակ նպատակն էր—հետ խլել տված ազատությունները: Պոլիսը հուզված էր, բոլորը սարսափի մեջ էյին, վոչ վոք ներկայացումների գլուխ չուներ, և այդպիսով յերկու խմբի ներկայացումներն էլ դադարեցին:

Յերբ Պոլսում մեր գործերը վատ գնացին, մտածեցինք տեղափոխվել մի վորևէ ուրիշ քաղաք և ընտրեցինք Ռոդոսթոն: Իսկ նախ քան այդտեղ գնալը, հարկավոր էր մեկին ուղարկել հող պատրաստելու և Թատրոնը վերցնելու: Այդպես էլ արինք, և Սևումյանը շոգենավով ճանապարհվեց այնտեղ: Նրա հետ միասին նույն շոգենավով ու նույն նպատակով գնում էր նաև դալաններից Պոլիս նոր յեկած Աբելյան-Արմենյան խմբի ադմինիստրատոր Սմբատ Քեսեճյանը: Մինչև Ռոդոսթո—վոր մի հայաբնակ քաղաք է և գտնվում է Մարմարա ծովի վրա—շոգենավով Պոլսից չորս-հինգ ժամվա ճանապարհ է: Սարսափելի փոթորիկ է բարձրանում ծովի վրա և յերբ հասնում են Ռոդոսթո (շոգենավերը ափին չեն մոտենում, յերթևեկությունը նա-

վակներով էր կատարվում) Սմբատ Քեսեճյանը Պոլսեցի և շոգենավով բազմիցս ճանապարհորդած լինելով հանդերձ, վախենում է նավակ նստել, իսկ Սևումյանն անվախ իջնում է նավակ և քաղաք հասնում, Թատրոնը վերցնում, հեռագրում ինձ, և յես էլ խումբը վերցնելով՝ գնում եմ Ռոդոսթո, և սկսում ենք մեր ներկայացումները: Սմբատ Քեսեճյանը շոգենավի վրա մնալով՝ հասնում է յերկու օրվա ճանապարհի վրա գտնվող հունական մի գյուղ և ափ իջնում:

Ռոդոսթոյում մեր առաջին ներկայացումը ավարտել—տուն էյինք վերադարձել: Վրույրը, դերասանուհի Արուսը, Հասան-Ջալալյանը, կինս և յես նստել, փառավորապես ուտում էյինք Մարմարայի հրաշալի տապակած ձուկն ու խմում Ռոդոսթոյի անման գինին, Հասան-Ջալալյանի Թառի նվագներով քաղցրացնելով մեր լսողությունը: Հանկարծ լսեցինք դռան բախոցը, փողոցից յեկող մեր տան առջևի աղմուկը: Պատուհանից դուրս նայեցինք և տեսանք Ս. Քեսեճյանին, վոր մի ինչ վոր մարդու հետ վիճում էր: Դուրս յեկավ, վոր նա այն հույն գյուղից մի էշ էր վարձել և վրան նստած յեկել հասել էր Ռոդոսթո՝ մեզ գտնելու, վախենալով Պոլիս վերադառնալ, ուր չպիտի ազատվեր Աբելյանի կատաղությունից: Ճանապարհին չտապելուց խեղճ իշին այնքան էր ծեծել, վոր վերջինս վայր էր ընկել, վոտքը կոտրել, և ուղեկցող իշապանն իշի կոտրված վոտքի համար փող էր պահանջում, իսկ Ս. Քեսեճյանը չէր համաձայնում տալ, արդարանալով, վոր նրա էշն էլ վայր գցելու ժամանակ իր կողն է ջարդել: Ինչ վոր է. մի կերպ հաշտեցրինք և Սմբատին ներս առանք մեզ մոտ: Նա մնաց մեր խմբում վորպես ուղեցույց և հետո մեզ Բուլգարիա և Ռումանիա տարավ: Իսկ Պոլսում Աբելյան-Արմենյան խումբը նստած՝ Ս. Քեսեճյանի հեռագրին էր սպասում, վորպեսզի ճանապարհվի Ռոդոսթո, առանց իմանալու նրա գլխին յեկածները: Վերջը, ի հարկե, իմացան և վճռեցին, վոր Սմբատը Թատրոնը վերցրել, բայց ոգուտով մեր խմբին է զիջել:

Ռոդոսթոյում մնացինք մոտ յերկու ամիս: Մի որ յես և կինս խմբի գործերով Պոլիս գնացինք՝ նույն որն

ևեթ վերադառնալու մտադրությամբ: Պոլիս հասանք առավոտյան ժամը 6-ին, մտանք մի սրճարան, թեյ խմեցինք և ժամը 7-ին դուրս յեկանք զանազան տեղեր դնալու, բայց ի՞նչ գնալ, յերբ քաղաքի բոլոր հրապարակներում հնգով, տասով մարդիկ էյին կախված՝ բոլորն էլ նոր գահընկեց արած Սուլթան-Աբդուլ-Համիդի կողմնակիցները, սկսած գեներալներից մինչև կոշկակարը: Վազեցինք նավահանգիստ և, վոչինչ չարած, նստեցինք շոգենավ ու սպասեցինք ճանապարհվելուն:

Ռոդոսթոյից Պոլիս գնալիս շոգենավում ինձ հետ մի կուրյոզ պատահեց: Ռոդոսթոյից շոգենավերը դուրս են գալիս գիշերը և առավոտը հասնում Պոլիս: Այս անգամ էլ գիշերը դուրս յեկանք և, առիթից օգտվելով, իսկույն ևեթ պառկեցինք միակ ննջարանում քնելու: Մեզնից զատ, ե՛լի յերեք հոգի ճամփորդներ կային, վոր մեր որինակին հետևեցին: Թե ինչքա՛ն էյի քնել, չգիտեմ, հանկարծ զգացի, ինչ վոր սուր ցավ․ կարծես ականջս շուն կծեց․ վեր թռա և գոռացի, արթնացնելով բոլորին: Վեր թռան, լույսը վառեցին և ի՞նչ, մի ահռելի մեծության ոմար (ըստախոս), ականջիցս ճանկերով բռնած, կախված: Մի կերպ պոկեցին, բայց ականջս հազիվ մի ամսում լավացավ: Բանն այն եր, վոր մի հույն Ռոդոսթոյում գնելով՝ Պոլիս եր տանում ծախելու վեց հատ ոմար, վորոնց տեղավորել եր կողովներում, ամեն մեկում յերկուական հատ: Գիշերն այդ կողովներից մեկը շուռ եր յեկել և ոմարները դուրս գալով՝ մեկը բռնել եր իմ ականջը, իսկ մյուսը՝ հենց իր տիրոջ բարձի վրա յեր․ ափսոս վոր նրա մեծ քթից չէր բռնել:

Ներկայացումները վերջանալուց հետո, Ռոդոսթոյում մեր արտասահմանյան անցագրերը վիզայի յենթարկելով՝ Տաճկական սահմանն անցանք և մտանք Բուլղարիա: Հասանք առաջին քաղաքը՝ Ֆիլիպպե, ուր հայկական բավականին մեծ գաղութ կար, և մնացինք այնտեղ:

Հետաքրքրական է մեր խմբի Բուլղարիայում անցկացրած որերի նկարագրությունը: Առաջին քաղաքը, ուր մենք սկսեցինք մեր ներկայացումները, Ֆիլիպպեն էր: Մի տուն վարձեցինք, և բոլորս տեղավորվեցինք

այնտեղ: Մուտքերն այնքան քիչ էյին, վոր հնար չկար խմբի անդամներին փող բաժանել, վորովհետև մեծ բաժին ստացողը շատ ստանալով, կարող եր լավ ապրել, իսկ քիչ ստացողը քաղցած պիտի մնար: Վճռեցինք փող չբաժանել, այլ մի գանձապահ ընտրեցինք, վոր ամեն որ վորոշ գումար եր տալիս և այդ գումարով թեյի, ճաշի և ընթրիքի համար ամեն ինչ գնվում եր ու բոլորս միասին կուշտ ուտում-խմում էյինք: Ծխողների համար ծխախոտ եր գնվում: Ողու և գինու վրա փող չէր ծախսվում: Խոհարարի պաշտոնը, խմբի միաձայն խնդրանոք, յես էյի ստանձնել և ստիպված, ամեն առավոտ հուշարար Ծովիկի հետ, կանուխ վեր էինք կենում, գնում շուկա, ամեն ինչ գնում և բերում տուն: Դերասաններից մեկը հերթով խոհանոցում ինձ օգնական էր նշանակվում: Կանայք էլ տունն էին մաքրում և լվացք անում:

Ինձ մի որ հանգիստ տալու համար Հակոբ Ոհանյանըն առաջարկեց իրեն յերկրորդ խոհարար կարգել: Յեվ հենց առաջին որը, վոր ինքը Ծովիկի հետ շուկա գնաց ու գնումներ արեց, յերկրորդ կերակրի համար թանգ արժեցող սունկի բերեց, բնականաբար ջրալի կերակրի միսը պակաս անելով: Ջրալին ուտելու ժամանակ ամենքս էլ նկատեցինք, վոր բաժինները քիչ են, բայց յերբ նա յերկրորդ բաժինը՝ սունկից շինած փոքրիկ կտորներով բիֆշտեկը բերեց, ամենքս էլ չափազանց նեղացանք թանգ արժեցող, բայց չկշտացնող կերակրի համար և Ոհանյանին բոլորովին արգելեցինք մյուս անգամ կերակուր յեփել:

Յես միշտ ուտեցնում էյի կոտլետներ, բիտկի, դոլմա և այնպիսի կերակուրներ, վոր ծեծած մսից էյին պատրաստվում, թե էժան էյին նստում և թե քանակով շատ էյին լինում:

Փորձերն էլ մեր կեցած տան ապակիապատ պատշգամբումն էյինք կատարում:

Ներկայացումները տեղի էյին ունենում սոցիալդեմոկրատների կլուբում, ուր կարմիր վարագույրի ճակատին բուլղարերեն գրված եր.—«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»․․ Կարմիր վարագույր,

պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք... Ապշել եյինք, չտեսնված բան եր մեզ՝ Ռուսաստանցիներիս համար... Իսկ ավելի զարմանալին այն եր, վոր ռուսերեն ներկայացումներին զինվորականներ էլ եյին գալիս (մենք ռուսերեն ներկայացումներ էլ եյինք տալիս):

Նայդենով ազգանունով մի սպա՝ զինվորական կլուբի կառավարիչը՝ մի որ դիմեց մեզ և խնդրեց, վոր իրենց կլուբում էլ ռուսերեն ներկայացումներ տանք: Գնացինք տեսանք, վոր բեմ չունեն: Խոստացան ամեն ինչ տալ, յեթե բեմը մենք շինենք: Համաձայնեցինք և մի քանի որվա ընթացքում բավականին հարմար բեմ դրինք ու սկսեցինք մեկ-մեկ էլ այդտեղ խաղալ: Սխալ եր մեր կողմից, վորովհետև մուտքերը կիսվեցին, իսկ ծախսը յերկու թատրոնի համար ավելացավ:

Շատ լավ եյինք ապրում՝ միշտ կատակներ, սրախոսություններ անելով: Տխրելու և մեր դրության մասին մտածելու ժամանակ չունեյինք:

Մի որ չուկայից տուն եմ գալիս, և ինձ վերև են կանչում. մտնում եմ սենյակը: Բոլոր խումբը հավաքված, ինչ վոր լուրջ կերպարանքով դիմում է ինձ և առաջարկում նստել հատուկ պատրաստված աթոռի վրա: Յես, կարծելով, թե ընդհանուր ժողով է, կամ ինչ վոր արտասովոր բան, նստում եմ: Նստելս ու ձեռքս ու վոտքս կապելը մեկ յեղավ. բոլորը թափվեցին վրաս: Տեսնելով, վոր կինս էլ նրանց հետ է, հասկացա, վոր անպայման կատակ է: Ինձ ուժով նստեցրին և ճերմակ մազերս սկսեցին ինչ վոր ներկով ներկել, վոր վերցրել եյին իրենց մազերը ներկող դերասան Հակոբ Ոհանյանից: Գլխավոր չարաճճին Սևումյանն եր, վոր մազերս ներկում ու շարունակ կրկնում եր, թե յես էլ Ստանիսլավսկու կերպարանքը կստանամ: Ներկելը վերջացրին ու ձեռքերս արձակեցին: Մի յերեք որ անց, գլխիս մազերը ճերմակի փոխարեն, քսան գույն եյին ստացել—աշխարհիս յերեսին գոյություն ունեցող բոլոր գույներն էլ կային: Սպասեցի մի քանի որ և յերբ տեսա, վոր չեն փոխվում, գնացի և իմ սիրած յերկար մազերս արմատից կտրել տվի:

Յերբ անցանք մյուս քաղաքները—Ռուսչուկ, Սո-

ֆիա, Վառնա, Շումլա—աշխատում եյինք Ֆիլիպպեյի նման ապրել, և տեղ-տեղ այդ հաջողվում եր: Յերբ ամառը Վառնա ընկանք, այստեղ արդեն մեր գործերը բոլորովին փչացան:

Սոֆիայում նախկին կայսերական թատրոնում եյինք խաղում: Մի սիրունիկ թատրոն եր: Մի որ, ըստ իմ սովորության, ներկայացումից առաջ, յերբ արդեն գրիմ արած և հագնված եյի, ռեկվիզիտն ստուգելով, տեսա վոր Սմբատ Քեսեճյանը յերկու շիշ լիմոնադ մոռացմամբ չի գնել: Նրան կանչել տվի և պատվիրեցի իսկույն ևեթ գնել: Նա դեմ կանգնեց, առարկելով, վոր ավելորդ ծախս է, քանի վոր կարելի յե բեմ չհանել և փոխարենը ջուր խմել: Յես բարկացա և հայհոյեցի նրան, վորից նա կատաղեց և գրպանից մի ջախջախված փոքրիկ ատրճանակ հանելով՝ հարձակվեց վրաս: Յես վերցրի ձեռքս ընկած մի ինչ վոր փայտի կտոր և վազեցի վրան, իսկ նա վախենալով, վոր գուցե խփապես հարվածեմ իրեն, չուռ յեկավ և բեմի աջ ու ձախ բացվող վարագույրի միջից թռավ դահլիճ, ուր հասարակությունը նստած՝ բեմի բացվելուն եր սպասում: Սըմբատն իր արածի տգեղությունը տեսնելով՝ իրեն չկորցրեց և բարձր ձայնով սկսեց հայտարարել, վոր մյուս ներկայացմանը, այս ինչ որը, այս ինչ պիեսը պիտի խաղացվի, իսկ վերջն էլ պարտ համարեց հայտարարելու, վոր Ռուսաստանում ընդունված ռեկլամի մի ձևն է այս, վոր բեմից դահլիճ թռչելով են անում:

Մենք նրան յերկար ձեռք եյինք առնում և այս դեպքը հիշեցնելով՝ կատաղեցնում:

Ֆիլիպպեյում «Ադամ և Յեվա» վոդևիլն եյինք խաղում, վորի համար մեզ մի կենդանի թռչնակ եր պետք: Ս. Քեսեճյանը մի գնչուից մի գեղձանիկ եր գնել և հաշիվները տալուց, գինը յերկու ֆրանկ եր գրել: Վոդևիլի ժամանակ թռչնակը բաց թողինք, թռավ բարձրացավ գալերեյը, իսկ հասարակությունը ցրվելուց հետո, Սմբատը նրան բռնեց և հետը տարավ իր սենյակն ու դրեց առաջուց գնած մի վանդակի մեջ: Նույն վոդևիլը մենք խաղացինք նաև ռուսերեն լեզվով, և Սմբատը դարձյալ նույն գեղձանիկն եր բերել, ու մյուս որը հաշ-

վում նորից յերկու ֆրանկ գրել և հետո թռչնակն իր տունը տարել ու վանդակը դրել: Նույն վոդևիլը մենք մի քանի քաղաքում խաղացինք, և նույն դեղձանիկն իր դերը կատարում եր շարունակ, վոչ մեկիս մեջ կասկած չհարուցելով, թե հենց ինքը, մեր ծանոթ դեղձանիկն է, մանավանդ կասկածելու տեղիք չեր տալիս այն բանը, վոր Սմբատն ամեն անգամ թռչնակ պատվիրելիս անբավականություն եր հայտնում, թե վորտեղից պիտի գտնի և այլն... Յեվ ամեն մի ներկայացման յերկու ֆրանկն ստանում եր: Վառնայից մենք պիտի գնայինք Ռումանիա՝ Բուխարեստ և Սմբատին առաջուց ուղարկեցինք այնտեղ: Գնալուց նա հետը վերցրել եր նաև իր դեղձանիկը, սահմանի վրա մաքս վճարելով: Բուխարեստում այս անգամ մեր ներկայացումները չհաջողվեցին, Սմբատին հեռագրեցինք վերադառնալ Վառնա: Վերադարձին դարձյալ մաքս եր տվել և այս անգամ՝ բուլղարներին, վորոնց ինչքան վոր հավատացրել եր, թե բուլղարիայի թռչուն է, ուշադրություն չեյին դարձրել ու մաքսը վերցրել եյին:

Վառնայում դարձյալ «Ադամ ու Յեվա» խաղացինք, բայց այս անգամ Սմբատը գինը չորս ֆրանկ եր նշանակել, հավատացնելով, վոր շատ դժվարությամբ է ճարել: Վճարեցինք:

Մի գիշեր հետը գործ ունեյի. մտա իր սենյակը. նա տանը չեր, բայց սեղանի վրա մի վանդակ տեսա և մեջը՝ մեր ծանոթ դեղձանիկը: Իսկույն վանդակից հանեցի և պատուհանից դուրս թողի, իսկ փոխարենը վանդակի միջից կախված ողակի մեջ դնելով ձեռքս ընկած նրա գուլպաներից մեկը՝ դուրս յեկա:

Սմբատը տուն վերադառնալով և ցանկանալով թռչնիկին կերակրել, մոտենում է վանդակին և տեսնում է գլխին խաղացած խաղը:

Ի հարկե՝ հետո, յերբ ամեն բան բացված եր, խոստովանեց ամենը և միամի պատմեց թռչնիկի պատճառով իր կրած տանջանքները, մանավանդ բուլղարական մաքսատանը սարքած կռիվը:

Կուշտ ծիծաղեցինք և ներեցինք նրան իր խորամանկությունը:

Վառնայում մեզ թույլ եյին տվել դպրոցում սարքել, վորովհետև ամառ եր և պարապմունքներ չկային, քնում եյինք դասարաններում, աշակերտական շուռ տված նստարանների վրա: Կերածներս, չնչին բացառությամբ, միայն բուսեղեն եր. մսի համը վաղուց եյինք մոռացել, իսկ մի գավաթ գարեջրի համար, վոր Վառնայում չափազանց շատ եր և եժան, հոգիներս կտայինք: Բադրջան եյինք խորովում և ուտում, վոր բավականին խոշոր տեսակի յեր և նույնպես եժան: Մի որ էլ ձեռքիս փողն անհաշիվ ծախսեցի, բադրջան շատ առա և աղի համար փող չմնաց: Յերկար մտածելուց հետո, յերեք հոգուց բաղկացած մի պատվիրակություն ընտրեցինք և ուղարկեցինք ներքև, ժամահայր Ոննիկ աղայի մոտ, վոր հարգեց մեր պատվիրակության խնդիրը և մի պնակ աղ տվեց:

Ի հարկե՝ մեր դրությունն ամենքին հայտնի յեր, և վորպեսզի մեզ մի քիչ ոգնած լինեն, յեկեղեցու հոգաբարձուներից մեկը մի որ մեզ մոտ յեկավ և խնդրեց, վոր ամառվա ընթացքում, չգիտեմ ինչ տոնի, յեկեղեցում պատարագին խմբով յերգենք: Մենք, իհարկե, սկզբում մերժեցինք, բայց Սևումյանը բարի մարդ լինելով և մտածելով, վոր գուցե մի վորևե ներկայացման տոմսեր ցրելով կոգնեն մեզ, և մի լավ մուտք կանենք, համաձայնեց, ինձ էլ համաձայնեցնելով: Խոսք տվինք և մեր դերասաններից մեկի՝ Ալ. Առաքելյանի, վոր մի ժամանակ յերգեցողության ուսուցիչ եր յեղել Հայոց դպրոցներում, ղեկավարությամբ տասնյոթ հոգով (կին և տղամարդ) իսկույն սկսեցինք պատրաստել պատարագի բոլոր տերողորմյաներն ու շարականները:

Տոնը յեկավ, շապիկներ հագանք և յերգեցինք: Ի՞նչ ասել կուզի, վոր յեկեղեցին ու բակը լիքն եյին հոծ բազմությամբ, մանավանդ վոր հոգաբարձությունն սկզբից թռուցիկներ եր տպել և ցրել, թե այս ինչ որը «Կովկասահայ թատերախումբը կատարե պիտի պատարագին սուրբ արարողությունքը»:

Մյուս որը կնոջս հետ տանը մենակ եմ. ներս է մըտնում նույն հոգաբարձուն և ձեռքի թաշկինակով կապոցը մեկնելով ինձ՝ խնդրում է, վոր բաժանեմ «տղա-

ների մեջը»: Իմ հարցին, թե այս ի՛նչ բան է, նա պատասխանում է, որ մեր ոգտին յեկեղեցում հավաքած գանձանակն է: Յես ապշեցի, կատաղեցի, հարյուր գույն փոխեցի, բայց ի՞նչ կարող եյի անել: Չվերցրի: Յեկավ Սեւումյանը և դարձյալ իր բարության, իսկ յես էլ կավելացնեմ՝ և խելոքության շնորհիվ, ինձ ազատեց վերցնել՝ ռուսերեն ասելով — որ հյուրը չհասկանա, — թե քանի վոր ներկայացումներից բան չի մնում, գոնե դրանով կշտացնենք խմբի անդամներին, վորոնց մեծ մասը տիրող փորահարինքի եպիդեմիայի պատճառով հիվանդ պառկած եր:

Հյուրը գնալուց հետո փողը համրեցինք և թաշկինակում բավականին մեծ գումար գտանք, մինչև անգամ մի հատ էլ տաճկական ոսկի կար:

Շատ վողբերգական ու ծիծաղելի յեր մեր դրությունը: Մեր խմբի բոլոր անդամները, բացի Սեւումյանից, ինձնից ու կնոջիցս, հիվանդ պառկած եյին: Բուլղարացի բժիշկը, վորին դիմել եյինք, մի քանի դեղ գրեց և յերկար ու բարակ, կոտրտած ռուսերենով խրատով պատվիրեց բուսեղեն չգործածել, այլ հավի ճերմակ միս, թարմ ձու ուտել և կաթ խմել: Մի խոսքով խիստ դիետա պահել, դի՛ետա և ուրիշ ոչինչ…

Ինչո՞վ պիտի հավ, կաթ, ձու գնեյինք, յերբ բաղջան էլ միշտ չեյինք կարողանում ձեռք բերել:

Ամառային մի փոքրիկ փայտյա թատրոն կար հենց այդ նույն Վառնայում, վոր կապալով տրված եր հույն դերասան Աթանաս Բայլին: Վերջինս «Թուլուաթի» խումբ եր պահում, վորի դերասանների մեծամասնությունը հայեր եյին: Հիշում եմ նրանցից Հայկ Արամին, Կարպիս Բալճյանին, Կարպիս Ղազազյանին և Առաքել Հովհնասյանին: Կային տաճիկ և հույն դերասաններ էլ:

Խաղում եյին տաճկերեն լեզվով, վորովհետև Բուլղարիան յերկար ժամանակ տաճկաց տիրապետության տակ գտնվելով, բոլորն էլ ազատ տիրապետում եյին տաճկերեն լեզվին: Բեմադրում եյին հինգ, վեց, նույնիսկ յոթ արարածներով դրամաներ և վերջը՝ յերեք ու չորս արարածներով ծիծաղաշարժ կոմեդիաներ: Աթանաս Բայլը դրամաներին չեր մասնակցում, այլ դուրսը

նստած՝ տոմսեր եր վաճառում, իսկ հետո կոմեդիաներին մասնակցում «Իբիշ—աղա» անունով: Բոլոր կոմեդիաների բովանդակությունները տարբեր բաներ եյին, բայց և այնպես ամեն մի կոմեդիայի մեջ Իբիշ—աղան դուրս եր գալիս միևնույն զգեստով, գրիմով և միևնույն անունով: Կոմեդիայի հերոսը նա յեր և բովանդակությունը կազմում եր Իբիշ—աղայի հիմարությունը, խորամանկությունը կամ խելոքությունը, և պիեսի առանցքն էլ նա յեր: Զգեստը մի լայն վարտիք ու բաճկոն եր՝ գույնզգույն լաթերից կարված, գլխին՝ մի մեծ՝ վերևը ներքևից լայն ու բարձր ֆես, հաստ հոնքերով, կարճ բեխերով, այրված խցանով ներկած: Խաղում եր չափազանց ազատ, և հասարակությունը բառի բուն նշանակությամբ ծիծաղից կոտորվում եր: Հուշարար չունեյին, և այդ ներկայացումների գլխավոր նշանակությունն այն եր, վոր մի դերասան մյուս դերասանին տված հարցերով դժվարության մեջ դներ, անակնկալի բերեր և այլն… Մի տեսակ մրցում եր: Պետք է, սակայն ասել, ի պատիվ այդ խմբի բոլոր դերասանների, վոր ամենքն էլ լավ յեփված եյին, խոսքի տակ չեյին մնում և, մեր լեզվով ասած՝ պաուզաներ չեյին լինում:

Դրամաները չափազանց մեծ պաթոսով ու բարձր ձայնով եյին խաղում: Իսկ կոմեդիաները նույն դերասանները խաղում եյին բնական, սակայն շատ մեծ շարժի դիմելով և, վորքան կարելի յեր, ծիծաղ առաջացնելու նպատակով: Անչափ ու անսահման գռեհիկ շարժումներ և ցինիկ սրախոսություններ էլ եյին թույլ տալիս իրենց:

Վերև հիշված Աթանաս Բայլը մի համակրելի անձնավորություն եր, վորին միշտ կհիշեմ, վորովհետև նա չափազանց կարեկից յեղավ մեզ մեր նեղության մեջ: Տեսնելով մեր անմխիթար դրությունը, մեր նիստուկացը, ինքն առաջարկեց մեզ մեր տրամադրության տակ դնել թե իր թատրոնը, թե իր զգեստները և թե, յեթե պետք լինի, խումբը՝ միքանի ներկայացման համար, և այն էլ բոլորը ձրի: Բնականաբար՝ շնորհակալությամբ հանդերձ, ոգտվեցինք առիթից և յերկու ներկայացման

զբաղեցրինք թատրոնը՝ բեմադրելով Շիլլերի «Ավազակներ»-ն ու Գուցկովի «Ուրիել-Ակոստան»: Յերկու տանելի մուտք արինք, և դրությունները մի քիչ լավացավ: Մեր «Ավազակներ»-ը շատ դուր յեկավ նրանց խմբին, և, այսպես կոչված, գեղարվեստական մասի ղեկավար Կարպիս Բալչյանը խնդրեց ինձ՝ ամբողջ պիեսը պատկեր առ պատկեր պատմել, վոր և կարճառոտ գրի առավ: Մի քանի որից նրանք «Ավազակներ»-ը բեմադրեցին: Բայց թե ի՛նչպես այդքան շուտ: Կարպիս Բալչյանը խմբի բոլոր անդամներին հավաքեց և դերերը նշանակելով, ամեն մեկին բացատրեց իր ով լինելը, ո՛ւմ դեմ կամ ո՛ւմ հետ ինչ դիրք բռնելը, ի՛նչ փոխհարաբերության մեջ լինելը, իսկ խոսքերը, ինչպես վերն ասացի, դերասաններն իրենք պիտի բեմի վրա հորինեյին, վոր և կատարեցին զարմանալիորեն շատ գեղեցիկ և պիեսի բովանդակությանը իննսուն տոկոսով հարազատ:

Յերբ մենք ցանկացանք բեմադրել «Ուրիել Ակոստան»՝ մեր դերասանների քչության պատճառով ստիպված յեղանք Աթանաս Բայի հայազգի դերասաններից յերեքին դեր տալ, վաղորոք արտագրելով և պատվիրելով, վոր անգիր անեն, կամ սովորեն հուշարարին հետևելու: Փորձերին մի կերպ յոլա եյին տանում, բայց յերբ ներկայացման գիշերը յեկավ, հուշարարի գոյությունը մոռացան և սկսեցին դերերն իրենց բառերով ասել:

Մենք մեր ծիծաղը հազիվ եյինք պահում բեմի վրա:

Ահա այսպիսի ներկայացումները կոչվում են «թուլաաթի» ներկայացումներ:

Յերբ մենք յեկանք Վառնա, մի քանի որից մեզ մոտ մի յերիտասարդ ռուս պատանի յեկավ և սկսեց պատմել իր գլխին յեկածները: Նա ռուս բանվոր եր՝ քաղաքական եմիգրանտ, Ռուսաստանից աքսորված: Լսելով, վոր Ռուսաստանից ենք յեկել, իսկույն վազել—յեկել եր մեզ մոտ՝ իր հայրենակիցների հետ ծանոթանալու: Մյուս որն իր նման յերկու աքսորված ընկերներ էլ հետը բերեց: Նրանք յերեքով էլ մեր ամենօրյա հյուրերը դարձան:

Տեղի սոցիալ-դեմոկրատների ակումբի վարչու-

թյունը մեզ խնդրեց՝ ռուսերեն լեզվով անպայման բեմադրել Գորկու «Հատակում» պիեսը և բոլոր տոմսերն իրենց տալ: Մեր խմբում ռուսերենին տիրապետողներս շատ քիչ եյինք, նրանք մեզ մոտ բերին ռուսերենին լավ տիրապետող մի քանի բուլղարացի դերասաններ: Դերերը բաժանելով՝ պիեսը պատրաստեցինք ու ներկայացրինք: Մեր աքսորականներից յերկուսն իրենց դերերը շատ լավ կատարեցին, մանավանդ մեր առաջին ծանոթը, վոր միաժամանակ լավ յերգում ու նվագում եր:

Շատ սրտառուչ եր մեր միմյանցից բաժանվելը. աքսորականները մեզ «գնաք բարև» եյին անում, ինչպես իրենց հարազատներին:

Վառնայից մենք գնացինք Շումլա:

Շումլան փոքրիկ, բայց շատ սիրուն քաղաք է՝ շրջապատված խաղողի այգիներով և շատ հարուստ բուսականությամբ: Խմբով իջել եյինք մի տուն, վորի տերը խուլ ու պառավ մի հայ կին եր ու տարիքով մի աղջիկ ուներ: Բակում նրանք մի սիրուն բանջարանոց ունեյին: Գիշերները, վորպեսզի փողոցի շները բանջարանոցը չմտնեյին, նրանք փողոցի պոկված դուռը լայնքով դնում եյին դռան առաջ և այսպիսով իրենց բանջարանոցը պաշտպանում: Մենք, տեսնելով, վոր փողոցի դուռը չի կողպվում ու կարող են մեզ թալանել, մանավանդ, վոր պառավի աղջիկն էլ մեզ հետ թատրոն գնաց և տանը մնաց միայն խուլ պառավը, մենք, առաջին ներկայացման թատրոն գնալիս, մեր սենյակների դռների վրա կողպեքներ դրինք: Հետևյալ առավոտ, յերբ տնատերերից ջուր խնդրեցինք լվացվելու, նրանք մեզ հետ չխոսեցին և ամեն կերպ հասկացրին, վոր չափազանց վիրավորված են մեր սենյակների դռների վրա կողպեք դնելու պատճառով, վորով մենք անվստահություն ենք ցույց տվել դեպի իրենց: Հազիվհազ կարողացանք նրանց հանգստացնել, վոր վոչ թե իրենց վրա վստահություն չունենալներս է մեզ ստիպել դռների վրա կողպեք դնել, այլ փողոցի գողերից վախենալը: Նրանք մեզ պատասխանեցին, վոր Շումլայում գողություն ասած բանը գոյություն չունի: Յեվ, իսկապես, իմացանք, վոր շուկայի խանութների դռները գիշերնե-

րը չեն կողպվում, այլ ծածկվում են, բացառությամբ այն օրերի միայն, յերբ գնչուները քաղաքի միջով սար են բարձրանում կամ իջնում։ Այլևս դռները չեյինք կողպում։

7

Բուլղարիայից հետո փոքրիկ խմբով անցանք Ռումանիա։ Սևումյանն ու Սաթենիկ-Աղամյանը Ռումանիա չեկան և վերադարձան Կովկաս։

Յերկու քաղաքում միայն խաղացինք՝ Բուքարեստում և Կոնստանցայում։

Վորովհետև Բուքարեստում, Ռումանիայի մայրաքաղաքում, վոչ գետ կա, վոչ էլ ծով, իսկ ամառային լողարանների կարիք կա, ահա դրա համար էլ բոլոր թատրոններն այնպես են շինված, վոր դահլիճի հատակը վերցնում են և այն դառնում է սառը ջուր լցրած մի մեծ ավազան, և այդ ավազանումն էլ մարդիկ լողանում են։ Քանի վոր դեպի այդ թատրոնը ջուր է անցկացված, ուրեմն շինում են և ձմեռային բաղնիքներ, այնպես, վոր բոլոր թատրոններն ու բաղնիքները միասին են շինված։ Միմիայն կայսերական թատրոնն է զուտ թատրոն։ Բոլոր թատրոններից էլ բաղնիքի հոտ է գալիս։ Մի անգամ մեր ներկայացման, յերբ յես բեմի վրա խաղում էյի, հանկարծ աչքիս ընկավ ճերմակ շապիկ հագած մեկը, վոր վերջին շարքերում կանգնած՝ բեմին էր նայում։ Ո՞վ էր, ի՞նչ էր, հետո իմացա, վոր դա լողացողն (քիսաչին) է յեղել, վոր բաղնիքի վորև է համարից իր պաշտոնը կատարելուց հետո դուրս գալով և թատրոնի սրահից անցնելով՝ կանգնել է, հետաքրքրվելով ներկայացումով։ Համարները մտնելու համար բոլոր լողացողները թատրոնական սրահովն էյին ներս ու դուրս անում։

Բուքարեստի մեր թատրոնի բեմը շատ տարօրինակ մի բեմ էր. հետևը շինված էր սենյակի մի պատ՝ մի դռնով մեջտեղում, իսկ աջ ու ձախ՝ յերեքական կուլիս, վորոնք այդ ներկված պատի հետ վոչ մի կապ չունեյին։ Ամեն մի կուլիսի վրա մի մի պատկեր էր նկարված—մեկի վրա՝ պեյզաժ, մյուսի վրա՝ մի մեծ ծաղկաման,

մեջը փունջ դրած, յերրորդի վրա՝ մի յեզ ու վրան հարձակվող իրենից մեծ մի գամփռ և այլն։ Առաջին հայացքից բեմը պատկերահանդեսի տպավորություն էր թողնում, սակայն յերբ ուշիուշով նայեցինք՝ տեսանք, վոր շատ կոպիտ վարպետի կոպիտ գործեր են։ Ահա այդ պատկերասրահումն էլ խաղում էյինք, վոր, ըստ պիեսի, և՛ սենյակ էր, և՛ անտառ, և՛ ամրոց, և՛ ամեն ինչ։

Բեմը շատ լայն էր, իսկ խորությունը՝ կարճ։

Այդպիսի բեմերի Տաճկաստանի փոքրիկ քաղաքներից շատերում ենք հանդիպել։

Բուքարեստում իջել էյինք Կալե-Մոշիլյոր փողոցում՝ մի հայ կոշկակարի բնակարան։ Բուխարեստում այդ ժամանակ մոտ հինգ հազար հայ կոշկակար կար՝ բոլորն էլ Ռոդոսթո քաղաքից, և նրանք հայտնի էյին իբրև լավ կոշկակարներ։ Այս բանում մենք համոզվել էյինք դեռ Ռոդոսթո յեղած ժամանակներս։ Ամեն մեկն իր գնորդ-խանութն ուներ և մի չափսի ու համարի կոշիկ էր կարում և կարածը հավաքում՝ յերկուշաբթի առավոտը տանում-հանձնում, վարձն ստանում և այդ որն էլ հնգստանում էր։ Այդ Կալե-Մոշիլյորը շատ յերկար փողոց էր, վորի մի մասումն էյին ապրում բոլոր հայ կոշկակարները, այնպես, վոր մի հայկական թաղ էր դարձել, և այդ թաղն ուներ իր ճաշարանները, սրճարանները, ողետները և այլն... Բոլորն էլ յերկու իրար թշնամի կուսակցությունների էյին պատկանում—Դաշնակցության և Հնչակյան։ Ամեն մի կուսակցություն ուներ իր սեփական ճաշարանը, և յեթե մեկի մոտ ճաշեյիր, մյուսն էր նեղանում, հակառակն անեյիր՝ առաջինն էր նեղանում։ Այս բաներին մենք ուշադրություն չդարձրինք և ճաշում էյինք Պետիկ անունով մի հնչակյանի ճաշարանում, վորտեղ կերակուրները շատ համեղ էյին։ Այս պատճառով մեզ հնչակյաններ էյին համարում, և դաշնակները մեր ներկայացումները բոյկոտի յենթարկեցին։

Կային տեղացի շատ հայ հարուստներ, վոր մեր ներկայացումներին բոլորովին թատրոն չեյին գալիս, արդարանալով, թե հայերեն լեզվին չեն տիրապետում։

Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա—8

Նրանք չափազանց յեկեղեցասեր եյին և աստծու պոչն
եյին պինդ բռնել:
Կոնստանցան ծովեզերյա մի սիրուն քաղաք է: Ապ-
րում եյինք հայոց դպրոցին շատ մոտիկ, և հենց այդ
դպրոցի բեմի վրա էլ մեր ներկայացումներն եյինք տա-
լիս: Քաղաքի կենտրոնի հրապարակներից մեկի վրա
գտնվում եր Ովիդիոսի հռչակի արձանը: Ռումանա-
ցիք, համեմատած բուլղարացիների հետ, շատ անհյու-
րասեր մարդիկ են, չոր և վոչ սիրալիր դեպի օտարա-
կանները: Մեր տանտիրուհին, յերբ սենյակի վարձի
ժամանակը լրանում եր, մի րոպե էլ չեր համբերում,
իսկույն և եթ պահանջում եր վճարումը կատարել: Մեր՝
Ռումանիայում յեղած ժամանակ թե Բուքարեստում և
թե Կոնստանցայում գրավաճառներն ահագին պլակատ-
ներով ծանուցում եյին «Հո՞ յերթասի» և «Շերլոկ-
Հոլմսի» լույս տեսնելու մասին, յերբ արդեն հայերեն
լեզվով անգամ այդ գրքերը վաղուց եյին մի քանի տպա-
գրությամբ լույս տեսել: Նիստուկացը շատ անմաքուր
եր թե տներում և թե փողոցներում, այնինչ Բուլղա-
րիան իր մաքրությամբ կարող եր պարծենալ:
Կոնստանցայում հացի մի մեծ ելեվատոր եյին չի-
նել, վորի բացման համար Բուքարեստից յեկել եյին
թագավորն ու թագուհին (Կարմեն–Սիլվա): Վերջինս
դեռ չեր կուրացել և շատ ճերմակ մազերով մի կին եր:
Ընդունելու համար քաղաքը մեծ պատրաստություն եր
տեսել, և փողոցներն ու տները զարդարել եյին: Այս
ամենը մեզ շատ խանգարեց և, ստիպված, մի յերկու
ներկայացում հետաձգեցինք մինչև վոր ամեն ինչ վեր-
ջացավ:
Կոնստանցայում բավականին հարուստ հայեր կա-
յին, վոր հայ թատրոնի հոտը չեյին առել և առնելու էլ
ձյալ կոշկակարներն ու ուսուցիչներն եյին:
չհայտնեցին: Մեր հաճախորդները դար-
Սուլթան–Աբդուլ–Համիդին գահընկեց արին, և Պո-
լիսը խաղաղվելուց հետո, Զարիֆյանի հրավերով նորից
վերադարձա այնտեղ: Զարիֆյանն իր կնոջ հետ ամ-
բողջ ժամանակ մնացել եր Պոլսում: Նրա հետ ընկերա-
նալով՝ բավականին ներկայացումներ տվինք: Նրա խըմ-

բի անդամները, բացի Զարիֆյան ամուսիններից, ինձ-
նից և Ովի Ահարոնյանից, բոլորն էլ պոլսեցի յերիտա-
սարդ դերասաններ եյին — Շահին, Սվաջյան, Ցենոք-
Շահեն, Զափրաստ, Դիանա, Աչոտ Մադաթյան, Սար-
գըսյան և ուրիշներ: Հետո անցանք Զմյուռնիա, և մեր
ներկայացումները վերջանալու օրերին, Պոլսից՝ Հով-
հաննես Աբելյանից հրավեր ստացանք: Արմենյանի ըն-
կերակցությամբ նա մեծ խմբով նորից եր յեկել Պոլիս
և մեզ հրավիրում եր միանալ իրենց խմբին:
Զմյուռնայում- ճաշում եյինք «Կրամեր-պալաս»
հայտնի ապակյա ճաշարանում: Մի վատ սովորություն
կար այստեղ. ներս եյին թողնում և՛ կոշկի մաքրողին,
և՛ չոր միրգ ծախողին, և՛ փողկապ վաճառողին, մի
խոսքով՝ ճաշարանը չուկայի յեր վերածվում, ճաշող-
ներին հանգիստ չեյին տալիս և մոտենալով՝ ամեն մեկն
իր ապրանքն, իր ծառայությունն եր առաջարկում,
մինչև թեյ քաշելու աստիճան:
Մի որ փորձից ուշ վերադառնալով ու բավականին
քաղցած՝ յես ու կինս նստած՝ մեզ բերելիք բաժիններին
եյինք սպասում: Այդ ժամանակ յերկար միրուքով մի
ծեր հրեյա մոտեցավ մեզ ու սկսեց ձեռքերին և ուսերին
բարձած՝ յերկաթալարերից շինած շրջանակներն ու
մկան թակարդները գովելով առաջարկել, վոր գնենք:
Յես բարկացա և, մի քիչ կոպիտ, խնդրեցի ինձ չանհան-
գստացնել: Կոպտությանս համար կինս ինձ ռուսերեն
նկատողություն արեց, յես նրան բացատրեցի, վոր
ջղերս ու դատարկ ստամոքսս են պատճառը: Պետք եր
տեսնել, թե ի՛նչ կատարվեց ծեր հրեայի հետ, վոր լսեց
մեր ռուսերեն խոսակցությունը: Նա իսկույն մոռանա-
լով իրեն հասցրած անտեղի վիրավորանքը՝ մոտեցավ
ինձ և ռուսերեն հարցրեց. արդյոք ճի՞շտ հասկացավ
ինքը, վոր մենք Ռուսաստանցիներ ենք: Յես զգացի վի-
րավորանքիս մեծությունը և հարց ու փորձով իմա-
ցա, վոր Բերդիչևի հրեյական մեծ ջարդից հետո, յերբ
նա կորցրել եր իր միակ վորդուն և յերկու աղջիկներին,
իր կնոջ հետ անցել եր սահմանը և, այսպես, մեկ յերկ-
րից մյուսն անցնելով՝ տեղավորվել եր Զմյուռնայում,

ուր ինքն ու կինը, յերկաթաթելերից զանազան հրշանակներ ու մկան՝թակարդներ են շինում և մի կերպ ապրում:

Պետք եր տեսնել և լսել, թե ի՛նչպես եր նա արցունքն աչքերին հարց ու փորձ անում Ռուսաստանի՝ իր հայրենիքի մասին, վոր այնքան սիրում եր, սիրո՛ւմ ջերմագին, վորտեղ այնքան դառն օրեր եր տեսել, տանջանքներ կրել:

Բայց հալածված եր, վորովհետև ցարական ռեժիմը չեր սիրում նրանց:

Նրան գարեջրով հյուրասիրեցի: Բայց մի՞թե կարող եյի գարեջրով վոչնչացնել նրան հասցրած վիրավորանքը, վոր հետո, ամեն մի միտս ընկնելիս, սիրտս եր խոցում:

Զմյուռնիայում Զարիֆյան ամուսինների ու դերասանուհի Դիանյայի հետ յես և կինս իջել եյինք մի մասնավոր տուն, վորի տերը մի պառավ հույն կին եր: Սենյակները նա մեզ շատ եժան գիջեց, յերբ տեսավ, վոր հետներս յերեք կին կա: Բայց միքանի օր հետո խնդրեց սենյակներն ազատել, պարզ ակնարկելով, վոր մեր կանանց մոտ հյուրեր չեն գալիս և խմիչք–բան չենք պահնջում, վոր ինքն ել մի բան աշխատի:

Հասկանալով, թե ի՛նչպիսի տուն ենք իջել, իսկույն ևեթ տեղափոխվեցինք «Պատրիս» հյուրանոցը: Բայց այստեղ ել առաջինի հակառակ մի դեպք պատահեց: Մի որ Արաքս Զարիֆյանը և կինս պատշգամբում կանգնած՝ նկատում են ափին մոտեցող մի շոգենավ, վոր շատ ծանոթ շոգենավի յեր նմանում. այդ շոգենավի նավապետը մեր ընդհանուր բարեկամն եր: Փողոցում կանգնած՝ հյուրանոցի տերը, վոր նույնպես հույն եր, նկատելով մերոնց, վոր հեռադիտակով դեպի ծովն են նայում, բարձրանում ե վեր և նրանց պատվիրում, վոր պատշգամբից հեռանան, պարզ ասելով, վոր իր հյուրանոցը բարոյական հյուրանոց ե:

Զմյուռնիայում նյութական մեծ հաջողություն չգտանք: Մեր ժամանակ «Սպորտինգ–կլուբում» հունական օպերետի շատ վողորմելի մի խումբ եր խաղում, վորի ներկայացումներին սրահը լիքն եր լինում հայ մե-

ծահարուստներով: Մեր հաճախորդները դարձյալ արհեստավորները, ծառայողները և ուսուցիչներն եյին: Վատ չեյին գնում մեր ներկայացումները. մեր ռեպերտուարում բավականին մարզված եյինք, և ներկայացումները կոկ եյին գնում: Զարիֆյանը դուր յեկավ, բայց և այնպես նյութականը շատ եր կաղում:

Վերադարձանք Պոլիս և միացանք նրանց խմբին— յես և Ովի Ահարոնյանը՝ առճիկով, իսկ Զարիֆյանը մտավ. անտրեպրիզի մեջ, ու խմբի ֆիրման դարձավ ռուսահայ «Աբելյան–Արմենյան–Զարիֆյան միացյալ Թատերախումբ»: Այս խմբի գործունեյությունն ել շատ չտևեց, վորովհետև հակահրշեջ միջոցները բացակայելու պատճառով քաղաքապետությունը բոլոր թատրոնները փակեց:

Բացի «Աբելյան–Արմենյան–Զարիֆյան» խմբից, վոր «Պտի–Շան» թատրոնում եր խաղում, Սիրանուշի ղեկավարությամբ մի ուրիշ խումբ ել, վորի անդամները ռուսահայ ու պոլսահայ դերասաններ եյին՝ «Վարիետե» թատրոնումն եր խաղում: Ռուսահայերից Ստեփանյանն, Անդրանիկն ու Ազնիվն եյին:

Այս խումբը մի անգամ «Համլետ» եր խաղում: Գնացի նայելու: Համլետի դերը Սիրանուշն եր կատարում, Լայերտինը՝ Վահրամ Փափազյանը, այնքան հրաշալի, վոր աչքերիս չեյի հավատում. մի՞թե սա Բագվա մեր անփորձ Թարդին ե...մտածում եյի: Ինչ վոր ե, յեկավ մենամարտի տեսարանը, և հազիվ համբերություն ունեցա տեղս նստելու, մինչև վոր վարագույրն իջնի: Իսկույն վազեցի կուլիսների հետևն ու նրան բռնելով՝ ճակատը համբուրեցի. այնքան նա լավն եր, այնքան սքանչելի այդ տեսարանում:

Մեր խումբը շատ մեծ եր և դժվար եր միասին շարժվելը, ուստի բաժանվեցինք յերեք մասի. մի մասն Արմենյանն առավ և անցավ Զմյուռնիա, մյուս մասը Բերոյանի ղեկավարությամբ գնաց Վան, Սվազ, Մուշ, իսկ մեծ մասն Աբելյան–Զարիֆյանն առճիկով տարան Իզմիդ, Պարտիզակ, Ադաբազար, Եսկիշեհիր և Ռոդոսթո: Խմբի մեջ եյինք՝ Մանվելյանը, Ովի Ահարոնյանը,

Արարատյանը, Արաքս–Զարիֆյանը, Արուսյակը, Սոֆիկը, Սարգսյանը, յես և ուրիշները։

Պարտիզակում «Տրիլբի» եյինք խաղում. դաշնակահարուհու պետք ունեյինք, բայց չեր ճարվում։ Վերջը մեզ հայտնեցին, որ «հանգիստ ըլլանք», յերեկոյան

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ

մի լավ նվագող օրիորդ կբերեն։ Ցերեկոյան ներկայացման ժամանակ Սվենգալի–Աբելյանը նստեց կեղծ դաշնամուրի առաջ և սկսեց նվագել Շուբերտի «Ռոզամունդան», և բեմի հետևից լսվեց իսկական դաշնամուրի վրա նվագվող «Боже царя» հիմնը... Այդ «լավ նվագող» օրիորդն եր նվագում։ Թե ինչ կատարվեց

մեզ, բեմի վրա յեղողներիս հետ, անկարելի յե նկարագրել։

1909–10 թատերաշրջանին Թիֆլիսի դրամատիկ ընկերությունը շատ մեծ ճգնաժամի մեջ եր. թե ինչ պիտի աներ, ինքն ել չգիտեր։ Երբ մի քանի «սըրտացավ» անձնավորություններ և հիմնարկություններ մի փոքրիկ գումար տվին, նա մի փոքր կենդանություն առավ և վճռեց անպայման խումբ պահել։ Ոլգա Մայսուրյանն իր շուրջն է հավաքում՝ Գուլազյանին, Զարեհին, Մելիքյանին, Համբիկին, Ալիխանյանին, Ալլահվերդյանին, Աղայանին, Մամիկոնյանին, Միրզոյանին, Հարությունյանին, Շահխաթունուն, Վոսկանյանին և վարչության հետ պայմանավորվելով, սկսում է ներկայացումները՝ ինքը կատարելով ռեժիսյորի պաշտոնը։ Չնայած որ ժամանակ չեյին ունեցել ռեպերտուարի մասին մտածելու, այնուամենայնիվ թատերաշրջանի ընթացքում ինքնուրույն պիեսներից առաջին անգամ բեմադրվեցին՝ Ս. Թառայանի, «Ազրայիլ»–ը, Գ. Սունդուկյանի, «Սեր և ազատություն»–ը, Մ. Մանվելյանի՝ «Դեպի փայլող լույսը»— Ա. Ահարոնյանի «Ուխտավածներ»–ը։

Մյուս սեզոնին Թիֆլիսի Դրամատիկ ընկերությունը, դերասանների շատերի բացակայության պատճառով, ընդհանրապես շատ անելանելի դրության մեջ եր ընկել, և յերբ Պոլսից վերադարձանք, մեզ բոլորիս հրավիրեց և 1910–11 թատերաշրջանի համար խումբ կազմեց։ Խմբի մեջ եյին՝ Զարեհը, Գուլազյանը, Դուրյան–Արմենյանը, Ժամինը, Սաթենիկ–Աղամյանը, Մայսուրյանը, Արաքս–Զարիֆյանը, Համբիկը, Աշխենը, Աբելյանը, Արմենյանը, Ալիխանյանը, Արաքսյանը, Ալլահվերդյանը, Մամիկոնյանը, Շահխաթունին, Հարությունյանը, Ավետյանը, Զարիֆյանը, Լաքան և ուրիշները։ Նոր պիեսներից բեմադրեցինք՝ Շիրվանզադեյի «Արմենուհին», Հ. Աբելյանի «Արան ու Շամիրամը», Մ. Գևորգյանի «Փառանձեմ»–ը և Ս. Թառայանի «Սոկրատ»–ը։

Խմբի ռեժիսյորն Ա. Արմենյանն եր։

Այս թատերաշրջանին յես հրավիրված եյի նաև

Թիֆլիսում գործող Թուրքյանց խումբը՝ ռեժիսյորի պաշտոնով: Սրանց ներկայացումների շարքը բացելու համար, առաջին անգամ բեմադրեցի տաճիկ-հեղափոխական գրող Շամսադին—Սամի-բեյի «Դարբին Գյավեն» վոր միքանի անգամ կրկնվեց: Այդ պիեսն իմ թարգմանությամբ և իմ ռեժիսյորությամբ բեմադրըվեց նույն Թատերաշրջանին՝ Զուբալովի անվան ժողովրդական տանը գործող հայկական սեկցիայի խմբի կողմից:

Թուրքյանց խմբերում յես դրանից առաջ էլ եմ աշխատակցել, հետո էլ:

Հին դերասաններս սիրում եյինք ընկերական շըրջանում յերբեմն նաև մի քիչ կոնծարանությամբ զըրաղվել— լավ որերի ազդեցությունն եր այդ, թե վատ, չեմ կարող ասել, բայց փաստը մնում ե փաստ: Մենք ունեյինք մեր սիրած ճաշարանները, ուր մեզ սիրով եյին ընդունում և բավականին էլ զեղչ անում: Այդպիսի մի ճաշարան շատ առաջները Թիֆլիսում՝ Քվաշվեթի վրայ յեկեղեցու դիմաց ունեյինք, վորի տերը մի գերմանացի յեր: Այդ ճաշարանը «Պետերբուրգ» եր կոչվում, ուր յես, դեռ շատ յերիտասարդ դերասանս, տեսել եմ Ռաֆֆուն, Պռոշյանին, Ղազարոս Աղայանին և շատ գրողների, ու հետները ծանոթացել:

Մեր հին գրողներից շատ շատերը թատրոնի սիրահարներ չեյին: Որինակ՝ Ռաֆֆին իր կյանքում և վոչ մի անգամ թատրոնում չի յեղել: Ղազարոս Աղայանն էլ հազարից մի անգամ եր լինում: Վերջերը մի ընտանիքում հյուր յեղած ժամանակ յես նրան հարցրի, թե ինչո՞ւ չի փորձում ժողովրդական կյանքից մի պիես գրել, յերբ նա այնքան լավ ե ճանաչում ժողովրդին, նրա նիստուկացը, նրա առորյան... Նա պատասխանեց, թե պիես գրելն իրա բանը չի, իրեն համար դժվար բան ե, շնորհք չունի ու թատրոնից շատ քիչ բան ե հասկանում: Պերճ Պռոշյանը, վոր իր յերիտասարդության ժամանակ, հայկական թատրոնի սկզբնավորման շըրջանում ջերմ աջակցություն ե ցույց տվել, թատրոնի հիմնադիրներից մեկն ե յեղել ու ներկայացումներին շարունակ մասնակցել, ծերության որերին կարծես

թատրոնից խռոված լիներ ու ներկայացումներին շատ քիչ եր գալիս: Հետագա գրողներից շատերին եմ դիմել և խնդրել պիես գրեն, բայց բոլորն էլ մերժողական պատասխան են տվել—վորն իր անկարողությունն եր առաջ բերում, վորը՝ թատրոնի ծանոթ չլինելը, իսկ մեծամասնությունը պատճառ եր բերում, թե շահավետ աշխատանք չի:

Ունեյինք նաև Հակոբ-աղայի տաճկական ճաշարանը, ուր մեզնից զատ հավաքվում եյին բոլոր մշակականներն ու նորդարականները և շարունակ վիճում և յերբեմն էլ մեկ մեկու վիրավորում, իհարկե՝ խոսքերով: Ունեյինք նաև «Պուր-դվինո» ճաշարանը, ուր հավաքվում եյինք վրացի և հայ դերասաններս: Վերջերս էլ ունեյինք Ավետիքի հռչակավոր «Ոլիմպիա» գետնափոր ճաշարանը, ուր թատրոնի ջերմ բարեկամ, այժմ հանգուցյալ Ավետիքը մեզ սրտաբաց ընդունում և առատորեն հյուրասիրում եր: Նա մինչև անգամ, ի սեր թատրոնի, իր զավակների անունները դրել եր՝ Ոֆելիա, Դեզդեմոնա, Ռուզան (համանուն պիեսի հերոսուհու անունը):

Թատերաշրջանն ավարտելուց հետո, Աբելյանի ղեկավարությամբ և Արմենյանի ռեժիսյորությամբ, խըմբով գնացինք՝ Բագու, Նոր-Նախիջևան, Յեկատերինոդար, Արմավիր և Վլադիկավկազ: Նոր-Նախիջևան յեղած ժամանակներս Մոսկվայից հրավեր ստացանք և գնացինք, «Երմիտաժ» թատրոնում Շիրվանզադեյի «Պատվի համար»-ը խաղացինք ու վերադարձանք:

Թատերաշրջանի փակվելուն դեռ յերկու ամիս կար, բայց արդեն անհամբերության նշաններ եյինք ցույց տալիս,—«ա՛խ» անելով, վոր շուտ հասնի այդ փակումն ու ճանապարհվենք: Թափառական կյանքը շատ եյինք սիրում և հասկանալի յե թե ինչո՞ւ. Նոր քաղաքներ, նոր տպավորություններ, յեռուն աշխատանք, ամենորյա ներկայացումներ և վոչ թե Թիֆլիսի ու Բագվի նման շաբաթը յերկու, շատ, շատ յերեք ներկայացում: Գործը մերն եր լինում, ամենքս էլ շահագրգռված եյինք և աշխատում եյինք գործի հաջողության համար, աշխատում եյինք առանց հոգնածու-

Թյուն զգալու: Թատերաշրջանը փակվելուց յերկու ա-
միս առաջ, խմբի գլուխ կանգնածներս նստում ռեպեր-
տուար էյինք կազմում՝ ամենաշատը տասը պիեսից և

1910 ԹՎ. Հ. ԱԲԵԼՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՇՐՋԻԿ ԽՈՒՄԲԸ

ապա, ըստ պիեսների, դերասաններ հրավիրում, փոր-
ձեր նշանակում, փորձեր անում, նամակներով, հեռա-
գրերով Թատրոններ վարձում և Թատերաշրջանը փակ-
վելուց, իսկույն հետ ճանապարհվում:

Այն քաղաքներում, ուր գաստրոլների էյինք գնում,

մինչ շրջապատված էյինք լինում, նախ՝ ուսուցչական
խմբով և ապա՝ Թատրոնի ջերմ բարեկամներով: Մեզ
սիրում, հարգում մեր հաջողությամբ իրենք էլ էյին
ուրախանում: Նրանք ավելի էյին ուրախանում, յերբ
լավ մուտքեր էյինք անում: Մեր ամեն մի գավառական
քաղաք գնալն այդ քաղաքներում տոնի յեր փոխվում:
Ամբողջ խոսակցությունը մենք էյինք, մեզնով հրճվում,
մեզ հրավիրում էյին տները, հյուրասիրում, բանկետ-
ներ սարքում: Այդ ամենը մեզ շատ եր վոգևորում, և
պատճառներից մեկն էլ այդ եր, վոր գավառներն ավելի
էյինք սիրում, քան Թիֆլիսն ու Բաքուն: Բնականա-
բար, Թատրոնի այդ բարեկամներն ուսուցիչները, ին-
տելիգենցիան, բանվորությունը և ուսանողությունն
եր, բայց վոչ յերբեք հարուստները, վոր մեզ հետ պա-
տիվ չէյին համարում շատ էլ մոտ հարաբերություն
ունենալ:

1910 Թ. մայիսի 2-ին վրաց և հայոց Դրամատիկ
ընկերությունների նախաձեռնությամբ կատարվեց
Գեդեոն Միրաղյան-Գեղեվանովի բեմական գոր-
ծունեյության քսանհինգամյա հոբելյանը:

Գեդեոն Միրաղյանը ժամանակին հայտնի դերա-
սան Միրաղյանի փոքր յեղբայրն եր, ծառայել է
հայ բեմին, բայց ավելի շատ՝ վրաց բեմին: Բազմա-
կողմանի դերասան եր, կատարում եր և՛ հերոսների, և՛
կոմիկների, և՛ քարակտեր դերեր: Վրացերենից հայե-
րեն բավականին պիեսներ է թարգմանել: Մեռավ 1919
թվի հունվարի 14-ին՝ Թիֆլիսում, բծավոր տիֆից:

1911-12 Թատերաշրջանին գործկալ Դրամատիկ
ընկերության խմբումն եմ, վորի մեջ էյին՝ Սիրա-
նույշը, Մայսուրյանը, Համբիկը, Գուլազյանը, Ժամի-
նը, Խանդանյանը, Զաբելը, Սաթենիկ-Աղամյանը,
Աբելյանն ու Սևումյանը, վորի առաջին բեմադրություն-
նը, Լաքան, Ղազարյանը, Մանվելյանը, Մամի-
կոնյանը, Միրզոյանը, Հարությունյանը, Շահխաթու-
նին, Սևումյանը, Փիրումյանը, Տեր-Առաքելյանը, Ա-
վետյանը և ուրիշները: Հերթական ռեժիսորներն էյին
Աբելյանն ու Սևումյանը, վորի առաջին բեմադրությու-
նը Համսունի «Կյանքի ճանկերում»-ը, շատ հաջող եր, և
մամուլն այդ բեմադրության մասին մեծ գովասանքով

արտահայտվեց: Սևումյանն առաջինն եր հայ բեմի վրա, որ, շաբլոնը դեն դրած՝ բեմադրությունների մեջ նորություն ու թարմություն մտցրեց: Նրա բեմադրած պիեսներում ամբոխն ապրում եր, բայց ափսոս

ԳԵԴԵՈՆ ՄԻՐԱՂՅԱՆ

ձեռքերը կապված եյին—Դրամատիկ ընկերությունը դեկորների վրա ծախս անել չեր սիրում, զգեստներից զատ, ընդհանրապես ոչ մի բանի վրա փող չեյին ծախսում, և Սևումյանը ստիպված մտնում եր Արտիստիկ թատրոնի դեկորներով լեփ-լեցուն նկուղները՝ պահեստները և հարմար կտորները հանելով, միմյանց գցում ու ճաշակով բեմ հարդարում:

Հազա՛ր ափսոս՝ շուտ մեռավ, և հայ թատրոնը կորցրեց հեղափոխական մի լավ ռեժիսյոր:

Յես 1920 թվին Բաթումում եյի գտնվում, Պոլսից միշտ նամակներ եյի ստանում նրանից: Այդ նամակնե-

րում նա ոգևորված նկարագրում եր այն նոր թատրոնը, կոլեկտիվիստական թատրոնը, որին ինքը ձեռնամուխ պիտի լինի: Նա մտադիր եր Պոլսից իր հետ յերիտասարդ դերասաններ բերել և այստեղից ել մերոնցից վերցնելով ամենայեռանդուն, աշխատասեր և շնորհալի դերասաններին՝ նոր հիմունքներով, նոր ոգով, ընտրովի ռեպերտուարով մի մեծ խումբ կազմել, դեն ձգել հինն ու բորբոսնածը և ստեղծել մի նոր թատրոն: Նրա նամակները լիքն եյին այդ նոր թատրոնի մեթոդի, ձևի, գաղափարի նկարագրություններով և միաժամանակ այն տանջանքներով, որ նա կրում եր անկողնում անգործ պառկելուց: Բայց և այնպես նա հույս ուներ, որ կառողջանա, կվերադառնա և կիրագործի իր յերազածը: Յես ել եյի ոգևորվել և իմ նամակներով թև եյի տալիս նրան, պատվիրելով չհուսահատվել, բժիշկների պատվերներն ուշիուշով կատարել և շուտ առողջանալ: Վերջին նամակիս պատասխանին եյի սպասում, որ մի առավոտ, հասցեն ինձ անծանոթ մեկի ձեռքով գրած, մի ծրար ստացա: Բացեցի: Միջից չորացած ծաղիկներ թափվեցին. սկզբում բան չհասկացա, բայց յերբ կարդացի, արդեն իմացա յերիտասարդ ընկերոջս մահվան տխուր բոթը: Նամակը դերասանուհի Վարդիթեր Փելեկյանն եր գրել, որի ձեռքին ել հոգին ավանդել եր խեղճ Ովին: Ծաղիկները նա նրա դագաղից եր վերցրել և դրել ծրարիս մեջ:

Նրա թաղումը Պոլսում մի արտասովոր, չտեսնված շուքով ե յեղել: Պոլսո ամբողջ մտավորականությունը, յերիտասարդությունը, դերասանական խմբերը մինչև Շիշլիի հայտնի գերեզմանատունն ուղեկցել են նրա դագաղին: Հունաց մի զորախումբ ել, իբրև պատվո պահակ, հետևել ե դագաղին:

Դաշնակների տիրապետության ժամանակ Յերևանի միակ քիչ թե շատ հարմար թատրոնական դահլիճը (այժմյան Պետթատրոնի շենք) վեր եր ածվել պարլամենտի. մշտական խումբ չկար, իսկ պատահական ներկայացումներն ել քիչ եյին լինում: Մեր դերասաններից մեկի՝ Ղազարյանի հետ պատահած դեպքից հետո, մեծամասնությունը վախենում եր Յերևան գնալ, մանավանդ դերասանուհիները:

Դեպքն այսպես է յեղել. Ղազարյանի և իր ընկերների հետ տրվող մի ներկայացման մի քանի սրիկաներ գալիս են և ուզում առանց տոմսի ներս մտնել: Յերբ նրանցից, հենց դռան առաջ կանգնած Ղազարյանը, տոմս է պահանջում, նրանք սպառնում են և, իսկապես, մյուս օրը հենց բուլվարի մոտ, յերեկոյան 10-ին նրան բռնում և ատրճանակը դեմ են անում ճակատին՝ սպառնալով թե իսկույն ևեթ պիտի սպանեն: Իրենց սպառնալիքը նրանք գուցե և կատարեյին էլ, յեթե Ղազարյանի բաղդից մի ընդհանուր ծանոթ չպատահեր և առաջը չառներ:

Ամբողջ մի հանրապետություն և վոչ մի թատրոն, Սևումյանի պես մեկի համար այդ շատ աննորմալ յերևույթ եր: Յերկար մտածմունքներից հետո նա դիմում է.

«Հայաստանի Հանրապետության Ժողովրդական Լուսավորության և Գեղարվեստի պարոն մինիստրին.

Մեծարգո՛ պարոն Մինիստր.

Այն անկումը, վոր ապրում է ներկայումս հայ Դրամատիկ թատրոնը, չի կարող մտահոգություն չպատճառել այն անձանց, վորոնք գիտակցում են, թե վորքան նշանակալից դեր է կատարել հայ թատրոնը մեր անցյալ կուլտուրական կյանքում և չի կարող անկեղծորեն չվշտացնել նրանց, վորոնք յերկար տարիներ նվիրված են յեղել մաքուր արվեստին, վորոնք սիրել են հայ թատրոնը և հանուն այդ վեհ գործի, տարել են ամեն տեսակի զրկանքներ, աշխատել են միշտ բարձր պահել գեղարվեստի դրոշակը և բեմը չստորացնել մինչև անձնականության բավարարման ստորիճան:

Յես չեմ ուզում այժմ քննության առնել կամ վորոնել այն պատճառները, վորոնց շնորհիվ մեր թատրոնում ստեղծվել է մի տարորինակ, քաոսային մթնոլորտ: Չեմ էլ ժխտում, վոր ներկայումս հայ բեմն ունի բավականին պատկառելի բեմական գործիչներ և նույնիսկ խոշոր արտիստներ: Յես միայն հաստատում եմ այն փաստը, վոր այսոր մենք ականատես ենք հայ թատրոնի չափազանց անմխիթար վիճակին: Մեծ հույսեր տա-

ծելով դեպի մեր թատրոնի պետականացման փրկարար ազդեցությունը, այնուամենայնիվ յես շատ լավ գիտակցում եմ, վոր այդ պետականացումը շատ լուրջ խնդիր է և կապված է այնպիսի մանրամասնությունների հետ, վորոնք ի կատար ածելու համար ներկայումս մենք նույնիսկ տեխնիկական հնարավորություն չունենք: Ուստի, վորպեսզի թատրոնական կյանքը գոնե կանգ չառնի, անհրաժեշտ է յեղած ուժերը հրավիրել և գործի ձեռնարկել:

Իմ առաջին զեկուցման մեջ, վոր հրատարակված է առանձին գրքույկով դեռ 1913 թվին, այն ժամանակվա քաղաքական որենքների համաձայն, յես մանրամասն խոսել եմ գործի կազմակերպության և անհրաժեշտ բարեփոխությունների մասին: Այնտեղ յես կանգ եմ առել և Դրամատիկական ստուդիայի վրա, վոր, իմ կարծիքով, շատ գործ ունի կատարելու մեր թատրոնում: Դրամատիկական ստուդիան ներկայումս այն հիմնարկությունն է լինելու, վոր ժողովելու յե իր շուրջը արևելահայ և Արևմտահայ բեմական յերիտասարդ ուժերը, վորոնք ուսուցիչների և ստուդիայի ռեժիսյորի ղեկավարությամբ անցնելու յեն բեմական արվեստը:

Արվեստի զարգացման և մեր բեմի վերածնության համար, յես շատ մեծ նշանակություն եմ տալիս յերիտասարդ ուժերի թարմ հոսանքին, մեծ հույսեր եմ տածում այդ գալիք սերնդի առողջ աշխատանքին:

Մեր թատրոնի պատմությունը և տարիների վորձառությունն ինձ ասում են, վոր մենք պետք է լուրջ ուշադրություն դարձնենք արևմտահայ բեմական ուժերի վրա: Յես շատ լավատես եմ դեպի արևմտահայ ուժերն ընդհանրապես, իսկ մասնավորապես՝ նրանց ճարտասանությունը, հայերեն լեզվին լավ տիրապետելը, շարժ ու ձևերը և այլ նման ընդունակություններով ոժտված լինելը,—մի գրավական են, վոր նրանցից շուտով կմշակվեն կանոնավոր բեմական ուժեր: Իմ ստացած տեղեկություններից յերևում է, վոր Պոլսում ներկայումս հավաքված են բավական թվով յերիտասարդ ուժեր:

Նույնպիսի յերիտասարդ ուժերի թարմ հոսանք

նկատելի յե և այստեղ: Ասել ե՝ առաջ ե գալիս նոր սերունդը, այն նոր սերունդը, վորի մասին մենք միշտ մտածել ենք, վորի վրա մեծ հույսեր ենք դրել: Սակայն չպետք ե մոռանալ, վոր այդ նոր սերունդն այսոր դեռևս միայն հում նյութ ե, պիտանի, ընդունակ տարր, բայց դեռևս հում, վոր պետք ե ժողովել, խնամել և կանոնավոր ուղղության յենթարկել:

Քանի վոր մեր թատրոնի պետականացումն այս տարի հնարավոր չպիտի լինի, մնում ե, վոր, ամենից առաջ՝ յեղած ուժերից մի կանոնավոր խումբ կազմվի Հայաստանի համար, ապա՝ վորովհետև արվեստի ազգայնացման և բեմի վերածնության համար այնքան նշանակություն ենք տալիս յերիտասարդ ուժերի թարմ հոսանքին, պետք ե անմիջապես ձեռնարկվի արևմտահայ և արևելահայ յերիտասարդ բեմական ուժերի կենտրոնացումը: Ցեվ այդ կենտրոնացումը պետք ե կատարվի ըստ կարելույն շուտ, նախ՝ վորպեսզի այդ ուժերը ցիրուցան չլինեն և հետո՝ լինելով անփորձ և գործելով ինքնագլուխ, առանց վորևե ուղղության և ղեկավարության,—չփչանան:

Ցես առաջարկում եմ իմ ծառայությունները—անմիջապես մեկնել Պոլիս, ժողովել այնտեղ յեղած ընդունակ տարրը և տեղափոխել Ցերևան: Այսպիսով միացնել արևելահայ և արևմտահայ սկսնակ ուժերը և ապա ձեռնարկել Դրամատիկական ստուդիայի հիմնելու գործը:

Ցեթե դուք, պարո՛ն մինիստր, ցանկաք անձամբ լսել իմ բանավոր մանրամասն զեկուցումը մեր թատրոնի արդի դրության մասին, յես պատրաստ եմ ձեր առաջին պահանջման, անմիջապես մեկնել այստեղից և ձեզ ներկայանալ:

Դերասան—ռեժիսյոր՝ ՍԵՎՈՒՄՅԱՆ

30 հուլիսի 1919 թ.
Թիֆլիս»:

Դրական պատասխան չստանալով, նա ինքը ցանկացավ իր ուժերով գլուխ բերել այդ ամենը:

Ովի Սևումյանը կրթված եր. նա քաջ ծանոթ եր թե

գեղեցիկ և թե թատրոնական գրականության: Նա ամենայն ուշադրությամբ հետևում եր ռուսական ռեպերտուարին. մասնակցել ե Մոսկվայում կայացած ռեժիսյորների համագումարին, մի քանի անգամ Մոսկվայե գնացել թատրոնական արվեստի մեջ կատարելագործվելու և այս ամենը նա արել ե իր սեփական սուղ միջոցներով:

Ցե՛րբ էլ մտնեյիր նրա սենյակը, նրան գրքերով

ՈՎԻ ՍԵՎՈՒՄՅԱՆ

շրջապատված և պարապելիս կգտնեյիր. մի րոպե չէր կորցնում և շարունակ ինքնազարգացմամբ էր զբաղվում: Ցեթե նա վորևե պիես բեմադրելու լիներ, հենց առաջին փորձին թատրոն եր գալիս արդեն պատրաստի միզանսցեններով, վորոնց մասին նա արդեն մտածել, և առաջուց մշակել եր:

Իբրև մարդ, վերին աստիճանի ընկերասեր եր, մեծ սիրտ ուներ, բարի սիրտ...

Այս թատերաշրջանին՝ նոյեմբերի 21-ին կատարվեց տիկին Զաբելի յերեսնամյա բեմական գործունեյության հոբելյանը:

Տիկին Զաբելը Բիթլիսցի յեր, ծնվել էր մի չքավոր ընտանիքում: Հետո՝ Նոր-Նախիջևանում մի վաճառականի մոտ վորդեգիր էր: Գիմնազիան ավարտելով՝ մի քանի անգամ բեմ է դուրս գալիս այնտեղ գտնվող դերասան Ֆասուլաջյանի խմբի հետ, վորի մեջ էր նաև Պետրոս Ադամյանը: 1881 թվին Թիֆլիս տեղափոխվելով՝ նա նորից հանդիպում է Ադամյանին և, միանալով նրա խմբին՝ ընդմիշտ նվիրվում է բեմին: Շատ բարե-

ԶԱԲԵԼ

խիղճ և շնորհալի դերասանուհի յեր նա: Ադամյանի ռեպերտվարում նա գլխավոր դերերն էր կատարում, իսկ վերջերս, ծերանալով, խաղում էր պառավ կոմիկ և պառավ դրամատիկ դերեր:

Հրեյա գրող Գորդինը, վորին նոր ժամանակվա Շեքսպիր էյին անվանում, մի քանի պիես էր գրել՝ «Ովկյանոսից դենը», «Միրրա-Եֆրոս», «Սեր և մահ», «Սատանա», «Հիմար» և այլն... Այս բոլոր պիեսներն

էլ թարգմանված էյին ու խաղացվում էյին ռուսական բոլոր թատրոններում և ամենուրեք մեծ հաջողություն էյին գտնում: Այդ պիեսները մեզ մոտ էլ էյին գնում և չուրջ յերեք տարի մեր բեմից չէյին իջնում: Հանգուցյալ Զաբելն ու յես, կարծես թե դիտմամբ, այդ պիեսներում միշտ ամուսիններ էյինք և կոմիկական առաջնակարգ դերեր ունեյինք: Հասարակությունը սովորել էր մեզ այդ դերերում միշտ միասին տեսնել, և մամուլն էլ մեր մասին խոսելիս միշտ գրում էր, «մըշտական զույգ Զաբելն ու Ավետյանը», «անբաժանելի ամուսիններ», «միշտ համակրելի զույգ»․ և այսպես անդադար...

Շատ լավ դերասանուհի յեր նա:

Վախճանվեց Թիֆլիսում, 1926 թվի հունվարի 12-ին:

Թատերաշրջանի ընթացքում բեմադրվեցին Շիրվանզադեի «Կործանվածը» և «Նամուս»-ը, Ահարոնյանի «Պատրանքներ»-ը:

Այս պիեսի շուրջն ահագին աղմուկ բարձրացավ: Առաջին արարվածի մեջ ինձ մի դեր տվին, վոր բացասական մի խմբագրի տիպն էր տալիս: Ներկայացման գիշերը, իմ յելույթի ժամանակ, պարտերի առաջին շարքերից, ինչ վոր մեկը բարձր ձայնով բացականչեց․— «Համբարձում Առաքելյանն է՛»: Յերևի իմ գրիմով նրան էյի նմանում: «Մշակ» լրագրի խմբագիր Ալեքսանդր Քալանթարն ու Համբարձում Առաքելյանն այդ գիշեր թատրոնում չէյին—նրանք գնացել էյին Էջմիածին՝ կաթողիկոսական ընտրություններին: «Մշակ»-ի խմբագրությունից մի՛ մարդ կար թատրոնում, վոր ներկայացման մասին յերկու որ հետո գրած իր քննադատականում այդ մասին վոչ մի բառ չեր գրել, սակայն, յերբ «Тифлисский листок» թերթում մի քննադատական լույս տեսավ, վորտեղ իմ մասին գրել էյին, վոր իբր թե թատրոնի բեմը ապականում եմ, անձնական հաշիվներ մաքրելով մի պատկառելի մարդու, հայտնի խմբագրի հետ՝ նրա գրիմի տակ դերիս տալով ինչ վոր բացասական խմբագրի տիպ, այդ ժամանակ է միայն «Մշակ»-ի քննադատը գլխի ընկնում ու թարգմանում է «Тифлисский листок»-ի ամբողջ

հոդվածը և տպում «Մշակ»-ում: Բնականաբար, յես իսկույն ևեթ պիեսը տանում եմ խմբագրատուն, վորտեղ հանդիպում եմ հենց նույն գիշեր վերադարձած Հ. Առաքելյանին, վորին և ցույց եմ տալիս հեղինակի ռեմարկան՝ իմ կատարած դերի արտաքինի մասին, և խնդրում՝ իմ պատասխան նամակը տպել «Մշակ»-ում: Նամակս տպեցին, սակայն խմբագրությունը տակը ծանոթություն եր դրել, ուր պնդում եր, թե յես դիտմամբ եմ արել, և Դրամատիկ ընկերության վարչությունից պահանջում եր այդ գործը քննել և տալ իր կարծիքը: Իհարկե՝ Դրամատիկ ընկերության վարչությունը գործը քննեց և գտավ, վոր յես այդ բանը դիտավորյալ կերպով չեմ արել և վոչ մի բանով մեղավոր չեմ, վոր նմանվել եմ Հ. Առաքելյանին: Այդ մասին պիեսի բեմադրող բենեֆիցիանտ Ովի Սևումյանը նամակ տպեց «Մշակ»-ում՝ թե ինձ արդարացնելով և թե հեղինակի ռեմարկների համեմատ իմ արած գրիմը հաստատելով: Ինքը՝ Ա. Ահարոնյանը ևս Փարիզից յերկու նամակ տպեց, մեկը՝ «Մշակ»-ում, և մյուսը՝ «Հորիզոն»-ում, սակայն «Մշակ»-ը չհամոզվեց և իմ դեմ վոխ պահեց:

Թատերաշրջանից հետո գնացինք Բաքու, ուր դարձյալ այդ պիեսը բեմադրեցինք: Այդտեղ յես իմ գրիմը բոլորովին փոխեցի և, փոխանակ վաթսուն տարեկան ծերունու, յերեսուն տարեկան յերիտասարդի գրիմով բեմ դուրս յեկա, սակայն «Մշակ»-ի Բաքվի թղթակից Թումանյանը, վոր յերևի յերբեք չեր տեսել իր աշխատակցած թերթի խմբագրին, ներկայացման մասին «Մշակ»-ում իր գրած քննադատականում գրեց.— «Յերևի Գրիգոր Ավետյանի համար խրատ չեղավ Թիֆլիսի դասը, վոր Բաքվումն ել դուրս յեկավ բացասական դերի մեջ, մեր սիրելի խմբագրի գրիմով»:

8

Բաքվից անցանք Նոր-Նախիջևան, Արմավիր, Յեկատերինոդար և, ապա մայիսին՝ Յերևան, Ալեքսանդրապոլ և Ղարս:

Ղարսում ամբողջ խմբով մի հյուրանոց եյինք իջել: Ներկայացումն ավարտելուց հետո, յերբ տուն եյինք վերադառնում, հյուրանոցի սեղանատանը բոլորս միասին եյինք նստում և միասին ընթրում: Անեկդոտներին և սրախոսություններին վերջ չեր լինում. աշխատում եյինք, վոր կողմնակի մարդիկ չըմիանան մեզ, վորովհետև ընկերական սեղանի վրա շատ բաներ եյինք պատմում, վիճում ու ծիծաղում: Մի գիշեր կպանք Սիրանուշին և խնդրեցինք, վոր պատմի Տաճկաստանում և Յեգիպտոսում կատարած իր ճանապարհորդություններից, և նա սկսեց պատմել՝ տված պիեսներից, խաղացող դերասանների դերը փչացնելուց, լավ խաղալուց, զանազան քաղաքներում իրենց ունեցած հաջողություններից, անհաջողություններից, կուշտ ու սոված որերից: Մեծ հրճվանքով եր խոսում իրեն ընկերակցած հայտնի դերասաններ՝ Հոլասի, Թուրյանի, Ֆասուլաջյանի, Ջափրաստ-Հոր, Աստղիկի, Վարդովյանի և այլոց մասին, այնքան հետաքրքրական, այնքան գրավիչ եր պատմում նա, վոր մենք չնկատեցինք, թե ինչպե՞ս գիշերն անցավ ու արևը ծագեց: Նրան շատ խնդրեցինք, վոր ամենը գրի առնի, այդ գործում նրան ոգնելու համար մինչև անգամ մեր ծառայությունն առաջարկեցինք, վորովհետև նրա պատմվածքների մեջ դերասանների համար խրատական շատ բաներ կար: Նա խոստացավ, բայց մինչև որս ել վոչ մի գրվածք չի յերևում:

Ափսո՛ս:

Նա վախճանեց Յեգիպտոսի Կայիրե քաղաքում, 1932 թ. հունիսի 10-ին:

Մարտին Նոր-Նախիջևանից անցանք Մոսկվա և գաստրոլային մի քանի ներկայացում տվինք, ապա մի ներկայացում ել՝ Պետերբուրգում: Մոսկվայում, ի միջի այլոց, խաղացինք «Հայրենական տուն», «Մեդեյա», «Դավաճանություն», «Նամուս»: Մեր ներկայացումներին հրավիրված ռուս դերասանների համար, առաջին կարգից առաջ, յերեսունի չափ աթոռ եր դըրված: Մոսկվայի բոլոր թատրոնների առաջնակարգ դերասանները հետաքրքրվել ու գալիս եյին մեր ներկայացումներին: Սիրանուշը մեծ անուն հանեց: «Դավա-

ճանություն» պիեսի հեղինակ Սումբատով–Յուժինից, իր հասակից բարձր, թարմ վարդերի մի կողով նա ստացավ—«իմ առաջին Ջեյնարին» մակագրությամբ:

Նոր–Նախիջևանում «Լույս» անունով մի շաբաթաթերթ էր հրատարակվում: Այդ թերթը մեր ներկայացումների մասին գովասանքներով ու հիացմունքներով լի մի քանի հոդված տպեց:

Ժամանակին այդտեղ հմուտ սիրողներից կազմված մի խումբ էր գործում, վորի անդամներն արդեն ծերացել էին: Բայց նրանք մեզ միայնակ չէին թողնում. շարունակ մեզ հետ էին, մեզ փայփայում էին և յերբեմն էլ հայհոյում, յեթե վատ էինք խաղում: Իսկ վիպագիր Գևորգ Զուբարը, վոր հմուտ սիրող լինելով, տասը դերասանի պատասխան կտար—մեր նեցուկն էր, մեր պահապանը, մեր մոտիկ ու սիրելի ընկերը: Նոր–Նախիջևանի թատրոն, և առանց Գ. Զուբարի, անկարելի յեր յերևակայել:

Ամառը յերիտասարդ ուժերից մի փոքրիկ խումբ կազմեցի և տարա Շուշի և այնտեղ տվինք մի շարք ներկայացումներ՝ յեկամուտը հավասար բաժանելով բոլորիս վրա: Տեղական մամուլը մեծ գովասանքով էր խոսում մեր ներկայացումների մասին: Հասարակությունը վաթսուն և հինգ տոկոսով լցնում էր դահլիճը: Խմբի անդամներն էին՝ Արուսյակը, Անահիտը, Մարգոն, Զմշկյան քույրերը, Նարինյանը, Բերոյանը, Ալիխանյան Բ.–ն, Հայկազյանը, Թառլանյանը, Լաքան, և ուրիշները:

Ինչպես Մոզդոկն ու Ղզլարը, այնպես էլ Շուշին թատերասեր հասարակություն ուներ: Շուշու ամենահին բեմը հոգևոր դպրոցի դահլիճումն է յեղել կառուցված: Նրանից հետո բեմի յե վերածվում յեղած՝ նավթի մեծ ամբարը: Ամբարից հետո, Նիկիտ Խանդամիրյանն իր տան վերին հարկում մի հիանալի թատրոն էր շինել, վոր հայ–թուրքական ընդհարումների ժամանակ այրվեց: Այնուհետև, ամառային ժողովարանի դահլիճում բեմ սարքվեց, վորև ամեն տեսակ հարմարություն ուներ ներկայացումներ տալու համար:

Առաջին ներկայացումը Շուշում կայացել է 1873 թ. օգոստոսի 22–ին:

Հայ դերասանները Շուշին, իբրև թատերասեր հասարակություն ունեցող քաղաք, յերբեք աչքաթող չեն արել, ու միշտ էլ գոհ են հեռացել այնտեղից: Պ. Ադամյանը դեռ իր գործունեության սկզբնական շրջանում յեղել է այնտեղ և մի շարք ներկայացումներ տվել: Նրանից հետո Զմշկյան ամուսիններն են յեղել, իսկ Զմշկյաններից հետո, ամեն ամառ մեծ խմբեր են գնացել և շաբաթական յերեք–չորս ներկայացում տվել լեփլեցուն դահլիճի առաջ: Սիրանուշը, Աբելյանը, Պետրոսյանը, Մայսուրյանն իրենց խմբերով նույնպես միքանի անգամ յեղել են այնտեղ: Նիկիտ Խանդամիրյանի թատրոնը, վոր, շնորհիվ իր տիրոջ, աչքի յեր ընկնում իր սարք ու կարգով, իր մաքրությամբ, մանավանդ տիրոջ կողմից դեպի դերասաններն ունեցած սիրով ու հարգանքով—այս ամենը Շուշու Խանդամիրյանի թատրոնը դարձել էր մեզ համար մի ուխտատեղի, և ամեն ամառ շտապում էինք որ առաջ գնալ ու մեր սիրելի Նիկիտ Աբրամիչին տեսնել: Արտասովոր մի մարդ էր նա, յերկար ժամանակ Փարիզում էր ապրել և այնտեղից հետը բերել մաքրասիրություն, խստություն ու ճշտապահություն՝ դեպի ամեն ինչ և ամենքի վերաբերմամբ: Ծայր աստիճան իր ասածի տեր մարդ էր նա և իր ստեղծած թատրոնական պայմաններից վոչ մի կերպ չէր շեղվում: Օրինակ՝ յեթե մինչև ներկայացումն սկսելը սրահի վարձը չստանար, վոչ մի կերպ չէր թողնի, վոր վարագույրը բարձրանա և ներկայացումն սկսվի: Հասարակությունը յերբեմն ուշ էր հավաքվում, ուստի տոմսավաճառի մոտ այնքան դրամ չէր լինում, վոր վարձը տայինք, և դիմում էինք խորամանկության. մեզնից մեկը գնում—նրանից պարտք էր վերցնում այնքան, վորքան մեզ պետք էր լինում սրահի վարձը լրացնելու համար: Նա տալիս էր, չէր մերժում յերբեք: Այսպիսով՝ մեկի ձեռքով նրանից պարտք էինք վերցնում, իսկ մյուսի ձեռքով հենց այդ պարտք վերցրած փողը վերադարձնում էինք իրեն՝ վարձի դիմաց, վորից հետո և ներկայացումն սկսվում էր: Նա դերասանին չէր

մերժում և նեղ օրերին միշտ օգնության էր հասնում՝ դրամ փոխ տալով: Նա մեզ չափազանց շատ էր սիրում և ամեն օր դերասաններից մի քանի հոգի նրա մոտ ճաշի էյին հրավիրված լինում:

Շուշում յերեք հյուրանոց կար, վորոնցից մեկը պատկանում էր Մարդի Դաղայանին, վոր իր հյուրանոցի համար մեծ պատիվ էր համարում, յերբ դերասաններն իր մոտ էյին իջնում և ապրում: Սենյակները նա շատ եժան վարձով էր տալիս մեզ, մեզ համար ամեն տեսակ հարմարություններ էր ստեղծում, վոր մեզ հանգիստ զգանք:

Մի անգամ գնացի սափրիչի մոտ մազերս կտրելու: Սափրիչը, վոր յոթանասունից անց, Ծատուր անունով մի անձնավորություն էր, իմանալով վոր յես էլ դերասան եմ, սկսեց ինձ պատմել Պետրոս Ադամյանի մասին, և այդ ամենը նա պարծանքով էր պատմում: Ադամյանի՝ Շուշում յեղած ժամանակ, նա ամեն օր գնալիս է յեղել նրա յերեսը սափրելու:

Կային և ուրիշ հայաբնակ քաղաքներ, վոր չեյինք գնում, վորովհետև թատրոն հաճախող հասարակություն չունեյին և, բացի այդ, թատրոնին խորթ աչքով եյին նայում: Օրինակ՝ Շամախին: Չնայած, վոր այդ քաղաքը բավականաչափ ժողովրդական բանաստեղծներ ու գրողներ է տվել, բայց և այնպես այնտեղ տրված ներկայացումների թիվը մատերի վրա կարելի յե հաշվել: Աբելյանը, Շամախեցի լինելով հանդերձ, այնտեղ յերբեք չի յեղել: Միմիայն Հովսեփ Վոսկանյանն է մի անգամ գնացել այնտեղ սիրողների մասնակցությամբ մի քանի ներկայացում տվել:

1912/13 թվին, Բագվի կուլտուրական միության հսկողությամբ և Սիրանուշի ղեկավարությամբ, Բագվում ընկերական խումբ կազմվեց, և յես մտա այդ խումբը: Խումբը կազմում եյին՝ Սիրանուշը, Սաթենիկ Ադամյանը, Արաքս—Զարիֆյանը, Ստեփանյան—Ցարալյանը, Արուս—Վոսկանյանը, Ազնիվը, Փառանձեմը, Զարիֆյանը, Շահխաթունին, Միրզոյանը, Վոսկանյանը, Ուշտունի Բ.—ն, Անդրանիկը, Ովի Ահարոնյանը, Ավետյանը և ուրիշները:



1912—13 ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԻ ԲԱԳՎԻ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՈՒՄԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ Տ. ՍԻՐԱՆՈՒՇԻ

Թիֆլիսումն էլ Դրամատիկ ընկերությունը հրավիրելով դերասանուհիներ՝ Զաբելին, Արուսյակին, Գուլազյանին, Դուրյան-Արմենյանին, Մայսուրյանին, Համլիկին, Լյուսիին, Սոֆիկին, Մարիին և դերասաններ՝ Աբելյանին, Ալիխանյանին, Արմենյանին, Հարությունյանին, Մանվելյանին, Տեր-Առաքելյանին, Բերոյանին, Ղազարյանին, Վրույրին, Մամիկոնյանին, Մուրադյանին, Լաքային, Աղայանին և Փիրումյանին, կազմել էր իր խումբը:

Բագվում բեմադրեցինք յերեք ինքնուրույն պիես՝ Դաշտեցյանի «Հոր անցյալ»-ը, Ս. Թառայանի «Քրիստոսի փոխնորդը» և Լ. Շանթի «Հին աստվածներ»-ը:

Բոլոր կաֆեշանտանները և ճաշարանները բաց էին ուտող-խմողի և պոռնկության համար մինչև ուշ գիշեր, իսկ թատրոնները պարտավոր էին ուղիղ ժամը 12-ին փակ լինել, այն է՝ ներկայացումները վերջացնել ուղիղ ժամը 12-ին և վոչ մի րոպե ուշ: Հակառակ դեպքում՝ վոստիկանը բեմ էր բարձրանում և ստիպում արարվածի կիսին կամ վերջանալուն մոտ վարագույրն իջեցնել, և հասարակությունն ստիպված դուրս էր գալիս թատրոնից: Այդպիսի մի դեպք մեզ հետ պատահեց, 1912 թվի նոյեմբերի 10-ին. Համսունի «Կյանքի ճանկերում» պիեսն էինք խաղում. վերջին արարվածը հենց նոր էինք ուզում սկսել, վոստիկանը ներս մտավ և չթողեց վարագույրը բացել: Ստիպված՝ ներկայացումը կիսատ թողինք:

Այս թատերաշրջանին՝ 1912 թ. նոյեմբերի 21-ին, Մայիլյանների թատրոնում՝ Կուլտուրական Միության նախաձեռնությամբ կատարվեց իմ քսան հինգամյա բեմական գործունեյության հոբելյանը:

Այստեղ էլ ի դեպ է հիշել «Մշակ»-ի վոխակալության մասին: Ամառը՝ յերբ յես Շուշի էյի, կլուբի ընթերցարանում Համբարձում Առաքելյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արոր» ամսաթերթի ամառային միացյալ համարը մի որ ձեռքս ընկավ, վորի «ներքին տեսություն» բաժնի մեջ կարդացի վերևում հիշած խմբագրի գրիմով բեմ դուրս գալուս մասին, վերջն էլ

այս բառերը.—«և այս, իրեն դերասան հորջորջող պարոնը մտադիր է այս տարի հոբելյան կատարել. տեսնենք ի՛նչպես կկատարի»...

Յավ իրավ՝ յերբ բոլոր հայ և ռուս թերթերը հոբելյանից առաջ իմ մասին հոդվածներ, կենսագրականներ տպեցին ու լուսանկարս դրին, «Մշակ»-ը և վոչ մի տող իմ մասին չտպեց: Բագվի նրա աշխատակիցը, վոր իմ գործունեյության մասին դեռ մի ամիս առաջ էր ինձնից տեղեկություններ վերցրել, ապշել էր, թե ինչո՛ւ իր ուղարկած հոդվածները չեն տպում: Յես, ի հարկե, նրան վոչինչ չասացի և մտքումս ծիծաղում էյի նրա միամտության վրա:

Յեկավ հոբելյանիս որը: «Մշակ»-ի մեջ մի փոքրիկ հոդված լույս տեսավ, ուր գրված էր.—«քանի վոր հրապարակի վրա յե գրված նրա հոբելյանը, չենք կարող չշնորհավորել և չցանկանալ, վոր նա ապագայում մաքրի իր գործունեյության վրա ձգած արատը»:

Հոբելյանիս յերեկոյան կարգադրիչ տիկիններից մեկը, վորին մինչև հանդեսի սկսվելը հանձնում էյին բերած ընծաներն ու ուղերձները, այդ ամենն ընդունում և փակում էր արդուզարդի սենյակներից մեկում: «Մշակ»-ի աշխատակիցը ես, շքեղ կազմի մեջ դրած՝ մի ուղերձ է բերում, վրան վոսկյա տառերով տպված—«Մշակ»-ի խմբագրությունից»: Տիկինն ընդունում և դնում է մյուս ուղերձների մոտ, բայց մի ժամից հետո նույն անձնավորությունը գալիս է և ասելով, թե ուղերձի մեջ բան ունի փոխելու, հետ է խնդրում և տանում:

Այսպիսով՝ հանդեսին «Մշակ»-ից ուղերձ չստացա:

Դրամատիկ ընկերության թատերաշրջանը Թիֆլիսում փակվելուց հետո, մեծ պասին, այն է՝ 1913 թվի մարտ ամսին այնտեղի խումբը յեկավ Բագու, և յես միացա խմբին: Մի քանի ներկայացում տվինք, ի միջի այլոց, նաև Թիֆլիսում նրանց բեմադրած «Հին աստվածներ»-ը, վոր իր շքեղությամբ բոլորովին տարբերվում էր Բագվում մեր բեմադրածից: Ապա անցանք Աստրախան և այնտեղից՝ զատկին՝ Նոր-Նախիջևան, Արմավիր, Յեկատերինոդար և Բաթում:

«Հին աստվածներ»-ը շատ շքեղ և վերին աստիճանի

ճաշակով բեմադրել էր շնորհալի ռեժիսոր Ա. Արմենյանը:

Թիֆլիսի «Հին աստվածներ»-ի իշխանուհի Մայասուրյանը Բաքվի մեր իշխանուհի Սիրանուշից շատ թույլ էր, ինչպես և Թիֆլիսի Սեդան՝ Դուրյան-Արմենյանը՝ Բաքվի մեր Սեդա Սաթենիկ—Ադամյանից: Բայց

ԱՐՄԵՆ ԱՐՄԵՆՅԱՆ

Թիֆլիսի աբեղան՝ Ալիխանյանն անհամեմատ բարձր էր ու հիանալի, քան մեր աբեղան՝ Շահխաթունին:

Աստրախանում մեր ունեցած հաջողությունները չտեսնված բան էին: Միայն առաջին ներկայացման աֆիշն եյինք բաց թողել, բայց կասսան առաջին յերեք ներկայացման բոլոր տոմսերն արդեն ծախել էր, մինչդեռ մենք ինքներս էլ չգիտեյինք, թե յերկրորդ, յերրորդ և մյուս ներկայացումներին մեր ռեպերտուարից

վո՛ր պիեսները պետք է խաղայինք: Բաքվում յեղած ժամանակ մենք մտադիր չեյինք Աստրախան գնալու և չգիտեյինք թե մեծ պասի հինգերորդ և վեցերորդ շաբաթները վո՛րտեղ անցկացնենք: Բաքվում շարունակել չէր կարելի, վորովհետև մեծ պասի յերկրորդ և յերրորդ շաբաթները խաղալուց հետո, ստիպված պետք է լինեյինք չորրորդ շաբաթը, վոր խաղալ չէր կարելի, նստել և սպասել:

Ռուսական թատերական միությունն առանձին դիմումով հազիվհազ կարողացել էր նաև մեծ պասին խաղալու իրավունք ձեռք բերել, բայց այդ թույլտվությունը նա հետևյալ կերպ էր ստացել. մեծ պասի առաջին, չորրորդ և յոթերորդ շաբաթներին խաղալն արգելվում էր, իսկ յերկրորդ, յերրորդ, հինգերորդ և վեցերորդ շաբաթներին կարելի յեր:

Մեզ ոգնության յեկավ Տիրվանզադեն, վոր այդ ժամանակ Բաքվումն էր: Նա խորհուրդ տվեց Աստրախան գնալ: Ժողով գումարեցինք և վճռեցինք գնալ, մտածելով՝ ի՛նչ ուզում է թող լինի, գոնե ծախսը կհանենք: Բայց բանից դուրս յեկավ, վոր յոթ ներկայացում տալով մենք յերկու շաբաթվա ընթացքում ամբողջ ամսվա ռոճիկն աշխատեցինք ու, Բաքվից Աստրախան և Աստրախանից էլ՝ Սարատովի վրայով Նոր-Նախիջևան՝ ճանապարհածախսը: Դեռ հասարակությունից էլ, ծրարի մեջ դրված, հինգ հարյուր ռուբլի նվեր ստացանք, վոր և հավասար բաժանեցինք խմբի անդամների վրա:

Աստրախանցիները, վոր հայերենին լավ չեյին տիրապետում, ընդհանրապես՝ զարմանալի վոգևորվող և թատրոնասեր եյին: Յերկու տարի դրանից առաջ՝ Սիրանուշի առաջին այցին՝ խումբը Բաքու ճանապարհելու համար մի շոգենավ եյին վարձել, ահագին բազմությամբ մեջը լցվել և յերկու ձեռք փողային յերաժշտախումբ հետներն առնելով՝ մինչև Կասպից ծով ուղեկցել եյին Վոլգայի վրայով խումբը տանող շոգենավին: Ամբողջ ճանապարհին մի յերաժշտախումբը նվագը վերջացնելուց մյուսն էր սկսում:

Ամեն տեղ էլ «Հին աստվածներ»-ն ու «Նամուս»-ը,

վոր մեր ռեպերտուարի կենտրոնական պիեսներն էյին, անասելի հաջողություն էյին գտնում և մեծ մուտքեր տալիս: Պետք է ավելացնել, վոր խումբը շատ մեծ եր, և դերասանների մի մասը վոչ մի պիեսի չեր մասնակցում, բացի «Հին աստվածներ»-ից, իսկ «Նամուս»-ի մեջ միայն անխոս դերերումն էյին դուրս գալիս:

Այս անգամ Յեկատերինոդար գալով, իջել էյինք մի հայի մեծ հյուրանոց, վորի առաջին հարկումն եր գտնըվում նաև նրանց ճաշարանը: Բոլորս էլ այդտեղ էյինք ճաշում և ընթրում: Մի որ ներկայացումից հետո խմբով նստել և ընթրում էյինք. ներս մտավ մի անձնավորություն և մոտեցավ մեր հարևան սեղանին, վորի շուրջը յերեք հոգի էյին նստած: Հանգուցյալ դերասան Խաժակը, վոր նստած եր կռնակը դեպի նրանց ու բավականին մոտիկ, լսում է նրանց: Նրանք ռուսերեն էյին խոսում և մեկը հարց եր տալիս նորեկին, թե ինչո՞ւ չե այդքան ուշացել: Նորեկը, վոր հայ եր, պատասխանում է թե ինչ վոր հայ արտիստներ են յեկել, ինչ վոր սրիկաներ՝ Աբելյան, Ալիխանյան, Ավետյան և այլ յաններ ու ներկայացումներ են տալիս, ինքն էլ մի ուրիշի խելքով ընկավ ու գնաց և այդ պատճառով էլ ուշացավ: Խաժակը շուռ գալով, նրանց կամացուկ հայտնում է, վոր այդ «սրիկաներն» իր սեղանակիցներն են, թող բարի լինեն լուռ կենալ: Նորեկը կոպիտ կերպով պատասխանում է, թե վոչ վոք իրավունք չունի իրեն լռեցնելու և թույլ չտալու խոսել այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Խաժակը նորից է նրան նախազգուշացնում: Աբելյանը և մենք նկատելով, վոր սեղանի մյուս ծայրին ինչ վոր բան է կատարվում, հարցնում ենք Խաժակից և իմանում յեղելությունը: Աբելյանը կատաղած բարձրանում է տեղից, մոտենում նորեկին և նրան աթոռով միասին վերցնելով ձեռքերի վրա՝ տանում, դուռը բաց է անում, շպրտում փողոց ու վերադառնում իր տեղը: Շպրտվածի ընկերներն Աբելյանի հաղթանդամ իրանն ու բազուկները տեսնելուն պես լուռ ու մունջ վեր են թռչում և մի ակնթարթում դուրս փախչում, առանց կերած-խմածի փողն անգամ վճարելու:

Այս բանն ընթրողների վրա շատ վատ ազդեց, ճաշարանը կամաց-կամաց մաքրվեց: Մնացինք մենակ մենք և բավականին կուշտ ծիծաղեցինք իսկական սրիկային տված լավ դասի համար:

Այս թատերաշրջանին, բացի իմ հոբելյանից, յերեք հոբելյան ևս կատարվեց:

1913 թ. հունվար 11-ին Թիֆլիսում կատարվեց Պողոս Արաքսյանի քսանհինգամյակը:

Պողոս Արաքսյանը շնորհալի կոմիկ եր, բայց յերբեմն էլ սիրում եր շարժի մեջ ընկնել: Լավ յերաժիշտ եր,

ՊՈՂՈՍ ԱՐԱՔՍՅԱՆ

նվագում եր գոյություն ունեցող համարյա բոլոր գործիքների վրա: Կրթված անձնավորություն եր: Ռուսերենից բավականին պիեսներ եր թարգմանել: 1918 թ. ոգոստոսի 29-ին կաթվածից մեռավ Թիֆլիսում:

Նույն թվի փետրվարի 4-ին Թիֆլիսում կատարվեց նաև Արշակ Հարությունյանի քսանհինգամյակը:

Արշակ Հարությունյանը լավ դերասան լինելու հետ միաժամանակ լավ ել ընկեր եր և ամենքիս սիրելին: Ճարտար հռետոր եր նա: Սիրում եր նաև կոմիկական ճառեր արտասանել: Յերիտասարդ ժամանակը բանաստեղծ եր և իր բանաստեղծություններից մի ժողովածու յեր հրատարակել: Յերկար ժամանակ նա աշխատակցել է

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

պարբերականներին՝ նյութ ունենալով թատրոնը և վերջինիս կարիքները: Նրա հանգուցյալ հայրը թատրոնի կատաղի թշնամին եր և ամեն կերպ աշխատում եր վորդուն հեռացնել թատրոնից, բայց վերջը լսելով վորդու հաջողությունները՝ զինաթափ յեղավ և սկսեց թատրոն հաճախել:

Արշակը մեծ աջակցություն է ցույց տվել Թիֆլիսի Դրամատիկ ընկերությունը հիմնելու գործին:

Նույն թվի փետրվարի 13-ին Բաքվում տոնվեց հայ թատրոնի տատիկ Փառանձեմի յերեսնամյակը:

9

1913 թվի սեպտեմբերին Աբելյանը, յես և Վոսկանյանը միանալով՝ խումբ կազմեցինք և ճանապարհվեցինք Պարսկաստան: Յեղանք՝ Ենզելիում, Ռաշտում, Ղազվինում և Թեհրանում: Ենզելիում, հենց մեր առաջին ներկայացման գիշերը, յերկու ամուսիններ իրենց անվայել վարքի համար խմբից հեռացվեցին, և այդ հեռացված դերասանուհու յերկու դերն ինձ բաժին ընկան, այնպես, վոր ստիպված՝ «Նամուս»-ի մեջ Մարիամի և «Զար վոգու» մեջ Զարնիշանի դերերն եյի խաղում: Այս վերջին պիեսը Շիրվանզադեյի գրչին է պատկանում և առաջին անգամ Թիֆլիսում՝ 1912—13 թատերաշրջանին է խաղացվել:

Յերբ հասանք Ռաշտ, ուղղակի հյուրանոց գնացինք, բայց հյուրանոցի տերը, վոր մի հույն եր, խորհուրդ տվեց մեզ նեղություն չքաշել սենյակներում տեղավորվել, վորովհետև, միևնույն է, տեղացիները չեն թողնի, վոր հյուրանոցում մնանք և, իբրև յեկվոր հյուրերի, տանելու յեն իրենց տները—ըստ տեղական սովորության, նրանք յեկվոր հյուրերին յերբեք չեն թողնի, վոր նեղվի և պակասության մեջ ապրի:

Ճիշտ վոր այդպես ել յեղավ. մենք մեր վրայից ճանապարհի փոշին մաքրելը դեռ չեյինք վերջացրել, տեղացիներից մի քանի հոգի կառքերով յեկան և խմբի անդամներին, իբրև թանգագին հյուրերի, հրավիրեցին զանազան բնակարաններ: Աբելյանին, Վոսկանյան ամուսիններին, հանգուցյալ Խաժակին և ինձ վաճառականների ավագը տարավ իրենց տուն և յերեք մեծ սենյակ տրամադրեց: Շատ հյուրասեր մարդ եր. ամեն որ փորձի վերջին գալիս և խմբի բոլոր անդամներին իր մոտ ճաշի յեր տանում: Բացի մեզնից, ամեն ճաշի ու ընթրիքի նրա մոտ բավականին ուրիշ հյուրեր ել եյին լինում, վոր յերեսուն մղոն հեռավորության վրա գտնվող Ենզելիից եյին խմբով գալիս մեր ներկայացումներին: Բացի ճաշելուց ու ընթրելուց, նրանք մեր հյուրընկալի տանը նաև գիշերում եյին: Այս ամենի

պատճառը, բնականաբար, մեր հյուրընկալի չափազանց մեծ փառասիրությունն էր:

Ինձ ու Աբելյանին մի սենյակ էյին տվել, որի պատուհաններից յերևում էր մի շատ մոտիկ ու բարձր մինարե: Առավոտյան արևածագին շատ կանուխ և արևը մայր մտնելուց այդ մինարեյի կտրան, Թմբուկի ներդաշնակությամբ, յերկու շատ յերկար փողերի վրա մի տեսակ յեղանակ էյին նվագում, որով դիմավորում էյին արեգակի ծագումը և յերեկոյան ճանապարհ դնում արեգակին:

Առաջին օրերը մեր ականջների համար խորթ յերաժշտություն թվաց, բայց կամաց-կամաց այնքան սովորեցինք, որ հիացանք ու ամեն օր անհամբեր սպասում էյինք այդ յերաժշտության:

Արևպաշտության ժամանակներից մնացած մի սովորություն էր այդ՝ պարսիկների մեջ:

Ցերեսունութ տարի հետո նորից ընկա այն քաղաքը, որտեղ յես ծնվել էյի: Բնականաբար, յես շատ էյի ցանկանում տեսնել այն տունը, որտեղ ծնվել էյի: Իմ բախտից մեր խմբի համար վարձել էյինք մի ցրին, որի մայրը մորս կենդանության ժամանակ ինձ խնամել, փայփայել ու ծիծ էր տվել: Դիմեցի նրան, և նա ուրախությամբ տարավ ու ցույց տվեց այդ տունը, որտեղ ապրում էր նրա նոր տերը, որ մի պարսիկ էր: Յերբ ինձ ուղեկցող կինը նրան բացատրեց իմ այցի մասին, նա իսկույն համաձայնեց, բայց նախ՝ տանից հեռացրեց իր յերեք կանանց և ապա ինձ ներս տարավ և բոլոր սենյակները միառմի ցույց տվեց:

Հիշեցի մանկությունս, հիշեցի չարություններս:

Ռաշտի Թատրոնը, որ դպրոցի շենքումն էր գտնվում, օթյակներով ու պարտերով մի փոքրիկ ու հիանալի Թատրոն էր և բավականին լավ բեմ ուներ, բայց դեկորներն այն ժամանակվա համար բավականին աղքատ էյին: Յերևում էր, որ ղեկավարը Թատրոնի մարդ չէր:

Դատավորը, որ Ռաշտի ամենամեծ պաշտոնյան էր, համարյա շարունակ հաճախում էր մեր ներկայացումներին: Նրա գալուց առաջ իր ծառաներն էյին

գալիս, Թեյի պարագաները բերում և հատուկ սենյակում ամեն ինչ պատրաստում: Ապա գալիս էր նրա յերաժշտախումբը և սպասում նրա գալուն: Յերբ դատավորի գալու րոպեն մոտենում էր, իսկույն յերաժշտախումբը դուրս էր գալիս բակը և նվագում, մինչև նրա դահլիճ մտնելը: Նա նստում էր իր սեփական օթյակում, ուր շարունակ հյուրեր էր ընդունում դահլիճում նստած իր ծանոթներից և հյուրասիրում Թեյով ու քաղցրավենիքով: Խաղամիջոցներին յերաժիշտները զանազան յեղանակներ էյին նվագում, այնպես, որ յերաժշտախումբ վարձելու համար մենք փող չէյինք ծախսում. իսկ այնտեղ սովորություն էր, որ յերաժշտախումբը խաղամիջոցներին անպատճառ նվագի:

Դատավորն իր օթյակի համար կարող էր ոչինչ չվճարել, բայց իրեն առատաձեռն և վեհանձն ցույց տալու համար, շատ թե քիչ, մի որոշ գումար մեզ ուղարկում, և յերբեք պարտքի տակ չէր մնում:

Ահավասիկ մեր այնտեղ յեղած ժամանակվա դատավորը:

Ռաշտից գնացինք Ղազվին: Իջանք փոստի կայարանը, որ միաժամանակ և հյուրանոց էր, իսկ վերևի հարկում Թատրոնն էր: Այդ մեզ շատ դուր յեկավ, որովհետև հենց մեր սենյակներում էլ հագնվում, գրիմ էյինք անում և հետևի սանդուղքներով բարձրանալով՝ մտնում բեմ:

Հասարակությունը մեզ բուռն ոգևորությամբ ընդունեց, և ներկայացումներն անցան մշտական լեփ-լեցուն մուտքերով: Այդ ժամանակ այդտեղ, ռուսական զորք կար, որի սպաները խնդրեցին մեզ ռուսերեն մի ներկայացում տալ: Կտորներից ու վոդևիլներից բաղկացած մի յերեկույթ տվինք, որ նույնպես լիքը մուտք տվեց:

Այն հյուրանոցում, ուր մենք ապրում էյինք, խմելու ջրի համար հողե մի մեծ կարաս կար, որ դրված էր պատշգամբում՝ ուղիղ իմ և Աբելյանի սենյակի առաջ: Մի օր հյուրանոցի պարսիկ-ծառան, մեր սենյակի հատակը մաքրելու համար, ավելը տարավ կարասի մեջ Թաթախելով Թրջեց և սկսեց հատակը մաք-

րել: Զարմացած և չարացած նրան հարցրի, թե ինչո՞ւ այդպես արավ, չէ՞ վոր ջուրը խմելու համար է և վոչ թե ավել թրջելու: Նա շատ սառնասրտությամբ պատասխանեց, թե ջուրը կեղտոտություն չի վերցնի:

Խմելու ջուրը փողոցով անցնող առուներից էին վերցնում, վորոնք սարսափելի աղտոտ և լեփ–լեցուն էին սատկած շների ու կատուների դիակներով:

Հում ջուր գործածելը դադարեցրինք և սկսեցինք յեփած ու պաղեցրած ջուր խմել:

Բնակչության ճնշող մեծամասնությունը մալարիայով հիվանդ էր:

Թեհրանում մեր ներկայացումներին դահլիճը լեփ-լեցուն էր լինում, բայց վերջը, շնորհիվ խմբի յերկու գլխավոր ու միատեսակ դերեր կատարող դերասանուհիների—վորոնցից մեկը շատ համակրողներ ուներ, իսկ մյուսը՝ քիչ—հասարակությունը յերկու խմբի բաժանվեց. մեկը մի դերասանուհու կողմն անցավ, մյուսը՝ մյուսի: Խմբերից մեկի ղեկավարները դպրոցի ուսուցիչներն էին, վոր շատ վատ դեր կատարեցին այդ խմբավորումների մեջ: Հակառակորդ դերասանուհուն յերբ բեմ էին կանչում, նրանք ամբոխի գլուխն անցած՝ շվացնում, բարձր ձայնով վիրավորական խոսքեր էին շպրտում: Մի որ էլ այն տեղը հասցրին, վոր «Տրիլբի», խաղալիս, վորի մեջ գլխավոր դերը նրանց հակառակորդ բենեֆիցիանտ դերասանուհին էր խաղում, դահլիճում սրեր, թրեր և ատրճանակներ հանվեցին և սուր ու դմփոց բարձրացավ: Կանայք ուշաթափ յեղան, ժխոր բարձրացավ, և դրանից հետո վոչ մի կին այլևս թատրոն չեր գալիս:

Սպահանից մի քանի ներկայացման համար մեզ ապահով գումար առաջարկեցին, բայց մենք չգնացինք, վորպեսզի խայտառակությունը Թեհրանով էլ վերջանա:

Յերբ Թեհրան յեկանք, մեզ ասացին, վոր պետք է աշխատել Շահի և իր մինիստրների համար Շահի պալատում մի ներկայացում տալ, վորով մեծ պատվի կարժանանանք, լավ կվարձատրվենք, և Շահն էլ շատ գոհ կմնա ու շնորհակալ կլինի և, վոր գլխավորն է, կիմա–

նա հայերի այդքան առաջադեմ ազգ լինելն ու լավ դերասաններ ունենալը:

Այս բանը հաջողեցրեց մեր լավ թարգմանիչներից մեկը՝ Հ. Միրզոյանը, վոր ազատ յելումուտ ուներ պալատ և շատ մոտիկ ծանոթություն՝ բոլոր մինիստրների ու պալատականների հետ: Մի որ նա ինձ ու Աբելյանին տարավ պալատ և ծանոթացրեց պալատական մինիստրի հետ: Պալատը շրջապատված էր շատ բարձր պարիսպներով և հրաշալի պարտեզով: Պարտեզի մեջ գույնզգույն ձկներով լի մի քանի մեծ ու փոքր ավազան կար: Ճիշտ պալատի մուտքի դիմաց, մեծ ավազանի կողքին մինիստրն ապակեպատ մի փոքրիկ գրասենյակ ուներ, և յերբ մենք ներս մտանք, նա մեծ բազմոցի վրա ծալապատիկ նստած՝ ձեռքի թազբեն էր խաղացնում ու թեյ խմում: Մեր գալու նպատակը նրան հայտնի յեր, այն է՝ պայմանավորվել, թե յե՛րբ և ի՛նչպես սկսենք բեմը կառուցել: Նա կանչեց իր ոգնականին, վոր մեզ ուղեկցեց պալատ և ցույց տվեց այն դահլիճը, ուր պիտի բեմը շինեյինք: Պայմանավորվեցինք մյուս որվանից ևեթ սկսել աշխատանքները: Նորից վերադարձանք պալատական մինիստրի գրասենյակը, ուր ինձ, իբրև բեմը կառուցողի, ազատ մուտքի տոմս (կարտ–բլանշ) տվին, և մնաք բարև ասելով մենք հեռացանք:

Մյուս որը, յերբ նորից պալատ յեկա, մինիստրին տեսա ավազանի յեզրին զբոսնելիս, մոտեցա և պարսկական ձևով բարևեցի՝ նրա թաթը յերկու ձեռքով առնելով իմի մեջ, ինչպես և նա՝ իմ թաթը: Հենց նույն րոպեյին մեկը ցածր աթոռակ դրեց տակս, և յես համարյա թե ընկա աթոռակի վրա. միաժամանակ նույնը կատարվեց նաև մինիստրի հետ: Իսկույն ևեթ յերկուսիս մեջտեղը մի սեղան դրվեց և վրան՝ յերկու փոքրիկ բաժակ անասելի քաղցր թեյ: Ամեն մի մինիստր կամ մինիստրի ոգնական, վոր պալատումն էր ապրում, իր սեփական թեյ մատուցողն ուներ և ամեն մի հյուրին քաղցր թեյով էին հյուրասիրում: Այնպես, վոր պալատում յեղածս մի քանի ժամում ութ–տասը գավաթ մինչև սիրտ խառնելու աստիճան անուշ թեյ էին խմեց–

նում: Մերժելն անպատվություն կլիներ, և յես էլ ստիպված կուլ եյի տալիս բառիս բուն նշանակությամբ, վորովհետև արծաթյա բաժակակալներով չափազանց փոքրիկ գավաթներ եյին: Իսկույն հրամայեց իր ոգնականին կանչել: Ոգնականն ինձ տարավ այն դահլիճը, ուր պիտի բեմ կանգնեցնեյինք: Դահլիճում արդեն հավաքվել և ինձ եյին սպասում՝ հյուսները, ելեկտրոմոնտյորը և ինձ հարկավոր այլ վարպետներ: Տախտակ, գամ, չիթ և այլ բաները պատրաստ դարսված եյին մեկմեկու վրա: Իսկույն չափերն ու տեղերը վորոշեցի, և աշխատանքն սկսվեց: Տասնյերեք որվա մեջ հրաշալի բեմ դրինք: Դահլիճի մեջ տեղը յերկու շարք մարմարե սյուներ կային, և հենց այդ սյուների մեջտեղով էլ բեմը դրի: Այդ դահլիճը Շահի զվարճատեղին եր. պատերին կախված եյին հայտնի նկարիչների պատկերներ, վոր իր ճանապարհորդության ժամանակ Յեվրոպայում և Ռուսաստանում գնել եր մեր ժամանակվա յերիտասարդ Շահ-Սալթան-Ահմեդ հինգերորդի պապ Շահ-Նասրեդդինը: Կային նաև մերկ կանանց պատկերներ, նաև քրիստոսը՝ խաչի վրա, ծաղիկներ և այլ բաներ... Դահլիճն իր մի քանի մեծ, հատակի հավասարությամբ պատուհաններով նայում եր դեպի բակ, և ամեն մի պատուհանի առաջ զանազան ստիլի փափուկ կահ-կարասիք՝ ռոկոկո, ռենեսանս, ամպիր և այլ բաներ եյին դրված: Դահլիճում կային նաև թղթախաղի սեղան, փոքրիկ բիլիարդ, նարդի, դոմինո և այլն: Կողքի սենյակը, վորի միքանի աստիճան ունեցող սանդուխները տանում եյին դեպի ցած, պատվավոր հյուրերի համար հատկացված սեղանատունն եր, իսկ սեղանատան մյուս սենյակը Շահի դասարանն եր, վորտեղ ուսուցիչները նրա հետ զանազան առարկաներից պարապում եյին:

Ինձ հետ աշխատանքները չարունակ հսկող մինիստրի ոգնականը մի անգամ ինձ իր մոտ ճաշի հրավիրեց: Հրավերն ընդունեցի ու գնացի նրա բնակարանը: Սեղանը պատրաստված եր հենց գետնի վրա, վոր ծածկված եր թանգագին գորգերով: Սեղանի յերկու կողմից յերկու մինդար ու մի–մի մութաքա եյր դրված: Նախ-

քան սեղան նստելը յերկու ծառա ներս մտան և ձեռքները լվանալու համար ջուր բերին: Հետո յերկու սպասավոր յերկու պնակով կերակուր դրին իմ և նրա առաջ: Դեռ մի կտոր բերանս չդրած, վերցրին և մյուս կերակուրը դրին, սրան էլ հազիվ ձեռք տված, վերցրին և մի ուրիշ կերակուր դրին. և այսպես՝ միքանի տեսակ, մեկը մյուսից համեղ, կերակուրներ դրին առաջս ու թռցրին: Վերջը՝ այդ կերակուրների միայն համը տեսնելով, սեղանից քաղցած վեր կացա: Ամեն մի կերակրին մի–մի գավաթ ողի յեր հետևում:

Մի որ բակում նստած՝ պալատական մինիստրի հետ թեյ եյինք խմում, յերբ հեռվից նկատվեց մի մարդ, վոր մեզ եր մոտենում: Մինիստրը վեր թռավ տեղից և ձեռքերը կրծքին դնելով՝ մինչև յեկողի մոտենալը մնաց կանգնած: Ինձ ծանոթացրեց հետը: Մի ահագին հասակով, հաղթանդամ, լայն ուսերով, անմիրուք, անբեխ մարդ եր՝ Ալի-խան անունով, վոր խոսելիս փոքրիկ աղջկա ձայն եր հանում: Միայն նրա նստելուց հետո մինիստրը նստեց իր տեղը, յես էլ նրան հետևելով՝ նույնն արի: Դուրս յեկավ, վոր Շահի գլխավոր ներքինին է, կանանոցի դահիճը և սարսափը: Ասում եյին, վոր Շահի կանայք նրա անունը լսելիս դողում եյին: Վերջին յերկու–յերեք շահերի ներքինապետն է յեղել և նրանցից էլ այս վերջին Շահին է ժառանգություն մնացել:

Վերջապես ներկայացման որը յեկավ: Խմբով գնացինք պալատ, անցանք մեր չինած բեմի հետևն արդուզարդի համար թողած տեղը և սկսեցինք գրիմ անել ու հագնվել: Պատրաստվեցինք և այդպես սպասեցինք, մինչև վոր հրաման տան ներկայացումն սկսելու:

Ներկայացումը կազմված եր հայերենից պարսկերենի թարգմանված «Ընտանեկան փոթորիկ» ու «Պաշտոնս խումփալն է», յերկու պիեսից ու թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով գրված «Կըրթ-կըրթ» վոդևիլից, իսկ վերջն էլ՝ ասիական պարեր, վոր Շահի խնդրանոք փոխվեց յեվրոպականի՝ իր, Շահի բակում նվագող յերաժշտախմբի նվագածությամբ:

Ժամը ճիշտ 7–ին ներկայացումն սկսվեց:

Դահլիճում կար մոտ վաթսուն հոգի: Ամենքից առաջ ինքը՝ Շահն էր նստած, կողքին ունենալով Հ. Միրզոյանին, հետևի շարքերում՝ մինիստրները և, ըստ աստիճանի, մյուս պալատականները:

Առաջին արարից հետո մեզ հայտնեցին, թե Շահը գնացել է հայելապատ դահլիճը թեյ խմելու, մենք պետք է պատրաստ լինենք և նրա գալուն պես ներկայացումը շարունակենք: Այդպես էլ արինք: Հենց վոր Շահը նստեց իր բազկաթոռին, իսկույն ևեթ սկսեցինք: Արարը վերջանալուց հետո ներս մտավ մեզ մոտ վերև հիշված Ալի-խանը, հետը բերելով մի փոքրիկ աղջիկ, վոր Շահի քույրն էր: Ալի-խանը ներկայացման ընթացքում նստած էր Շահից էլ առաջ՝ պատի տակ, և այդ փոքրիկ աղջիկն էլ կանգնած էր մոտը: Յերբ ներս մտան մեզ մոտ, չգիտեմ Ալի-խանը փոքրիկ աղջկանից ինչ հարցրեց, և աղջիկն իր փոքրիկ մատը տարավ-բերեց՝ աչքս կոխեց: Ալի-խանը նրա փոխարեն ներողություն խնդրեց և բացատրեց, վոր իր հարցին՝ թե ո՛ւմ է շատ հավանել, աղջիկն ինձ է ցույց տվել: Համենայն դեպս մի ամբողջ ժամ աչքիցս արցունք էր գալիս:

Ներկայացման վերջը մեզ խնդրեցին դահլիճ իջնել, վորովհետև Շահը ցանկանում է մեր բոլորի հետ ծանոթանալ: Մեզ առաջվանից նախազգուշացրել եյին, և այդ պատճառով էլ բոլորս ֆրակներ եյինք տարել հետներս: Հագնվեցինք և դուրս յեկանք դահլիճ: Շահն իր յերկու մատը մեզանից մի քանիսին մեկնեց, հետո մեզ հայտնեց իր շնորհակալությունը և հեռացավ: Մենք մնացինք, ծանոթացանք մյուսների հետ: Մի ժամից հետո մեզ ճանապարհ դրին: Անցնում եյինք զանազան փողոցներով, ուր մեզ ուղեկցող սպաները ծածուկ տալիս եյին գիշերվան պարոլը, վորից հետո եյին միայն ահագին դարբասները բացում, մինչև վոր հասանք քաղաքի հրապարակներից մեկը և կառքեր վարձելով՝ հասանք մեր հյուրանոցը:

Այդ ներկայացումը գլուխ բերելու համար մենք ծախսել եյինք չորս հարյուր յոթանասուն ռուբլի: Վոչ մի կոպեկ չստացանք: Խմբի բոլոր անդամներին Շահը

մի-մի քիրմանի շալ նվիրեց՝ յերկու-յերեք հազար ռուբլի արժողությամբ, իսկ Աբելյանին առաջին և ինձ՝ յերկրորդ աստիճանի ելմի (գիտության) աստղ կրելու ֆերմաններ ավեց:

Այդ աստղերն էլ մենք չուկայից մեր փողով գնեցինք:

Աբելյանին այդ աստղն ոգնել էր: Զմյուռնայում, 1922 թվին հույն-թուրքական պատերազմին, յերբ տաճիկ զորքը ներս է խուժում Զմյուռնա ու կոտորած է տեղի ունենում, նա այդ աստղը կախում է կրծքից և նրան պարսկի տեղը ընդունելով ձեռք չեն տալիս:

Պարսկաստանից վերադառնալով, Բաղվում, Մարդասիրական ընկերության թատրոնական դահլիճում և Բալախանիի ու Սև քաղաքի բանվորական ռայոններում մինչև 1914 թվի փետրվարի վերջը ընկերական պայմաններով ներկայացումներ տվինք և ապա անցանք Անդրկասպյան յերկիրը—Ասխաբադ, Մերվ, Անդիջան, Կոկանդ, Նամանգան, Սամարղանդ և այնտեղից վերադառնալով՝ անցանք Հյուսիսային Կովկաս— Ղզլար, Գրոզնիա, Դերբենտ և հուլիսին՝ Շուշի, ուր մնացինք ամբողջ ամառ: Ռեպերտուարը կազմված էր գլխավորապես Շիրվանզադեյի և կլասիկ պիեսներից:

Ղզլարը հայաբնակ մի քաղաք է՝ շրջապատված խաղողի այգիներով: Յերեսուն-քառասուն տարի առաջ այդ քաղաքում հմուտ սիրողների մի խումբ էր խաղում, և, շնորհիվ այդ խմբի ներկայացումների, հասարակությունը թատրոն սիրում և մեծ հաճույքով գալիս էր մեր ներկայացումները դիտելու: Այս անգամ մեր ներկայացումներն ապրիլի 7-ին պետք է սկսվեյին, և մենք նստած՝ գրիմ եյինք անում: Մոտակա յեկեղեցու զանգերն սկսեցին տխուր ղողանջել: Մեր մարմնով մի ինչ վոր սարսուռ անցավ— զատկի յերկուշաբթի որն ինչ տխուր յեղանակի ժամանակ էր: Բանից դուրս յեկավ, վոր ցուրտ է գալիս և կարող է խաղողի բոլոր բերքը փչացնել: Այդ նշանը տրվում էր քաղաքի դիտարանից: Ամեն մի այգետեր շտապում էր իր այգին՝ խաղողը պաշտպանելու: Բնականաբար՝ ներկայացումը հետաձգվեց: Մյուս առավոտ իմացանք, վոր մի կերպ

ցուրտը խաղողի յոթանասունհինգ տոկոսը փչացրել է: Ղզլարում մեր մնալն անկարելի յեր, քաղաքից պետք է հեռանայինք և պատրաստություն եյինք տեսնում հեռանալու, յերբ ներկայացուցիչներ յեկան խնդրելու, վոր գոնե մի ամիս մնանք:

— Բնությունը մեզ պատժեց բավական չի, վոր դո՞ւք էլ եք ուզում պատժել, մի՞թե այնքան մեջոց չունենք, վոր մեր թանգագին հյուրերին մի ամիս էլ ե պահենք,—ասացին նրանք·

Մենք ստիպված մնացինք:

1914–15 թվին հրավիրվել եյի Թիֆլիսի Դրամատիկ ընկերության բազմամարդ խումբը: Նոր պիեսներից խաղացինք միայն Ա. Աբելյանի «Բոռու»–ը, մնացածները, փոքրիկ բացառությամբ հին ռեպերտուարից կրկնություններ եյին:

Այս չարաբաստիկ 1915 թվին հայ բեմը մեկ–մեկու հետևից կորցրեց իր յերեք անդամը· հունիսի 17–ին, ծանր հիվանդությունից հետո, Բաքվում վախճանեց շնորհալի և տաղանդավոր դերասանուհի Սաթենիկ Աղամյանը, Թիֆլիսում՝ դեկտեմբերի 17–ին, ծանր, բայց կարճատև հիվանդությունից հետո՝ հայ դերասանների տատիկ, մեր բոլորին սիրելի Փառանձեմը:

Ուժով եյին նրան թատրոն տարել, ուժով էլ խաղացրել: Բայց նա շատ շուտով վարակվեց թատրոնի սպեցիֆիկ վոգով և գեղեցիկ լինելու պատճառով էլ շուտով ամուսնացավ հուշարար Սաղաթելյանի հետ:

Բազմակողմանի շնորհքի տեր եր նա: Յերիտասարդ ժամանակ ենժենյու եր խաղում, հետո տալիս եյին և դրամատիկ դերեր: Վերջերը, յերբ ծերացել եր, միայն պառավների դերեր եր խաղում: Մի անգամ, շատ առաջները, մի քանի դերասաններ խմբով Գանձակ գնալիս, յերբ դեռ յերկաթուղի չկար, ֆուրգոնով եյին
դնում և հենց վոր մտենում են քաղաքին, խմբի ավագ
դերասան և ղեկավար Ստեփաննոս Սաֆրազյանը ֆուր-
գոնը կանգնեցնել ե տալիս, լուրջ տոնով հաղորդում,
վոր ամեն մի նորեկ, գործի հաջողության համար, ան-
պատճառ պետք ե վոտքով քաղաք մտնի և բերանն էլ
մի կտոր վոսկոր առնի: Միամիտ Փառանձեմն ու իր ա-

մուսինը կատարում են, բայց մի քիչ ճանապարհ գնա-
լուց հետո, յերբ ֆուրգոնի մեջի դերասանների ծիծաղը
լսում են, նոր են հասկանում, վոր կատակ ե:

Ինքը, հանգուցյալը շատ լավ եր պատմում այդ ծիծաղաշարժ դեպքը:

Յերբ Բաքվում նրա հոբելյանը տոնվում եր, հանդեսի վերջին նա, ի շնորհակալություն բոլոր շնորհավորողների և ուղերձների, ահա թե ինչ ասաց·

ՓԱՌԱՆՁԵՄ

— «Ճիշտ ե, յես Սիրանուշի նման մի պայծառ
աստղ չեմ, վոր փայլեմ հայ բեմի վրա, յես մի հա-
մեստ գործիչ եմ և աշխատում եմ ուժերիս չափ: Յես դե-
րասանուհի դարձա այն ժամանակ, յերբ հայերիս հա-
մար բեմի վրա հայ կնոջ յերևալը ամոթ եր համարվում:
Այն ժամանակ, յերբ յերկաթուղի չկար, շատ տեղերում
յես սայլով եյի կատարում իմ անդուրալի ճանապար-

հորդությունը, հազար ու մի նեղություններ կրելով: Յես կամեցել եմ հայ կնոջ անունից, հայ բեմից խոսել»:

Հանգիստ նրա վոսկորներին:

Սաթենիկ Ադամյանը բնիկ Թիֆլիսեցի յեր: Ավարտել էր ս. Նինայի հայտնի ինստիտուտը և, ապա՝ Թիֆլիսի առաջին իգական գիմնազիան, արծաթե մեդալով: Ավարտելուց հետո մի քանի տարի նա պարապում է

ՍԱԹԵՆԻԿ ԱԴԱՄՅԱՆ

մանկավարժությամբ և, շնորհիվ այս բանի, նույն պաշտոնով հրավիրվում է Բաթում: Բաթումում մտնում է հայ թատերասիրաց խումբը և մասնակցում նրանց ներկայացումներին:

1898 թվին նա հրավիրվում է Բագու իբրև դերասանուհի, 1899-ին գնում է Պետերբուրգ, մտնում թատերական դպրոց, միևնույն ժամանակ ուսումնասիրելով

ռուս հայտնի դերասանուհի Կոմիսարժևսկայի նոր շկոլան: Ավարտելուց հետո վերադառնում է Կովկաս և ընդմիշտ նվիրվում թատրոնին:

Նա սովորական դերասան չէր, նա խորը կերպով ուսումնասիրում էր իրեն հանձնած դերը, վերլուծում և յուրացնում էր հեղինակի հոգու և հերոսուհու բնավորությունը: Նա ամեն մի նախադասություն բազմաթիվ անգամ կրկնում էր, վորպեսզի գտնի այն նոտան, վորով այս կամ այն նախադասությունը պիտի արտասաներ:

Զափազանց աշխատասեր, դեպի իր դերն ուշադիր, թե խաղի և թե զգեստավորման ու գրիմի մեջ դեպի ամեն մի չորիխը ձանձրացնելու աստիճան նրբամիտ մարդ էր նա:

Հայ թատրոնի համար նա շատ մեծ ուժ էր և այն հազվագյուտ բեմական գործիչներից, վորոնց համար առաջին տեղն էյին բռնում՝ գործը, բեմը, դերը և վոչ թե իր յեսը, իրեն ցույց տալու տենչը:

Նա միաժամանակ թարգմանչուհի յեր: Լուրջ ու արժանի պիեսներ նա քիչ չեր թարգմանել, վորով և հարստացրել էր հայկական թատրոնի աղքատ ռեպերտուարը:

Վորպես մարդ և ընկեր, նա չափազանց լավ էր, մեծահոգի և ստորաքարշ ու շողոքորթող ընկերներին ատող:

Դեկտեմբերի 22-ին Պետրոգրադում վախճանեց հայ բեմի վետերան Գևորգ Զմշկյանը, վորի ռեժիսյորությամբ ու ցուցմունքներով, 1901 թվին փետրվարի 8-ին բացվում իրա հետ «Պեպո»-ում առաջին անգամ Գիքո յեմ խաղացել:

Զմշկյանը թե արտաքինով և թե, մանավանդ, խաղով իսկապես, վոր աննման Պեպո յեր: Նրանից հետո շատերին եմ տեսել «Պեպո»-ի մեջ այդ դերը կատարելիս, շատերի հետ եմ խաղացել, սակայն թող իմ սիրելի ընկերներն ինձնից չնեղանան. Զմշկյանի Պեպոն մի առանձին հրաշալիք էր, բնական, լի մոմենտներով. մա-

նավանդ նրա մենախոսությունների ժամանակ մարդու սիրտը դառնությամբ ու վրեժխնդրությամբ եր լցվում դեպի Զիմզիմովները:

Դժբախտաբար, Գ. Ջմշկյանին ուրիշ դերերի մեջ չեմ տեսել, վորպեսզի նրա մասին իմ համեստ կարծիքը հայտնեմ: Նրան տեսել ու հետը խաղացել եմ միմիայն «Պեպո» պիեսում: Այդ ժամանակները, ծերության պատճառով, նա արդեն հեռացել եր բեմից: Նրա հին

ԳԵՎՈՐԳ ՋՄՇԿՅԱՆ

ընկերները միմիայն նրա լավն եյին պատմում, ասելով, վոր իր ժամանակին առաջնակարգ դերասան եր, կենտրոնական դրամատիկ դերեր եր խաղում, և Թիֆլիսի հասարակությունն ուրախությամբ եր թատրոն հաճախում, յերբ Ջմշկյան ամուսիններն եյին մասնակցում:

Գ. Ջմշկյանը, բառիս բուն իմաստով, բեմական այն նշանավոր գործիչների շարքն եր դասվում, վորոնք հայ բեմի գոյությունը մինչև այսոր պահպանել են: Նա յեր, վոր շարունակ աշխատում եր թատրոնի գաղափարը ժողովրդականացնել: Նա մեծ ազդեցություն է ունեցել Գաբրիել Սունդուկյանի վրա, վորը նրա դրդմամբ է գրել իր անդրանիկ գործը՝ «Գիշերվան սաբրը խեր է» վոդևիլը, վոր առաջին անգամ 1863 թվին ներկայացվեց, և դրանից հետո եյր, վոր Սունդուկյանը տվեց «Պեպո»-ն, «Խաթաբալա»-ն և ուրիշ գոհարներ:

Նա կրթված, գրականագետ մարդ եր, մասնակցում եր գոյություն ունեցող բոլոր պարբերականներին: Ցուր ժամանակին բավականին մեծ թվով պիեսներ է թարգմանել և գրել:

Նա Թիֆլիսից զատ յեղել է՝ Բաղվում, Շուշի, Յերևան և այլուր:

Թատերաշրջանից հետո, փետրվարին, Գարեգին Յերիցյանը փոքրիկ խմբով մեզ տարավ Ալեքսանդրապոլ, Յերևան և Ղարս՝ յերեքական ներկայացման համար: Տրվելու եյին Գ. Յերիցյանի «Մոտ է գարունը», Լ. Անդրյեվի «Թագավոր, օրենք և ազատություն»-ը և Շեքսպիրի «Ոթելլո»-ն՝ մասնակցությամբ Հ. Աբելյանի: Մարտ, ապրիլ և մայիս ամիսներին յես և Գ. Յերիցյանը Ղարսում ռուսական փարսի խումբ պահեցինք, ապա, վերադառնալով Ալեքսանդրապոլ՝ մտա դերասան Միրալյուբովի ղեկավարությամբ գործող ռուսական խումբը, և մերթընդմերթ էլ մասնակցում եյի հայերեն ներկայացումներին:

1915/16 թատերաշրջանն անցկացնելու համար Դրամատիկ ընկերությունը միջոցներ չուներ. յերկար մտածելուց հետո վճռվեց ունեցած չորս հազար ռուբլին հանձնել դերասանական խմբին, վորպեսզի ներկայացումները դերասաններն իրենց ուժերով կատարեն: Այդպես էլ յեղավ: Դերասանները խումբ կազմեցին և գործեցին ընկերական պայմաններով: Խմբի անդամներն եյին՝ Աշխենը, Զաբելը, Ժասմինը, Մանուշարնը, Սիրանուշը, Լյուսի-Սևումյանը, Համիկը, Աբելյանը, Ազյանը, Ալիխանյանը, Ալլահվերդյանը, Ավե-

տյանը, Բաղդասարյանը, Թորոսյանը, Խուդանյանը, Մամիկոնյանը, Մանվելյանը, Միրզոյանը, Մելքոնյանը, Մուրադյանը, Սուրաբյանն ու Սևումյանը: Ռեժիսյորը Սևումյանն էր, իսկ հուշարարը՝ Զարչարյանը: Գործը դերասաններից ընտրված վարչությունն էր ղեկավարում: Գործերը բավականին լավ գնացին, և դերասանները նյութականապես չտուժեցին: Այս բանին շատ օգնեց նաև այն, որ հասարակության համակրանքը դերասանների կողմն էր:

Փետրվարի վերջին, երբ թատերաշրջանն արդեն փակվել էր, խմբով գնացինք Բաքու, ուր առաջին անգամ բեմադրեցինք Ա. Աբելյանի «Զառի»-ն և «Արշակ Թագավորը»: Ապա՝ ապրիլի վերջին և ամբողջ մայիսին Երևանում խաղացինք: Խմբի մեջ էին Սիրանուշն ու Աբելյանը: Խմբի գործունեությունը վերջացավ Ալեքսանդրապոլում, որտեղ յես նորից մտա Միրայլյուբովի ռուսական խումբը և մնացի մինչև սեպտեմբեր՝ հայերեն ներկայացումներին ես մասնակցելով:

Հոկտեմբերին Թիֆլիսում սկսվեցին Թիֆլիսի Դրամատիկ ընկերության 1916—17 թատերաշրջանի ներկայացումները. յես էլ էի հրավիրված:

Պետք է ասել, որ Դրամատիկ ընկերությունը չարունակ թատերաշրջանն սկսելուց յերկու շաբաթ առաջ էր խումբը հավաքում և այդ յերկու շաբաթվա ընթացքում միքանի պիես պատրաստում: Այդ յերկու շաբաթվա համար նա հիսուն տոկոսի հաշվով էր ռոճիկ տալիս: Միմիայն Դրամատիկ ընկերությունն էր, որ իր սեփական փորձարանն ուներ, ուր փորձերը կարգ ու կանոնով և առանց շտապելու էին կատարվում: Այդտեղ առավոտները մեր փորձերն էին լինում, իսկ յերեկոները՝ Զուբալովի անվան ժողովրդական տան գործող հայկական սեկցիայի դրամխմբակի փորձերը: Փորձարանի վարձը յերկու վարչությունները միասին էին տալիս:

Համենայն դեպս փորձարանը ներկայացումների համար մի մեծ պլյուս չէր, որովհետև ներկայացման առավոտն էինք միայն բեմի վրա փորձ անում, այն էլ՝ մի անգամ: Դերասանը փորձարանի նեղ սենյա-

կին սովորած լինելով, յերբ բեմ էր դուրս գալիս, մեծ բեմի վրա իրեն խորթ էր զգում, որի պատճառով ներկայացումներին միզանսցենների շփոթում շատ էր լինում:

Խումբը մեծ չէր—Աշխենը, Զաբելը, Ժասմինը, Մանուչարյանը, Սիրանուշը, Լյուսի-Սևումյանը, Հասմիկը, Ագյանը, Ալլահվերդյանը, Ավետյանը, Բաղդասարյանը, Թորոսյանը, Խուդանյանը, Մամիկոնյանը, Մանվելյանը, Միրզոյանը, Մելքոնյանը, Մուրադյանը, Սուրաբյանն ու Սևումյանն էին: Հրավիրված էր նաև Վահրամ Փափազյանը:

Աբելյանը, Ալիխանյանը, Հարությունյանը, Վրույրը, Զարիֆյանը, Մայսուրյանը և ուրիշները «Գուրգեն» անունով առանձին խումբ էին կազմել և, Դրամատիկ ընկերությունից անջատ՝ Արտիստական թատրոնը հինգշաբթի օրերին վերցնելով՝ ներկայացումներ էին տալիս: Նրանց ներկայացումներին տեղերի գները թանգ էին նշանակվում, ուստի և մեծ մուտք չէր գոյանում:

Մեզ մոտ առաջին անգամ, շատ մեծ պատրաստությամբ ու նոր դեկորներով (Դրամատիկ ընկերությունը «Հին աստվածներ»-ից հետո առաջին անգամն էր դեկորների վրա ծախս անում), զգեստներով ու բուտաֆորիայով և նկարիչ Ա. Ֆեթվաճյանի էսքիզներով բեմադրվեցին Լ. Շանթի «Կայսր» և Դ. Դեմիրճյանի «Դատաստան» պիեսները:

Խմբի ռեժիսյորն Ովի Սևումյանն էր:

Թատերաշրջանից հետո, Սիրանուշի ղեկավարությամբ և Սևումյանի ռեժիսյորությամբ, մեծ խմբով անցանք Երևան և Ալեքսանդրապոլ: Մեզ հետ տարանք նաև «Կայսր»-ի դեկորները, զգեստներն ու բուտաֆորիան: Ալեքսանդրապոլից խումբը ճանապարհվեց Դոնի Ռոստով, իսկ յես որոշ պատճառներով չկամեցա աշխատանքն այդ խմբում շարունակել և մայիս ամսին խումբը թողի ու անցա Բաքու՝ Վոսկանյանի մոտ գործելու:

Երբ Երևանում էինք, Նիկոլայ ցարին գահընկեց արին: Հիշում եմ թե ի՛նչպիսի հրճվանք էր տիրում ամենուրեք: Թատրոն յեկած հասարակությունն ընդմի-

ջումներին այս առթիվ այնպիսի մի աղմուկով եր խոսում ու վիճում, վոր մենք, բեմի հետև գտնվածներս, կարծում եյինք թե սրահում տուրուդմփոց ե, այնինչ հասարակությունն իր ուրախությունն եր հայտնում: Ի հարկե՝ տխրողներ ել կային և դրանց թիվն ավելի շատ եր: Ուրախացողը գլխավորապես յերիտասարդությունն եր:

Գահընկեցության լուրն առնելուց բավականին հետո մտա կլուբի կառավարչի առանձնասենյակը՝ սրահի վարձը տալու և տեսա, վոր ցարի պատկերը թանգագին շրջանակի մեջ՝ սենյակի գլխավոր պատից դեռ կախ եր տված:

Ծիծաղս յեկավ, դարձա կառավարչին և առաջարկեցի վերցնել ու պատռել: Պետք ե տեսնեյիք, թե ի՛նչպես նա կատաղեց, բայց զսպված դարձավ ինձ ուկամացուկ, համարյա փսփսուկով ասաց.

— Ի՞նչ ես ասում, ո՞վ ե կարող նրա մի մազին դիպչել, նրան Նիկալայ վտարոյ կասեն, ես ամենը մի քանի օրվա բան ե, դու հետո տես, թե ի՛նչ կլինի:

— Լավ, ասացի, թող քո ասածը լինի, բայց լավ կանես, պահարանի հետևը կոխես: Յեթե նրան շատ ես սիրում, փաթաթիր և դիր պահարանի հետևը, թե չե, վա՛յ քեզ, վոր տեսան... բուրդդ կգզեն:

Այդպես ել արավ. զգուշությամբ վայր բերեց, դրպանի թաշկինակով պատկերի փոշին մաքրեց և մեծ յերկյուղածությամբ, լրագրի մեջ փաթաթելով, դրեց պահարանի հետևը:

Տարիներ անցան: Սրանից յերեք տարի առաջ, այդ նախկին կառավարիչը մի որ թատրոն եր յեկել, յես նրան տարա նույն սենյակը և ցույց տվի այն տեղը, վոր առաջ Նիկոլայի պատկերն եր կախ տված, իսկ այժմ Լենինի պատկերն ե փայլում, ու հիշեցրի նրա ասած խոսքերը:

Նա վոչինչ չասաց, ա՛խ քաշեց ու դուրս յեկավ:

Մի տարի առաջ նա վախճանվեց:

Հուլիսին Թիֆլիսի հայկական ժողովարանի նորակառույց ամառային չքեղ թատրոնը յես կապալով վերցրի և խումբ կազմելով՝ հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին ամենորյա ներկայացումներ տվի:

Բանն այսպես եր. հունիսի սկզբներին, յերբ յես Բաքվից, Վոսկանյանի մոտից վերադարձա, մի որ յերեկոյան գնացի ժողովարան, ուր մի հրաշալի սիմֆոնիկ յերաժշտախումբ եր նվագում: Տեսա ինչ վոր մի հրաշալի շինություն ե շինվում, ներս մտա՝ թատրոն ե: Հարց ու փորձ արի և իմացա, վոր ժողովարանն ամառային թատրոն ե շինում և մտադիր ե մեկնումեկին կապալով տալ, վորովհետև ժողովարանը գլուխ չունի զատ-զատ ներկայացումների հատկացնելու: Բացի այդ, իմացա, վոր վոչ մի ցանկացող չկա, իսկույն ևեթ խնդիր տվի ավագների խորհրդին, և թատրոնի կապալը ինձ վրա մնաց: Գործ սկսելու համար փող եր պետք, իսկ յես ընդամենը մի հարյուր ռուբլի ունեյի:Պետք եր այդ մասին լուրջ մտածել. բայց հնարը գտա: Այսպես թե այնպես, իսկույն գործի կպա և առաջին հերթին ինձ ապահովեցի խումբ կազմելով և հրավիրեցի Համիկին, Ոլգա Գուլազյանին, Միրաղյանին, Սանամյանին, Աբգարյանին և մի քանի հոգի ել ուրիշներից:

Գործերը հաջող գնացին: Համարյա բոլոր հայ դերասանները՝ Աբելյանը, Միրզոյանը, Բերոյանը, Փիրումյանը, Սևումյանը, Զարեհը, Սոֆիկը, Գայանեն, Տեր-Առաքելյանը, Վրույրը և շատ շատերն ինձ մոտ խաղացին:

Իմ թատրոնում առաջին անգամ, Գ. Յերիցյանի «Սայաթ-Նովա» յերաժշտական դրամայում, միասին բեմ բարձրացան Շարա Տալյանն ու իր յեղբայրը և, շնորհիվ իրենց հրաշալի ձայնի, շատ մեծ հաջողություն գտան ու այդ որից նվիրվեցին բեմին:

«Սայաթ-Նովան» մի քանի լեփ-լեցուն մուտք տվեց:

10

Հիշողություններս լրիվ չեյին լինի, յեթե յես մոռացության տայի Թիֆլիսում գործող, այսպես կոչված՝ ժողովրդական թատրոնները. մոռացության չեյի կարող տալ նաև այն պատճառով, վոր այդ թատրոննե-

րը, կամ, ավելի ճիշտն ասած՝ այդ թատրոններում գործող խմբերն ու նրանց անդամակցող ենթուզիաստները մի կողմից՝ շատ մեծ դեր են կատարել թատրոնի նշանակությունը լայն մասսաների մեջ տարածելու գործում և, մյուս կողմից՝ աչքի ընկնող խոշոր ուժեր են նվիրել թատրոնին, վորոնցից շատ շատերը մինչև այսօր էլ աշխատում են զանազան քաղաքներում ու զանազան թատրոններում:

1900 թվին, յերկաթուղագծին շատ մոտ, Պետրո-Պավլովսկի գերեզմանատան կից, Մուրաշկո ազգանունով մի ռուս սպա, իր տանը մի փոքրիկ բեմ եր դրել լոկ շահագործելու նպատակով: Միաժամանակ ուներ անապաստան յերեխաներից կազմած մի փողային յերաժշտախումբ, վորով թաղումներից, հարսանիքներից ու այլ հանդեսներից Մուրաշկոն իրեն համար լավ գումարներ եր վերցնում:

Այդ թատրոնը շատ անպաճույճ մի տեսք ուներ՝ գետնին ամրացրած փայտե յերկար նստարաններով ու տախտակե լոժաներով: Բեմի դեկորները շատ աղքատ եյին. բաղկացած՝ մի հարուստ ու մի աղքատ սենյակից և [illegible] դահլիճից ու մի անտառից: Հանդիսականները ձմեռը խաղամիջոցներին հենց իրենց տեղերը նստած եյին մնում, վորովհետև դուրս գալու և զբոսնելու տեղ չկար, իսկ ամառը դուրս եյին գալիս բակը, ուր մի քանի հատ փոքրիկ ծառ կար: Այդ թատրոնում աշխատում եր յերկու խումբ—ռուսականը, վորի ղեկավարը հենց ինքը՝ նույն Մուրաշկոն եր և վրացականը, վոր դերասաններ Ռեվազովն ու Բաջիաշվիլին եյին ղեկավարում: Այդ խմբերի ներկայացումները միքանի հայ յերիտասարդ բանվորների ու ծառայողների առիթ տվին Հավլաբարում էլ հայերեն ներկայացումներ տալ, ուր մեծ թվով բանվորություն եր ապրում: Այդ թաղի գինետները թիվ ու համար չունեյին: Եվ վորպեսզի կարելի լիներ բանվորությանը գոնե մասամբ հետ պահել այդ գինետներից, նրանք իրենց խմբի անունը դրին «հակաալկոհոլյան ընկերություն» ու տոմսերին շատ չնչին, չորսից մինչև քսան կոպեկ գին նշանակեցին: Բնականաբար՝ ամեն մի ներկայացման թատրոնը լեփ-լեցուն եր լի-

նում, և այն չնչին մուտքը, վոր նրանք եյին ունենում, գիշերվան ծախքերը ծածկելու համար չեր բավականացնում, ու շատ անգամ կազմակերպիչները իրենք եյին իրենց ստացած չնչին ռոճիկներից լրացնում: Գործի գլուխ անցան Աբրահամ Գրիգորյանը (հանգուցյալ Կամոյի ընդհատակյա ընկերներից մեկը), Գեվորգ Փիրումյանը, գրաշար Ա. Դոչոյանը, Դավիթ Գուլազյանը, Միք. Ղուչչյանը, ծառայող Գրիգոր Սարյանը, գրաշար Բաղդասարյանը, բանվորներից և յերիտասարդներից միքանիսին իրենց շուրջը հավաքելով, մեկմեկ էլ դերասաններ Ամո-Խարազյանին, Զարեյին, Գեվորգ Պարոն-Սարգսյանին, Գրիգոր Ավետյանին, Վարդան Միրզոյանին, Սողոմոն Սողոմոնյանին և ուրիշներին հրավիրելով և աշխատանքից հետո, գիշերները փորձեր անելով ու վոստիկանական հազար ու մի արգելանքների դեմ կռվելով՝ սկսեցին պարբերաբար ներկայացումներ տալ:

Հրավիրված դերասաններից ամեն մեկը միմիայն կառքի փող եր ստանում, իսկ վարձատրություն՝ վոչ մի կոպեկ. կառքի փողն էլ նրանք եյին ստանում, ովքեր թատրոնից շատ հեռու եյին ապրում: Այս ներկայացումները, չնայած, վոր խումբը վոչ վոքից ու վոչ մի նյութական օժանդակություն չեր ստանում, տևեցին մի քանի տարի շարունակ: Այս խմբի ներկայացումներին մասնակցում եր նաև վրաց բանաստեղծ Գրիշաշվիլին, վոր հայերենին լավ եր տիրապետում:

Ռեպերտուարը, բնականաբար, չեր կարող կանգնած լինել այն բարձրության վրա, վորին նա արժանի յեր, վորովհետև ժողովրդի հոգուն, նրա հասկացողությանը համար պիեսներ չկային: Բնականաբար՝ առաջին տեղն եր բռնում Սունդուկյանցը՝ իր անմահ «Պեպո»-յով, «Խաթաբալա»-յով և մյուս պիեսներով: Հետո գալիս եյին վրացական ռեպերտուարից թարգմանված պիեսներով, խրատիչ մելոդրամներով՝ «Թուղթ խաղացողի կյանքը», «Փարիզու աղքատները», «Կույրը» և այլն...

Հետաքրքիրն այն է, վոր սկզբնական շրջանում, յերբ հասարակությունը ներկայացումներին դեռ ծա-

նոթ չէր, խմբի անդամները, հասարակությանը թատրոն գրավելու համար խորամանկության դիմեցին. Գևորգ Փիրումյանը ներկայացումից առաջ մեծ զանգը ձեռքին դուրս էր գալիս փողոց ու թատրոնի մուտքի առաջ կանգնած՝ զանգահարում ու ներս էր հրավիրում անցնող-դնացողներին, բացատրելով թե ներսն ինչ պիտի կատարվի: Շատ շատերին ձրի էին ներս թողնում: Այս ամենը յերկար չտևեց. հասարակությունն այդ թատրոնին ընտելացավ և, ինքնաբերաբար, լցնում էր թատերասրահը:

Այս թատրոնում խաղացող սիրողներից բեմին նվիրվեցին՝ Բագրատ Մուրադյանը, Ոլգա Գուլազյանը, Ռշտունին, Գավռոշը, Վահան Գալստյանը, Գևորգ Փիրումյանը, Դավիթ Գուլազյանը, Մացակ Տեր-Առաքելյանը և ուրիշները:

1903 թվին դերասան հանգուցյալ Պողոս Արաքսյանը բանկից մի փոքրիկ գումար պարտք վերցնելով՝ Հավլաբարում, այժմյան Շահումյան հրապարակի մոտ, իր միջոցներով թատերական մի դահլիճ է կառուցում՝ «Արաքսյան թատրոն» անունով:

Այս թատերական դահլիճը բավականին մեծ էր, և պարտեր ու բալկոն ուներ: Կահավորված էր վիեննական աթոռներով և ուներ՝ առատ լույս, մաքրություն, խիստ կարգապահություն, զբոսանքի համար փոյեներ և այլ անհրաժեշտ հարմարություններ: Արաքսյանը խումբ է կազմում և Մուրաշկոյի թատրոնից արդեն բավականին փորձված դերասաններ է վերցնում ու ապահով ռոճիկներ տալիս նրանց: Այդ դերասանների շարքին են դասվում՝ Հարություն Բերոյանը, Ոլգա Գուլազյանը, Աշխեն Արաքսյանը, Բագրատ Մուրադյանը, Ս. Թորոսյանը, Դ. Գուլազյանը և ուրիշները. գաստրոլային մասնակցության համար հրավիրվում էին՝ Սիրանուշը, Հ. Աբելյանը, Գ. Տեր-Դավթյանը, Վարդուհին, Զաբելը, Ամո-Խարազյանը, Գ. Ավետյանը և ուրիշ շատերը: Տոմսերի գինը շատ թանգ չէր—30 կոպեկից մինչև մեկ ռուբլի 50 կոպեկ էր:

Ռեպերտուարը շատ խայտաբղետ էր—կլասիկներ, կոմեդիաներ, դրամաներ, մելոդրամաներ, վոդևիլներ:

Պողոս Արաքսյանն ահագին ծախսեր ուներ և շատ էր նեղվում բանկի պարտքերից ու շենքի ընդհանուր կապալառուից, վոր, թատրոնի շենքի վարձն ուշացնելու համար նրան շարունակ նեղում էր: Նա չափազանց շատ էր տանջվում նաև իր աշխատանքից. ներկայացումներին մասնակցում էր իբրև դերասան, ռեժիսյորություն էր անում և, վոր ամենագլխավորն է, ռոճիկները ժամանակին պետք է վճարեր, վորը քիչ չէր տանջում նրան:

Մուտք ունենալու համար նա փողային, կամ ասիական յերաժշտախումբ էր բերում, վոր ներկայացումն սկսվելուց մի քանի ժամ առաջ նվագում էր թատրոնի առաջ, իսկ հետո, խաղամիջոցներին՝ թատրոնի ներսը:

1905 թվին այս թատրոնը, բազում ապրողներից մեկի անզգուշության պատճառով, կիսով չափ այրվեց, ու ներկայացումներն ընդհատվեցին:

Յերբ Հավլաբարում «Արաքսյան թատրոնը» բացվեց, Մուրաշկոյի հայկական թատերախմբից շատերն անցան այս նոր թատրոնը, և Մուրաշկոյի թատրոնի ներկայացումները սիրողների ձեռքն անցան: Այդ ներկայացումները գլխավորում էին Ադելխանովի կաշեգործարանի բանվորները, վորև մի քանի տարի տևեցին:

1906 թվին «Արաքսյան» թատրոնը վերանորոգվում է և ղեկավարությունն իր վրա յե վերցնում Ամո-Խարազյանը:

Ամո-Խարազյանն այդտեղ յերկու-յերեք տարի գործում է նյութական շատ մեծ զոհողություններ կրելով: Նրա խմբին մասնակցում են՝ Նինուելը, Նունե Մանուչարյանը, Շավարշ Ահարոնյանը, Լևոն Յերամյանը. Ա. Բաբյանը, Վարդան Միրզոյանը, Մ. Սաֆարյանը, Խորենը, Լաքան, Թաչճյանը, Ադելխանյանը, Խուդանյանը, Բագրատ Մուրադյանը, Քնարիկը, Լևոն Ալլահվերդյանը և ուրիշներ...

Այդ թատերաշրջանից հետո Ամո-Խարազյանն իրեն շրջիկ խումբ կազմելով՝ ճանապարհորդում է Կովկասի զանազան քաղաքներ ու գյուղեր, մինչև վոր ռեժիսյորի պաշտոնով հրավիրվում է Զուբալովի անվան ժողո-

վըրդական տանը գործող հայկական թատերախմբի մեջ:

Ամո-Խարազյանի հեռանալուց հետո, Հավլաբարի թատրոնի կապալառուն սկսում է թատրոնը շահագործել՝ տալով պատահական հայ և վրացի սիրողների, վորոնք զանազան անհամ «պատմական» դրամաներ ու անբովանդակ պիեսներ դնելով՝ հասարակության ճաշակը բոլորովին փչացրին: Այդ սիրողները դռնե-դուռ, խանութե-խանութ եյին ընկնում ու ստիպմամբ տոմսակներ ծախելով՝ թատրոնի մուտքը շատացնում եյին և ստացած փողերը գինետներում ծախսում:

Նրանք այսպես ել եյին անում. տոմսակ ծախողները իրենց հետ գնացող ընկերներից մեկի կողքից դաշույն կամ ատրճանակ եյին կախում, վոր ներս մտած ժամանակ խանութպանին կամ վաճառականին վախ ազդի, և նա տոմս վերցնելը չմերժի: Մեծ մասամբ այդ օգնում եր նրանց:

Հետո, ամբողջ քարվանսարան, վոր բանկին եր պատկանում և վորի մի մասում «Արաքսյան թատրոնն» եր գտնվում, Սանիկիձե ազգանունով մեկը գնեց՝ թատրոնի շենքը բաղնիքի վերածելու նպատակով: Թատրոնի ծառայողներից յերկու հոգի յեկան մոտս և խնդրեցին մի կերպ անեմ, վոր թատրոնը չքանդեն, վորովհետև Հավլաբարին թատրոնն անհրաժեշտ է:

Գնացի, նայեցի ու տիրոջ գլուխը մտցրի, վոր ափսոս է թատրոնը քանդել, իր համար ավելի շահավետ կլինի թատրոն ունենալը, քան թե բաղնիք: Մի կերպ համաձայնեցրի և, թատրոնի վերանորոգումները մեր ցուցմունքներով կատարելու պայմանով, յես ու Սաթենիկ Ադամյանը յերեք տարի ժամանակով թատրոնը կապալով վերցրինք՝ կապալաժամն ըստ մեր ցանկության յերկարացնելու պայմանով: Մեր մտադրությունն եր, կանգ չառնելով վոչ մի խոչընդոտի առաջ՝ Հավլաբարն ազատել հասարակության ճաշակը փչացնող հայ ու վրացի զանազան անկոչ ու չակերտավոր դերասաններից: Բացումից միքանի օր առաջ արդեն ահագին քանակությամբ դիմումներ ու խնդիրներ ստացա՝ ներկայացումների համար դահլիճն իրենց վարձով տալու: Ամենքին ել

մերժողական պատասխան տվի, վորի հետևանքը յեղավ այն, վոր մի քանի նամակ ստացա, վորոնցով սպառնում եյին ինձ տեռրորի յենթարկել: Ճիշտն ասած՝ սկզբում վախեցա, բայց հետո անուշադիր թողի և գործս շարունակեցի:

Հայկական և վրացական խմբերը մերը պետք է լինեյին, իսկ ռուսաց և թուրքաց խմբերն ըստ պահանջի պետք է հրավիրվեյին:

1908 թվի դեկտեմբերի 18-ին Հավլաբարի նոր թատրոնը բացվեց: Արաքսյան թատրոնի սրահի հատակը կտրել-իջել եյինք ներքև, ինչպես և բեմն ու թատրոնը մի կարգին բան եյինք շինել, վոր այժմ ուներ և՛ օթյակներ, և՛ պարտեր, և՛ ամֆի-թատրոն, և՛ բալկոն, և՛ գալլերեյ՝ մոտ վեց հարյուր տեղ:

Թատրոնի բացման գիշերը հասարակության համար ռուսերեն, թուրքերեն, հայերեն և վրացերեն լեզուներով մի մի արարով պիեսներ խաղացվեցին, իսկ վերջը՝ պարեր: Դահլիճը լեփ-լեցուն եր, լույսը առատ և Հավլաբարի համար չտեսնված կարգ ու կանոն եր տիրում, վորի համար շատ նախանձախնդիր եի:

Հազիվ եր ամեն ինչ կարգի ընկել, վոր մի գիշեր, ներկայացումից հետո, թատրոնատեր Սանիկիձեն, նավթ թափելով թատրոնի սրահի փայտե մասերի վրա, ցանկացել եր ամբողջ թատրոնը այրել՝ ապահովագրության տասնհինգ հազար ռուբլին ստանալու համար: Գիշերվա ժամը չորսին հրդեհից վերադարձող հրշեջները պատահմամբ նկատում են բեմի կտուրից դուրս յեկող ծուխը և վրա հասնելով՝ մարում են, բայց բավականին ջարդ ու փշուր անելով թատրոնական սրահիները:

Այս թատրոնն իմ ղեկավարությամբ ընդամենը յերեք ու կես ամիս գործեց: Այդ ժամանակամիջոցում հայերեն և վրացերեն լեզուներով մի շարք ներկայացումներ յեղան:

Հրդեհից հետո սիրտս կոտրվեց և թողի ու հեռացա՝ յերեք հազար ռուբլուց մի բան ավելի կորցնելով, մանավանդ, վոր թատրոնը բացվելուց մի քանի օր առաջ ընկերոջս—Սաթենիկ Ադամյանին իր դաշնակցական քրոջ պատճառով բռնել բանտ եյին դրել:

Սանիկիձեն չկարողանալով բանկին իր պարտքը վճարել՝ քարվանսարան իր թատրոնով դարձյալ մնում է բանկին, վորից նորոգված թատրոնը մի ուրիշ մարդ է կապալով վերցնում և սկսում է շահագործել:

Ամո-Խարազյանն իր խմբով մի շարք կանոնավոր ներկայացումներ է կազմակերպում, վորից հետո, թատրոնն ընկնում է ներկայացումներ կազմակերպող զանազան պատահական դերասանների և սիրողների ձեռքը և կամաց-կամաց կնքում իր վախճանը:

Քաղաքային վարչության մեջ յերբ 1905 թվի վերջերին հարց է բարձրանում աշխատավոր մասսաների կուլտուրական պահանջներին բավարարություն տալու համար ստեղծել մի վայր, Թիֆլիսի հարուստներից մեկը—Զուբալովը մի գումար է դնում քաղաքային վարչության տրամադրության տակ, վոր և իսկույն ոգտըվում է առիթից և Վերայի կամուրջի մոտ շատ շուտով կառուցում մի թատրոն՝ ընդամենը վեց-յոթ հարյուր տեղանոց—ինչպես ծովի համար մի կաթիլ ջուր, վորովհետև Թիֆլիսը, իբրև բանվորական կենտրոն, շատ ավելի մեծ թատրոնի կարիք ուներ, և յերկրորդ՝ գոյություն ունեցող թատրոնները, տոմսերի թանգության պատճառով, բանվորության համար շատ անմատչելի եյին:

Այսպես թե այնպես, 1906 թվին այդ թատրոնը բացվեց և կոչվեց՝ «Զուբալովի անվան ժողովրդական տուն»: Այդ թատրոնին կից կազմակերպվում են վրացական, ռուսական, հայկական, հրեյական, ոսական, ուկրայնական սեկցիաներ: Այս սեկցիաներից իրենց ներկայացումների թվով գերակշռող տեղ եյին բռնում ռուսական, հայկական և վրացական սեկցիաները: Սկըզբում կազմակերպվում է «Հայ դրամ-սեկցիա»-ն, իսկ հետո՝ «Հայ դրամատիկ խմբակցություն»-ը, վոր մինչև այդ կազմվում է Մուրաշկոյի, Հավլաբարի և Ավճալյան աուդիտորիայի ներկայացումներին աշխատակցող սիրողներից: Սրանք մշակում և տպագրում են իրենց կանոնադրությունը: Գործերը ղեկավարում եր յոթից մինչև ինն հոգի կազմ ունեցող վարչությունը, վորի մեջ մտնում եյին թե բեմական աշխատողներ և թե հա-

սարակական գործիչներ: Ըստ կանոնադրության, խմբակցությունն ունենում եր յերկու տեսակ անդամներ՝ իսկական (ակտիվ) և ոժանդակիչ (պասիվ): Ակտիվ անդամները բեմական աշխատավորներից եյին ընտըրվում:

Ամեն մի թատերաշրջանի վերջին վարչությունն ընդհանուր ժողով եր հրավիրում, վորին հաշիվ եր տալիս թե իր յելեմտի և թե ներկայացումներ հաճախած անձանց թվի ու այլ բաների մասին: Այդ ընդհանուր ժողովներում լայն քննարկման եյին յենթարկվում թե՛ վարչությունը, թե՛ դերակատարները և թե՛ ռեպերտուարը, վորից հետո գաղտնի քվեարկությամբ նոր վարչություն եր ընտրվում:

Ամառվա ամիսներին վարչությունն իրեն ապահովում եր ռեպերտուար կազմելով, ռեժիսյոր վարձելով և սիրողների կադր ունենալու խնդիրներով: Վորովհետև սիրողները չափազանց շատ եյին, ուստի վարչությունը մտածելու այնքան էլ առիթ չեր ունենում: Այդ սիրողները, վոր յերբեք չեյին վարձատրվում և բառի բուն նշանակությամբ, լոկ սիրողներ եյին, սիրով ու մեծ յեռանդով եյին կպչում իրենց թատրոնին. բոլորն էլ զանազան հիմնարկություններում ծառայում եյին, բայց յերեկոները, յերբ իրավունք ունեյին հանգստանալու, չեյին հանգստանում և իրենց սիրած գործի, Ժողովրդական ներկայացումների կազմակերպման համար, յերեկոյան ժամը յոթից սկսած մինչև գիշերվա տասներկուսը, մեկը, յերբեմն էլ՝ մինչև յերկուսն աշխատում ու անց եյին կացնում փորձարանում:

Ժողովրդական տան ներկայացումներին չեր պատահի մի դեպք, վոր վորևե դերակատար իր դերը լավ սերտած չլիներ, փորձին ուշանար, իր մուտքի ժամանակ, կամ մի ուրիշ բանով հասարակությանն առիթ տար տրտունջալու: Փորձերը միշտ կանոնավոր եյին ընթանում, ուշացումները հազվագյուտ եյին և յեղածներն էլ՝ միշտ պատճառաբանված:

Ներկայացումներին դահլիճը միշտ լեփ-լեցուն եր լինում, կիսով լի դահլիճ քիչ եր պատահում, և այն էլ միմիայն արտասովոր վատ յեղանակներին: Տոմսերի

դինը շատ մատչելի, չորսից մինչև հիսուն կոպեկ էր և ձեռք բերելու համար ամեն տեսակ հարմարություններ էին ստեղծված, այն է՝ ծախվում էին քաղաքի զանազան մասերում, զանազան խանութներում ու միմիայն ներկայացման գիշերն էին թատրոնի կասսայում ծախվում:

Ռեպերտուարը կազմված էր գլխավորապես բանվորական կյանքից վերցրած ու ժողովրդական բնույթ ունեցող թե թարգմանական և թե օրգինալ պիեսներից: Այս գործին ավելի ևս զարկ տվեց, երբ վարչության մեջ մտան Ասքանազ Մռավյանն ու Սուրխաթյանը: Նշանակալից են վերոհիշյալ ընկերների կողմից խմբակցության անդամների հետ քաղաքական խնդիրների մասին ունեցած զրույցները:

Հայ դրամատիկ խմբակցության ներկայացումների համար վարչությունն ապահով ռոճիկով և ամբողջ թատերաշրջանի համար շարունակ մշտական ռեժիսորներ էր հրավիրում:

Մշտական ռեժիսորներ յեղել են՝ Արմեն Արմենյանը, Ոնիկ Ստեփանյանը, Ովի Սևումյանը, Լևոն Քալանթարը, Պողոս Արաքսյանը և, ամենից շատ, երկար տարիներ՝ Ամո-Խարազյանը, որի բեմական գործունեության ամենալավ շրջանը հայ դրամատիկ խմբակցության մեջ է անցել: Այստեղ նա մեծ աշխատանք է թափել և այդ աշխատանքն իր պտուղներն է տվել: Այդ խմբակցությունից բեմին են նվիրվել՝ Լևոն Ցերեմյանը Վահան Գալստյանը, Գավռոշը, Լևոն Աղարաբյանը, Ստեփան Դավթյանը, Գեվորգ Փիրումյանը, Ժասմինը, Համբիկը, Լյուսի-Մեղնիկյանը, Նունե Մանուչարյանը, Աննա-Մելիքը, Հայկուհի Գարագաշը, Աստղիկ Աղասյանը, Արուս Ասրյանը, Ալմաստ Քալանթարը, Վանչիրը, Գ. Մարությանը, Խորենը, Լևոն Ալլահվերդյանը, Բագրատ Մուրադյանը և շատ շատերը:

Ամո-Խարազյանը շատ մեծ ջանք է թափել խմբակցության ներկայացումների վորակի և այլ կողմերի վրա: Նա ա՛յն ժամանակից է կապված ժողովրդի հետ, նրան է տվել իր յերիտասարդ տարիները, իր տաղանդը նրան է ի սպաս դրել: Նա իսկական ժողովրդական արտիստ է

և արժանի՝ ժողովրդական արտիստի կոչման, վոր և Խորհրդային Հայաստանի կառավարությունը տվեց նրան:

Այժմ էլ, իր ծեր հասակում, նույն այդ ժողովրդի հետ է, Գյուղշրջիկ թատրոնի ղեկավարն է, ուղեցույց դերասանը և տարիներ շարունակ, առանց հոգնելու, իր խմբով նույն այդ գյուղերն է սպասարկում:



ԱՄՈ ԽԱՐԱԶՅԱՆ

Հերթական ռեժիսոր, առաջքաշման կարգով, յեղել են՝ Գավռոշը, Լևոն Աղարաբյանը, Վահան Գալստյանը, Լևոն Ցերեմյանը, Գևորգ Փիրումյանը, Վանչիրը և իրենց շրջանից՝ ուրիշներն էլ:

Խմբակցության վարչության անդամներից Արամ Նազարեթյանը, Գրիգոր Սարյանը, Հովհաննես Մալ-

խասյանը, Միքայել Սամբուլցյանը գործի հետ շատ ջերմ կերպով եյին կապված և վերջինիս հաջողության համար քիչ աշխատանք չեն թափել:

Հայոց Դրամատիկ ընկերության վարչության կազմը միշտ բուրժուական տարրերից եր լինում, այնինչ հենց դրա համար էլ Դրամատիկ ընկերության վարչությունը միշտ թշնամաբար եր վերաբերվում դեպի խմբակցությունը: Դրամատիկը մեծ-մեծ գումարներ եր ստանում, այնինչ՝ խմբակցությունը և ոչ մի կոպեկ օժանդակություն: Խմբակցության բոլոր դիմումները՝ գործն ավելի բարվոք վիճակի մեջ դնելու համար, տարեկան իրենց մի չնչին— յերկու հազար ռուբլի տալու մասին՝ միշտ բացասական պատասխանով եյին վերջանում: Վերջը դիմեցին մի փոքրիկ խորամանկության, վոր հաջող յելք ունեցավ. ընդհանուր ժողովին, ձայների մեծամասնությամբ մի յերկու-յերեք հոգի անցկացրին Դրամատիկի վարչության մեջ, ուր նրանք իրենց շահերը պաշտպանեցին, և խմբակցությունն սկսեց տարեկան այդ չնչին օժանդակությունն ստանալ:

Խմբակցությունը խորհրդայնացումից հետո ևս յերկու տարի իր գոյությունը պահպանեց, վորից հետո Լեոն Քալանթարը հին դերասաններին և խմբակցության կարող ու սիրող-դերասաններին միացնելով՝ կազմեց Ստ. Շահումյանի անվան թատերախումբը:

11.

1917—18 թվի թատերաշրջանին դարձյալ մտա Դրամատիկ ընկերության խումբը: Ռեպերտուարն այդ օրերի համար շատ բնորոշ եր. «Դավաճանություն», «Արցունքի հովիտ», «Երզրումի ճանապարհին», «Արհավիրքի օրերին», վոր կրկնվեց մի քանի անգամ:

Ամառը կլուբներում խաղացի, իսկ ձմեռը՝ 1918—19 թատերաշրջանին ե՛լի ընկա Դրամատիկ ընկերության ձեռքը: Նորերից խաղացինք Դ. Դեմիրճյանի «Ազգային խայտառակություն»-ը: Պիեսն առանձին հաջողություն չունեցավ, բայց շատ աղմուկ հանեց: Առաջին ներկայացմանը թատրոնում ասեղ գցելու տեղ չկար, իսկ յերկրորդ ներկայացման մուտքը հարյուր ռուբլուց մի քիչ ավելի յեր: Մայիսն անցկացրի Հովհաննես Վոսկանյանի Գանձակի խմբում, ապա ամառը, մինչև նո-

յեմբեր՝ նույնի խմբում՝ Թիֆլիսի Արհեստավորաց ակումբում: Փոխեփոխ օպերետներ ու դրամաներ եյինք բեմադրում:

Հ. Վոսկանյանը «Վանի գրավումը» վերնագրով մի պիես եր սարքել, վոր մի քանի տասնյակ անգամ խաղացինք լեփլեցուն դահլիճի առաջ: Լավ մուտքեր եր տալիս նաև «Պըլը-Պուղի» յերաժշտական կոմեդիան, վոր բանաստեղծ Հարություն Թումանյանն ե գրել: «Պըլը-Պուղու» համանուն գլխավոր, դերը յես եյի կատարում և ամեն ներկայացման, ըստ պիեսի, եշի վրա նստած եյի բեմ դուրս գալիս: Մշտական դերակատար եշը ներկայացումներից մեկին չեր բարեհաճել գալ, և փոխարենը մի ուրիշին եյին բերել, վոր վողջ և առողջ ինձ բեմ հասցրեց, բայց հենց վոր հասավ բեմի կենտրոնը, վոտքերը վեր քաշեց ու յես իմ մեծ փափախով փառավորապես գետին գլորվեցի ի մեծ հաճույք դահլիճում նստած խուռն բազմության:

Ինձ ու Հ. Աբելյանին այդ ամառ հրավիրել եյին Բաքու՝ յերկու գաստրոլի, վորոնցից մեկը «Պըլը-Պուղին» եր: Այնտեղ հանդիպեցինք մեր այժմյան տաղանդավոր դերասան Ավետ Ավետիսյանին, վոր սիրող եր և այն ել անփորձ սիրող լինելով՝ իրեն հանձնված դերը հրաշալի կերպով կատարեց: Մեր խորհրդով նա յեկավ Թիֆլիս, ուր և Հ. Վոսկանյանը նրան իմ խորհրդով իր խումբն ընդունեց, ու այն օրից Ավետն իրեն նվիրեց հայ բեմին: Նա այժմ Յերևանի առաջին Պետթատրոնի աչքն ու զարդն ե, ամենքի սիրելին, ամենքի գուրգուրանքը:

Վոսկանյանի խմբումն եր նաև յերիտասարդ դերասան Տիգրան Շամիրխանյանը, վորի հետ օպերետներ խաղալիս, մեր դրության վրա շատ ենք ծիծաղել: Մանավանդ «Վանի գրավման» մեջ, յերբ մի ատրճանակի պայթյունից, մենք յերկուսով պետք ե մտնեյինք սեղանի տակ, վոր և մեծ ուրախությամբ եյինք կատարում:

1919-20 թվի թատերաշրջանի համար Դրամատիկ ընկերության վարչությունն ինձ հրավիրեց պայմանավորվելու ձմեռային թատերաշրջանի համար: Աշխա-

տավարձի շուրջը վիճաբանեցինք և յերբ համաձայնություն չեկանք, յես, բարկացած, ամբողջ վարչության յերեսին շպրտեցի, վոր թատրոնական գործից նրանք բացացի կերպով վոչինչ չեն հասկանում ու դուրս յեկա, դուռը յերեսներին ամուր շպպացնելով: Ինձնից հետո իսկույն ևեթ ժողով են կայացնում և Դրամատիկ ընկերության նախագահը, իշխան Ա. Արղության-Յերկայնաբազուկը հարցը կտրուկ կերպով է դնում—կամ ինքը, կամ՝ դերասան Ավետյանը: Պարզ բան է, վոր թատրոնական խմբին իշխանն ավելի յեր կարևոր, քան դերասան Ավետյանը:

Ինձ խումբ չընդունեցին:

Դրամատիկ ընկերության վարչության անդամներ մինչ յեղել են՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանը, փաստաբան Գաբրիել Ծուրինյանը, Գաբրիել Կաֆյանը, փաստաբան Հարություն Զմշկյանը, հաշվապահ Կարապետ Տիրինյանը, ճարտարապետ Քրիստափոր Սարգսյանը, Բանկի դիրեկտոր Ստեփան Գալստյանը, իշխան Արղության-Յերկայնաբազուկը, բժիշկ Մինաս Մուրադյանը, փաստաբան Հովսեփ Ղորղանյանը, խմբագիր Համբարձում Առաքելյանը, փաստաբան Ռուբեն Հովհաննիսյանը, փաստաբան Տիգրան Հովհաննիսյանը, հարուստ տիկին-սիրողուհի Վիրգինե Մամուլյանը և նման մի քանի հոգի: Ամեն անգամ վարչությունը փոխվելիս, շարունակ նույն այդ մարդկանցից եյին ընտրություն անում:

Հազարից մի անգամ եր պատահում, վոր վարչության մեջ գեղարվեստի մարդիկ, թատրոնը սիրող մարդիկ մտնեյին, ինչպիսիք եյին՝ Լևոն Քալանթարը, Սեդրակ Թառայանը, Միքայել Ջաբարը, Միքայել Վանդերը, Գարեգին Յերիցյանը և այլք... Ցեվ վարչության մեջ դրանց մտցնելու համար ամիսներ առաջ պրոպագանդ եյինք անում ու բոլոր որինական և անորինական ճանապարհներով մի կերպ գլուխ եյինք բերում ու մեր թեկնածուն անցկացնում:

«Հայ թատրոնն արժանի բարձրության յերբեք չեր կարող հասնել, վորովհետև զրկված է յեղել լուրջ

ու անընդհատ կրիտիկայից»... Այդ եյին գրում մեր այն ժամանակվա մամուլում և այդ շատ ճիշտ եր... Իմ

ՄԻ ԽՈՒՄԲ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ 1925 ԹՎԻՆ

կարծիքով՝ հայ իրականության մեջ լուրջ քննադատներ յեղել են՝ Գրիգոր Արծրունին և Սպանդար Սպանդարյանը (Յունուս): Առաջինը յեվրոպական ճաշակով մի մարդ եր, թատրոն տեսած, խստապահանջ, բայց մի քիչ կրքոտ: Յերկրորդը շատ մեծ հմտությամբ վերլու-

ծում էր պիեսը, տիպերը, և յերբ դերասանը նրա գրած քննադատականը կարդում էր, իր արած սխալը, իր ներկայացրած տիպի վոչ ճշտությունը գտնում էր։ Գրիգոր Արծրունին մեռավ, Ս. Սպանդարյանն այդ ճյուղը թողեց ու զբաղվեց «Նոր-Դար» լրագրի խմբագրությամբ, և ասպարեզը մնաց ում ասես։ Ամեն մի թերթի խմբագրատան աշխատող, սկսած խմբագրից մինչև քրոնիկոն գրողը, ով թատրոն էր գալիս խմբագրական տոմսով, գրում էր և խեղճ դերասանի գլխին սափրիչություն սովորում ու դեռ տողավճար էլ ստանում։ Ի՞նչ պիտի սովորեր հայ դերասանն այդ քննադատություններից։

Ահա մի քանի օրինակ.

1901 թվի, հոկտեմբեր։

«Կառապան Հենշելի» մասին։

«Նովոյե Օբոզրենիե» ռուս թերթը գրում էր. «Գործը մանավանդ փչացնում էր գարեջրատան տիրոջ դերը խաղացող Պ. Ավետյանը, վոր չարժի մեջ էր ընկնում»։

«Նոր-Դար» թերթը գրում էր.—«Մեզ շատ դյուր յեկավ Պ. Ավետյանի խաղը՝ գարեջրատան տիրոջ դերում, նա լավ կոմիկ է, խաղում է այնքան ազատ, պարզ ու բնական, վոր կարծես իրենց տանն է»։

1901 թվի նոյեմբեր։

«Արքա Լիրի» մասին։

«Մշակ» թերթը գրում էր.—«Պ. Ավետյանի խեղկատակը մեզ վրա նույնպես լավ տպավորություն թողեց՝ մանավանդ այն պատճառով, վոր պարոնն ուշադիր էր դեպի իր դերի լուրջ կողմը»։

«Նոր-Դար» թերթը գրում էր.—«Խեղկատակը պարոն Ավետյանի խաղի մեջ աննկատելի յեր։

1902 թիվ, հունվար։

«Բաղդասար-աղբարի» մասին։

«Բագու» ռուս թերթը գրում էր.— «Պիեսը շատ վատ խաղացվեց, միմիայն Ստեփանյանն էր, վոր իր դերն այնքան լավ տարավ, վոր ավելին պահանջել չի կարելի։ Բայց մի բան, վոր մեզ ամենից շատ զարմացրեց, այդ պ. Ավետյանի խաղն էր, նրանից այդպիսի

վատ խաղ չէր կարելի սպասել։ Նա խմբի ամենալավ դերասաններից մեկն է, բայց այդ գիշեր նա վատ էր, ամենավատ սկսնակից»։

Նույն պիեսի մասին։

«Բակինսկիյա Իզվեստիա» ռուս թերթը գրում էր. «Ընտրությունը շատ հաջող էր և խաղն էլ՝ շատ լավ։ Վրույրն իր դերը շատ փայլուն կերպով տարավ և նրա արժանի խաղակիցներն եյին՝ պ.պ. Ավետյանն ու Մելիք Հովսեփյանը։ Ափսո՛ս, վոր պարոն Ստեփանյանը թույլ էր։

1910 թվի, փետրվար։

«Սատանա» պիեսի մասին։

«Մշակ»-ը գրում էր.—«Հրեյա նորագույն տաղանդավոր դրամատուրգ Գորդինը ռեալիստ գրող է։ Իր վարպետ գրչով նա բարձրացնում է մեր առօրյա կյանքի վարագույրը և ցույց տալիս կյանքի ճշմարտությունը՝ իր բացասական և դրական կողմերով։ Թեև պիեսի նյութը քաղում է նա հրեյական միջավայրից, սակայն իրականության ճշգրիտ և պատկերավոր ներկայացումն ուսանելի և խրատական է բոլորի համար։

—«Ի դեպ, ի՞նչով բացատրել վերջին ներկայացումների անաջող անսամբլը»։

«Զակավկազսկայա րեչ» ռուս թերթը գրում էր. «Վերին աստիճանի բնական և կյանքի ճշգրիտ պատկերի դրամա։

«Պիեսն անցավ ընդհանուր առմամբ անվիճելիորեն՝ լավ»։

«Սուրհանդակ» հայ թերթը գրում էր.— «Պիեսի կերտվածքը կիսառեալ-կիսասիմվոլիկ բնույթ ունի, և նրանում ստեղծված դրությունները, վորոնցից յուրաքանչյուրը կարող է մի-մի դրամայի նյութ լինել, գալիս և անցնում են առանց հիմնավորումների, յերբեմն՝ հեռու բնական լինելու սահմաններից, իսկ յերբեմն էլ նյութը ռեալ շրջանակների մեջ դնելու համար հեղինակի կողմից նկատվում է այնքան մեծ ձգտում, վոր շատ անգամ ունկնդիրներին ժպիտ է ազդում։ Ահա այդ անբնական ազդեցությունների և նյութի ընդհանրա-

պես մակերևութային մշակումն էր պատճառը, վոր պիեսը հասարակության ձանձրալի թվաց:

«Մեր դերասաններն այդպիսի մի ծանր պիես խաղալու համար իրենց կատարյալ անձեռնհասությունը վկայեցին»:

1907–08 *թատերաշրջանին, յերբ մեզ հրավիրել եյին՝ Բաքվի Կուլտուրական միության խմբում աշխատակցելու, թատրոնական վարչության հինգ անդամի հետ միասին, ռեպերտուարը կազմելու և դերերը բաժանելու համար, խմբից ընտրված եյին յերեք հոգի՝ Աբելյանը, Ալիխանյանը և յես: Վարչության մի անդամը՝ Ս. Ն.—ն մեր ներկայացումների մասին տեղական ռուսական «Բակու» թերթում միաժամանակ և քննադատականներ եր գրում: Պատահում եր, վոր դերաբաշխման ժամանակ նա դեմ եր լինում մի վորևե դեր Մ.—ին տալու և պահանջում եր Ն.—ին տալ, սակայն ձայների մեծամասնությամբ վճռվում եր Մ.ին տալ, և նա իր քննադատականում անպայման հայհոյում եր Մ.—ին ու գտնում եր, վոր այդ դերն անպայման ավելի լավ կխաղար Ն.—ը: Նրա գրած միքանի այդպիսի քննադատականներից հետո, ժողովում, գլխավորապես մենք՝ դերասաններս, կտրուկ հարց դրինք—Ս. Ա....ն կամ թող լոկ վարչության անդամ մնա, կամ քննադատականներ գրելուց ձեռք քաշի: Յեվ, իհարկե, նա գրելը թողեց: Բայց գիտե՞ք ինչ ասաց նա մեր կտրուկ պահանջին.—«Յերբ յես քննադատական եմ գրում, մոռանում եմ ինձ՝ վարչության անդամիս և հակառակը»:*

Թատերաշրջաններից մեկում «Մշակ» լրագրում քննադատն ութ անգամ իմ մասին գրել եր.

—«Ավետյանը բնորոշ եր»:

Իսկ Պոլսո «Առավոտ» թերթը 1922 *թվին ահա թե ի՛նչ եր գրել.*

—«Ավետյանը ծերուկ աղվես մըն ե... Զաքրոսին աչքերը արտահայտիչ են, իսկ Ավետյանին կղակը»:

Յեկ և հասկացիր, թե ի՛նչ ե ուզում ասել հարգելի քննադատը:

Դեռ այսպիսի կուրյոզներ ել կային, ինչպես 1910 *թվին «Սուրհանդակ»-ն իր* № 168*-ումն եր գրել.*

«Թատրոնում շատ և ընտիր հասարակություն կար»:

Յերեկ լոժաներում բազմած սիրուն տիկիններին և հաստափոր բուրժուաներին եր մատնանշում:

1919 *թվին, յերբ յես արդեն հիսունի մոտ տարիներն եյի թևակոխել, «Հորիզոն» թերթի աշխատակիցն իմ մասին գրել եր.*

«Մեծ ապագա ունի պ. Ավետյանը»:

Մեր քննադատներից շատերը բերանի ծամոց եյին շինել իրենց համար և տեղի ու անտեղի գրում եյին.—«Հայ դերասանները հայոց լեզուն բեմի վրա նահատակում են»: Այդպես եր գրվում և ցույց չեր տրվում, թե վո՛ր դերասանն եր, վոր նահատակում եր հայ լեզուն և այդ, իմ կարծիքով, ավելի նպատակահարմար կլիներ, քան թե մեղադրել խմբի բոլոր անդամներին, վոր ճնշող մեծամասնությամբ ներսիսյանավարտներ եյին, իսկ սրանք հայերենին պետք ե, վոր լավ տիրապետեյին:

Դրանում պակաս դեր չեյին կատարում և թարգմանիչները, վորոնք թարգմանություններ եյին անում առանց տիրապետելու ռուսաց լեզվին, բայց կային և ավելի հանդուգն թարգմանիչներ, վոր լավ տիրապետելով ռուսերենին, հայրերեն բնավ չգիտեյին և նույնպես պիեսներ եյին թարգմանում:

Մեղավորը մասամբ այսպիսի թարգմանություններն եյին և վոչ թե ամբողջովին դերասանները:

Հիշում եմ, մի անգամ պիտի բեմադրեյինք Աստրովսկու «Անտառ» պիեսը: Դրամատիկ ընկերության վարչությունն այս պիեսը տվել եր թարգմանելու «Նոր-Դարի» աշխատակիցներից մեկին, մի մարդու, վոր վոչ թե ռուսերեն կարդալ, այլ բառիս բուն իմաստով չեր ել հասկանում, և այն ել՝ Աստրովսկու լեզուն: Վոչինչ, թարգմանեց և բերեց, բայց « забор *»-ի թարգմանությունը նա «փորկապություն» եր դարձրել և անթիվ ու անհամար այսպիսի սխալներ:*

Դրամատիկ ընկերության Բաթումի ճյուղին դերա-

սան-ռեժիսյոր եր պետք, դիմել եյին Լևոն Քալանթարին, բայց նա չցանկացավ գնալ և ինձ խորհուրդ տվեց գնալ: Համաձայնեցի և գնացի:

Բաթումում ժամանակին թատերասերներից կազմված մի լավ թատերախումբ կար, վոր յերկար տարիներ շարունակ ներկայացումներ եր տալիս: Այդ թատերասերներից շատերը վախճանել եյին, շատերը ծերացել և ասպարեզից քաշվել, մնացել եյին յերիտասարդները և ահա դրանք եյին, վոր կազմել եյին Դրամատիկ ընկերության Բաթումի ճյուղը և, մի քանի դերասաններ առնելով իրենց մեջ, ներկայացումներ պիտի տային: Մեջները կային բավականին փորձված և ապագա խոստացող սիրողներ: Այդ սիրողներից մեկն եր նաև Լևոն Զոհրաբյանը՝ Լենինականի Պետական թատրոնի շնորհալի դերասանը:

Դերասաններից այդ խումբը մտանք՝ յես, Համբիկը; Անահիտը, Վրույրը և Ալիխանյան Բ.-ն: Հետո միացավ և Ոննիկ Ստեփանյանը:

Բաթումում մնացի մինչև 1921 թվի փետրվարը և ապա, ոպերետի խմբի հետ միասին, ճանապարհվեցի Պոլիս: Բաթումում մենշևիկները վերջերն այնպիսի պայմաններն եյին ստեղծել, վոր հայերեն ներկայացումներ տալու վոչ մի հնարավորություն չեր լինում: Ներկայացումն սկսվելուց կես, կամ մի ժամ անց, թատրոնը շրջապատում եյին, ներս մտնում և թատրոնում գտնվողներին խուզարկելով՝ ուզած մարդկանց բռնում-տանում եյին: Մի քանի անգամ այդ կրկնվելուց հետո, այլևս հնար չեր լինում ներկայացում տալ, թատրոնի կողքով վոչ վոք չեր անցնում:

Թողինք և խմբով հեռացանք:

Պոլսում մերոնց հետ ոպերետներ եյինք խաղում՝ այդ ներկայացումներին մինչև հոկտեմբեր մասնակցեցի, և յերբ այնտեղ Թատերական Միության խումբ կազմակերպվեց, ինձ ել ընդունեցին: Կիրակի ցերեկները ժամը յերկուսից Պերայում եյինք խաղում, իսկ մյուս որերը՝ Պոլսո զանազան արվարձաններում, արդեն յերեկոները: Խումբը վերջը փոխվեց ընկերականի: Հյուսիսային Կովկասից Վահրամ Փափազյանը յե-

կավ միացավ մեր խմբին, և նրա գալով մեր ներկայացումները շարունակեցինք մինչև ոգոստոսի վերջը:

Ամենից շատ յես սիրում եյի Հայ-կղզու ներկայացումները․ այդ կղզին Մարմարա ծովում ե գտնվում՝ քաղաքից չորս-հինգ մղոն հեռավորության վրա: Այնտեղ գնալու համար մոտորավոր մի նավակ եյինք վարձում, վրան դարսելով և մեր բեմական բոլոր իրերն ու ինքներս ել նստելով՝ յերեք ժամում հասնում եյինք կղզին, և «Ադամյան» թատրոնում ներկայացումն ավարտելով՝ գիշերվա ժամի մեկին կամ յերկուսին, գալիս եյինք ծովափ, նորից նստում մեր սեփական մոտորավոր նավակն ու ճանապարհ ընկնում դեպի Պոլիս: Հրաշալի մի ճանապարհորդություն եր այդ․ ծովը կարծես քնած լիներ, լուսինն ել իր կողմից ավելի յեր գեղեցկացնում գիշերվան լռությունը, իսկ խմբի յերգիչ-դերասաններն ել իրենց խմբովին յերգերով, ավելի սքանչելի եյին դարձնում գիշերվա մեր ճանապարհորդությունը:

Հոկտեմբերի սկզբներին յես ու Վահրամ Փափազյանը յեկանք Կովկաս, հետներս բերելով յերիտասարդ դերասաններ՝ Ջանանին, դերասանուհի Ադրիկին, Հրաչյա Ներսիսյանին, Հ. Ստեփանյանին և Ե. Զափրաստին: Այս վերջին յերկուսը թուլամորթ գտնվեցին և վերադարձան, իսկ Ջանանն ու Հրաչյա Ներսիսյանը մնացին Խորհրդային Հայաստանում և լծվեցին աշխատանքի: Այժմ նրանք շնորհալի, տաղանդավոր դերասաններ են, վոր փայլ են տալիս իրենց մասնակցած խմբին:

Բաթում գալով՝ միացա բանվորական ակումբներում Ալիխանյան Բ.-ի ղեկավարությամբ գործող խմբին, մինչև մարտ նրանց հետ խաղացի և ապա անցա Թիֆլիս, ուր ինձ հայտնեցին, վոր, ինչպես վորոշված ե նախքան Թիֆլիս վերադառնալս, յես արդեն անդամ եմ Վրաստանի Պետական հայ դրամայի:

Մեծ եր իմ ուրախությունը: Յես զգացված եյի կարծում եյի, վոր ամբողջ չորս տարի Թիֆլիսից բացակայելով, իմ ընկերներն ինձ արդեն մոռացել են, վոր յես արդեն ոտար եմ նրանց: Սակայն հակառակը դուրս յեկավ, և այն ընդունելությունը, վոր իմ հին ու նոր

ընկերներն ինձ ցույց տվին, մինչև կյանքիս վերջին իմ հիշողության մեջ անջնջելի կմնա:

Մնացի և լծվեցի աշխատանքի:

Բացի իմ հին ընկերներ՝ Իս. Ալիխանյանից, Հ. Բերոյանից, Ա. Մամիկոնյանից, Մարի–Բերոյանից, այդ խմբումն էր աշխատում նաև Արամ Վրույրը, վոր բազմակողմանի տվյալներով օժտված մի մարդ էր՝ լավ դերասան, լավ լուսանկարիչ: «Հուշարար» թերթի խմբագիրն ու հրատարակիչն էր նա, և, միևնույն ժամանակ, ամեն ամառ պրոֆեսոր Մարի և ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ գնում էր Անի՝ պեղումներին մասնակցելու: Վերջերս զբաղված էր հանգուցյալ դերասան Պետրոս Ադամյանի կյանքի ուսումնասիրությամբ և նրա կենսագրությունը գրելով, բայց ծանր հիվանդությունը նրան անկողին գցեց, և նա, կիսատ թողնելով սկսած աշխատանքը՝ վախճանեց 1924 թվի մարտի 5–ին, Թիֆլիսում:

Արամ Վրույրը, իբրև դերասան հայ բեմի վրա, իր առանձնահատուկ տեղն ուներ, նրա ստեղծած տիպերից աչքի էյին ընկնում՝ «Բաղդասար Աղբարի»—Բաղդասարը, վոր նրա գլուխ–գործոցն էր, «Դոն–Գրիգորիոյի՝ Դոն–Գրիգորիոն, վորով, հանգուցյալ Թուրյանից հետո, նրա արժանավոր փոխանորդը դարձավ այդ դերում, «Ղարաբաղի աստղագետի» մեջ՝ Աստղագետ Հասանը, «Մեծապատիվ մուրացկանների» մեջ՝ Աբիսողոմ աղան, «Ֆրից բարեկամի» մեջ՝ Ռաբբին, «Վոճրագործի ընտանիքում»–ի՝ Մոնսինյորը և շատ այդպիսի դերեր:

Վրույրն իր կյանքում հայաբնակ գյուղ չէր թողել, վորտեղ ներկայացումներ տված չլիներ:

Նա չափազանց աշխատասեր էր ու յեռանդուն. ինչպես ասում են, մի վոտքը թատրոնումն էր, մյուսը՝ տպարաններում, ուր իր ձեռքով սրբագրելու յեր գնում «Հուշարար»–ը:

Նրա թաղումը շատ մեծ շուքով կատարվեց: Նա արժանի յեր այդպես թաղվելուն:

Ինձ վիճակվեց նրա թաղման հանձնաժողովի նա–

խագահը լինել, և յես, Հավլաբարի թատրոնի առաջ, նրա դագաղի վրա այսքանը միայն կարողացա ասել.

«Սիրելի՛, անմոռանալի հին ընկեր Արամ, գնում–հեռանում ես մեզանից դեպ հավիտենական աշխարհը՝ ջարդված, փշրված, տանջված, քայքայված, հուսահատված...

«Ամբողջ կյանքդ անցրիր տանջանքներով, տառապանքներով, անոթի ու ծարավ, թափառելով մեծ աշխարհի մի ծայրից մյուսը, թափառական դերասանի

ԱՐԱՄ ՎՐՈՒՅՐ

ցուպը ձեռքիդ, քարոզելով ճշմարիտն ու բարին, ցույց տալով գեղեցիկը, վե՛հ գաղափարի դու քրմապետդ:

«Չգնահատվեցիր, ընկեր ուժասպառ, իղձերդ՝ կիսատ, սրտիդ ծարավը չհագեցրած...

«Կգտնես այնտեղ, ինչպես և դու, մեր իրականության դաժան պայմաններին անժամանակ զոհված մեր

ընկերներին: Բայց դու նրանց ավետիր, ասա՛,—նո՛ր արշալույս է բացվել, կարմի՛ր արշալույս, նո՛ր աշխարհ է ստեղծվել—ազա՛տ աշխարհ և ուրիշ պայմաններ են տիրում ահա այդ նոր աշխարհում, ուր հայ դերասանն այսուհետև պիտի ստեղծագործի, քարոզի և ապրի ավելի մարդավայել:

«Ցավ դո՛ւ յեղար, խեղ՛ճ ընկեր Արամ, վերջին զոհն անցած վատ օրերի:

«Հանգի՛ստ քո փշրված ոսկորներին, Թանգագի՛ն Արամ»:

Թիֆլիսից հետո ինձ հրավիրեցին Յերևան՝ Պետական Թատրոնում աշխատակցելու:

Յեկա և սկսեցի աշխատակցել:

Յերևան գալով, խմբում գտա իմ հին ընկերներից մեկին՝ Ոննիկ Ստեփանյանին, վոր խորհրդային իշխանության կողմից արդեն արժանացել եր Վաստակավոր դերասանի կոչման:

Ոննիկն առաջվան խմբերում իր վորոշ տեղն ունեցել է իբրև ռեժիսյոր:

Առաջին իսկ բեմ մտնելու օրից, նրան տարբեր քարակտերի և տարբեր ամպլուվայի դերեր եյին հանձնրվում. Նա խաղում եր և՛ սիրահարներ, և՛ կոմիկներ, և՛ ռեժիսյորներ: Հիշում եմ, ինչպես մի անգամ չըրջիկ խմբում նրան սիրահարի մի մեծ դեր եյին տվել, և նա, վախից ու դողոցից, ներկայացումից մի քանի օր առաջ անքնության եր մատնվել. Ներկայացման գիշեր խաղալիս մանր դողեր բռնել, բայց և այնպես դերը հիանալի խաղաց: Թիֆլիսի և Բագվի մեծ խմբերում Աբելյանից և Պետրոսյանից հետո ամենալավ և ամենապատասխանատու դերերը նրան եյին բաժին ընկնում, և նա միշտ պատվով եր դուրս գալիս այդ ծանր բեռան տակից: Նրա խաղը շատ պարզ եր, բնական, առանց վորևե «նատյաժկայի», ձայնը և առոգանությունը պարզ եր ու հստակ:

Յերբ նա բավականին փորձառություն եր ձեռք բերել, ռեժիսյորի ամպլուան ընդունեց, չնայած վոր յերբեմն քարաքտեր դերեր ել եր խաղում:

Նա չափազանց կենսախինդ եր, համբերատար, ամեն դրության հետ հաշտվող:

Կյանքի մեջ չկար մեկը, վոր նրան չսիրեր—այնքան

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՈՆՆԻԿ) ՍՏԵՓԱՆՅԱՆ

նա բարի սիրտ ուներ, ընկեր եր բառիս բո՛ւն իմաստով:

Ա. Վրույրից հետո սրան ել Թաղելու դժբախտությունն ունեցա:

Ծանր և յերկարատև հիվանդությունից հետո, նա վախճանեց 1930 Թվի ապրիլ 27-ին:

1927 Թ. հունվարի 25-ին, Յերևանի Պետական Թատրոնի հնգամյակին ինձ ՀՍԽՀ-ի Վաստակավոր դերասանի կոչում տվին, իսկ այս տարի, նույն Թատրոնի տասնամյակին, ՀՍԽՀ-ի Կենտգործկոմն ինձ պարգևատրեց Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանով, վորոնցով յես հպարտանում եմ և քանի դեռ իմ մեջ ույժ ունեմ, պիտի աշխատեմ այդ կոչումն ու շքանշանը պատվով կրել:

---

* * *

Հին հայ Թատրոնը, իբրև կրԹության վայր, իրենից ի՞նչ եր ներկայացնում. արդյոք հարյուր տոկոսով նա իր բարձրության վրա կանգնա՞ծ եր, ի՞նչ եյին իրենցից ներկայացնում դերասանները, ի՞նչ հոգ եր տարվում նրանց վրա, ղեկավար մարմին կա՞ր արդյոք այդ Թատրոնում—ահավասիկ հարցեր, վոր այս օրերին անպայման անցնում ե գլխովս՝ հինն անցնելուց և նորը տեսնելուց հետո՞:

Հին Թատրոնը, ճիշտ ե, ուներ մի շարք փորձված, տաղանդավոր, ենտուզիազմով լի, ինչպես ասում են՝ գործելու համար մեռած, քաղց ու ծարավի, նեղություններին մեջ կոփված դերասաններ, բայց այդ ամենը չեր օգտագործվում այն չափով, ինչ չափով, վոր անհրաժեշտ եր:

Ինչո՞ւ...

Նախ և առաջ այն պատճառով, վոր Թատրոնը (խոսքս ամեն տեղ ել հայ Թատրոնի մասին ե) իր կոչման բարձրության վրա չեր դրված, նրա մասին հոգատանող չկար, սեփական շենք չուներ, վոչ վոքի հոգատարության առարկան չեր, դերասաններն ապահովված չեյին և Թողնված եյին իրենց բախտին:

Դերասանները միմիայն չորս, չորս ու կես ամիս եյին ռոճիկ ստանում, իսկ մյուս ամիսներին նրանք ստիպված եյին Թափառել՝ ապրելու միջոց գտնելու և իրենց ու իրենց ընտանիքները կերակրելու համար: Դերասանը յերկու շաբաԹից ավելի հիվանդանալու դեպքում, նրան այլևս ռոճիկ չեր տրվում ու Թողնվում եր յերեսի վրա ընկած:

Այս թափառելու հետևանքը լինում էր այն, վոր վորևէ դերասան, յեթե թափառող կարգին խմբերից դուրս էր մնում, ընկնում էր քաղաքից-քաղաք և խալտուրային ներկայացումներ տալիս՝ մուրալով, դանդուռ, խանութե-խանութ ընկած տոմսեր ծախելով, վորով ավելի յեր փչացնում հասարակության առանց այն էլ փչացած ճաշակը:

Իսկ ամենագլխավորը—արվեստը մասսաների սեփականությունը չէր, հայ թատրոնը մշտական հաճախորդ չուներ, իսկ առանց մշտական հաճախորդի թատրոնը գոյություն ունենալ չի կարող: Բավական է ասել, վոր ամեն մի պիես, շատ քիչ բացառությամբ, սեզոնի ընթացքում մի անգամ էր տրվում:

Թատրոնը չուներ նաև մշտական դերասանական կազմ, վորովհետև այն չնչին ռոճիկը, վոր տրվում էր դերասաններին, ստիպում էր նրանց ավելի ապահով տեղ վորոնել, և այդ պատճառով էլ խմբերն ամեն թատերաշրջանի մեծ փոփոխության էյին յենթարկվում:

Թատրոնը չուներ մինչև անգամ ռեժիսյոր. ներկայացումները տրվում էյին աստծու վրա հույս դնելով և յեթե ներկայացումները, ըստ ժամանակի պահանջի, սահուն ու մարդավայել էյին գնում, ապա պատճառը պետք է վերագրել փորձված դերասանների մասնակցությանը, փորձված, վոր ինստինքտով զգում էյին պիեսի ռիթմը, տեմպը և այլն...

Ռեպերտուար կազմողներն իրենց ձեռնտու գծով էյին գաղափարական, գեղարվեստական ու քաղաքական ուղի գծում. նրանք բեմադրում էյին թե՛ կլասիկ, թե՛ Սունդուկյան և թե՛ Շիրվանզադե և այդ գոհարների կողքին՝ ցինիկ ֆարսեր, անմիտ կոմեդիաներ, չովեն հոգով գրված «պատմական» Արշակներ, Վարդաններ, Սամվելներ և այլն... Այդ ամենն արվում էր իրենց դասակարգի շահերն աչքի առաջ ունենալով և բանվոր ու աշխատավոր դասակարգի գիտակցությունը մթագնելու համար:

Ո՞վքեր էյին լինում ընդհանրապես թատրոնի ղեկավարները՝ սկսած «վոսկեդարից» մինչև վերջը. գա-

նագան իշխաններ, վաճառականներ, փաստաբաններ, բժիշկներ, բանկի կառավարիչներ, ինժեներներ... մարդիկ, վորոնք գեղարվեստի հետ վոչ մի կապ չունեյին, բառիս բուն նշանակությամբ՝ հաստափոր, ճարպակալած բուրժուաներ...

Հայ ազգայնական բուրժուազիան թատրոնը ծաղկեցնելու համար բառացի կերպով մատը մատին չի խփել: Իսկ մանր ազգությունների ճնշող ու խեղդող ցարական կառավարությունն ամեն մի կուլտուրական յերևույթ ավելի յե ճնշել: Այդ բուրժուազիայի կոպեկներով հայ թատրոնն իր գոյությունը հազիվ-հազ էր քարշ տալիս:

Այսպիսի պայմաններում հայ դերասանը զարգանալու, առաջադիմելու հնար չուներ, և շատ շատերը կիսատ թողնելով՝ կամ բեմից էյին քաշվում, կամ, թատրոնին ծառայելուց զատ, կողմնակի պաշտոններ էյին գտնում:

Իսկ ի՞նչ ենք տեսնում մենք այսօր, Խորհրդային իշխանության օրով:

Թատրոնն արժանացել է պետության հոգատար և աջակից վերաբերմունքին: Դերասանը, վոր առաջ ձայնազուրկ քաղաքացի յեր, խորհրդայնացման հենց առաջին օրից քաղաքացի յե բառիս իսկական իմաստով:

Ի՞նչպես է տարվում այսօր թատրոնական գործը. նախ և առաջ դերասանը, տեխնիկ. և ադմինիստրատիվ պերսոնալը կապված են թատրոնի հետ, տարին-տասներկու ամիս ռոճիկով ապահովված, ունեն հանգստի օրեր, ապահովագրված են, հիվանդության դեպքում փողոցում չեն մնում և ապաքինվում են: Զարգանալու, առաջադիմելու համար տեխնիկումներ ու դպրոցներ ունեն, իսկ արհեստի մեջ լիովին կատարելագործվելու համար՝ գործուղումներ: Թատրոնները հմուտ ռեժիսյորներ ունեն, ռեժիսյորների նոր կադրեր են պատրաստվում:

Ռեպերտուարն իր վորոշ ուղին, իր նպատակը ունի, այն է՝ գաղափարախոսական, ազդեցիկ և հզոր զենք՝ դասակարգային լարված պայքարի շրջանում: Այսօրվա

թատրոնի աչքի ընկնող արժանիքն այն է, վոր քաղաքական պրոպանդի և գեղարվեստականության ու միասնության ճանապարհով է զարգանում: Այդ է միակ և ճիշտ ուղին:

Հին ժամանակ ունեյինք ընդամենը մեկ, կամ շա՛տ-շատ յերկու թատերախումբ—մեկը՝ Բաքվում, մյուսը՝ Թիֆլիսում: Այսոր մենք ունենք մի շարք թատրոններ: Յերևանում՝ Առաջին Պետական, Բանվորական, Գյուղշրջիկ, Մանկական թատրոնները, Լենինականում՝ Յերկրորդ Պետ-թատրոնը, Թիֆլիսում, Բաքվում, Ռոստովում, Սուխումում, Խարկովում, Բաթումում, Կրասնոդարում՝, Անդրկասպյան յերկրում, ել չեմ խոսում այն մեծաթիվ ինքնագործ ակմբային խմբերի մասին, վորոնք գործում են համարյա բոլոր մեծ քաղաքներում ու գյուղերում: Յեվ այդ բոլոր թատրոնները կառավարության սիրած զավակներն են:

Առաջներն ո՞ւր եյին սրանք. Թե՞ հայ ազգը հիմա յերկու-յերեք միլիոնից հարյուր միլիոնի հասավ:

Վո՛չ, խնդիրն այստեղ հայությունը շատ միլիոնների հասնելը չի, այլ այն ճշմարիտ ուղին, վոր Խորհրդային իշխանությունն է բռնել «թատրոնը մասսաներին» լոզունգի տակ և այդ ուղղությամբ գործում է անշեղ:

Յե՞րբ եր տեսնված, վոր հին ժամանակ, սեզոնի ընթացքում, մի պիես քանից-քառասուն անգամ ներկայացվեր. այսպիսի միտք հղացողին վոչ թե յերազատես, այլ խենթ կասեյինք: Իսկ այժմ ամեն մի պիես այդքան անգամ կրկնվում է հենց մե՛ր Յերևանի նման հարյուր հազար բնակչություն ունեցող քաղաքում, վոր նշանակում է՝ լենինյան—բոլշևիկյան կուսակցության բռնած ուղին ճիշտ է, և նա իր առաջադրած խնդիրը, այն է, «գեղարվեստը մասսաներին և թատրոն մշտական հաճախորդներով» լոզունգը հարյուր տոկոսով և ամենայն հաջողությամբ կատարում է:

Ո՞ւր եյին այն ժամանակ այնպիսի ղեկավարներ, ինչպիսին եր Լուսժողկոմ հանգուցյալ Ասքանազ Մռավյանը, վոր ամեն յերեկո, ամեն օր, իր ծանր աշխատանքներից հետո, ժամանակ եր գտնում և գալիս. թե՛

թատրոն, թե՛ փորձին հետևելու, թե՛ մինչև վերջ ներկայացումներին ներկա գտնվելու և թե՛ բեմի հետևն անցնելու՝ դերասանների քեֆն ու առողջությունն իմանալու, նրանց վոգևորելու, գովելու և խրախուսելու: Այո՛, խոստովանում եմ, պնդում եմ, վոր չկային:

Իսկ դերասանի համար ի՞նչ է թանկ, միայն և միմիայն խրախուսանքը, գովասանքը և ջերմ վերաբերմունքը: Դերասանը փոքրիկ յերեխայի նման փափուկ սիրտ ունի, նա կարոտ է միմիայն փայփայանքի:

Ութ տարի յե, ինչ աշխատակցում եմ Յերևանի Առաջին Պետ-թատրոնին ու իմ աչքի առաջ հսկայական քայլերով առաջադիմել և այժմ բեմական զարդ են դարձել՝ ռեժիսյոր Արմեն Գուլակյանը, վորի ամեն մի նոր բեմադրությունը նոր և նոր արժանիքներ է ցույց տալիս ու մեծ ապագա խոստանում. Ավետ Ավետիսյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը—վերջինս ռեժիսյորության մեջ ել իր արած փորձերով հաստատեց ապագայում լավ ռեժիսյոր լինելու իր կարողությունը—Մկրտիչ Ջանանը, Տիգրան Շամիրխանյանը, Համբարձում Խաչանյանը, Օրի Բունյաթյանը, Տիգրան Այվազյանը, Հովհաննես Ավագյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Սուրեն Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Անուշավան Վարդանյանը, Վահան Դասոյանը, Լևոն Մորյանը, Ռուզան Վարդանյանը, Սյուզան Գարագաշը, և մյուսները, դերասաններ, վոր իմ ներկայությամբ են մեծանում:

Իսկ սրանից հետո, փոխարինելու յե գալիս նոր սերունդը—Պետ-թատրոնի տեխնիկումի ուսանողները, վորոնցից բեմի վրա արդեն վոտք են դրել ու իրենց շնորհքը ցուցադրել՝ Գևորգը, Ծերունը, Գրիշան, Ռաֆիկը, Գարիկը, Սուրիկը, Հանրին, Սիմոնը, Նշանը, Թաթուլը, Ամալիան, Թութուշիկը, Տորիկը, Սամվելը, Սարգիսը և նրանց ընկերները:

Ութ տարվա ընթացքում ինձ ընկերակցել են վաստակավոր դերասաններ՝ Օլգա Գուլազյանը, իմ յերիտասարդ ժամանակվա խաղացած վոդևիլների և պիեսների անբաժան ընկերը, վոր բեմի վրայից հասարակությանը վարակում եր իր ծիծաղով, սիրելի Համիկը,

Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տան այլ մշտական ջերմ աշխատակիցը, Արուս Վոսկանյանը, Բագրատ Մուրադյանը և ամենավերջը, ծերությամբ կամաց-կամաց ինձ մոռացող, պատկառելի Միքայել Մանվելյանը, վորի հետ շատ յերկար տարիներ քաղց ու ծարավ ենք տարել, թափառել, բայց և այնպես մեր սիրած գործին զոհաբերել մեր հանգիստն ու յերիտասարդությունը:

Պետ-թատրոնի յերիտասարդ ուժերը բոլորն էլ Պետ-թատրոնի ծնունդ են, նրա հոգով, կանոններով և որենքներով սնված, դաստիարակված: Նրանք որըստորե աճում, զարգանում, առաջադիմում են և նրանցից ամեն մեկն այժմ պատրաստ ու կարող դերասան է:

Այսպիսի թատրոնը զարգանալու և բարգավաճելու է՛լ ավելի ասպարեզ ունի:

2013

05

19 4

ՀՀ Ազգային գրադարան
NL0683718

Գինը 3 ռ.

2013

20 05

Григор Аветян
Сорокпять лет на армянской сце
(воспоминания)
Госиздат ССРА, Эривань 193

ային գրադարան
NL0683718